

ՎԻԿՏՈՐ ՀՈՒՅԱՆ
ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ

Ներկա աշխատությունը նվիրված է հայ գրականության մեջ և հասարակական կյանքում Վիկտոր Հյուգոյի դերի և նշանակության բացահայտմանը:


Փաստական հարուստ նյութի հիման վրա ցուց է տրված, թե հայ գրական միտքը մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում (1850-ական թվականներից մինչև 1950-ական թվականները) ինչպես է զնանատել ֆրանսիացի մեծ գրողի ստեղծագործությունը: Հեղինակը հանգամանորեն քննում է Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունները, ինչպես և հայ առանձին գրողների վրա Հյուգոյի ավդեցության խնդիրները: Վերջին գլուխը նոր և հատաքրքրական փաստեր է՝ պարունակում Հյուգոյի և հայ գրական գործիչների անձնական և նամակագրական կապերի վերսթերյալ:

«Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ» առաջին ծավալուն ուսումնասիրությունն է՝ նվիրված հայ-ֆրանսիական գրական կապերին:

«ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ»

ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ, ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ա. Բաբայան, Շիլերը և հայ գրականությունը, 1959:
2. Ս. Դանիելյան, Լերմոնտովը և հայ մշակույթը, 1960:
3. Գ. Հովհանն, Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, գիրք առաջին, 1960:
4. Գ. Հովհանն, Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, գիրք երկրորդ, 1961:



ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Տ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт литературы

ГАЙК ГАСПАРЯН

ВИКТОР ГЮГО
В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН — 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.092 [Հայոց]

գ

ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԵԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ


A 31621



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1963

HAIK GASPARIAN
VICTOR HUGO
ET LA
LITTERATURE ARMENIENNE
EREVAN — 1963



Գլիկոն Հյուզո

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Վիկտոր Հյուգոն համաշխարհային գրականության այն խոշոր ներկայացուցիչներից է, որոնց ստեղծագործությունները թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական տեսակետից որոշակի ներգործություն են ունեցել բազմաթիվ ժողովուրդների, նրանց թվում և հայ ժողովրդի գրականության վրա:

Հայ գրողներն ու արվեստագետները վառ հետաքրքրություն են ցուցաբերել Հյուգոյի ստեղծագործության նկատմամբ, ոգեշնչվել են նրա ազատաշիրական-հումանիստական գաղափարներով, գրավվել՝ նրա արվեստով, թարգմանել են նրա երկերի մեծագույն մասը, թեմադրել դրամաները, յուրացրել և ստեղծագործաքար կիրառել գեղարվեստական սկզբունքները, անձնական ու նամակագրական կապեր ունեցել նրա հետ: Ահա այս հարցերի լուսաբանմանն է նվիրված ներկա աշխատությունը: Հայ գրականության մեջ և հասարակական կյանքում Հյուգոյի ստեղծագործության դերի և նշանակության մասին մեր մամուլում թեև եղել են սակավաթիվ հոդվածներ, սակայն նրանցում շշափվել են միայն առանձին հարցեր, այն է՛լ հակիրճ: Սույն ուսումնասիրությունը հիշյալ լայնապարփակ թեմայի տարբեր կողմերը ընդգրկելու առաջին փորձն է:

Հայ առաջավոր գրական գործիչները, բարձր գնահատելով մեծ հումանիստի առաջավոր գաղափարները, նրա երկերը թարգմանել են՝ հայրենասիրական վացմունքներ հրահրելու, բուրժուական իրավակարգում տիրող սոցիալական ներհակությունները բացահայտելու նպատակով: Նրանք Հյուգոյի ստեղծագործություններն օգտագործել են որպես գաղափարական վենք թե՛ ազգային-ազատագրական տրամադրություններն ուժեղացնելու գործում և թե՛ հետադիմական ուժերի դեմ

մղած պայքարում: Ալդ տեսակետից Հյուգոյի ստեղծագործությունները խոշոր նշանակություն են ունեցել հայ հասարակական կյանքում:

Աշխատության մեջ ցուց են տրված հայ ժողովրդի պատմական պարզացման տարբեր շրջափուլերում Հյուգոյից կատարված թարգմանությունների քաղաքական-հասարակական ավդակները, նրանց կապը հայ ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի ձգտումների և իշեալների հետ:

Մեծ արվեստագետի երկերից հայերենի են թարգմանվել նրա վեպերը, վիպակները, դրամաներն ու բանաստեղծությունները, որոնց զգալի մասը՝ տաղանդավոր գրողների ծեռքով: Ալդ մեծարիվ և բարձրորակ թարգմանությունները զգալիորեն հարստացրել են հայ գեղարվեստական գրականությունը:

Հյուգոյի երկերը ստեղծագործական լիցք են հաղորդել մի շարք հայ ականավոր գրողների, որոնք ներշնչվելով հանճարեղ հեղինակի գաղափարներից կամ գեղարվեստական պատկերներից, արտադրել են ինքնուրուսն ու լիարժեք երկեր:

Սույն ուսումնասիրության կապակցությամբ անհրաժեշտ է եղել պրատումներ կատարել թե՛ հայ և թե՛ օտար պարբերական մամուլի և գրականության մեջ, ինչպես և արխիվային ֆոնդներում: Նույնպես, որոշ մանրամասներ պարվելու նպատակով, նամակագրություն ենք ունեցել արտասահմանում գտնվող հայ և օտար գրական գործիչների, նրանց թվում և Վիկտոր Հյուգոյի ծոռան՝ պ. Ժան Հյուգոյի հետ:

Ֆրանսիական հանճարեղ գրողի վերաբերյալ այս համեստ աշխատությունը, կարծում ենք, կարող է օգտակար լինել հայ-Եվրոպական մշակութային կապերի ուսումնասիրության ասպարեզում:

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳԵԱՀԱՏՄԱՄԲ

Վիկտոր Հյուգոն ֆրանսիական միակ գրողն է, որի հրեարամյա կյանքն ընդգրկել է գրեթե ամբողջ XIX դարը (1802—1885) և որն իր ստեղծագործության մեջ արծարծել է այդ գարաշրջանի գրական, հասարակական և քաղաքական գրեթե բոլոր հրատապ հարցերը:

Մեծ գրողի աշքի առաջ՝ Ֆրանսիայի քաղաքական կյանքի թատերաբեմի վրա հաջորդաբար անցել են Նապոլեոն I, Լյուդովիկոս XVIII, Կարլոս X, Լուի Ֆիլիպ, Նապոլեոն II: Հյուգոն տեսել է Առաջին կայսրության անկումը, Ռեստավրացիան, 1830 և 1848 թվականների հեղափոխությունները, Երկրորդ հանրապետությունը, 1851 թվականի պետական հեղաշրջումը, Երկրորդ կայսրությունը, 1870—1871 թթ. ֆրանկո-պրուսական պատերազմը, Փարիզի Կոմունան, Երրորդ հանրապետությունը, և այդ խոշոր իրադարձությունների նկատմամբ ամենաաշշխույժ վերաբերմունք է ցուցաբերել իր ստեղծագործություններում:

Գրականության ասպարեզում Վիկտոր Հյուգոն կատարել է պատմական մեծ հեղաշրջում: Իր համախոհների աջակցությամբ նա կործանել է ֆրանսիական կլասի-

ցիզմի հինավուրց շենքը և նրա ավերակների վրա բարձրացրել առաջադիմական ոռմանտիզմի գպրոցը։ Հետագայում, երբ արդեն ուսալիզմն էր իշխում գրականության մեջ, Վիկտոր Հյուգոն շարունակել է իր ձեռքում պահել ոռմանտիզմի գրոշը։

Մեծ արվեստագետը սկսել է գրել 16 տարեկան հասակում և այնուհետև ստեղծագործել է 67 տարի անդադար։ Համեմատության համար նշենք, որ նրա ստեղծագործական կյանքի տևողությունը տասը տարով ավելի է, քան գերմանական, անգլիական և ֆրանսիական երեք այլ հանճարների՝ Շիլերի, Բայրոնի և Բալզակի գրական գործունեության շրջանները իրար գումարած։

Վիկտոր Հյուգոն գրել է բանաստեղծություններ, գրամաներ, վեպեր, վիպակներ, հրապարակախոսական հոդվածներ և իր ստեղծագործություններով անխոնչ պայքարել է ամեն տեսակ բռնակալության, անարդարության և հարստահարության դիմ, հանուն ազատության, արդարության, խաղաղության, ժողովուրդների եղբայրության, հանուն մարդու լավագույն ապագայի։

Մեծ գրողի ստեղծագործությունները խոր ազգեցություն են ունեցել իր ժամանակի ոչ միայն ֆրանսիական, այլև աշխարհի այլ ժողովուրդների գրականությունների վրա։ Նրա լավագույն երկերն այսօր էլ պահպանում են իրենց մեծ նշանակությունը։

Վիկտոր Հյուգոն բոլոր ժամանակների խոշորագույն գրողներից մեկն է, իսկ ինչ վերաբերում է նրա պոեզիային, ապա այն համարվում է XIX դարի ֆրանսիական քնարերգական պոեզիայի ամենաբարձր գագաթը։

Հյուգոյի ստեղծագործություններին հայ ընթերցող հասարակությունն իր մայրենի լեզվով սկսել է ծանոթանալ դեռևս անցյալ դարի 40-ական թվականներից,

1 Շիլերը ստեղծագործել է մոտ 24 տարի, Բայրոնը՝ 12, Բալզակը՝ 21։

երբ հայ գրականությունը նոր էր թեակոխել ոռմանտիզմի շրջանը։ Այնուհետև հայ գրողները հետզհետե հարածուն հետաքրքրություն են ցուցաբերել դեպի մեծ ոռմանտիկը, կարդացել ու թարգմանել են նրա երկերը և ամենաչերմ գնահատանքով արտահայտվել նրանց մասին։

Հայ պարբերական մամուլը համաշխարհային գրականության դեմքերից ոչ մեկի կյանքին և ստեղծագործությանը այնքան շատ ու այնքան հաճախ չի անդրդարձել, որքան Վիկտոր Հյուգոյի, և այդ փաստը, ինքնին, հայ իրականության մեջ մեծ գրողի վայելած ժողովրդայնության ամենացայտուն երաշխիքն է։

Այդ բացառիկ հետաքրքրությունը կարելի է բացարձակ նրանով, որ Հյուգոն իր տաղանդի ամբողջ զորությամբ պաշտպանել է ճնշված փոքր ժողովուրդներին և իր ստեղծագործություններում բուն զայրուցիւմ դատապարտել է թուրքական բռնակալությունը, որի դարավոր զոհերից է եղել և հայ ժողովրդի ստվար մասը։ Ավելին, Հյուգոն պայքարի էր կոչում ճնշված ժողովուրդներին, աշխատելով նրանց մեջ արմատավորել այն համոզումը, որ զենքի ուժով միայն կարող են ձեռք բերել իրենց աղատագրությունը։

Հափշտակությամբ ընթերցելով Հյուգոյի երկերը, հայ մտավորականները զինավավում էին նրա հրաշունչ խոսքերով։ Թե ինչպիսի խոր տպավորություն էին գործում այդ երկերը թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի մտավորականության վրա, կարելի է պատկերացում ունենալ «Արևելյան» բանաստեղծությունների ժողովածուից, որտեղ նկարագրված են սուլթանների բարբարոսությունները և հերոսական հույն ժողովրդի ապստամբությունը։ Ահա երկու տուն «La ville prise»¹

¹ Victor Hugo, Oeuvres Complètes, Société d'Éditions Littéraires et Artistiques, T. I., Paris, (s. d.), Les Orientales, p. 31.

Քանի որ Հյուգոյի բանաստեղծությունների բոլոր հետազա հի-

(«Նվաճված քաղաք») բանաստեղծությունից, Ալ. Մատուրյանի թարգմանությամբ.

Քո հրամանն ահա արդին կատարվել,
Բ'զ մեծ Խալիֆ, — կրակի է մատնվել
Ամբողջ քաղաքը: Նայի՛ր, ծովս ու բոց,
Խեղզած, խացրած մարդկանց լաց ու կոծ,
Լի՛ կատաղությամբ Հուր-հրդեհ ահաղ,
Լափում են քաղաք, լափում տուն ու տեղ:

Եվ սպանությունը, հոկայի նման,
Ոտքի է ելած այնտեղ ինքնիշխան.
Մա՞ն ամենուրեք, ամեն տեղ ավեր...
Հոր, որդու, կնոջ անշարժ դիակներ
Մարդել են գետին—և շուրջն անարգել
Ճայեր, ազնավոներ կերուխում սարքել...¹

Հայ ընթերցողները «Les têtes du Séraïl»² («Գլուխներ Սերայլում») երկը կարդալով, տեսնում էին, թե ինչպես Հյուգոն Հույն ժողովրդի ըմբոստ զավակների բերանից ատելավառ խոսքեր էր ժայթքեցնում սուլթանի և նրա հորդաների հասցեին, խոսքեր, որ հայը կարող էր լոկ մտաբերել՝ առանց սակայն հրապարակավ արտաքերելու: Ահա այդ երկից մի քանի հատված, բառացի թարգմանությամբ.

... Եղբայրնե՛ր, ողորմելի՛ է բարբարոս օրենքների
ծնունդ Մահմուդը,
Որի հզորությունը նրան հեռացնում է մարդկանցից և աստծոցից:

Հատակությունները լինելու են սույն Երկերի լիակատար ժողովածուից, Համառոտության համար մենք այսուհետեւ կհիշատակենք միայն ընդհանուր խորագիրը, Հատորը, տվյալ ժողովածուի վերնագիրը և էջը:

¹ Ալ. Մատուրյան, Բանաստեղծություններ, Հատ. 2, Մոսկվա, 1898:

² „Oeuvres Complètes“, T. I, Les Orientales, p. 14.

Նրա կույր հայացքն անընդունակ է դեպի երկինք
բարձրանալու,

իսկ նրա աղետաբեր և տատանվող թագի
Յուրաքանչյուր զարդածողի վրա ցցված է արյունլվա մի գլուխ:

...Մեր քաջերի շարքերում փոված այդ անծանոթ՝ մեռելները,
Որոնց պիղծ ճակատները հպում են մերոնց հերոսական
ճակատներին,

Դժոխքի և սատանայի անիջալ որդիներն են՝ Յուրքերը,
Որոնք կազմում են խավարածին մի ոհմակ, սրին սպասարկող
մի խաժամուժ...

... Թուրքերը գրավել են Միսսոլոնգիին... Ընկերներ, քշե՞նք
Նրանց թնդանոթները մեր ամրոցներից, նավերը՝ մեր կալքերից,
Այրե՞նք նրանց զորապետին՝ իր թնդանոթների եռակի կրակով...

Սակայն Հյուգոն միայն իր հերոսների բերանով չի
խոսում. նա հանդես է գալիս նաև հեղինակային խոսքով:
Ահա, օրինակ, «Enthousiasme»² («Խանդավավու-
թյուն») վերնագրով նրա բանաստեղծության առաջին
տողերը, որտեղ պոետը վարակիչ ոգեսրությամբ իր
հայրենակիցներին կոչ է անում՝ գնալ ազատագրել
ճնշված հույն ժողովրդին: Այդ տողերը ևս բերում ենք
բառացի թարգմանությամբ.

Դեպի՝ Հունաստան... Պե՛տք է մեկնել. մնաք բարո՞վ:
Նահատակված ժողովրդի արյունից հետո՝
Թող այսուհետև հոսի արյունն անարդ դահիճների:
Դեպի՝ Հունաստան, բարեկամնե՛ր, վրե՞ժ, ազատություն...

Ե՞րբ ենք մեկնում. Հենց ա'յս երեկո. վաղն արդեն ուշ կլինի.
Դեպի՝ ղենքերը, դեպի ձիերը, դեպի նավը թուլոնի.
Նա՞վ... ավելի շուտ՝ թևեր են հարկավոր,

1 Միսսոլոնգի՝ հունական փոքր քաղաք Հոնիական ծովի վրա,
որի բնակիչները 1820-ական թվականներին հերոսական դիմադրու-
թյուն ցուց տվեցին Յուրք զավթիներին: Այդ քաղաքում էր, որ
1824 թ. մեռավ Բայրոնը, որը զնացել էր հույների ազատագրական
պարագաներին մասնակցելու:

2 „Œuvres Complètes“, T. I, Les Orientales: p. 16.

Մեղ հետ կտանենք մնացորդները մեր հին զորագնդերի,
Եվ կտեսնեք, թե ինչպես այդ թուրք վագրերը
Իսկովն կփախչեն եղնիկի ոտքերով...

Առանց դժվարության կարելի է պատկերացնել, թե
այդ նույն վագրերի ճիրաններում հոշոտվող հայ ժո-
ղովրդի վրեժին դիր և տղատատենչ զավակները սրտի
ինչպիսի բարախումով էին կարգում բոցաշունչ պոետի
այս և բազմաթիվ այլ հոգեհարազար երկերը և ինչպես
ոգեշնչվում նրանցով:

Արևմտահայ գրազները վերոբերյալ վերջին երկու
երկը չեն թարգմանել և գրաքննության դաժան պայման-
ներում չեն էլ կարող թարգմանել, բայց անտարակույս
կարգում էին, քանի որ նույն ժողովածուից թարգմա-
նում էին այլ բանաստեղծություններ, ինչպիսիք են
«Ռուբականք»-ը, «Հուր Երկնից»-ը և այլն, իսկ
«L'Enfant»-ի նմանողությամբ դրում էին ինքնուրույն
երկեր:

Հյուգոն, շնորհիվ իր ըմբռստ խառնվածքի և հռետո-
րական հրաբուրքը լեզվի, բռնակալության դեմ իր բո-
ղոքն արտահայտել է ցասման ուժեղ պոռթկումով, ազա-
տության գովերգը հնչեցրել է առնական հզոր ոգեռու-
թյամբ, պայքարի կոչը բարձրացրել է շեփորի պես
ահագնաշռինդ՝ հատկություններ, որոնք առինքնում,
վարակում և տրամադրում են ընթերցողին: Ահա սրա-
նումն է եղել Հյուգոյի հմայքի գաղտնիքը: Եվ այդ էր
պատճառը, որ հայ իրականության մեջ անմահ պոետի
հանդեպ առաջացած վառ հետաքրքրությունը շուտով
վերածվել է ջերմ սիրո, նույնիսկ պաշտամունքի: Արև-
մտահայ գրողները հաճախ են խոսել այդ պաշտամունքի
մասին: Օրինակ, Եղիա Տեմիրճիպաշյանը իրեն հատուկ
չերմեռանդությամբ 1880 թ. գրում է. «Կը պաշտեմ մեր
հայրն Վիքթոր Հյուգոն. ամեն գարուց և ամեն ազգերու
քերթողաց քերթողահայր կը համարիմ ես այն բա-

նաստեղծն»¹: իսկ արձակագիր Զիֆթև Սարաֆը նշում է. «Հյուգոյի մեկ-երկու գործերուն կրկին թարգմանությունները զինքը մեջ դրած են պաշտվելու աստիճան հիացված կուռքի մը պատվանդանին վրա»²:

Կուի Սրագոնն իր «Hugo, poète réaliste»³ («Հյուգո՝ սեալիստ պոետը») խորագրով գրքում ասում է, թե Վիկտոր Հյուգոն միակ գրողն է, որի անվան կապակցությամբ մի նոր բառ է ստեղծվել ֆրանսերեն լեզվում, այն է՝ hugolâtre (հյուգոյապաշտ) բառը: Ուշագրավ է, որ Հայ Լեզվում ևս ստեղծվել է նույն բառը, որ հաճախ է օգտագործվել արևմտահայ մամուլում: Մեզ մոտ ընդհանրապես չի ասվում շեքսպիրապաշտություն, գյոթեապաշտություն կամ բայրոնապաշտություն, մինչեն Հյուգոյապաշտություն բառը շատ գործածական է եղել: Այսպիս, «Մեր մեջ ալ Հյուկոյապաշտությունը մինչեւ մոլության կերթա,— գրում է Գ. Մսերյանը, — Հյուկո պատգամ մ’ է կարգ մը նորել (իմա՝ նորելուկ—Հ. Գ.) գրագետներու համար, որոնք անոր անունով կ’երդնուն, անոր ձևով կը խոսին»⁴: Եվ կամ «Ես Հյուկոյապաշտ մը եղած եմ պատանության օրերես,— ասում է Արշակ Զոպանյանը, — և այդպիս ալ մնացած եմ»⁵:

Սակայն ճիշտ չէր լինի Հյուգոյի ամբողջ հմայքը վերագրել միայն նրա հայրենասիրական և ազատատենչ զաղափարներին: Հյուգոն, միաժամանակ, գեղարվեստական խոսքի խոշորագույն վարպետ էր: Նրա լեզվի արտակարգ ճոխությունը, բառերի հնչեղ երաժշտականությունը, ոճի ինքնատիպությունը, գրական անկրկնելի պատկերները, տաղաշափական խիզախ նորարարու-

1 «Մասիս», 1880, № 2699, էջ 3:

2 «Մասիս» 1902, № 6, էջ 87:

3 L. Aragon, Hugo, poète réaliste, Paris, 1952.

4 «Մասիս», 1881, № 3055, էջ 3:

5 «Անահիտ», 1935, № 5, էջ 6:

թյունները, յուրօրինակ հակագրությունների և համեմատությունների ապշեցուցիչ գեղեցկությունը, ստեղծագործական հուժկու երևակայությունը՝ այս ամենը հափշտակում էին հայ մտավորականներին և նրանց պատճառում գեղագիտական հոգեպարար բերկրություն։

Հայ գրական մտքի ականավոր ներկայացուցիչները բազմիցս են արտահայտել իրենց գնահատանքը Վիկտոր Հյուգոյի նկատմամբ։ Բայց այդ գնահատանքը միշտ միատեսակ չի եղել։ Դրական տարբեր ուղղությունների հետեւ և տարբեր աշխարհայացքի տեր մարդիկ տարբեր ձևով են ընկալել մեծ գրողին։

Կղերա-պահպանողական Խորեն Նար-Պեյը 1858 թվականին «Առ Վիքթոր Հյուկո»¹ շափածո ներբողի սկզբում հիշում է բիբլիական ավանդության վրա հիմնված այն վարկածը, թե եղեմական դրախտը եղել է Հայաստանում։ Նա ավելացնում է, որ աստված նախամարդուն պարզեց է արմեններեն լեզուն, որից և պոեզիան վերցրել է իր առաջին հնչյունները։ Հայկական հինավորց քնարը թեև թաքնված է անցյալի խորքում, բայց երկնքից փշող շունչը երբեմն թրթռացնում է նրա լարերը և բարձրացնում քաղցրալուր մի նվագ, որն արձագանքում է հայ պոետների հոգիններում։ Ահա այդ նվագի ներշնչմամբ Նար-Պեյը իր նախահայրերի եղեմական լեզվով գովերգում է Վիկտոր Հյուգոյի հանճարը։ Նա Հյուգոյի մեջ տեսնում է երկնառաք մարգարեն, սիրո, վշտի և հույսի երգիշը, մարդկային զգացմունքների բանիմաց թարգմանը և աստվածային արարշագործության քաղցրալեզու տաղերգուն։

Դրիգոր Զիլինկիրյանը, որին հափշտակում էին առավելապես Հյուգոյի սոցիալական առաջավոր հայացքները, 1868 թ. «Թշվառների» թարգմանության առաջարաբանում Հյուգոյին ներկայացնելով որպես խոշոր

1 Խորեն Նար-Պեյ, Քնար պանդստին, Ե. Պոլիս, 1868, էջ 389։

արվեստագիտի, միաժամանակ ընդգծում է, որ ամենից առաջ նա պայքարող մարտիկ է: Զիլինկիրյանը Հյուգոյին անվանում է «հեղափոխական և ապստամբ», որովհետև վերջինս «կը մերժե ամեն շինծու իշխանությունները, վերանորոգություն կը պահանջե ամեն ընկերական հիմնադրությանց նկատմամբ, և իր կամքը կատարելու համար կը քանդե ինչ որ հին է, ինչ որ փոտուն է, ինչ որ անիրավ է»¹: «Թշվառների» երկրորդ հրատարակության առթիվ Զիլինկիրյանը, փորձելով բացահայտել վեպի սոցիալական իմաստը, նշում է, թե Հյուգոն անզուգական վրձնով պատկերել է քաղաքակրթության շողողուն ծածկութիւն տակ թաքնված թշվառությունը, ոճիրն ու անբարոյականությունը, իսկ այնուհետև ցույց է տվել զրանց բուժման եղանակը: «Թշվառները» մտային զվարճությանց համար շինված թատրոն մը չէ, — ավելացնում է նա, — այլ... իրական և ընկերական փիլիսոփայությանց հանրագիտարան մը»²:

Մինաս Զերապը 1870 թվականին «Երկրագունդ» հանդեսի մեջ դրում է, թե Հյուգոն, չնայած պատկառելի հասակին, իր աքսորավայրում՝ Գերնսեյ կղզում, անդադար ստեղծագործում է երիտասարդի եռանդով. «Ինչ բոց, ինչ խանդ, ինչ ավյուն, որ կը վառեր իր գրվածոց մեջ մինչ երիտասարդ էր, նույնը կը ցոլա տակավին իր ամեն մի տողին մեջ: Մանշա փրփրուն ալիք շեն կրցած մարել կրիտական հուրով ձուլված շանթը, զոր Փարիզեն ի Կեռնըսի փոխագրեց Հյուկո: Միշտ միենույն զորականի որդին է, որո գրիշը սուր մըն է Ազատության, որ ը մրտտեր: Կը կորե»³:

¹Տե՛ս «Թշվառների» 1868 թ. հայերեն հրատարակության առաջաբանը:

²Տե՛ս «Թշվառների» 1885 թ. հայերեն հրատարակության առաջաբանը:

³«Երկրագունդ», 1870, № 9, էջ 142.

Հյուգոյի հիացողներից մեկն է եղել Պետրոս Դուրյանը, որը 1870 թ. գրած իր «Թատրոն և թշվառներ» դրամայում յուրովի տալիս է իր գնահատականը մեծ գրողի մասին։ Քրամայի գործող անձերից մեկը իր զրուցակցին գանգատվում է, թե Հայ հասարակությունը սովորաբար թատրոն է հաճախում միայն զվարճանալու դիտավորությամբ, մինչդեռ Եվրոպայում մարդիկ թատրոն են գնում մարտական գաղափարներով զինվելու համար, որովհետեւ թատրոնը շատ հաճախ «հեղափոխության հրարութիւն է»։ Ապա խոսելով Շեքսպիրի, Շիլլերի և Հյուգոյի մասին, նա ասում է. «Կը պաշտեմ իս այդ հանճարները, ժողովրդոց այն շանթեռանդն ու կարմիր զավակները»¹։

Պարզ է, որ դրամայի գործող անձի բերանով Դուրյանը իր հիացմունքն է հայտնում Հյուգոյի հանդեպ։ Ի դեպ, «շանթեռանդն» և «կարմիր» էպիտետները ամենազիպուկ կերպով բնորոշում են «հեղափոխության հրաբուխը» մշտաբորբոք պահող հեղինակներին։

Հակոբ Պարոնյանը նույնպես խոր համակրանք է տածել Վիկտոր Հյուգոյի նկատմամբ և հաճախ է վկայակոչել նրան. 1870-ական թթ. Պարոնյանը հույս է հայտնել, որ Հյուգոյի աղատասիրական և խաղաղասիրական գաղափարները ապագայում իրականանալու են. «Աշխարհ ընդհանուր կերպով հասարակապետություն պիտի ըլլա և Վիթոր Հյուկոյի երեակայած իդեալը պիտի թագավորի»², — գրում է մեծ երգիծարանը իր «Արդոսի խորհրդածություններ»-ում։ Նույն գլխում, Պարոնյանը մի այլ ասիթով պատմում է, թե երազում տեսել ու զրուցել է Վիկտոր Հյուգոյի հետ։ Զրուցի ըն-

1 Պետրոս Դուրյան, Երկեր, Երևան, 1947, էջ 361.

2 Հակոբ Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, Հատ. 9, Երևան, 1938, էջ 175.

թացքում իրը թե Հյուգոն ասել է. «Հայաստանի մասին շատ աղեկ կարծիքներ ունիմ. ես անոր փրկությանը կհավատամ»։ Այնուհետև մեծ հումանիստը խոստացել է Պարոնյանի հետ ձեռք-ձեռքի աշխատել՝ ավերիչ պատերազմներին վերջ տալու ուղղությամբ։ Պարոնյանը, ինչպես տեսնում ենք, Հյուգոյի միջոցով իր սեփական իդն է հայտնում աշխարհի խաղաղության, հայերի ազատագրության ու պայծառ հեռանկարների մասին։

Հանձին Հյուգոյի Եղիա Տեմիրճիպաշյանը տեսնում է բոցաշունչ հեղափոխականին և բռնակալության անհաշտ թշնամուն, բայց միաժամանակ՝ սիրո, գթության և ժողովուրդների եղբայրության անխոնջ քարոզչին։ Հայ գրողը հանճարեղ հեղինակին ողջունում է սրտաբուխ խանդակառությամբ։ «Ողջո՞ւյն, վսեմախոհ, օգոստափառ ծերունի, վեհագույնդ ի բանաստեղծս, ոու բանաստեղծ գթության և եղբայրության, Հյուկո, երիցս մեծ, Հյուկո, երիցս աստվածային, քեզ ողջո՞ւյն և երկրապագություն հավետ»¹։

A 3/6 27
Վիկտոր Հյուգոյի հանդեպ հայ գրողների տածած խոր հիացմունքի մասին վկայում է հետեւյալ փոքր, բայց նշանակալից դեպքը։ Հրանտ Ասատուրը, Փարիզում ապրած ժամանակ, մի օր այցելում է բառարանագետ Գլիդոն Լուսինյանին, որը Հյուգոյի հարևանն էր։ Այդ օրը Հյուգոն բացակայում էր քաղաքից։ Լուսինյանը Հրանտ Ասատուրին ցուց է տալիս «Թշվառների» հեղինակի սենյակը։ Երիտասարդ հայ գրողը, շերմեռանդությամբ համակված՝ մոտենում և ձեռքով հպում է Հյուգոյի գործին ու նրա գրասեղանին։ Ձեռքի թեթև, բայց խորիմաստ մի շարժում։ Հետագայում իր հուշերի մեջ Հր. Ասատուրը գրում է. «Երկյուղածորեն դպա իր գրչին, որով այնչափ հրաշակերտներ գրած էր, և այն գրասե-

1 «Մասիս», 1880, № 2699, էջ 3։

ղանին, որուն առջև խոկացած էր տասնիններորդ դարու մեծագույն բանաստեղծը»¹:

Արևելահայ մտավորականության մեծ մասը համեմատաբար ուշ հաղորդակից դարձավ Վիկտոր Հյուգոյի ստեղծագործություններին, բայց նրանց ծանոթանալուց հետո շատ բարձր գնահատեց հեղինակի թե՛ տաղանդը, թե՛ գեմոկրատական հայացքները:

Հայ խոշորագույն դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը, որը գեռ անցյալ դարի 60-ական թվականներին մեծ հետաքրքրությամբ կարդում էր Հյուգոյի աշխատությունները, 1902 թ. նոյեմբերի 9-ին Յուրի Վեսելովսկուն ուղղած իր նամակում գրում է. «Մայրս և դաստիարակներս մանկությունից սկսած այնպիս էին արել, որ խեղճի, տանջվողի, հալածվածի նկատմամբ ես միշտ վերաբերվել և վերաբերվում եմ մեծ կարեկցանքով: Օրինակ, ես երեք չեմ մոռանա այն ցնցող տպավորությունը, որ կրեցի քառասուն տարի առաջ բնագրում կարդալով Վ. Հյուգոյի «Le Dernier Jour d'un Condamné»² գիրքը»³:

Հյուգոյի զերմ երկրպագուներից է եղել Բաֆֆին, որը ոչ միայն հափշտակությամբ կարգացել է նրա ստեղծագործությունները, այլև ոգեշնչվել նրա վեհ իդեալներով, սրանշացել նրա արտահայտչական ձևերի անսպառ հարստությամբ: Հյուգոյի տաղանդի մասին Բաֆֆու ունեցած բարձր կարծիքի մի վկայությունը գտնում ենք այն նամակում, որ 1868 թ. հունվարի 9-ին նա գրել էր իր վաղեմի բարեկամ Ավագ Աֆթանդիլյանցին: Այնտեղ Բաֆֆին հայտնում է, թե «Մաղիկ» երկշաբթաթերթում կարդացել է Միքայել Նալբանդյանի մահվան վերա-

1 Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 85:

2 «Մահապարտի վերջին օրը»:

3 Հայկական ՍՍԾ. ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Յուրի Վեսելովսկու գոնդ, № 371:

բերյալ հոդվածը և ավելացնում է, որ հոդվածը թույլ է.
«Ազգային այդ թանկագին ջոհի ցավալի մահը նկարա-
գրելու համար,— ասում է նա,— հոշակավոր Հյուգոյի
գրիչը պետք է և կամ Արովյանի վառված-կրակված
սիրտը»¹:

Աֆթանդիլյանցն իր «Պատկերներ Բաֆֆիի կյանքից»
գրքում պատմում է, թե մի օր Բաֆֆու գրասենյակը
մտնելով, վերջինիս գտնում է «Թշվառների» ընթերցա-
նության մեջ խորասուզված, և նրան մի քիչ գրգռելու
համար ասում է.

— Ի՞նչ եք այդպիս վրա պրծել այդ ֆանֆարոն
ֆրանսիացու գրվածքի վրա. դրանք ընթերցողի ուղեղում
միայն երեկայական տպավորություն են թողնում,
ավելի ոչինչ:

Բաֆֆին, գլուխը բարձրացնելով, ապշած նայում է
նրան և պատասխանում.

— Մի այդպիսի կարծիք ես երբեք չեմ սպասում
ձեզանից. ես այն կարծիքի էի, որ գուք Հյուգոյի փառա-
րանողներից եք... Ո՞չ: Անկասկած, դա մի կատակ է:
Ես ձեզ շատ անգամ նախանձել եմ՝ տեսնելով Հյուգոյի
բնագիր հեղինակությունները ձեր գրասեղանի վրա,
որոնք ես չեմ կարողանում կարդալ: Ես կարդում եմ
միայն հայերենի թարգմանածները, որոնք բնագրի
համն ու հոտը չունեն:

Եվ ասպա ավելացնում է.

— Երանի՛ է քեզ, Ֆրանսիա, որ Հյուգոյի պես բա-
ռաստեղծ ես ծնել... և ո՞վ կարող է հավասարվել
նրանց²:

Շիրվանզադեն Բաֆֆու մասին 1894 թ. գրած իր
հուշերում նույնպես վկայում է, որ մեծ վիպասանը շատ

1 Հայկական ՍՍԾ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան,
Բաֆֆու ֆոնդ, № 4:

2 Ա. Աֆրանդիլյանց, Պատկերներ Բաֆֆիի կյանքից, Ալեք-
սանդրապոլ, 1904, էջ 102.

էր սիրում Հյուգոյին. «Նա ոգեռվում էր ֆրանսիական ոռմանտիզմի վերջին և ամենափայլուն դրոշակակրի գործերով... Նա համոզված էր, որ այդ աստղը (Հյուգոն—Հ. Գ.) գեռ շատ երկար ժամանակ պետք է յուր լուսով նսեմացնի ամենին... Հյուգոյի հրապուցքը նրա աշքում վառ մնաց մինչև մահը»¹: Բայց Շիրվանզադեն միաժամանակ նշում է, որ Թաֆֆին ծանոթ չէր գրական նորագույն ուղղությունների հետ: «Ժամանակակից գրական շարժումը, որ սկսվել էին,— ասում է նա,— գրականության պահանջները՝ նույնպես: Ամբողջ ընթերցող աշխարհը սրտի բարախումով դիտում էր այն գրականական շարժումը, որ սկսվել էր ոռմանտիզմի անկումից հետո, իսկ այստեղ, մի կիսակիրթ հասարակության մեջ, կար մի վիպասան, որ դեռ հափշտակվում էր մի մարող աստղի փայլով»: Դրանով Շիրվանզադեն ոչ թե փորձում է Հյուգոյին նսեմացնել, այլ պարզապես քննադատում է Թաֆֆուն, որ միայն Հյուգո է կարդում: Իսկ «մարող աստղի վերջին փայլ» արտահայտության մեջ՝ «մարող աստղը» փաստորեն ոռմանտիզմն է, իսկ Հյուգոն՝ նրա «վերջին փայլը»: Եվ իրոք, Հյուգոն եղել է ոռմանտիզմի ամենավերջին և ամենափայլուն ներկայացուցիչը: Ինչ վերաբերում է մասնավորապես Հյուգոյին, ապա նրան անվանելով «Փրանսիական ոռմանտիզմի ամենափայլուն դրոշակակիրը», հայ ոեալիստ գրողը խոստովանում է նրա տաղանդի մեծությունը: Գեռ 1887 թվականին Շիրվանզադեն «Մահապարտի վերջին օրը» գրքույկի հայերեն թարգմանության առթիվ տպագրած իր գրախոսականում հետևյալ գնահատականն է տվել Հյուգոյին: «Գրքույկը բաղկացած է ընդամենը 150 էջերից, բայց նորա մեջ այնքան զգացմոնք, գեղարվեստ և փիլիսոփայություն կա, որչափ դժվար է գտնել... բազմաթիվ հաստ հատորների մեջ: Քիչ գրել, բայց շատ բան ար-

¹ «Հորիզոն», Գրական հանդես, 1894, Ա գիրք, էջ 138,

տահայտել—ահա տաղանդավոր գրչի արժանավորությունը, և այդ արժանավորության «Մահապարտի վերջին օրը» համապատասխանում է լիովին։ Յուրաքանչյուր տողը այստեղ ներշնչված է հեղինակի խորին կարեկցությամբ գեպի թշվառ դատապարտյալը, յուրաքանչյուր էջ պարունակում է յուր մեջ խորիմաստ փիլիսոփայություն»¹։ Այս խոսքերով Շիրվանզադեն մարմնավորում է իր կարծիքը Հյուգոյի մասին թե՛ որպես մտածողի, թե՛ որպես արվեստագետի։

Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը 1896 թ. գրած «Գրական դպրոցներ» խորագրով իր ընդարձակ և հմտալից ուսումնասիրության մեջ բնորոշում է ոռմանտիզմը որպես պատմական տվյալ ժամանակաշրջանի առաջադեմ ուղղություն և այդ առթիվ վրդովմունք է հայտնում, որ որոշ գրողներ թերագնահատում են Հյուգոյի գրական տաղանդը։ «Այդ մեծ դպրոցով է տարածվել արդի միաբը, — ասում է նա, — և այդ դպրոցը եղել է և մեզանում, և նույնիսկ դեռ հարատեսում է մեր օրերում՝ մեր բանաստեղծների մեջ։ Մեր բանաստեղծների մի մասն ոռմանտիկ է մինչև այժմ էլ։ Բայց, չնայած դրան, մեր վիպասաններից մեկը... մի անգամ մոտավորապես հետեւալ կարծիքն է հայտնել մի ուրիշի համար։ «Նա հետադեմ է. չի իմանում, թե Վիկտոր Հյուգոն ոռմանտիկ է և Վիկտոր Հյուգոն է կարդում»։ Մեր այդ վիպասանն իրեն առաջադեմ համարելով, ցավում էր, որ ուրիշները հետադիմության մեջ են մնում նրանով, որ մեծ բանաստեղծ Վիկտոր Հյուգոն են կարդում, որը ֆրանսիական ոռմանտիզմի մեծ վարպետն է»։

Հայ գրականության մեջ ծաղկող և վերելք ապրող ռեալիստական ուղղության ներկայացուցիչները 80-ական թվականներից սկսում են մամուլում քննադատել ոռմանտիզմը։ Նրանք առաջադրում են ժամանակակից

1 «Արձագանք», 1887, № 35, էջ 561։

կյանքը ուեալիստորեն պատկերելու անհրաժեշտությունը, Հյուգոյի մեծությունն ընդունելով հանդերձ, նախապատվությունը տալիս են ուեալիստ հեղինակներին:

Այս այդ նկատառումով է, որ հրապարակագիր Գ. Մսերյանը 1881 թ. իր «Մետեօրա» հանդեսում տպագրում է էմիլ Զոլայի «Վիքթոր Հյուկո» և էմիլ Լիթրեա հոդվածի թարգմանությունը: Այդ հոդվածում Զոլան Հյուգոյին համեմատելով մեծանուն բանասեր և փիլիսոփա էմիլ Լիթրեի հետ, գերադասում է վերջինիս պողիտիվիզմը: Այնուհետև նա խիստ և բավականին անարդար կերպով քննադատում է Հյուգոյի «Les quatre vents de l'esprit» («Մտքի չորս հովերը») բանաստեղծությունների ժողովածուն:

Մսերյանը այդ հոդվածի հայերեն թարգմանության համար գրած ըր առաջաբանում վերապահությամբ է բաժանում Զոլայի կարծիքը Հյուգոյի մասին, բայց միաժամանակ հայտնում է այն միտքը, թե հայ հասարակության մեջ արդեն առաջացել են նորանոր հետաքրքրություններ ու պահանջներ, որոնք այլևս չեն կարող լիովին բավարարվել ոռմանտիկ գրականության մատուցած հոգեղեն սնունդով: Ուստի, պետք է ժամանակակից կյանքից վերցնել նոր թեմաներ և գրանք բացահայտել ուեալիստական մեթոդով: Ինչ վերաբերում է անձնապես Հյուգոյին, Մսերյանը նախ ընդգծում է հայ ընթերցող հասարակության մեջ նրա վայելած մեծ ժողովրդականությունը և ապա ավելացնում. «Հյուկո անշուշտ է և կը մսա քերթողական անհավասարելի հանճար մը, վսեմ հոետոր մը, որու բերնին մեջ ամեն բառ կը զորանա, կընդարձակվի ու կորոտա եռափող շոհնդե ելնող ահեղ ձայնին պես: Բայց վերջապես փող, շոփնդ ու քնար մեր իրական պիտոյից չեն բավեր, ուրիշ սնունդներու ալ պետք ունինք, զորս ժամանակ է ալ փնտոելու»:

«Մասիսի» խմբագրությունը արտատպում է ջոլայի հոդվածն ու Մսերյանի առաջաբանը, դրանով իսկ դրսեռքիլով իր համաձայնությունը նրանցում արտահայտված կարծիքներին¹:

Նույն տարիներին արևելահայ մամուլում ևս դրսեռքում է որոշակի քննադատական վերաբերմունք դեպի ոռմանտիզմը և Հյուգոն: Նկատի ունենալով մասնավորապես թատերագրությունը, արևելահայ հեղինակները մատնանշում են ոռմանտիկական մեթոդի հիմնական թերությունները, որոնք բնականաբար առկա են նաև Հյուգոյի ողբերգություններում:

Այսպես, 1879 թ. «Մշակում» տպագրվում է «Թատրոնի նշանակությունը» վերնագրով մի հոդված, որտեղ հեղինակը (անսատորագիր) Գաբրիել Սունդուկյանի և ֆրանսիական ռեալիստական դպրոցի գովքն անելուց հետո անդրադառնում է Հյուգոյին և նշում, որ վերջինս իր դրամաներում ստեղծում է ծայրահեղ բնավորություններ և արտասովոր դրություններ, որոնք տիպական չեն և ընդհանրապես իրական կյանքում չեն լինում:

Հյուգոյի դեմ ուղղված այս քննադատությունը ինքնանպատակ չէր. այն արտացոլում էր ժամանակի հայ իրականության պահանջները: Հոդվածի հեղինակը փաստորեն հետամտում էր ռեալիստուարից դուրս հանել մի շարք ոռմանտիկ հեղինակների պիեսները, որոնք ներկայացվում էին թիֆլիսահայ բեմի վրա: Նրա այդ նպատակը ակնհայտ է դառնում հետևյալ տողերից. «... Եթե այդ մեղադրանքը կարելի է բարձել այնպիսի նշանավոր մի գրողի վրա, որ ճշմարիտ է, թեև սխալ և վնասակար ուղղության՝ ոռմանտիզմի ներկայացուցիչն է, բայց այնուամենայնիվ այդ ուղղության մեջ մի հսկա է, որքան ավելի կարելի է վնասակար համարել այն մանրմունքը ոռմանտիկների գրվածները, որոնց հեղինակու-

1 Տե՛ս «Մասիս», 1881, № 3055—3057:

թյունները այժմ հետզհետե ներկայացնում է թիֆլիսի այժմյան հայոց թատրոնական կոմիտետը»¹:

Այսպիսի հոդվածները, սակայն, գեռևս մեծ արձագանք չեին գտնում 80—90-ական թվականներին, և դրա համար էլ հայ մամուլում սակավ ենք հանդիպում Վիկտոր Հյուգոյի դեմքնադատական նման ելույթների: Ճիշտ է, Զոլայի բուռն հոդվածը մի առժամանակ որոշ տպավորություն թողեց ռեալիստ գրողների շրջանում, բայց Հյուգոյի խորարմատ հեղինակությունը, վերջին հաշվով, անսասան մնաց ընթերցող հասարակության լայն շրջաններում: Այդ մասին է վկայում, օրինակ, Արփիար Արփիարյանի հետեւյալ խոսքը. «Հյուկոյի շունչը կը սարսոեցնե, կը հովահարե ամբոխն ալ»²:

Հայ գրական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից Գրիգոր Զոհրապը, որը մեծ հետաքրքրությամբ էր կարդում Վիկտոր Հյուգոյի երկերը և հիանում նրա տաղանդով, 1893 թ. Ֆրանսուա Կոպակի մասին «Մասիս»-ում տպագրած իր հոդվածում ասում է. «Եթե Հյուկոյի վրա պիտի սհանշանանք միշտ (ընդգծումը մերն է—Հ.Գ.), եթե կամառթինի վրա պիտի զմայլինք, Գոբբեն ալ պիտի սիրենք»³: Իսկ մի այլ առթիվոնա Հյուգոյին անվանում է «ռոմանքիք գրականության անմատչելի կատարը»⁴:

XX դարի առաջին տասնամյակներում հայ իրականության մեջ գնալով ուժեղանում է ժամանակակից թեմաներով պիեսներ ներկայացնելու պահանջը: Այդ հիման վրա մի շարք պարբերականներում նորից դրսեորվում է քննադատական վերաբերմունք ընդհանրապես դեպի ոռմանտիզմը և մասնավորապես դեպի ոռմանտիկական դրամաները:

1 «Մշակ», 1879, № 188:

2 «Գեղունի», 1902, № 4—6,էջ 40:

3 «Մասիս», 17. IV, 1893:

4 «Մասիս», 4. X, 1902:

Ելնելով գրական ուսալիզմի դիրքերից, ժամանակի քննադատները նշում էին, որ այդ գրամաներում հերոսների հոգեբանական գրություններն արհեստական են, փոխհարաբերությունները՝ բռնազրուսիկ, կոնֆլիկտների լուծումը՝ քմահաճ: Նրանք նույնպես նշում էին, որ գրամաների սյուժեն չի զարգանում տրամաբանական ընթացքով, որ հեղինակներն իրենց միջամտությամբ դեպքերը մղում են դեպի ցանկացած վախճանը և այլն:

Հիշյալ դիտողությունները արվում էին նաև հայ բեմի վրա ներկայացվող Հյուգոյի դրամաների նկատմամբ: Սակայն ուսալիստական ուղղության ներկայացուցիչները միաժամանակ ընդգծում էին, որ Հյուգոն, ի տարբերություն այլ հեղինակների, իր հանճարով հմայում և իր վեհ գաղափարներով հույզում ու խանդավառում է հանդիսատեսներին: Այսպես, 1904 թ. Թիֆլիսում «Էռնանդի» ներկայացման առթիվ «Մշակի» մեջ տպադրված գրախոսականում հեղինակն ասում է. «Որքան էլ այդ դրաման կեղծ-կլասիկական գունավորում ունի, որքան էլ Վ. Հյուգոն արագիզմը նրա մեջ հասցնում է անբնական դրության, որքան էլ գործող անձինք պտտում են շարունակ դաշույնի և թույնի շուրջը, բայց այն հսկայական վեհ մտքերը, հասկացողությունները, ասպետական այն զորեղ առաքինությունները, որոնցով համակված է ամբողջ դրաման, այնքան խոր հուղում, ցնցում են ձեզ, այնպես սաստիկ ճնշում բարոյապես, որ դուք նույնիսկ բնազդորեն զգում եք, թե կանգնած եք մի վիթխարի հանճարի առաջ»¹:

Հյուգոյի «վիթխարի հանճարի» հմայքը մեծ էր հայ հասարակության մի զգալի մասի մեջ:

Գրաքննադատ Վ. Նալբանդյանը 1901 թ. «Էռնանդի»-ի ներկայացման առթիվ գրում է, թե հայ հասարակության լայն խավերը հաճույքով են դիտում Հյուգոյի դրամա-

¹ «Մշակ», 1904, № 3, էջ 1:

ները, իսկ Թիֆլիսի գերասանական խումբը, ընդառաջելով այդ շրջանների ցանկությանը՝ հաճախ բեմադրում է Հյուգոյի պիեսները: «Սա,— ավելացնում է գրախոսը,— մեզ մի անհերքելի իրողություն է թվում»¹:

Ուշագրավ է, որ բացի լայն հասարակայնությունից, հիշյալ տասնամյակներում հայ մտավորականության մեջ էլ տակավին կար մի շերտ, որը բարձր էր գնահատում ոռմանտիկ գրականությունը և վառ հետաքրքրությամբ կարդում ոչ միայն Հյուգոյի, այլև հայ գրողների՝ Դուրյանի, Տեմիրճիպաշյանի, Տյուսարի, Ծերենցի, Պատկանյանի, Շահազիզի, Բաֆֆու և ուրիշների ոռմանտիկական երկերը: Դրա բնորոշ բացարությունը գտնում ենք արևմտահայ հրապարակագիր Պարույր Քեշեյանի գրականագիտական խոհերում, որ զրի են առնվել 1907 թվականին, Փարիզում «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպի բեմականացման առթիվ. «Ինչ որ ալ ըսեն գրական արդի դպրոցներու հետևողները բոմանդիկ գրականության նկատմամբ, որքան ալ անիկա այպանվի իր շափազանցություններուն և անիրականալի մտափարաներ երևակայած ըլլալուն համար, այսուհանդերձ բոմանդիկ գրականությունը գեռ երկար ատեն պիտի կարդացնե ինքզինք, պիտի հուզե, խանդավառե մարդկային սիրտերը, զի անիկա անհրաժեշտ մեկ կայքն է մեր մտքին: Պիտի թափառինք գուցե նյութապաշտության, բնապաշտության և այլ ոլրտներու մեջ. բայց պիտի գա բոպե մը, որ պետքը պիտի զգանք շնչելու հոգեպաշտության, վիպականության ոգևորիչ, սրտապնդիչ, մաքուր մթնոլորտը, որ թեթևություն պիտի տա մեր ծանրաբեռնված էություններուն և զետնաքարշ կիրքերուն»²:

Նշանակում է, որ հայ ընթերցող հասարակայնության մի զգալի մասի համար ոռմանտիզմը դեռ պահպանում

1 «Մշակ», 1901, № 218, էջ 1—2:

2 «Բյուզանդիոն», 1907, № 3170, էջ 1:

էր իր հմայքը: Այլապես ինչո՞վ բացատրել այն փաստը, որ նշված ժամանակաշրջանում Հյուգոյի ստեղծագործություններն անհամեմատ ավելի շատ էին թարգմանվում ու տարածվում, քան Բալզակի, Ստենդալի, Դիկենսի, Ֆլորերի, Ջուլյայի և Մոլասանի երկերը:

* * *

Հայ գրական գործիչները Հյուգոյի ստեղծագործությանն ու արվեստին միահամուռ կերպով անդրադարձել են նրա մահվան առթիվ և ծննդյան ու մահվան տարեդարձներին: Այդ առիթներով է, որ Հայ գրական միտքը բազմակողմանիորեն պատկերել է իր գնահատանքը Հանճարեղ Հեղինակի նկատմամբ: Ընդ որում, պատմական տարբեր շրջաններում նշվող հոբելյաններին մամուլը Հարազատորեն արտացոլել է ժամանակի մտավորականության տարբեր հոսանքների յուրահատուկ վերաբերմունքը գետի Հյուգոյի գրական ժառանգությունը:

Ուշագրավ է, որ Հյուգոյի ստեղծագործությունը գնահատելիս Հայ գրաքննադատությունը հաճախ ի հայտ է բերել մեկնաբանության նորանոր երանգներ: Այդ ցուց է տալիս, որ մեր իրականության մեջ Հյուգոյի գնահատության հարցը ժամանակի ընթացքում զարգացում է ապրել:

Հայ մամուլը առաջին անգամ միահամուռ կերպով Հյուգոյին անդրադարձել է 1881 թվականին՝ նրա ծննդյան 80-ամյակի առթիվ: Այդ օրերին Պոլսի «Մասիսը», Զմյուռնիայի «Արևելյան մամուլը», Մոսկվայի «Փարոս Հայաստանին», Թիֆլիսի «Մշակը» և այլ պարբերականներ տպագրել են Փարիզում կայացած հոբելյանական տոնակատարությունների նկարագրությունը և Հյուգոյի նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտել են՝ նրան բնութագրելով որպես «ազատության

պաշտպան», «զրկյալ մարդկության փաստաբան», «գթության առաքյալ», «դարուս ամենամեծ բանաստեղծը» և այլն:

Նշանավոր հրապարակախոս և հասարակական գործիչ Գրիգոր Օտյանը, որն անձնապես մասնակցել էր Համաժողովրդական տոնակատարություններին, պատմում է, թե տարեղարձի օրը հինգ հարյուր հազար մարդ տողանցել են Հյուգոյի տան առաջ, իսկ ծերունազարդ պոետը իր երկու թոռների՝ Ժորժի և Ժաննայի հետ պատուհանի մոտ կանգնած՝ ողջունել է նրանց: «Եվ այդ հինգ հարյուր հազար գաղղիացվոց մեջ,— ավելացնում է Օտյանը,— երկու հայ ալ կային, որ հեռվեն հանդիսատես ու սրտով մասնակից եղան սիրալի հանդեսին և, իբր թե իրենցն ու իրենց աղջինն ըլլար, կը գուրգուրացին ու կը հիանային տեսնելով... լուսափայլ գլուխը բանաստեղծին»¹: Այս խոսքերը հրապատորեն արտահայտում են այն չերմ խանդաղատանքը, որ հայ մտավորականությունը տածում էր ազատության բոցաշունչ մարտիկի նկատմամբ:

Վիկտոր Հյուգոն վախճանվեց 1885 թվականի մայիսի 22-ին: Հայ մամուլը միահամուռ սգաց նրա մահը և այդպիսով մեր ժողովրդի վշտի թարգմանը հանդիսացավ: Մեծ պոետի մահվան լուրն իմանալով, Թիֆլիսի հայ և վրաց պարբերականների խմբագրությունները միասնաբար հետևյալ ցավակցական հեռագիրը ուղարկեցին Հյուգոյի հովանավորած «Rappel» լրագրի խմբագրությանը. «Թիֆլիսի հայ և վրաց մամուլը մասնակից է լինում այն համաշխարհային սուպին, որ պատճառեց մեծ հանճարի մահը, որի անմահ գործերը ոգեսրում են բոլոր աշխարհը»: Հեռագիրը ստորագրել են «Աղյու-

1 «Հատընտիր հավաքածու ընտիր դրվածոց», Ա. մաս, Կ. Պոլիս, (անթվակիր) կազմեց Մ. Գափամահյան, Հյուկոյի տարեղարձը:

րի», «Արձագանքի», «Մեղմի», «Նոր Դարի», «Դրոերացի», «Էլերիալի» և «Նորաթիի» խմբագրությունները¹:

Նույն օրերին մեծանուն գրողի հանդիսավոր թագումը մանրամասնորեն նկարագրող հաղորդումներ և նրա կյանքի ու գրական գործունեության վերաբերյալ ընդարձակ հոդվածներ տպագրվեցին «Արձագանքի», «Նոր Դարի», «Մեղու Հայաստանիի», «Աղբյուրի», «Մասսիսի», «Արևելքի», «Երկրագումնիի», «Գրական և իմաստասիրական շարժումի», «Արևելյան մամուլի» և այլ բազմաթիվ թերթերի և հանդեսների էջերում:

Պոլսի «Արևելքը» տպագրել է Հյուգոյի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված մի ընդարձակ հոդված, որն սկսվում է հետեւյալ ուշագրավ խոսքերով. «Տասներեսներորդ դարու մեծագույն դեմքերեն մին անհետացավ: Ոչ ես է Վիքթոր Հյուկո: Մայիս 22-ին, ուրբաթ օր երեկոյան դեմ 83 տարեկան հասակին մեջ Վիքթոր Հյուկո կնքեց իր գոյության վաղանցիկ մասը և մտավ անմահության մեջ»: Հոդվածագիրը այնուհետև խոսում է մեծ գրողի ստեղծագործությունների մասին, բացահայտում նրանց նշանակությունն ու դերը համաշխարհային գրականության մեջ և նշում հեղինակի ազատասիրական ու մարտաշունչ գաղափարների ունեցած խոր ազդեցությունը XIX դարի քաղաքական-հասարակական կյանքում. «Աղատության, եղբայրության, հավասարության և մարդասիրության սկզբունքներ այս դարուն մեջ չունեցան առավել հզոր բացատրիչ մը և շատագով մը: Սովորություն եղած է ըսել, թե Վիքթոր Հյուկոյի մեջ վերացական գաղափարներ միայն կը գտնվին: Բայց աշխարհավարներու շոր հաշիվներեն ոչ նվազ՝ այդ «վերացական» գաղափարք կը վարեն աղդրն և առաջ կը բերեն մեծագույն փոփոխումները ժողովրդոց հակատագրին մեջ: Եղեռնային օրինաց մա-

1 Տե՛ս «Աղբյուր», 1885, № 5—6,էջ 196:

քում, մահու պատժույն նվազում, ընկերային թշվառությանց սփոփման համար հետզհետե եղած տնօրինությունք, գթության հաստատությանց բաղմացում, ժողովրդային իրավանց աղատ հոչակում, բոհապետական դրությանց տկարացում, աղատ մտածություն, աղատ կյանք— բոլոր ասոնք գնահատելի բարիքներ են, զորս ի գործ ածելու համար՝ Վիքթոր Հյուկոյի պես «վերացական» մատենագրաց հրատարակությունք հղորապես նպաստած են»:

Միանգամայն ճշմարտացի այս դատողություններից հետո հոգվածագիրը տալիս է իր գնահատականը Հյուգոյի մասին՝ որպես հասարակական գործչի. «Եթե,— ասում է նա,— անցյալ դարուն քաղաքական և ընկերային մեծ հեղափոխության շարժառիթներին մինչ Վոլթերի պես մատենագրի մը երկցած լինելն էր, անկարելի է ժխտել, թե նմանօրինակ աղղեցություն մ'ալ ներկադարուս մեջ Վիքթոր Հյուկո ի գործ դրավ: Այս նկատումով ևս կըսեմք, թե Վիքթոր Հյուկոյի անունն անկորնչելի պիտի մնա շատ դարեր»¹:

Հայտնի արձակագիր Լևոն Բաշալյանը Հյուգոյի մահվան առթիվ մի ամբողջ հոգվածաշարք է տպագրում «Մասիսում», որն այդ տարիներին խմբագրում էր Արփիար Արփիարյանը: Հոգվածագիրը մեծ գրողին բնութագրում է հետեւյալ խոսքերով. «Վիքթոր Հյուկո միայն հանճար մը շեղավ, այլ բնության երևույթ մը... Բանաստեղծին կյանքը կը լեցնե զրեթե ամբողջ դարն, և դարուն հոգին կը թրթուա նորա ամեն գործերուն մեջ»: Բաշալյանը Հյուգոյի կենսագրության ֆոնի վրա պատկերում է նրա ստեղծագործական ուղին, համառոտակի անդրագառում նրա գլխավոր աշխատություններին և վեր հանում նրա աշխարհայեցողության գլխավոր հատկանիշները՝ խոր հումանիզմը, լավատեսությունը, ան-

¹ «Արևելք», 1885, № 407, էջ 1—2:

խախտ հավատը դեպի մարդկության լավագույն ապագան, անսահման ատելությունը դեպի բռնակալն ու հարստահարիչը։ Հյուգոյի մեջ երկու հակընդդեմ զգացմունքի՝ ծայրահեղ սիրո և ծայրահեղ ատելության համատեղ գոյակցությունը բացատրելու համար Բաշալյանը զարգացնում է այն միտքը, թե ծայրահեղորեն սիրողը միայն ընդունակ է ծայրահեղորեն ատելու, և Հյուգոն, որը ծայրահեղորեն սիրում էր հասարակ մարդուն, հենց դրա համար էլ ծայրահեղորեն ատել է նրան ճնշողին։ Անդրադառնալով Հյուգոյի ստեղծագործություններում ընդգրկված թիմաների բազմազանությանը, Բաշալյանը հիացմունքով բացականչում է. «Այդ երկար կենաց այդ գործերու դեպին մեջ ի՞նչ ճոխություն, ի՞նչ զանազանություն։ Զկա գաղափար մը, որ պաշարած վինի անոր ուղեղը, չկա զգացում մը, որ անցած վինի յուր սրտեն, չկա իրողություն մը որ զերծ մնացած լինի յուր հոգածութենին, չկա իրականության երեսով մը զոր չներկայացնե, չկա անտեսանելի անկյուն մը զոր խուզարկած վինի, չկա բնության գույն մը, հոտ մը, աղմուկ մը, որ չնշուկե, շբուրե, չնշե յուր տաղերուն մեջ։ Յուր գործերը աշխարհ մ' են ուր կյանքը կը զեղու»¹:

Հակոբ Պարոնյանի և Եղիա Տեմիրճիպաշյանի խմբագրությամբ լուս տեսնող «Երկրագունդ» հանդեսը մեծ պոետի մահվան լուրը գուժում է ամենատապավորիշ խոսքերով. «Վիքթոր Հյուկո տիեզերական բանաստեղծը ոչ ևս է... Պարտին սուգ պահել տիեզերք համորեն»²:

Հյուգոյի մահվան օրը Պոլսի Պերպերյան վարժարանի հիմնադիր-տնօրենը՝ մանկավարժ և պոետ Ռեթեռս Պերսկերյանը աշակերտների առաջ արտասանում է դամբանական սրտառուշ մի ճառ. «Այս վայրկյանիս,— ասում է նա, — Ֆրանսա կողքան յուր մեծ բանաստեղ-

1 «Մասիս», 1885, № 3374, էջ 1107:

2 «Երկրագունդ», 1885, № 5, էջ 195:

ծին մահը: Վիքթոր Հյուկո ոչ ևս է: Այս սուգը պետք չէ որ միայն ֆրանսացլոցն ըլլա, այլ բոլոր մարդկության: Հյուկո միայն Ֆրանսացի մեծագույն բանաստեղծը չէր, այլ համայն աշխարհի: Ապա հայերն ալ պարտին սգալ այս մեծ սուգը»:

Պերպերյանը անդրադառնում է Հյուգոյի առաջավոր հայացքներին և նշում, որ մեծ հոմանիստը մինչև վերջ եղել է ազատության և ժողովուրդների եղբայրության ջերմ պաշտպանը: Հոետորը հատկապես կանգ է առնում Հյուգոյի գեղարվեստական արժանիքների վրա և նրան անվանում պոեզիայի աստվածը: Խոսելով մեծ գրողի լեզվի և ոճի յուրօրինակության մասին, նա ասում է. «Հյուկո յուր հետ բերած է յուր ուրույն տարրերե կերտված ոճն... Նոր ու անլուր ֆրանսերեն մ' էր այն, զոր ո՛չ Ռաբըլե խոսած էր, ո՛չ Գոռնելլ, ո՛չ Վոլթեր, ո՛չ Պուալո երեակայած, և որո բազմաճոխ և մեծազոր հնարից գոյությունն ո՛չ Հոմեր կասկածած էր և ո՛չ Տանդե նախզգացած: Ամեն ինչ իրեն հատուկ էր, սկզբնատիպ—խմաստն, հոգին, նյութին ու ձևը»¹:

«Աղբյուր» մանկական ամսագրի խմբագրությունը պատանի ընթերցողներին հայտնում է, որ Ֆրանսիան կորցրեց իր մեծ գրողին, որի համար ամբողջ աշխարհը ողբում է: Խմբագրությունն ավելացնում է, թե Հյուգոն անսահման սիրում էր երեխաներին, որոնց նվիրել է բազմաթիվ բանաստեղծություններ: Հանդեսում զետեղված է մեծ պոետի «Երգ» բանաստեղծությունը, Բաֆֆութարգմանությամբ²:

Ուշագրավ է, որ մինչդեռ բովանդակ հայ մամուլը սգում էր Հյուգոյի մահը, Վենետիկի «Բազմավելլը» վերապահ լուսաթյուն պահպանեց այդ մասին: Եվ դա միանդամայն հասկանալի է: Հյուգոն կյանքի վերջին տարի-

1 «Երկրագունդ», 1885, № 5,էջ 195—202:

2 Տե՛ս «Աղբյուր», 1885, № 5—6, էջ 196:

ներին հաճախ էր հարձակվել Վատիկանի և ճիղվիտների գեմ: Նա նույնիսկ կտակել էր, որ իր թաղումը կատարեն առանց կրոնական ծիսակատարությունների և առանց հոգևորականի մասնակցության: Մահվան անկողնում նա մերժել էր քահանա կանչել՝ խոստովանանքի և հաղորդություն ընդունելու համար: Հռոմի պապական աթոռը այդ շրջանում հաշտ աշքով չէր կարող նայել Հյուգոյի վրա: Նման պայմաններում Մխիթարյան Միաբանությունը ստիպված էր ձեռնպահ մնալ: Ի դեպ, 1860-ական թվականներից սկսած Հյուգոյի երկերից ոչինչ չէր տպագրվել «Բազմավեպում», հանգամանք, որ ամենայն հավանականությամբ արտացոլում էր Վատիկանի վերաբերմունքը դեպի Հյուգոն: Մեծ գրողի ստեղծագործությունները սկսեցին հիշյալ հանդեսում նորից երեալ միայն XX դարի սկզբներին:

«Մեղու Հայաստանին» և «Նոր Դարը» Հյուգոյի մահվան առթիվ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին պահպանողական դիրքերից: Այդ երկու պարբերականներն էլ իրենց էջերում թարգմանաբար տպագրեցին ֆրանսիական ականավոր պատմաբան Ռենանի հոդվածը, որտեղ, բնութագրելով Հյուգոյին, հեղինակն ասում է. «Նա անփոխարինելի անդամն էր եկեղեցու և կարելի է ասել, որ հին մայր եկեղեցու գագաթը քանդվեցավ այս ազնիվ մարդու մահվամբ, որ մեր դարում այնպիս բարձր բռնած ուներ իդեալականության դրոշակը»¹: Բայց Ռենանը միաժամանակ բացատրում է, որ Հյուգոն աստված հասկացողությունն ըմբռնում էր որպես ստեղծագործության, ճշմարտության և բարության գերագույն իդեալը, որը միշտ շարժվում և առաջ է մղում մարդկության զարգացումը:

¹ «Մեղու Հայաստանի», 1885, № 40, էջ 3 և «Նոր Դար», № 86, էջ 3:

Հյուգոյի երկրպագուներից Գրիգոր Օտյանը Փարիզում գրում է մի հոդված, որտեղ մեծ գրողի մահը համարում է մեծ կորուստ ամբողջ մարդկության համար: Օտյանը Հյուգոյին անվանում է մարդարեական պայծառատեսությամբ օժտված բանաստեղծ, որի պոեզիան կախարդում, հուզում, ալեկոծում, խաղաղեցնում, ամոքում, բոցավառում է ընթերցողի հոգին: Վիկտոր Հյուգոն, ասում է հոդվածագիրը, մրցել է Հոմերի, Դանթեի, Շեքսպիրի, Բայրոնի և Շիլերի հետ և հավասարվել յուրաքանչյուրին՝ իր բնագավառում:

Սակայն Գրիգոր Օտյանը, որը զգալի շափով կրել է քրիստոնեական կրոնի ազդեցությունը, «Թշվառների» մասին խոսելով, իր հիացմունքն արտահայտելով Հյուգոյի գթասիրության և ներողամտության նկատմամբ, լուսությամբ է անցնում այդ վեպի մեջ արծարծված սոցիալական հրատապ հարցերի կողքով: Ինչ վերաբերում է Հյուգոյի կրոնական հայացքներին, ապա Օտյանը նշում է, որ մեծ պոետը հավատում էր աստծու և հանդերձյալ աշխարհի գոյությանը, իսկ այդ հավատը նրա փիլիսոփայության հիմնաքարն է հանդիսացել: Եթե Հյուգոն իր կյանքի վերջին տարիներին ժխտում էր հոգեռարականության դերը որպես միջնորդի՝ աստծու և մարդու միջև, ապա, ըստ Օտյանի, այդ նրա համար էր, որ մարդարե-պոետը ուզում էր ուղղակի կապվել արարշի հետ¹:

Ի տարբերություն Օտյանի, հանճարեղ դերասան Պետրոս Աղամյանը Հյուգոյի մահվան առթիվ գրած իր բանաստեղծության մեջ ընդգծում է հատկապես նրա հայրենասիրությունը և նկարագրում, թե ինչպես մարտիկ-պոետը պաշտպանում էր բռնակալության լծի տակ

¹ Տե՛ս A. Tchobanian, Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935, p. 36—38.

Հեծող ֆրանսիական ժողովրդին, «կուրծք ընդ կրծքի» մարտնչում ֆրանսիական հեղափոխությանը դավաճանող նապոլեոն III-ի դեմ և իր հզոր գոշով փշում գերության շղթան.

Հեղափոխական Ֆրանսան երբ կը ճգներ
Մերթ խուժանին կամ մերթ եսաց լուծին տակ,
Արյունաղանդ հորիզոնում անվեհեր
Փայլեցավ նա իբր սփոփանք երկնառաք:
... իրոք ոդին սալառնաթե գայր ի կոփի
Կուրծք ընդ կրծքի Պոնարարթյան թռչնույն հետ,
Մարտնչեցավ անդուլ, անխոնչ, գիշեր, տիվ,
Եվ պարտելոյն փետրից շինեց ահեղ գրիւ,
Որով երբեմն գերյաց շղթան խորտակեր...

Վերջում հայ բեմի խոշորագույն վարպետը ողբում է ֆրանսիական խոշորագույն գրողի մահը և իր ժողովրդի վշտի թարգմանը հանդիսանալով, ասում է.

Անսահման է աշխարհի սուգն ու աղետ,
Որն որ այսօր յուր շիմին շուրջ բոլորի.
Սերուկ էր և խոթացյալ նա թեպետ,
Այսուհանդերձ ո՞վ հավատար, որ մեռնի...

Հյուգոյի մահվան առթիվ «Գրական և իմաստասիրական շարժում» ամսագրի 6-րդ համարում տպագրվում է մեծանուն պոետին ձոնված անստորագիր մի բանաստեղծություն, որը հավանորեն պատկանում է Եղիա Տեմիրճիպաշյանի գրչին: Ահա երկու քառատող այդ երկից.

Ի ձեռին միշտ ուներ զահ, մերթ՝ խարազան,
Լույս տար աղջաց և հալածեր զգազան,
Ժայռեն ըզչուր ժայթքեցըներ կենսատու,
Փետուրն ափին մեջ փողփողեր լուսատու

1 Պետրոս Ադամյան, Երկեր, Երևան, 1956, էջ 215:

ի ֆելյանդին ամպ մ' էր ժըպտուն, վարդագույն,
ի կերնըսեց՝ ամպ մ' էր թուխ, թանձր, ահագույն.
Շանթից ընդ գլուխս արձակեր նա թագակիր,
Ոյք փալլեին ի մեջ ազգաց սըզակիր!:

Երկի վերջում Հեղինակը հայրենասիրության կոչ է
անում և ընթերցողներին հորդորում օրինակ վերցնել
Հյուգոյից, որը տարագրության մեջ քսան տարի տանջ-
վել է՝ բռնակալության ճիրաններում հեծող իր ժողովրդի
համար:

* * *

Հայ մամուլը Հյուգոյի մահից հետո էլ շարունակեց
նրա մասին գրել չնվազող ոգեսորությամբ: Մեծ գրողի
հմայքն առանց ընդհատման շարունակվեց հայ իրակա-
նության մեջ և նրա գործերը թարգմանվեցին նոր թա-
փով: 1885 թվականին վերահրատարակվեց «Թշվառ-
ները», 1886 թվականին լույս տեսավ «Կլոդ Գյո»-ն նոր
թարգմանությամբ, 1887 թվականին՝ «Մահապարտի
վերջին օրը» նոր թարգմանությամբ, 1888 թվականին՝
«Արքայն զբոսնու»-ն նոր թարգմանությամբ, 1891 թ.
առաջին անգամ թարգմանվեց «Եղբայրը եղբօր դեմ»
(«Իննուներեք թվականը» վեպից), 1897 թ. նույն գիրքը
նորից հրատարակվեց, 1898 թ. լույս տեսավ «Լուկրեցիա
Բորջիան» նոր թարգմանությամբ, նույն ժամանակա-
շրջանում Հյուգոյի պոելիայից թարգմանվեցին բազմա-
թիվ նորանոր բանաստեղծություններ: Էլ չենք խոսում
XX դարում կատարված թարգմանությունների մասին:
Նոր թարգմանությամբ լույս տեսած վերոհիշյալ երկերը
ինքնըստինքյան վկայում են Հյուգոյի ստեղծագործու-
թյունների նկատմամբ հայ մտավորականության ցուցա-
բերած անմար հետաքրքրության մասին:

1 «Գրական և իմաստասիրական շարժում», Կ. Պոլիս, 1885,
№ 6, էջ 97:

1902 թվականին հայ մամուլը ոգեշունչ պաթոսով նշեց հանճարեղ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակը։ Հիշյալ օրերին ամբողջ հայ մամուլի էջերը լցվեցին մեծանուն հեղինակի ստեղծագործությանը նվիրված հոդվածներով, նրա պոեզիայից կատարված թարգմանություններով, Հորելյանական հանդեսների նկարագրություններով և այլնայլ հաղորդումներով։ Այդ հորելյանին արձագանքեցին համարյա բոլոր հայ թերթերն ու հանդեսները։

«Մշակը» Հյուգոյին նվիրեց մի ամբողջ էջ, որտեղ հոդվածագիրը (Կ. Նալբանդյան) անմահ գրողի կյանքի ու գրական գործունեության մասին հանգամանորեն խոսելուց հետո ավելացնում է. «Կան ընտրյալ մեծություններ, որոնք ոչ միայն ազգային, այլև համաշխարհային հոչակ են վաստակում և այդպիսով իրանց անմահության, մնայուն նշանակության շրջագիծն ավելի ընդլայնում։ Այս տեսակ ընտրյալ, առաջնակարգ մեծությունների շարքին է պատկանում նաև Վիկտոր Հյուգոն»¹։ Ապա, անդրադառնալով Հյուգոյի գաղափարական էվոլյուցիային, քննադատը նշում է, որ 40-ական թվականների վերջերից պոետը գնալով ավելի առաջադիմական է գառնում և իր լուսամիտ հայացքներով սկսում է ուժեղ պայքար մղել կղերական հոսանքի և կառավարական հետադիմական տարրերի դեմ, խիզախորեն պաշտպանում է սահմանադրական-ժողովրդական սկզբունքներն ու մամուլի ազատությունը, իսկ հետագայում անողոք կերպով մերկացնում նապոլեոն III-ի բռնակալական էությունը։

«Նոր Դարի» առաջնորդող հոդվածում ասվում է. «Ֆրանսիան տոնեց յուր մեծ բանաստեղծի՝ Վիկտոր Հյուգոյի ծննդյան հարյուրամյակի հիշատակը, Ռուսիան տոնում է յուր մեծ բանաստեղծ Գոգոլի մահվան հի-

1 «Մշակ», 1902, № 33, էջ 1—2.

նամյակի հիշատակը... այդ երկու նշանավոր գրողներն էլ մարդկանց միտքը լուսավորելու, ազգերին միմյանց մոտեցնելու, բարեկամացնելու գործին են ծառայել... երգել են եղբայրության, ազատության, խղճի ազատության, մարդասիրության երգը»¹:

Նույն թերթի հաջորդ համարում տպագրվում է Հյուգոյի մասին մի ընդարձակ հոդված, որտեղ հոդվածագիրը (Ա. Եղիգար) «Դարերի լեգենդի» հեղինակին բնութագրում է հետևյալ խոսքերով. «Բավական չէ, եթե ասենք, որ Հյուգոն տասնիններորդ դարի և նոր Ֆրանսիայի ամենամեծ ազգային բանաստեղծն է, այլ նա բոլոր ժամանակներին պատկանող հանճար է»²:

Հյուգոյի հրելլանին այս անգամ անդրադարձել են նաև Վենետիկի Մխիթարյանները: «Բազմավեպի» Յ-րդ համարում տպագրվել է Կ. Մենաշիի հոդվածը՝ Արսեն Ղաղիկյանի թարգմանությամբ: Հոդվածում տրված է Հյուգոյի համառոտ կենսագրությունը և հիշատակված են նրա մի շարք երկերը: Սակայն ուշագրավ է, որ այդ երկերի թվում նշված չեն «Փոքր նապոլեոն» և «Մի ոճ-րագործության պատմություն» պարսավագրերը և «Պատիժ» բանաստեղծությունների ժողովածուն, որինցում Հյուգոն ամենաբռուն զայրույթով դատապարտում է Նապոլեոն Երրորդի կատարած պետական հեղաշրջումն ու նրա բռնակալությունը:

Ինչ վերաբերում է հոդվածում հիշատակված երկերին, ապա հեղինակը դրանք բնութագրել է յուրովի, կարծես կամովին անտեսելով դրանց գաղափարական բռվանդակությունը: Այսպես, օրինակ, նա «Արևելյան» բանաստեղծությունների ժողովածուն որակում է՝ «լուսեղ և պսպղուն, ինչպես արևելքի երկինք մը աստղերով մրրկված»: Միայն այսքան: «Փարիզի Աստվածամոր

1 «Նոր Դար», 1902, № 33, էջ 1:

2 Նույն տեղում, № 34, էջ 1:

տաճարը» վեպը ներկայացված է որպես նկարչական վերին աստիճանի հարուստ հակապատկերներով մի պատմություն, որը ներթափանցված է նոր գեղեցկադիտությամբ և պարունակում է կենդանի նկարագրություններ: «Թշվառները», «Շովի աշխատավորները» և «Մարդը, որ ծիծաղում է» վեպերը համախմբված են մեկ պիտակի տակ, որպես «անմոռանալի ռոմաններ», որ պիտի դրդեն բոլոր երիտասարդ սրտերը, պատանիներուն համար պիտի շհիննան երբեք: Այսպես, մշտատե երիտասարդություն մը կհանդիպի գունագեղ, հրապուրիլ պատմություններու, որոնց մեջ վեհանձն գաղափարները կեռան, կխոնվին, ինչպես կեռա արյունը երիտասարդական երակներուն մեջ»: Իսկ «իննսուներեքը» վեպի բովանդակության մասին լոկ երկու բառ. «Կիառաբանե Հեղափոխությունը»¹:

Հանձին Հյուգոյի հոդվածագիրը տեսնում է միայն գեղեցկության, ճշմարտության և բարության առաքյալին, միանգամայն անտեսելով ազատության առաքյալին, բռնակալության դեմ անողոքաբար պայքարող բոցաշունչ մարտիկին:

Անդրադառնալով մեծանուն հեղինակի գրական ժառանգությանը, հոդվածագիրը նշում է, թե գեղագետների շատերի կարծիքով Հյուգոյի մնայուն երկերը մանուկների մասին նրա գրած բանաստեղծություններն են միայն:

Անանուն գեղագետների վկայակոչությամբ ոչ մնայուն համարելով Հյուգոյի սոցիալական բնույթի երկերը, հոդվածի հեղինակն ակնհայտորեն ձգտել է հանճարեղ գրողի այդ գործերն արժեգրկել:

Եթե Վենետիկի Միիթարյանները բավականացել են միայն հիշյալ միտումնավոր հոդվածով, ապա Վիեննա-

1 «Բազմավեպ», 1902, № 3,էջ 145—148:

յի Մխիթարյանները «Հանդես ամսօրյա»-ում ոշխնչ չեն տպագրել Հյուգոյի մասին:

Այս փաստերը բացահայտում են Մխիթարյանների այդ ժամանակաշրջանի վերաբերմունքը Հյուգոյի նկատմամբ:

Նույն օրերին «Մուրճ» ամսագրում տպագրվել է ականավոր պատմաբան Լեոյի ընդարձակ հոդվածը, որտեղ ամենից առաջ ընդգծված է Հյուգոյի հումանիզմը: «Անուններ կան,— ասում է Լեոն,— որոնք հավասարապես սիրելի են աշխարհի բոլոր ազգերին: Դրանք այն մարդկանց անուններն են, որոնք գործել են ամբողջ մարդկության օգտին, որոնց կյանքի ամբողջ նշանաբանը եղել է ամենալայն մարդասիրությունը, բոլոր մարդկանց և բոլոր ազգերի եղբայրությունը: Վիկտոր Հյուգոն այդ համաշխարհային սիրելիների թվում մի առանձին գեղեցիկ տեղ է գրավում: Նրան տված է հանձար՝ գրչով բարձրացնելու մարդասիրության, ընդհանուր եղբայրակցության և ազատության հավիտյան անմահ գաղափարները: Վիկտոր Հյուգոն մեծ բանաստեղծ էր: Բայց այդքանը դեռ բավական չէ: Նա մեծ մարդ էլ էր: Եվ տալով մեր ընթերցողներին այդ մեծ մարդու համառոտ կենսագրությունը, մենք կատարած կլինենք մեր մարդկային պարտականությունը մի այնպիսի տոնի առիթով, որ լոկ ֆրանսիական տոն չէ, այլև համաշխարհային»:

Այսուհետեւ Լեոն շարադրում է Հյուգոյի կենսագրությունը և համառոտակի անդրադառնալով նրա ստեղծագործություններին, Հյուգոյին ներկայացնում է թե՛ որպես գրողի, թե՛ որպես պայքարողի: Լեոյի բնութագրումները բերում ենք ի համեմատություն Մենաշիի բնութագրումներին: «Արևելյան մոտիվներ» ընդհանուր վերնագիրը կրող ոտանավորներից մի քանիսը, — ասում է Լեոն, — նվիրված են այն հերոսական կոիլներին, որ

մղում էին Հունվարը 1820-ական թվականներին թուրքերի գեմ՝ իրենց հայրենիքը աղատելու համար: «Փարերի լեզնդաները» երգում են զանազան հին պատմական անցքեր և ավանդություններ: «Պատիժ» վերնագրի տակ ոտանավորների մի երկար շաբթ զատապարտում է Նապոլեոն Երրորդին՝ 1851 թ. դեկտեմբերի 2-ին կատարած հեղափոխության պատճառով: Այդտեղ հանրապետական Հյուգոն իր սրտի ամբողջ դառնությունն է թափել այն մարդու վրա, որ խեց Ֆրանսիայից աղատությունը, որ թափեց ժողովրդի արյունը իր փառամոլ նպատակների համար: «Սոսկալի տարի» վերնագրով ոտանավորները ֆրանս-պրուսական պատերազմի և Փարիզի պաշարման ժամանակներն են նկարագրում: Այնտեղ Վիկտոր Հյուգոյի հանճարը վառ հայրենասիրության հետ ներկայացրել է մի հազթված ազգի բարոյական ուժը, հպարտությունը և պատերազմի սարսափները, մարդկային վայրենության արհավիրքները:

Իսկ «Թշվառներին» կեռն հետեւյալ գնահատականն է տալիս, «Մեծ բանաստեղծը 1862 թվին հեռու աքսորավայրից իր հայրենիքին ուղարկեց դթասրառության, մարդկայնության ամենամեծ գաղափարի և սիրո հրաշալի խոսքը... «Թշվառների» մեջ երեսմ է Վիկտոր Հյուգոյի ամբողջ տաղանդը, որ իր զարգացման ամենաբարձր կետին էր հասել. դա դժբախտների պաշտպանությունն էր, որի մեջ բանաստեղծը դրել է իր ամբողջ հոգին»:

Անդրադառնալով մեծ գրողի ստեղծագործությունների հայերեն թարգմանություններին, հոդվածագիրը ասում է. «Վիկտոր Հյուգոն մեզ էլ դաստիարակել է իր հրաշալի գրչով»: Այնուհետև նա նշում է, որ հայերենի թարգմանվել են «Թշվառները», «Փարիզի Աստվածամոր տաճարը», «Կլոպ Գյոն», «Մահապարտի վերջին օրը» և մի շարք բանաստեղծություններ: Բայց քանի որ Հյու-

գոն անմահների կարգն է անցել իր պոեղիայով, ապա կեռն պահանջում է, որ նրա բանաստեղծական գոհարները ավելի մեծ թվով թարգմանվեն¹:

Դժվար կլիներ Հյուգոյի ծննդյան 100-ամյակին նվիրված բոլոր հոդվածներին առանձին-առանձին անդրադառնալ: Նրանք բոլորն էլ այս կամ այն ձևով ընդգծում են Հյուգոյի մեծությունը և այդպիսով դրսեորում հայ գրական մտքի գնահատանքը մեծահոշակ գրողի նկատմամբ:

Վիկտոր Հյուգոյի հոբելյանին նվիրված տոնակատարությունները Փարիզում տևեցին փետրվարի 25-ից մինչև մարտի 2-ը: Այդ օրերին Պանթեոնում պետք է կայանար կառավարական հանդես, ուր ֆրանսիական Ակադեմիայի կողմից ելույթ էր ունենալու պատմաբան, քաղաքական գործիչ Գաբրիել Հանոտոն, որը 1895—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ արդարացնում ու զատագովում էր սովորական Համիդի հայացինչ քաղաքականությունը:

Ֆրանսիական Ակադեմիայի կողմից Հանոտոյի ընտրությունը, որպես ներկայացուցիչ, զայրույթ է առաջացնում հայ մտավորականության մեջ: Հայ գրողները գտնում են, որ սովորական Համիդի ոճիրն արդարացնող պետական գործիչը անարժան է ներբողելու այն մեծ հումանիստին, որն ամենաբուռն կրքոտությամբ դատապարտել է սովորականությունը: Արշակ Չոպանյանը փարիզյան «Petit Républic» պարբերականի փետրվարի 25-ի համարում տպագրում է մի բողոք, որի հայերեն թարգմանությունը զետեղում է նաև «Անահիտի» մեջ²: Իր բողոք-հոդվածում հայ գրողը զարմանք և զայրույթ է հայտնում, որ ազատության և արդարության անմահ երգչի հիշատակին կայանալիք հանդեսում ելույթ է ունե-

1 «Մուրճ», 1902, № 2, էջ 212—229:

2 «Անահիտ», 1902, № 2, էջ 34:

նալու մի անձնավորություն, որը «Հակամարդկային ամենեն մեծ ոճիրին ատենը դահիճին հետ եղավ զոհերուն դեմ»։ Հոդվածագիրը հարց է տալիս, թե ինչպիսի՞ համարձակությամբ սուլթան Համիդի բարեկամը վեր պիտի կենա ներքողելու «Մի ոճիրի պատմության» մեծ հեղինակին։ Ակադեմիայի կատարած այդ անհարմար ընտրությունը, ասում է Զոպանյանը, միայն ցավ և ապշություն կարող է պատճառել բոլոր ժողովուրդներին և մասնավորապես սուլթան Համիդի կողմից կոտորված հայ ժողովրդին։

Փարիզում հրատարակվող «Pro Armenia» երկարաթաթերթը շուտով արձագանքում է Զոպանյանի բողոքին։ Թերթի հրատարակիչներն ու խմբագիրներն էին Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Պիեր Քիյյարը և ուրիշ հայասերներ, որոնք այդ թերթի միջոցով պաշտպանում էին հայերի օրինական իրավունքները, պահանջում էին Հայկական հարցի արդար լուծումը, դատապարտում սուլթանի կազմակերպած հալածանքներն ու ջարդերը, կոչեր անում ֆրանսիական և եվրոպական այլ կառավարություններին և հասարակական կարծիք ստեղծում ի նպաստ հայերի։ Դեռ 1896 թվականին Անատոլ Ֆրանսը, Պիեր Քիյյարը, ինչպես և էմիլ Ջոլան, Ալֆոնս Դուդեն, Ֆրանսուա Կոպպեն և այլ ականավոր ֆրանսիացիներ համատեղ մի կոչ էին ստորագրել, ուղղված ֆրանսիական կառավարությանը, որպեսզի վերջինս միջամտի և վերջ տա հայկական կոտորածներին։ Սակայն կառավարությունը չէր ընդառաջել այդ կոչին¹։

Երբ Գաբրիել Հանուտոն ելույթ ունեցավ Վիկտոր Հյուդոյի հոբելյանական հանդեսին, «Pro Armenia»-ի խմբագրությունը թերթի առաջին էջում գրեց հետևյալը. «Պարոն Գաբրիել Հանուտոն համարձակվել է Պանթեո-

¹ Հիշյալ կոչի ձեռագիրը, ստորագրություններով հանդերձ, այժմ պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում, Ա. Զոպանյանի արխիվում։

նում Վիկտոր Հյուգոյի գովքն անել: Մենք կարծում ենք, որ պոետի հարյուրամյակը ավելի արժանավոր կերպով նշած կլինենք վերստին տպագրելով այն էջերը, որ նա գրել է 1876 թվականին՝ սերբական կոտորածների ժամանակ: Բավական է «Սերբիա» բառը «Հայաստան»-ով փոխարինել, որպեսզի թվա, թե նրանք հենց երեկ են գրվել, և ահա սկսական գործիչները, որոնք այժմ Հյուգոյին ակամայից գովերգում են շրթների ծայրով, նորից կսկսեն նրան ամբաստանել, թե շափաղանցում է, և կփորձեն նենդափոխել զոհերի թիվը»: Պարզ է, որ «երեկ»-ը վերաբերում է 1895—1896 թվականներին, իսկ ակնարկված «նենդափոխումը»՝ հայ զոհերի թվին:

Այսուհետեւ խմբագրությունը բերում է 1876 թ. օգոստոսի 29-ին Հյուգոյի գրած Հոդվածը, որտեղ նկարագրված են սուլթանի հրամանով Սերբիայում կատարված գաղանությունները. «Մենք եվրոպական կառավարություններին պիտի զարմացնենք,— ասում է Հյուգոն,— նրանց հայտնելով, թե ...այսօր մեկ մոտ, մեր աշքերի առաջ սպանում են հայրերին ու մայրերին, վաճառում անշափահաս աղջիկներին ու տղաներին, իսկ մանուկներին, որոնք շատ փոքր են վաճառվելու համար՝ սրի հարվածով երկուսի են բաժանում, թե ընտանիքներին վառում են իրենց տան մեջ, թե մի քանի ժամվաընթացքում մի ամբողջ քաղաքի, օրինակ Բալակի 9 հազար բնակիչներից մնացել են միայն 1300 հոգի... Թե հզի կանանց մարմինը ճեղքում են՝ շծնված զավակներին խողխողելու համար, թե այդ կանանց կմախքներից կույտեր են գոյացել հրապարակների վրա, թե փողոցներում շները կրծոտում են բոնաբարված երիտասարդուհիների գանգերը, թե այս ամենը ուղղակի ահավոր են, թե դրանք արգելելու համար բավական է միայն եվրոպական պետությունների ձեռքի մեկ շարժումը, թե այդ ոճիրները գործող վայրենիները սարսափելի են, իսկ

նրանց թույլ տվող քաղաքակիրթները՝ զարհուրելի... Հնչել է ձայն բարձրացնելու ժամը: Բարձրանում է ընդհանուր ցամանակ ալիքը: Կան այնպիսի ըոպեներ, երբ մարդկային խիղճը վեր է կենում և կառավարություններին հրամայում է՝ «Հասզանդվել իրեն»: Մի քիչ ներքեւ Հյուգոն հարց է տալիս. «Ե՞րբ պիտի վերջանա այս փոքր, հերոսական ժողովրդի նահատակությունը»¹:

Այստեղ նշանակալից է այն, որ թերթի խմբագրությունը Հյուգոյի հարյուրամյակը առիթ ծառայեցնելով, հրապարակում է սերբական կոտորածների մասին մեծ հումանիստի հոդվածը և սերբական ու հայկական կոտորածների միջև զուգահեռներ անցկացնելով՝ մի անգամ ևս ֆրանսիական հասարակության ուշադրությունը դարձնում է Հայկական հարցի վրա:

Եթե մենք մի քիչ երկար կանգ առանք «Pro Armenia»-ի վրա, այդ նրա համար է, որ հիշյալ թերթը դիպուկ կերպով արձագանքել է Հանոտոյի նկատմամբ ֆրանսահայ մտավորականության վերաբերմունքին և Վիկտոր Հյուգոյին գնահատել է հայ իրականության առնշությամբ:

Հյուգոյի ծննդյան 100-ամյակը տոնելու համար, բացի Պանթեոնից, Փարիզի քաղաքապետարանում ևս տեղի ունեցավ կառավարական հանդես, ուր հրավիրվել էին ֆրանսիական և օտար պատգամավորություններ, նրանց թվում և փարիզահայ արվեստագետների միության և գրողների միության պատգամավորությունները, հանձին ականավոր հայ նկարիչ Էդգար Շահինի և գրող Ա. Չոպանյանի: Վերջինս հայ պատգամավորների անունից արտասահնում է ֆրանսերեն մի սրտառուշ ճառ, որը հետո տպագրվում է Վիկտոր Հյուգոյի ծննդյան հարյուրամյակին նվիրված Ոսկեմատյանում: Մենք այդ ճա-

1 „Pro Armenia“, Paris, 1902, № 8, p. 1:

ոից բերում ենք քաղվածքներ, նույնինքը հեղինակի թարգմանությամբ¹.

«Պարոններ,

Վիկթոր Հյուկոյի հիշատակին, զոր Ֆրանսա կը տոնե այս պահուս, կը բերեմ խոնարհ, բայց չերմեռանդ հիացման տուրքը հեռավոր ու դժբախտ ժողովրդի մը, և վստահ եմ, որ այս տժգույն ծաղիկը զոր կավելցնեմ տիեզերական հիացմունքի շքեղ փոնչին, մասնավորապես պիտի հուզե հոգին մեծ բանաստեղծին, որ զրժախտները, կեղեքյալները սիրեց, և որ ազատության համար մաքառողներն ու տառապողները պաշտպանեց»:

Այնուհետև հոետորը նշում է, որ հայ մտավորականները միշտ խանդավառ հետաքրքրությամբ են կարդացել Հյուկոյի ստեղծագործությունները, սքանչացել նրա գեղարվեստական վարպետությամբ, պաշտել են մեծ մտածողին հատկապես այն պատճառով, որ ազատություն և ժողովուրդների եղբայրություն է քարոզել և անողոք պայքար մղել բռնակալության դեմ։ Բացահայտելով մարտաշունչ պոետի «Արևելյան» և «Պատիժ» ժողովածուների քաղաքական-հասարակական կարևոր նշանակությունն ու դերը, Զոպանյանն ընդդում է, որ այդ բանաստեղծությունները հայ ընթերցողների սրտում արձարձել են պայքարի սրբազն կրակը։ Խոսելով այն մասին, թե հայ մտավորականության համար ինչ է ներկայացնում Հյուկոն, նա ասում է. «Հյուկոյի անունը հայոց համար խորհրդանշանական անուն մը դարձած է. ան կնշանակե արդարություն, ազատություն, գեղեցկություն, գաղափարի համար ազնիվ տառապանք, և կնշանակե՝ Ֆրանսա. որովհետև Ֆրանսան մեզ համար հավիտենական զինվորն է մարդկային հոգվույն այդ վեհ խոյանքներուն, այդ նվիրական հավատալիքներուն. և Ֆրանսան ամբողջապես խտացած-նույնացած է Հյուկոյի

1 Տե՛ս «Անահիտ», 1902, № 2, էջ 34—35։

գործին մեջ: Ահա ինչու Փարիզի Հայերը պարտք համարեցան մասնակցիլ այս հանդեսին, որով Ֆրանսա իր մեծ քերթողին հանձարը կիմառավորե»:

Ճառախոսն այնուհետև ավելացնում է, թե հայ ժողովրդի մեծարանքի տուրքը մատուցելու համար Հայաստանից էլ պատգամավորություններ կգային, եթե ցավալի պայմանների բերմամբ հայերը իրենց մայրենի երկրում ճնշված ու կաշկանդված լինեին: Եվ հոետորն իր ճառը վերջացնում է հետեւյալ նշանակալից խոսքերով: «Վստահ եմ սակայն, որ այս պահուա բոլոր հայերը մտքով ձեզի հետ հաղորդակից են, և ձեզի հետ կօրհնեն հիշատակը ձեր բարի հսկային, որուն մեծ ստվերը զիրենք կամրապնդե իրենց տաժանելի պայքարին մեջ, և որուն անկորուստ ձայնը բոլոր արդար դատերուն անխուսափելի հաղթանակն իրենց կապահովե»:

Սիյուռքի հայությունը 1935 թվականին նշեց նաև Վիկտոր Հյուգոյի մահվան 50-ամյակը: Այս անգամ, ի տարբերություն նախորդ հորելլաններին, մեծանուն հեղինակի ստեղծագործությունը գնահատելիս սիյուռքահայ մտավորականությունը անդրադարձավ արդեն այժմեականությունն ներկայացնող մի նոր հարցի: Եվ իրապահան որոշ քննադատներ, Հյուգոյի գեղարվեստական բարձր վարպետությունն ընդունելով հանդերձ, ձգտում էին նրան նսեմացնել որպես մտածողի: Հակադրվելով այդ քննադատներին, հայ գրական գործիշներն իրենց ելույթներում նշում են, որ գեղարվեստական խոսքը չի կարող ուժեղ ու գեղեցիկ լինել և միաժամանակ՝ գաղափարապես թույլ: Նրանք ընդգծում են, որ Հյուգոյի՝ մեծ թափով, հարուստ լեզվով և անզուգական պատկերներով արտահայտած մտքերը միշտ խոր և իմաստալից են եղել, որ նրա խոհերում և դատողություններում տարտամ, հիվանդագին կամ անհասկանալի ոչինչ չկա:

Փարիզահայ գրողների կազմակերպված Հոբելյանական հանդեսին արտասանած իր ճառում Արշակ Չոպանյանն ասում է, որ Հյուգոն շափազանց շատ է արտադրել և բնականաբար նրա բոլոր երկերը չեն կարող հավասար բարձրության վրա կանգնած լինել: Նա Հյուգոյին նմանեցնում է Արարատին և Մոն-Բլանին, որոնք ունեն նաև համեմատաբար ավելի փոքր գագաթներ: Չոպանյանը Հյուգոյի քննադատներին մեղադրում է այն բանի համար, որ ճնել են հանճարեղ գրողին վերագնահատել՝ հիմնվելով միայն նրա երկրորդական երկերի վրա:

Անդրադառնալով նույն հարցին, գրող ու գրականագետ Փայլակ Սանասարը նշում է, որ Հյուգոյին անծանոթ են Բոդլերի բարդ ու խոռվահույզ ապրումները, Վեոլենի վաղանցուկ ու անշոշափելի սարսուները կամ Պոլ Վալերիի մտային տագնապները, Հյուգոն չունի մշուշապատ ու արտասովոր մտքեր, նրա զգացողությունն ու տրամաբանությունը առողջ են ու կենսահաստատ: Մշուշապատ ու արտասովոր մտքերի բացակայությունն է գուցե, որ մի շարք քննադատների հիմք է տվել երեակայելու, թե Հյուգոն զուրկ է խորիմաստ մտածողությունից: Մինչեռ իրականում նա իր ժամանակի ամենապայծառ լույսն է եղել և իր խոր մտքերով ու բարձր արվեստով շլացրել է ընթերցողներին: Կարելի չէ XIX դարի գրականությունը պատկերացնել առանց Հյուգոյի: Եթե այնտեղից դուրս հանեն նրան, ապա կմնա մի խոշոր, մութ դատարկություն:

Սանասարը ավելացնում է, որ Հյուգոյի ստեղծագործությունը հորդառատ մի հեղեղ է, որ իր հետ տանում է և՛ թանկագին քարեր, և՛ ավագ, և՛ տիղմտ: Այնտեղ ամեն ոք իր փնտրածը կգտնի...

Հյուգոյի մահվան 50-ամյակի առթիվ Ա. Չոպանյանը ֆրանսերեն լույս է ընծայել «Վիկտոր Հյուգոն, Շա-

տոբրիանը և Լամարտինը Հայ գրականության մեջ»¹ վերնագրով մի ժողովածու, որտեղ զետեղված են Հայ գրական գործիշների մի շարք հոդվածները, ճառերն ու բանաստեղծությունները՝ նվիրված Հյուգոյին, և Հյուգոյի նամակները՝ ուղղված Գր. Զիլինկիրյանին, Գ. Սունդուկյանին և Ն. Ռուսինյանին:

* * *

Սովետական շրջանում է, որ Հայ քննադատական միտքը բաղմակողմանիորեն ուսումնասիրում է Հյուգոյի գրական ժառանգությունը և տալիս հանձարեղ ուղմանտիկի մարգսիստական գնահատականը:

Այդ գնահատականը լիովին դրսեռուվում է Հատկապես Հյուգոյի մահվան հիսնամյակի և ծննդյան 150-ամյակի առիթներով:

Սովետահայ մամուլը 1935 թվականին լայնորեն նշում է Վիկտոր Հյուգոյի մահվան հիսնամյակը: Մեծ գրողի ստեղծագործության մասին «Խորհրդային Հայաստան»², «Խորհրդային արվեստ»³ և «Գրական թերթ»⁴ պարբերականներում ծավալուն հոդվածներով հանդես են գալիս Սիմոն Հակոբյանը, Սիրասը և Վահրամ Թերդիբաշյանը: Նրանք խոսում են պատմական այն խոշոր գերի մասին, որ Հյուգոն կատարել է ոռմանտիկական թատերագրության հիմքերը դնելու գործում:

Անդրադառնալով Հյուգոյի քաղաքական-հասարակական հայացքներին, սովետահայ քննադատներն ընդդում են, որ զեմուկրատ գրողը միշտ և ամենայն կրթությամբ դատապարտել է բռնակալությունն ու սոցիալական անարդարությունները:

¹ A. Tchobanian, Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935.

² «Խորհրդային Հայաստան», 1935, № 123, էջ 2:

³ «Խորհրդային արվեստ», 1935, № 11, էջ 4:

⁴ «Գրական թերթ», 1935, № 12, էջ 4:

Անհաշտ պայքար մղելով սոցիալական ամեն տեսակ անիրավությունների դեմ, Հյուգոն իր ստեղծագործությունների միջոցով ժողովրդական լայն մասսաների մեջ ատելություն է առաջացրել դեպի բուրժուական հաստրակարգը և այդպիսով նպաստել ուղղուցիոն տրամադրություններ արթնացնելու գործին: Մարքսիստական սկզբունքներից բխող այս մեկնաբանությունը նոր խոսք էր հայ գրաքննադատության մեջ՝ Հյուգոյի գնահատման հարցում:

1951 թվականին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի երկրորդ սեսիան որոշում ընդունեց՝ Հանդիսավոր կերպով նշել մեծ հումանիտար և խաղաղության մեծ երդի Վիկտոր Հյուգոյի ծննդյան 150-ամյակը¹:

Խնդիր Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներում, նույնպես և Հայաստանում 1952 թ. փետրվարի 26-ին տոնվեց Հանճարեղ գրողի հոբելյանը: Այդ առթիվ Հայաստանի սովետահայ գրողների միության դահլիճում, Երևանի պետական համալսարանում և այլուր կայացան Հանդիսավոր երեկոներ, Մյասնիկյանի անվան Պետական գրադարանում կազմակերպվեց ցուցահանդես:

Նույն օրերին սովետահայ մամուլը լայնորեն նշեց մեծ գրողի հոբելյանը: «Սովետական գրականություն և արվեստ»² և «Սովետական Հայաստան»³ ամսագրերում, «Գրական թերթ»⁴, «Ավանդարդ»⁵, «Պիոներ կանչ»⁶ և «Սովետական Հայաստան»⁷ լրագրերում տպագրվեցին

1 Հյուգոյի ծննդյան 100-ամյակը տոնելու մասին առաջարկ է մտցրել շինացի գրող Մար Գրիգոր:

2 «Սովետական գրականություն և արվեստ», 1952, № 3:

3 «Սովետական Հայաստան» ամսագիր, 1952, № 3:

4 «Գրական թերթ», 1952, փետրվարի 29:

5 «Ավանդարդ», 1952, փետրվարի 26:

6 «Պիոներ կանչ», 1952, փետրվարի 27:

7 «Սովետական Հայաստան», 1952, փետրվարի 26:

Վ. Հյուգոյի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածներ:

Այդ հոդվածների հեղինակներից՝ Ս. Սողոմոնյանը, Էլ. Պետրոսյանը, Վ. Մնացականյանը և Հ. Հովհաննիսյանը Հյուգոյին բնութագրում են որպես ազատության և անկախության համար կռվող մարտիկի, ճնշված ժողովուրդների պաշտպանի: Նրանք մասնավորապես նշում են, որ մեծ հումանիստը բողոքի իր ձայնն է բարձրացրել Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային քաղաքականության դեմ, խրախուսել է Կրետե կղզու բնակիչների ապստամբությունը թուրքական տիրապետության դեմ, ողջունել է Կուբա կղզու բնակիչների ապստամբությունը իսպանական տիրապետության դեմ, պաշտպանել է Վիրդինիայի նեղերի ապստամբության դեկավար Զոն Բրաունին, որին ամերիկյան կառավարությունը մահվան էր զատապարտել:

Կապիտալիստական պետությունների նվաճողական քաղաքականության դեմ Հյուգոյի մղած պայքարը սերտորեն կապակցելով երկրորդ համաշխարհային պատերազմի իրադարձությունների հետ, սովետահայ գրաքննադատները ցույց են տալիս, թե ինչպես ֆրանսիական ժողովուրդն ու առաջավոր մտավորականությունը մեծ գրողի տրադիցիաներով պայքարել են գերմանական ֆաշիզմի դեմ, իսկ այնուհետև շարունակել են պայքարել ամերիկյան իմպերիալիզմի դեմ:

Վիկտոր Հյուգոյի ստեղծագործությունը դիտելով ներկա քաղաքական կյանքի հետ ունեցած սերտ առնչության մեջ և ընդգծելով այդ ստեղծագործության հրատապ նշանակությունը՝ սովետահայ գրաքննադատական միտքը արտահայտում է ոչ միայն իր, այլև սովետական ողջ մտավորականության տեսակետը մեծ գրողի գրական ժառանգության վերաբերմաբ:

Վիկտոր Հյուգոյի ստեղծագործության մասին գրված ամենածավալուն հոգվածը դոցենտ Սողոմոն Սողոմոնյանինն է: Դա գրականագիտական լուրջ աշխատություն է (մոտ երկու մամուլ ծավալով) և իր տեսակի մեջ առաջինը հայ Հյուգոյագիտության բնագավառում: Համաշխարհային գրականության մեջ Հյուգոյի տեղը նշելուց և նրա ստեղծագործության լուսանուր գնահատականը տալուց հետո Սողոմոնյանը կանգ է առնում «Կրոմվելի» առաջարանի վրա, շարադրում Հյուգոյի ոռմանտիկական տեսությունն ու էսթետիկական սկզբունքները, բացահայտում հեղինակի վերաբերմունքը կլասիցիզմի և հետադիմական ոռմանտիզմի նկատմամբ: Այնուհետև նա ցուց է տալիս, թե ինչպես Հյուգոյի բաղաքական-հասարակական տրամադրությունները տարբեր ժամանակներում որոշակիորեն արտահայտվել են նրա ստեղծագործության մեջ: Վերլուծելով Հյուգոյի երկերը և հատկապես վեպերը, գրականագետը բացահայտում է նրանց քաղաքական-հասարակական նշանակությունը: Աշխատության վերջում Սողոմոնյանը նշում է, որ Հյուգոյի ստեղծագործությունը այսօր էլ համաճնշուն է աշխարհի առաջադեմ մարդկանց աղատասիրական ձրգումներին¹:

Մեծանուն գրողի հոբելյանին նվիրված հոգվածների թվում կան նաև այնպիսիները, որոնցում բացահայտված է նրա ստեղծագործության դերն ու նշանակությունը հայ թարգմանական գրականության մեջ: «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրում տպագրած իր հոգվածում Ա. Բաբայանը գլխավորապես խոսում է Հյուգոյի երկերից տարբեր ժամանակներում կատարված հայերեն թարգմանությունների մասին²:

¹ «Սովետական գրականություն և արվեստ», 1952, № 3
էջ 132—155:

² Նույն աեղում, էջ 156—159:

Արամ ինձիկյանը իր «Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ»¹ հոդվածում Հյուգոյի ստեղծագործությունը քննում է հայ գրական կյանքում նրա ունեցած նշանակության տեսակետից: Մեծ գրողի պոեզիայից թարգմանություններ կատարած մի շարք հայ ականավոր բանաստեղծների անունները և տարբեր ժամանակներում հայերենի թարգմանված նրա վեպերը, վիպակներն ու դրամաները հիշատակելուց հետո գրականագետը կանգ է առնում «Թշվառների» թարգմանության վրա: Նա խոսում է հայ հասարակական մտքի վրա այդ վեպի ունեցած գաղափարական ներգործության մասին: Նշելով, որ Հյուգոն իր լավագույն ստեղծագործություններով, հումանիստական ու ազատասիրական գաղափարներով սիրելի է դարձել հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներին, հոդվածագիրը առանձնապես հիշատակում է Գաբրիել Սունդուկյանի և Պետրոս Դուրյանի գնահատականները, ինչպես և բնորոշ օրինակներով բացահայտում է նախասովետական մամուլի չերմ վերաբերմունքը մեծ գրողի նկատմամբ: Հոդվածի վերջում ընդգծվում է այն փաստը, որ սովետական շրջանում ևս Վիկտոր Հյուգոյի գրական ժառանգությունը արժանացել է հայ գրողների և ընթերցող հասարակության բարձր գնահատանքին, նրա լավագույն երկերը բազմահազար տիրաժով տարածվել ու տարածվում են աշխատավոր լայն մասսաների մեջ:

Սովետահայ գրական միտքը Հյուգոյին համարում է գեղարվեստական խոսքի ամենամեծ վարպետներից մեկը, XIX դարի ֆրանսիական քնարական պոեզիայի դադարթը: Սովետահայ գրողների միության դահլիճում փետրվարի 26-ին կայացած հանդիսավոր նիստի երեկոյին հայ խոշորագույն պոետ Ավետիք Իսահակյանն իր բացման խոսքում Վիկտոր Հյուգոյին բնութագրում է

1 «Գրական թերթ», 1952, № 8, էջ 2:

որպես բեղմնավոր, բազմաժանր, գերադանցապես լիրիկ, սահմաններ չճանաշող երևակայությամբ, մեծ դիապազոնի, մեծ ընդհանրացումների հեղինակ։ Հյուգոյի առաջավոր գաղափարների, հումանիզմի և խաղաղասիրության մասին դրվատանքով արտահայտվելուց հետո Խաչակյանն իր ելույթն ավարտում է հետեւալ նշանակալից խոսքերով։ «Հիմա մենք մեծ սիրով տոնում ենք Հյուգոյի հոբելյանը և փառաբանում ենք նրա անմահ գործերը։ Սակայն նա հեռացած չէ մեզնից։ Նրա հզոր խոսքը արդիական է, այժմ հական։ Նա մեզ հետ, բոլորիս հետ, խաղաղության բոլոր բարեկամների հետ կովում է պատերազմի հրձիդների դեմ, ռեակցիայի դեմ, բռնության դեմ՝ հանուն հումանիստական կուտուրայի, խաղաղության, ժողովուրդների եղբայրության և լավագույն ապագայի»¹։ Այս խոսքերով Վարպետն արտահայտում է սովետահայ մտավորականության և ամբողջ հայ ժողովրդի անվերապահ սերն ու հարգանքը դեպի ֆրանսիական առաջավոր մտքի ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը՝ Վիկտոր Հյուգոն։

* * *

Սփյուռքի հայ առաջավոր մամուլը, ընդառաջելով Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշմանը, նույնպես արձագանքեց Վիկտոր Հյուգոյի ծննդյան 150-ամյակին։

Համաձայն եղած տվյալների, մեզ հայտնի է, որ Հյուգոյի հոբելյանին անդրադարձել են Բուխարեստի «Նոր կյանք»² և Սոֆիայի «Երևան»³ շաբաթաթերթերը,

1 «Գրական թերթ», 1952, № 8, էջ 2։

2 «Նոր կյանք», Բուխարեստ, 1952, № 92, էջ 1։

3 «Երևան», Սոֆիա, 1952, № 14, էջ 1։

Թեհրանի «Պահակ»¹ ամսագիրը, Յելրութի «Անի»² հանդեսը և այլ պարբերականներ:

Գրականագիտական տեսակետից ուշագրավ և արժեքավոր է գրող Վահե Վահյանի ընդարձակ հոդվածը, որտեղ հանգամանորեն խոսվում է մեծ գրողի կյանքի և ստեղծագործության մասին: Հոդվածագիրը Հյուգոյին, որպես գեղարվեստագետի, բնութագրում է այսպիս. «Իր բացած նոր ուղիներով, ֆրանսացի միակ գրագետն է ինք՝ որ կրնա բաղդատվիլ ընդունված սահմաններեն դուրս ժայթքող այն հանճարներուն հետ, որ կը կոչվին Շեքսպիր, Կյոթե կամ Բուշգին: Որպես թատերագիր, վիպասան ու բանաստեղծ՝ նոր ձևերու ռահվիրայի մը փառքն է իրենինը»: Հայ առաջադիմական գրողը Հյուգոյին անվանում է խաղաղասեր բովանդակ մարդկության հզոր ձայնը և իր հոդվածը վերջացնում է հետեւալ խոսքերով. «Միշտ կենդանի է Հյուկոն անոնց համար, որ չեն թշնամիները արդարության և խաղաղության»:

«Անի»-ի նույն համարում տպագրված են մեծ ոռմանտիկի «Պատմության մուսան» և «Ֆրանսա» բանաստեղծությունները Եղիշե արք. Դուրյանի թարգմանությամբ, «Նապոլեոնի փախուստը Ռուսաստանից» Հովհան. Շիրազի և «Տղան» Վահե Վահյանի թարգմանությամբ:

«Պահակ» ամսագրի մեջ Հյուգոյի հոբելյանին նվիրված խմբագրականում հեղինակը առավելապես անդրադառնում է մեծ գրողի առաջավոր հայացքներին և ընդունում նրանց այժմեականությունը: «Ներկայումս,— գրում է հեղինակը,— երբ ամերիկա-անգլիական իմպերիալիստները և նրանց գործակիցները մյուս երկրներում նոր արյունահեղ դավագրություն են պատրաստում մարդկության դեմ, Վիկտոր Հյուգոյի պրոգրեսիվ

1 «Պահակ», Թեհրան, 1952, № 6, էջ 1:

2 «Անի», Յելրութ, 1952, № 4—5, էջ 249:

սկզբունքների արժեքը ավելի է բարձրանում և նրա հզոր ձայնը, որ կոչ էր անում մարդկանց պաշտպանել խաղաղ աշխատանքը, հնչում է նոր ուժով և իր ամբողջ զորությամբ»:

Այստեղ նշանակալից է այն, որ սփյուռքահայ առաջավոր գրողները, արձագանքելով սովետահայ մամուլին և պանծացնելով ժողովուրդների եղբայրության մեծ երգչի անունը, դրանով իսկ նպաստում են խաղաղության ուժերի հաղթանակին:

* * *

Հայ գրական-հասարակական միտքը Վիկտոր Հյուգոյի մասին իր գնահատանքն է արտահայտել ոչ միայն հոգվածների, գրախոսականների և ճառերի միջոցով, այլև նրա ստեղծագործությունների թարգմանության փաստով։ Պարզ է, որ թարգմանությունը, ինքնըստինքյան, գնահատանքի բյուրեղացած արտահայտությունն է, որի մեջ մարմնավորվում է հեղինակի և թարգմանչի գաղափարական միասնությունը։

Եթե Գրիգոր Զիլինկիրյանը թարգմանում է Հյուգոյի «Թշվառները», ապա դրանով իսկ նա ցույց է տալիս, որ այնքան բարձր է արժեքավորում այդ վեպը, որ ուզում է այն դարձնել հայ ժողովրդի սեփականությունը և նրա գաղափարները տարածել ընթերցող հասարակության մեջ։

Նույնպես ակնհայտ է, որ եթե Մ. Նուպարյանը հափշտակված լիներ «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպով, ապա չէր թարգմանի այն, Ն. Ռուսինյանը՝ չէր թարգմանի «Մյուի Բլասը», Գ. Զմշկյանը՝ «Անջելոն», Ալ. Աբելյանը՝ «Մահապարտի վերջին օրը» և «Կլոդ Գյոն», Ա. Սաֆարյանը՝ «Իննսուներեքը» և այլն։

Հյուգոյի պոեզիայից Մ. Պեշիկթաշլյանի, Նար-Պեյի,
Թովմաս Թերզյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Մա-
տուրյանի, Ալ. Փանոսյանի, Վահան Թեքեյանի, Արշակ
Չռպանյանի, Եղիշե Զարենցի, Հովհ. Շիրազի և մյուս
բանաստեղծների կատարած թարգմանությունները գնա-
հատանքի ինքնուրուցն արտահայտություններ են: Այդ
առումով կարելի է ասել, որ յուրաքանչյուր թարգմա-
նություն մեծ գրողի հասցեին ուղղված մի պերճախոս
գովերդ է:

Այժմ փորձենք ցուց տալ, թե Վիկտոր Հյուգոյի եր-
կեքը ինչ հանգամանքների բերումով, ինչպես և ում
ձեռքով են թարգմանվել, գրական ինչպիսի ազդեցու-
թյուն և քաղաքական-հասարակական ինչպիսի նշանա-
կություն են ունեցել հայ ժողովրդի պատմական կյանքի
տարրեր շրջափուլերում:

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՅԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Անցյալ դարի 40—50-ական թվականները ներկայացնում են հայ ժողովրդի աղքային զարթոնքի ժամանակաշրջանը, որի ընթացքում աշխարհաբար գրական լիդուն սկսում է կազմավորվել և արվեստն ու գրականությունը թևակոխում են ծաղկման նոր փուլ:

Աղքային զարթոնքը արտահայտվում է դպրոցի, լուսավորության, լիզվի և այլ հարցերի շուրջը ծավալվող պայքարով, որ արծարծում են հասարակական տարրեր հոսանքները:

Քաղաքական, տնտեսական և կուլտուրական հարցերի շուրջ պայքարը սրվում է հատկապես 50—60-ական թվականներին: Այդ ժամանակաշրջանում արևելահայ պրոգրեսիվ հոսանքի ներկայացուցիչները՝ Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանը, Ս. Շահազիզը և ուրիշներ մամուկի էջերում արծարծում էին հայ իրականությանը հույսով հրատապ հարցերը: Արևելահայ կյանքում վերածնության գաղափարների խորացմանն ու ծա-

վալմանը մեծապես նպաստում էր ոռու առաջավոր միտքը, հանձինս Զերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի, Շչեղինի: Հիշալ տասնամյակներին արևմտահայ վերածնության շարժումը գաղափարական լիցք էր ստանում ֆրանսիական առաջավոր գրականությունից և հասարակական մտքից: Ֆրանսիական գրականության խոշորագույն և ամենամարտաշումն ներկայացուցիչն էր Վիկտոր Հյուգոն, որի բարձրացրած քաղաքական-հասարակական հարցերն ու առաջ քաշած գաղափարները լիովին համապատասխանում էին հայ ժողովրդի իղձերին, նրա ստեղծագործությունների մարտական ոգին համանշուն էր հայ իրականության մնջ խմբվող տրամադրություններին:

Հայ գրողներն ու քաղաքական գործիչները կարդում էին հանճարեղ գրողի գործերը, ոգեսրվում, զինավառվում: Նրանք թարգմանում, տպագրում էին այդ երկերը՝ մարտական գաղափարներով ոգեշնչելով ժողովրդին:

Զեյթունի ապստամբության նախօրեին, գետես 1859 թվականին Հ. Սվաճյանը իր «Մեղու» հանդեսում տպագրում է Հյուգոյի «Moïse sur le Nil»¹ բանաստեղծության թարգմանությունը՝ «Մովսես զերծեալ ի ջուրց»² վերնագրով: Այդ երկում մարմնավորված է այն միտքը, թե եգիպտական փարավոնի տիրապետության տակ գտնվող գերի հրեաները շուտով կաղատագրվեն և կմիանան հայրենիքում ապրող եղբայրներին: Այդ միտքը դրսեորում էր նաև սուլթանական լծի տակ հեծող երեք միլիոն հայերի դարավոր իղձը՝ աղատագրվել և միավորվել Արևիլահայաստանի հետ: Հայ ականավոր գրողներ Ալիշանի, Պետրիկիթաշլյանի, Նալբանդյանի, Պատկանյանի և ուրիշների ստեղծագործությունները տոպորված էին այդ նույն գաղափարով:

1 „Oeuvres Complètes“, T. I, Odes et Ballades, p. 55.

2 «Մեղու», Կ. Պոլիս, 1859, № 10, էջ 25, թարգմ. Կ. Պ.:

Մկրտիչ Պեշիկթաշլյանը, ջեյթունի հերոսական ապստամբությամբ ներշնչված՝ 1862 թ. գրում է իր «Հայքազորդին»¹, Հյուգոյի «L'Enfant»² («Տղան») բանաստեղծության նմանողությամբ: Հյուգոյի երկում նկարագրված է հունական Քիոս կղզին, որտեղից անցել են բարբարոս թուրքերը՝ մահ, սուր և ավեր տարածելով: Ամայի ծովափում, մերկ ժայռի վրա լուս ու արտում նստած է հույն պատանին: Նրան միխթարելու համար բանաստեղծը պատրաստ է ամեն ինչ տալ, միայն թե նա սփոփովի և ժպտա:

Կուզե՞ս, որպեսզի ժպտիս, ազվոր թըռչուն մ' անտառական,
Որ երգե երգ մը հոպուային ավելի քաղցր
Ու ծնծղաներեն ավելի փառահոմալ.
Ինչ կուզես, ծաղիկը ազվոր, պտո՞ւզը, թե՛ հրաշալի թռչունը:
— Բարեկա՛մ, — ըսավ հույն տղան, կապուտաշվի տղան,—
Կուզեմ վառո՞դ և զնդակնե՛ր³:

Պեշիկթաշլյանի բանաստեղծության մեջ նույն բարբարոսները քարուքանդ են արել հայոց աշխարհը: Ամայի, ապառաժոտ լեռան կողին այժմ տիսուր նստած է հայքատանին, որին պոհանք չանում է սփոփիել.

Միթե կուզե՞ս մոր քաղցվենի
Ու սիրուհին անուշ գգվանք,
Որ քո կծսկիծըդ փարատի.
Գեռ ի՞նչ կուզես, ո՞հ, մի՛ ծածկեր...
— Կուզեմ վառո՞դ և զնդակնե՛ր:

Պեշիկթաշլյանի «Հայքազորդին», որը ազգային-ազատագրական պայքարի ամենավսեմ մարտակոչերից

1 Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1961, էջ 48:

2 „Oeuvres Complètes“, T. I, Les Orientales, p. 27.

3 Այս բառացի թարգմանությունը պատկանում է Ա. Չոպանյանի գրչին: Տե՛ս «Մկրտիչ Պեշիկթաշլյանի քերթուածներն ու ճառերը», ծանոթագրություններով հրատարակեց Ս. Ռշակ Զօպանեան, Փարիզ, 1904, էջ 172:

մեկն է, արևմտահայերի մեջ մեծ ժողովրդականություն է վայելել, տասնամյակներ շարունակ նրանց ոգեշնչել է զեյթունցիների հերոսական ապատամբության օրինակով և միշտ հիշեցրել, թե բռնակալության դեմ զենք բարձրացնելու միջոցով միայն կարելի է ազատություն ձեռք բերել:

Հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին խիստ հարադար ու համահնչուն է նաև Հյուզոյի «L'Art et le peuple»¹ բանաստեղծությունը, որի թարգմանությունը Գ. Չիլինկիրյանը տպագրում է իր «Մաղիկ» հանդեսում, 1864 թվականին, «Ճարտարություն և ժողովրդ»² վերնագրով։ Այնտեղ հանձնարեղ պոհետը ֆրանսիական ժողովրդին կոչ է անում պահանջել ճնշված երկրների ազատագրումը։

Երգե՛ զԱեր, մեղմ ձայնով, միշտ զու զԱեր,
Այլ բարձրաձայն՝ զԱզատաթյուն—և անա՛հ.
Երգե զերկիր նվիրական խոալիա,
Երգե նաև Պոլոնիան խոր թաղված,
Ծոնապոլի, զոր սուրբ արյուն մը ներկեց,
Հունգարիան, որ կը կենա հոգեվար...
Օ՛ բռնավորք, մի՛շտ ժողովրդն երգե,
Ինչպես առաւծ կը մոնշէ ահազին...

Ակնհայտ է, որ այս բանաստեղծությունը տպագրելով, Չիլինկիրյանը ուղեցել է ընթերցողներին հիշեցնել «Նվիրական», «արյունաներկ» և «Հոգեվար» հայ հայրենիքը և նրանց հոգում ամրապնդել այն հավատը, թե ժողովրդի միահամուռ կամքն ի վերջո կտապալի բռնավորին։

Առաջավոր հայ հասարակական գործիչները մի կողմից մամուլի և առանձին աշխատությունների միջոցով մարտական տրամադրություններ էին արթնացնում ժո-

1 „Œuvres Complètes“, T. III, Les Châtiments, p. 21.

2 «Մաղիկ», 1864, № 84, էջ 173, թարգմ. Զ. Ս. Զ.։

զովրդի մեջ, մյուս կողմից՝ աշխատում ազգային-ազատագրական շարժումը ծավալել: Այդ ուղղությամբ նրանք կազմում էին գաղտնի խմբակներ, որոնց նպատակն էր կազմակերպել ու ղեկավարել ազատագրական պայքարը: Սակայն այս հարցում նրանք գործ ունեին ոչ միայն արտաքին թշնամու, այլև ներքին թշնամիների՝ կղերաֆեռգալական հոսանքի ներկայացուցիչների հետ, որոնք ամեն կերպ ճգնում էին ինափանել ապստամբական ելույթները: Ազատագրական նպատակներով հիմնադրված գաղտնի ընկերություններին հարված հասցնելու դիտավորությամբ տիրահաջակ Հովհաննես Զամուռցյանը հոգեւորականների և ամիրանների պատվերով 1863 թվականին թարգմանում է Ժեռառ արբայի «Եսորհուրդ գաղտնի ընկերությանց» վեպը¹, որտեղ եվրոպական հեղափոխական գաղտնի կազմակերպությունները ներկայացված են որպես ավագակների և մարդասպանների խմբեր: Հիշյալ թարգմանության առաջաբանում և ծանոթագրություններում Զամուռցյանը զուգահեռներ է անցկացնում այդ կազմակերպությունների և հայ գաղտնի ընկերությունների միջև և այդ կապակցությամբ հիշատակում է նաև Միքայել Նալբանդյանի անունը²:

Կոստանդնուպոլիսի առաջադիմական թերթերը և Զմյուռնիայի «Ծաղիկը» միահամուռ գատապարտում են թե՛ այդ գիրքը և թե՛ Զամուռցյանի ներածականը: Զամուռցյանը, իրեն արդարացնելու համար, «Երևակ» հանդեսում 1864 թ. տպագրում է «Գաղտնի ընկերությանց ոգին» հովվածը³, որտեղ Հոռմի պապի հովանավորու-

1 Իր առաջարանում Զամուռցյանը հայտնում է, որ գիրքը թարգմանել է «Եկեղեցական և աշխարհական կարգի մեծարգո և պատկառելի անձեր» ստացած պատվերով և հրատարակում է «նոցախնդրովն»:

2 Տե՛ս «Եսորհուրդ գաղտնի ընկերությանց», Կ. Պոլիս, 1863:

3 «Երևակ», Կ. Պոլիս, 1864, № 1, էջ 7, և № 2, էջ 16:

թյամբ լույս տեսնող հետադիմական պարբերականներից մեջը բրումներ անելով՝ ջանում է ապացուցել գաղտնի ընկերությունների խռովարար և հակաքրիստոնեական էությունը: Այդ առթիվ նա հարձակումներ է գործում նաև «Ծաղիկի» վրա:

Զիլինկիրյանը դրան պատասխանում է «Հայ ժեղվիթ մը» հոդվածով¹ և ամենաբուռն կրթուությամբ դիմակաղերծում Զամուռնյանի հետադիմական էությունը: «Երեակ»-ին ներկա տարվույս առաջին և երկրորդ թիվը կարդալու ժամանակ կարծեցինք, թե միջնադարյան անլույս միտքերու զրոշ մը ծփա մեր աշքերուն առցե», ասում է նա և ապա շարունակում: «Ասիկա, «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» տնում անպիտան գրքի մը թարգմանության, ներածության և ծանոթագրությանց մեջ խմանտակորին և ազիտորին Հայ ուսումնականաց ընտրելագույն մասին անունը մրոտելու փորձը ընկեն ետքը, այսօր կը հանդգնի մեր անունն ալ յուր բերանը առնուլ, «Ծաղիկը» ամքարիշտ պարբերական անվանելը²: «Երեակին» մեկմե առնելիք առաջին և վերջին պատասխանը այս է,— եղբափակում է Զիլինկիրյանը,— սուս կրնաւլորներու հետ գործ չունիք և կը վերջացնենք մեր հոդվածը հետագա քանի մը տողերով, զորս Վիքիր Հյուկո Ֆրանսայի ներկա դարուս ժեղվիթ խըմբագիրներուն կուղղե»: Եվ նա բերում է հանճարեղ պոետի «A des journalistes à robe courte»³ («Ճիղվիտ ժուռնալիստներին») շափածո երկից մի շարք հատված-

1 «Ծաղիկ», 1864, № 73, էջ 81:

2 Զիլինկիրյանը, «Հայ ուսումնականաց ընտրելագույն մասը» ասելով, հավանաբար, նկատի է ունեցել Միքայել Նալբանդյանին և նրա համախռներին:

3 „Oeuvres Complètes“, T. III, Les Châtiments, p. 51. „A des journalistes à robe courte“ բառացիրեն՝ նշանակում է «կարճ քանոնքով ժուռնալիստներին»: Այստեղ Հյուգոն նկատի ունի ճիղվիտներին:

ներ, որոնք այնքան դիպուկ են, որ կարող են նույնությամբ վերաբերել Զամուռճյանին։ Այդ տողիրը բերված են ֆրանսերեն լեզվով։ ահա բառացի թարգմանությունը։

Կեղտուա բանկոնակի զրապանից ձեր ճիրանները հանելով,
Գրանք թաթախում եք եկեղեցու օրհնյալ ջրի մեջ,
Եվ մտածում. «Մենք հրեշտակներ ենք, մաքուր ճիղվիտներ,
Մենք կարող ենք անպատճի վիրավորել բոլոր մարդկանց»։
Ձեր զազրելի թերթը ծամածուռ մի դիմակ է,
Որի միջավ ձեր տափակ մտքերն եք հայտնում...
Դուք նախատում եք ձեզ շենթարկվող
Գրողներին ու փիլիտոփաններին,
Որոնք երազում են ազատ բարձունքներում...
Դուք դահճի կլինեիք, եթե չկինեիք իմաստակը...
Ձեր աշքում դաշույնը սուրբ է, տանջանքը՝ գեղեցիկը,
Օ՛ հրեշներ... ձեր շարաշուք շարականներում
Դուք փառաբանում եք հավատաքննության խարուցկը,
Որ ձեր միակ չահն է...
Գնացե՛ք և ձեր պիղը թերթի
Անիլն անընդհատ պտտեցեք,
Ո՞վ դուք, թուզի մրոսող ողորմելիներ։
Գնացե՛ք և ձեր սև եղոնդներով ուղեղներդ փորեցեք,
Հայհոյեցեք, ոռնացեք, խածեցեք, ստեցեք
Եվ ապրեցեք...
Վերևի հոդվածին Զամուռճյանը պատասխանում է
Հակահարձակումով։ Այդ առթիվ անդրադառնալով Հյուգոյին, նա հայտարարում է, թե վերջինիս խոսքը իր համար ոչ մի արժեք չունի, և ինքը ժամանակին ապացուցել է նրա «անհավատությունը» (ակնարկում է «Մեղուի» հրատարակչին քանի մը խրատներ» հոդվածը, որին հետո կանդրադառնանք— Հ. Վ.) և հեգնանքով ավելացնում, որ եթե Հյուգոն հիշյալ հոդվածը կարդա, հավանորին «քանի մը տող ոտանավոր ալ ինծի համար կը գլի»¹։

1 «Երեակ», 1864, № 9, էջ 70։

Զիլինկիրյանը շի ուշանում Զամուռճյանին ցուց տալու, թե Հյուգոն վաղուց է գրել այդ «քանի մը տող ոտանավորը» նրա և նրա նմանների մասին։ Եվ «Ծաղիկի» 75-րդ համարում (էջ 102) զետեղում է Հյուգոյի «Un autre»¹ շափածո երկի թարգմանությունը, տալով հետևյալ բացատրությունը. «Բանասիր երիտասարդ մը, որ է Ս. Զ., «Ծաղիկի» 73-րդ թվույն մեջ հրապարակված «Հայ ժեղվիթ մը» հոդվածնիս կարդալեն ետք, հաճեր է հետագա տողերը թարգմանել և զրկել մեզ, հրապարակելու խնդրանքով։ Հաճությամբ կընդունինք յուր խնդիրը, քանի որ ժեղվիթ կրոնավորները զգաստացնելու համար գրված է այն, և մասնավորապես ընթերցողներու ուշադրությունը կը հրավիրենք անոր վրա»։

Հյուգոյի հիշյալ երկից մենք բերում ենք ամենադիպուկ մասերը միայն.

Այս բոկագնաց մարդն այն ատեն մտածեց յուր հարկին մեջ, եվ տեսնելով, որ ինք շունի սիրտ, սկզբունք և հանձար, Զայս հնարեց. հանել թերթ մը, լեզուն ու ոճը ռամկական, իր ծառալել արժանապես Հիսուսի:

Ցորեկն ըրած հրաշբները պատերան վրա փակցունե.
Իրը հավատո մասունք գրե նա շատ բաներ այլանդակ:
Ժանտատեսիլ փարիսեցի, խմբ դինի մեծաց հետ,
Եվ աղքատին կըսե. «Եղբայր, եկ ծոմ պահենք միատեղ»։

Այսպես, այս վատն նախատելով արժանիք, փառք և հանձար,
Եվ սոսկալի գործքով այնչափ շատ ապոչներ մողելով,
Կապրի հավետ հանդարտությամբ, նվաստության մեջ կարի,
Այս րուն ժեղվիթ, այս եռակի նենգավոր։

¹ „Oeuvres Complètes”, T. III, Les Châtiments, p. 53. „Un autre” նշանակում է մի ուրիշը. Բայց թարգմանիլը, վերնագիրն ավելի դիպուկ դարձնելու նպատակով, այն դարձել է «Ժեղվիթ խմբագիր մը», քանի որ փաստորեն հեղինակն ակնարկում է ոմն միզվիտ խմբագրի։

Այս տողերը այնքան ճշգրտությամբ բնութագրում են «Երևակի» խմբագրին, որ կարծես Հյուգոն իսկապես նրան նկատի ունեցած լիներ: Հակոբ Պարոնյանը իր «Ազգային ջոշերում» գրեթե նույն գծերով է նկարագրում Զամուռանի բնավորությունն ու հասարակական գործունեությունը¹:

Արևմտահայ դեմոկրատիան ժողովրդին ազատագրական գաղափարներով ոգեշնչելու համար օգտագործել է Հյուգոյի ոչ միայն վերևում հիշատակված երկրին ու ասույթները, այլև նրա բազմաթիվ այլ ելույթները՝ նրա ճառը մամուլի ազատության մասին, իտալիայի ազգային-ազատագրական պայքարի հերոս Գարիբալդիի հետ նրա նամակագրությունը, ֆրանսիացի արսորականներին շնորհված ներման առթիվ Հյուգոյի պատասխանը՝ թե ինքը հայրենիք կվերադառնա միայն այն ժամանակ, երբ այնտեղ կվերադառնա ազատությունը, դաժան տեսողից փախչող կոմունարներին նրա ապաստան տալը, դրա համար թելգիայից վտարվելը, ի պաշտպանություն կոմունարներին նրա գրած բոցաշունչ հոդվածը և հայրենասիրական այլ հոդվածներ:

2

Հայ հասարակական տարրեր հոսանքների միջև 50—60-ական թվականներին սուր պայքար էր մղվում նաև ազգային զարթոնքի հետ կապված այլ խնդիրների՝ դպրոցի և կրթության հարցերի շուրջը: Ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հատվածում առաջադիմական հոսանքի ներկայացուցիչները ձգտում էին դպրոցն ազատագրել հոգեսրականների իշխանությունից, նորահաս սերնդին տալ աշխարհիկ կրթություն, դպրոցը դարձնել լուսավորության օջախ, մինչդեռ կղերա-պահպանողականները ջանում էին դպրոցի վրա պահպանել եկեղե-

1 Տե՛ս Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1958, էջ 72—82:

ցու գերիշխանությունը, աշակերտներին դաստիարակել կրոնական ոգով։ Այդ ուղղությամբ Հ. Զամուռճյանը 1861 թվականին «Երևակում» տպագրում է «Ազգային դաստիարակություն» վերնագրով հոդվածաշարը¹, ուր շատագովում է եկեղեցու հեղինակությունը դպրոցի վրա և քրիստոնեական քարոզությունը դպրոցում։

Հիշյալ հոդվածաշարը լույս տեսնելուց կարճ ժամանակ անց Հ. Սվաճյանը, որպես պատասխան, «Մեղվում» տպագրում է դաստիարակության մասին ֆրանսիայի Ազգային ժողովում 1850 թ. հունվարի 15-ին վիկտոր Հյուգոյի արտասանած ճառի լրիվ թարգմանությունը²։ Այդ ճառում Հյուգոն պահանջում է ֆրանսիայում ձրի և պարտադիր կրթություն մտցնել, դաստիարակության ազատություն տալ։ «Դաստիարակության ազատություն տալ» ասելով Հյուգոն հասկանում է՝ դպրոցներից վերացնել հոգևորականների վերահսկողությունը։ Եվ խոսքն ուղղելով հոգևորականներին, նա ասում է. «Անկեղծ ասած, ձեզ վրա հույս չունեմ։ Դաստիարակել՝ նշանակում է կառուցել։ Չեր կառուցածի վրա ես հավատ չունեմ։ Չեմ ուզում ձեզ հանձնել երիտասարդ սերնդի դաստիարակությունը, երեխաների հոգին, մատաղ իմացականությունների զարգացումը, նոր սերնդի ոգին, մի խոսքով՝ ֆրանսիայի ապագան»։ Եվ խկույն ավելացնում է. «Ինձ համար բավական չէ, որ նոր սերունդը մեզ հաջորդե, ես ուզում եմ, որ նա մեզ շարունակի։ Դրա համար էլ պահանջում եմ, որ ձեր շունչը և ձեր ձեռքը հեռու պահեք նրանից»։ Այնուհետև, Հյուգոն մերկաց-

1 «Երևակ», 1860, № 85-ից № 93 (այս համարները, ուշացման պատճառով, լույս են տեսել 1861 թվականին)։

2 «Մեղու», 1861, № 122, 123, 124. թարգմանչի անունը՝ Հիշատակված չէ, բայց հիմք ունենք կարծելու, որ այն պատկանում է Ն. Ռուսինյանի գրչին։ Այդ մասին հետագայում ակնարկել է Արքիմար Արքիմարյանը՝ «Ռուսինյանի մեկ ձեռագիրը» վերնագրով իր հոդվածում։ Տե՛ս «Հայունիք», 1891, № 119։

նոսմ է Ճիզվիտների ուսակցիոն էությունը: «Զեր սովորությունն է,— ասում է նա,— շղթա դարբնել և գոչել. ահա' աղատությունը. մարդկանց հալածում եք և միաժամանակ գոռում, ահա' անհիշաշարությունը... Դուք հավատացյալներ չեք, այլ աղանդավորներն եք այն կրոնի, որը չեք հասկացել: Դուք՝ սրբությունը քեմի վրա հանողներ եք»:

Հյուգոյի հիշյալ ճառը տպագրելով, Սվաճյանը պարզաբն ուզեցել է հանճարեղ գրողի հեղինակավոր խոսքերով արտահայտել իր և իր համախոհների հայացքները ոչ միայն գպրոցի, այլև հոգեորականների մասին:

Ճիզվիտների գեմ Հյուգոյի հարձակումները Սվաճյանը «Մեղվի» միջոցով հասցեագրում է Չամուռճյանին, որը, հիշյալ ճառի հրատարակումից կատաղած, տպագրում է «Մեղուի» հրատարակչին քանի մը խրատներ» խորագրով իր հոգվածը¹: Այստեղ նա Սվաճյանին դատապարտում է Միքայել Նալբանդյանին բարձր գնահատելու և Հյուգոյի դադարիարները պրոպագանդելու համար: Այդ առթիվ, Հյուգոյին «Հավատուրաց» և «բազմաստվածյան» հորչործելով, նա լիովին բացահայտում է կղերապահպանողական հոսանքի վերաբերմունքը մեծ հումանիստի հանդեպ: «Երևակի» խմբագիրը Հյուգոյի «Հավատուրաց» և «բազմաստվածյան» լինելը ապացուցելու համար նրա պոեզիայից բերում է հետեյալ պարբերությունը:

O sagesse! esprit pure! sérénité suprême!

Zeus! Irmensul! Wishnou! Jéhovah!

Dieu que cherchait Socrate et que Jésus trouva²!

1 «Երևակ», 1860, 94 (այս համարը, իրականում, լույս է տեսել 1861 թվականին:—Հ. Գ.):

2 Չամուռճյանը գրում է, թի այս տողերը բերում է „Voix intérieure“ բանաստեղծությունից: Պրատումներից պարզվեց, որ իրականում նրանք բերված են „Sagesse“ բանաստեղծությունից, որը դետեղված է «Ճառագայթներ և ստվերներ» ժողովածովի մեջ: Տե՛ս «Օւերն Կոմպլետ», T. I, Les Rayons et les Ombres, p. 44.

Զամուռճյանը այս տողերը թարգմանում է «Ո՞վ իմաստություն, ոգի մաքուր, պայծառություն գերագույն, Դիոս, իրմենսուլ, Վիշնու, Եհովա, — Աստված, որն որ կը փնտռեր Սոկրատ, և որն որ Հիսուս գտավ»: Այնուհետև նա դիմում է Սվաճյանին. «Կը հասկնա՞ս, պարոն Հրատարակիչ, — ասում է նա, — Հիսուս ալ Աստված կը փնտռե եղեր, և Սոկրատեն այն տարբերությունը ունի եղեր, որ Սոկրատա զտածը իրեն հաջողվեր է գտնել: Եվ այս Աստվածը ո՞վ է եղեր, — կուապաշտ հույներուն Դիոսը, կուապաշտ սաքսոններուն իրմենսուլը, կուապաշտ հնդիկներուն Վիշնուն, և Ճշմարիտ Աստվածը, որ Մովսես մարգարեին ծանուց, թե իր անունը Եհովա է: Ասոնք ամենը՝ Վիքթոր Հյուկո բարեկամիդ առաջը մեկ աստված են եղեր, իսկ Հիսուս, ինքն ալ աստված շըլլալեն զատ, բարեբախտաբար գտեր է չորս աստվածներեն բաղկացած աստվածը... Դո՞ւն ալ այդպես կը դավանիս, պարո՞ն»: Հյուգոյի հակաքրիստոնեական էությունը այսպիսով «ապացուցելուց» հետո «Երևակի» խմբագիրն անդրադառնում է նրա վերոհիշյալ ճառին և ճիշտ եղրակացնում, թե այն հրապարակելով՝ Սվաճյանը ուղղակի արտահայտում է սեփական ցանկությունը, այն է՝ «կղերականներուն ոտքը դպրատուններեն կտրել»: Զամուռճյանը «Մեղվի» խմբագրին մեղագրում է այն բանում, որ նա ձգտում է մատադ սերունդը դաստիարակել ֆրանսիական գրողի «սրբապիղծ» գաղափարներով:

Զամուռճյանն իր հոդվածում Սվաճյանին համարելով հավատուրաց ու հակակղերական Հյուգոյի գաղափարական հետեւրդ, նպատակ է ունեցել մոլեռանդ հոգևորականներին ու ամիրաններին գրգռել «Մեղվի» խմբագրի դեմ, նրանց միջոցով դադարեցնել տալ իր հակառակորդի թերթը: Եվ իրոք, Զամուռճյանի այս հոդվածից կարճ ժամանակ անց «Մեղվի» հրատարակությունը կառավարական հրամանով դադարեցվում է

երկու ամիս հետո միայն վերաբատարակվելու իրավունք ստանում¹:

Նույնպիսի միջոցներով Զամուռճյանը պայքարում էր իր մյուս հակառակորդների դեմ: Օրինակ, «Վիկթոր Հյուկո և Շաղիկ» վերնագրով հոդվածում², Հյուգոյի երկերից քաղվածքներ բերելով և դրանք քմահաճորեն մեկնաբանելով, նա ճգնում է ապացուցել, թե դրանց հեղինակը անհավատ է: Միաժամանակ նա հասկացնում է, թե Զմյուռնիայի հայկական դպրոցում դասավանդող և Հյուգոյի գաղափարական հետևորդ Գր. Զիլինկիրյանը կարող է ապագա սերնդի հոգին թունավորել ֆրանսիացի գրողի արատավոր գաղափարներով: Եվ Զամուռճյանը հոգերականության վերնախավին կոչ է անում՝ դպրոցից հեռացնել անհավատ ուսուցիչն:

Առաջավոր մտավորականությունը հետևողականորեն շարունակում է պայքարը հանուն դպրոցի, դաստիարակության և լուսավորության: 1862 թվականին Զիլինկիրյանը «Շաղիկի» էջերում գանգատվում է, որ Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը գտնվում է ողբալի դրության մեջ, դպրոցը երկար ժամանակ տեսուչ չունի, դաստիարակության գործը կազում է և Ուսումնական խորհուրդը չի գրազվում դպրոցով: Զմյուռնիայի «Միություն» թերթը արդարացնում ու պաշտպանում է Ուսումնական խորհրդին: «Շաղիկի» և «Միության» միջև սկսվում է մի բանավեճ, որը գնալով սրվում է: Վերջինիս խմբագիրը՝ Ս. Վանանդեցյանը «Շաղիկի» դեմ վիրավորական հոդված է գրում: Զիլինկիրյանը, որը Վանանդեցյանին համարում է Ուսումնական խորհրդի մեծահարուստներին ծախված, նրան պատասխանում է Հյուգոյի հետևյալ խոսքերով.

1 Ի դեպք «Մեղուն» ոչ թե մեկ անգամ, այլ բազմիցս է դադարեցվել, իսկ ինքը՝ Սվաճյանը բանադրվել է Կրօնական ժողովի կողմից:

2 «Երևակ», 1864, № 24,էջ 188:



2010 SURVEY

CEP-156-448000000

CECILIA

4. **CHI-SQUARE TEST**

U. S. GOVERNMENT PRINTING OFFICE.

1862

下卷 34 · 亂世氣節

Форбс, Г. Г. Успехи в борьбе с тифом в Азии. СПб., 1891.

109

四下四上O P S T T H O

or [www.scholarship.org](#)

1, b. W 1, 9, b. PC 91, p. - (3)

4. Les mésanges. Planche

«Մաղիկ» հանդեսում «Թշվառներ»-ի բարզմանուրյան առաջին էջը:

լուն՝, ո՞վ դու, ի՞նչ կուզես մոմոաւ,
 Ըստ՝, մի՞թէ շծախեցիր պատիվդ ալ,
 Այն ճշմարիտ գանձ թանկագին։ Ապտակներ,
 Զորս տեղացուց ճշմարտություն այտդ ի վեր,
 Պահճ՛։ Եվ ի՞նչ օգուտ կընե քեզ ծածկել
 Քու հանցաքներ, և կամ զտիզմ շպարել¹։

Իսկ «Սաղիկի» հաջորդ համարում նա տպագրում
 է «Առ պ. Սարդիս Միրզա Վանանդեցյան» վերնագրով
 Հոգվածը, որտեղ որպես բնաբան զետեղում է Հյուգոյի
 պոեզիայից ֆրանսերեն լեզվով մի քառատող, որի
 թարգմանությունը հետևյալն է։

Անվերջ քայլի՛ր, ո՞վ նզովյալ,
 Եվ քեզ տեսնողը թող ասի. «ահա՝ անարգի»:
 Քայլի՛ր անվերջ, և թող զղջումը միակ ուղեկիցդ լինի,
 Թող անարգ անունը չսրբվի քո ճակատից²։

Հետագա տարիներին ևս երիտասարդ սերնդի դաս-
 տիարակության հարցը շարունակում է «Սաղիկին»
 վրաղեցնել։ «Չայն առաջադիմության» վերնագրով
 անստորագիր հոգվածում հեղինակը (ամենայն հավա-
 նականությամբ Զիլինկիրյանը) գանգատվում է, որ
 Արևմտյան Հայաստանում ընդամենը 150 դպրոց կա,
 մինչդեռ երեք միլիոն հայության համար անհրաժեշտ է
 առնվազն 3600 դպրոց, ընդ որում Կ. Պոլսում և Զմյուռ-
 նիայում՝ լիցեի մակարդակով մի քանի վարժարան։
 Բայց այսպիսի ծրագրի իրագործման համար, ասում է
 հեղինակը, պետք է որ ազգային իշխանությունն ունենա

1 «Սաղիկ», 1862, № 25, էջ 208։ Զիլինկիրյանը չի նշում, թե
 Հյուգոյի ո՞ր երկից է բերել այդ տողերը։ Մեզ հաջողվեց պարզել, որ
 նրանք զտնվում են „L'homme qui a livré une femme“ բա-
 նաստեղծության մեջ, «Մինչաղի երգեր» ժողովածուում։ Տե՛ս
 „Oeuvres Complètes“, T. I, Les Chants du Crépuscule, p. 20.

2 «Սաղիկ», 1862, № 26, էջ 214։ Այս տողերն էլ բերված են
 Հյուգոյի նույն երկից, թեև «Սաղիկ»-ում հիշատակություն չկա այդ
 մասին։

ուժեղ հեղինակություն, նյութական միջոցներ, ուսուցիչներ և միաժամանակ կարողանա Սահմանադրությունը գործադրել նաև հայաբնակ գավառներում։ Դաստիարակության հարցը մի ծանր հոգս է, որով ազգը պետք է անհապաղ զբաղվի, քանի որ դրանից է կախված հայերեխանների ապագան։ Եվ այդ միտքը հիմնավորելու համար հոգվածագիրը բերում է Հյուգոյի հետեւյալ ասուլիթը. «Մանկությունը աղքին համար շնորհ մ' է և միանգամայն հիվանդություն մը, զոր հարկ է բուժել»¹:

3

Սահմանադրության ստեղծման և դործադրման համար 50—60-ական թվականներին, ինչպես հայտնի է, բուռն ու երկարատև պայքար էր մղվում արևմտահայ հասարակական հոսանքների միջև։

Այդ կապակցությամբ, Հ. Սվաճյանը 1861 թվականին «Մեղու» հանգեսում տպագրում է Վիկտոր Հյուգոյի ճառը, որ վերջինս արտասանել էր 1850 թ. մայիսի 22-ին, Ֆրանսիայի Աղգային ժողովում, ընդհանուր քվեարկության մասին։ Այդ ճառում Հյուգոն քննադատում է կառավարությանը՝ քվեարկության իրավունքից ժողովրդին դրկելու դիտավորության համար։ Նա ընդգծում է, որ քվեարկությունը պետք է դրսեւրի ամբողջ ազգի կամքը, դրա համար էլ այն պետք է լինի ընդհանուր. «Ընդհանուր քվեարկությամբ ընտրված իշխանությունը, — ասում է Հյուգոն, — անպարտելի է նրա համար, որ իր ուժը քաղում է ժողովրդից, նման այն հին հսկային՝ Անթեին, որ իր ուժը քաղում էր հողից»²:

Հետաքրքիր է, թե ինչու Սվաճյանը Հյուգոյի հենց այս ճառն է տալիս իր թերթի էջերում, մի ճառ, որ ար-

1 «Սաղիկ», 1864, № 85, էջ 177։

2 «Մեղու», 1861, № 144, «Ընդհանուր քվեարկություն»։

տասանվել էր տասնմեկ տարի առաջ և իր այժմեականությունը կորցրել նույնիսկ Ֆրանսիայում, որտեղ ընդհանուր քվեարկությունը վերացել էր Նապոլեոն III-ի պետական հեղաշրջումով։

Հայտնի է, որ Սվաճյանը և առաջավոր այլ մտավորականներ պաշտպանում էին այն միտքը, թե Սահմանադրությամբ նախատեսված զեկավար մարմինները՝ Երեսփոխանական ժողով, Ազգային Կենտրոնական Վարչություն և այլն, պետք է ընտրվեն ընդհանուր քվեարկությամբ և ոչ թե վերևից տրված հրամաններով։ Սակայն «Մեղվի» խմբագիրը չէր կարող այդ միտքն ազատորեն արտահայտել, քանի որ Թուրքիայում, գոյություն ունեցող օրենքի համաձայն, արգելված էր մամուլում ազգային գործերի մասին գրելը։ «Մեղուն» երկու ամիս դադարելուց հետո նոր էր վերահրատարակվելու իրավունք ստացել, և այդ առթիվ կառավարությունը պաշտոնական նամակով Սվաճյանին հիշեցրել էր մամուլի վերաբերյալ գործող օրենքը։ «Երկու ամիս խափանված մնալե ետե, «Մեղուն» այսօր նորեն երկան կելնե բարձրագույն հրամանով,— ասում է Սվաճյանը հանդեսի նույն համարում։— Սույն հրամանը մեզի հաղորդող պաշտոնական նամակը կը հիշեցնե Պոլիս տպվող ամեն ազգի և ամեն լեզվի օրագիրներուն տրված պատվերը՝ ազգային ներկա գործոց վրա բացարձակ լուսավուն պահելու։» Եվ շարունակում է. «Ասանկ պարտավորյալ լուսավան ժամանակի մը մեջ գուցե մեր նորեն գրիշ ձեռք առնելը ոմանց ավելորդ կերեա, և որ ավելի արժան դատեին թերեւս, որ մեկ քանի օր ալ սպասեինք բոլոր ազգին հետ, մինչև որ մեր պաշտոնը կատարելու կարող վիճակի մեջ գրվեինք նորեն։ Մենք ալ թեպետ այս մտքին վրա էինք, բայց գալիքը մտածելով և ամեն բանի պատրաստ գտնվելու համար՝ լավագույն համարեցանք սկսիլ։»

Պարզ է, ուրեմն, թե ինչու Սվաճյանը խոսքը տալիս է Հյուգոյին, պաշտպանելու ընտրական սահմանադրական իրավունքը:

Հասարակական հոսանքների պայքարը ուժեղ կերպով արտահայտվում է նաև Զմյուռնիայում։ Այնտեղ Սահմանադրության ամենաթունդ կողմնակիցներից մեկն է Գրիգոր Զիլինկիրյանը։

Սահմանադրության հակառակորդները «Մաղիկի» հիմնադրման հենց առաջին օրերից հանձին Զիլինկիրյանի տեսնում են իրենց թշնամուն, նրա գեմ սկսում են հալածանք, նրան ներկայացնում որպես խոռվարարի, որը փորձում է Զմյուռնիայի հայ համայնքի խաղաղությունը վրդովել։ Զիլինկիրյանը նրանց հարձակումներին պատասխանում է «Առ ճշմարիտ ազգասերս» հոդվածով¹, որտեղ որպես բնաբան զետեղում է Հյուգոյի հետևյալ ասուլիքը. «Qui a le droit, a la force, et qui a la force dédaigne la violence» («Ով իրավունք ունի, նա ուժեղ է, իսկ ով ուժեղ է, նա արհամարհում է բռնությունը»)։ Զիլինկիրյանը հայտարարում է, որ բուն խոռվարարները նրանք են, ովքեր ազգասերի դիմակ հագած՝ զբաղվում են զրաբարտությամբ, հալածում են առաջադիմության կողմնակիցներին, զանում են Սահմանադրության գեմ խոշընդուներ հարուցել։ Բայց, ասում է նա, առաջադիմության հզոր հոսանքի առաջ բռնությունն ու տգիտությունը երբեք չեն կարող թումբեր կանգնեցնել։ Եվ այս միտքը հիմնավորելու համար վկայակոչում է Հյուգոյին. «Քանի մը ժայռեր չեն կրնար արգիլել գետ մը իր ընթացքեն։ Դեպքերը անհրաժեշտաբար կը պատահին և կանցնին մարդկային դիմադրություններուն մեջեն»։ Ազատության և արդարության գաղափարների մասին խոսելիս նա բերում է նաև Հյուգոյի այն միտքը, թե «Արդարությունը և ազատությունը իրարու հետ միա-

1 «Մաղիկ», 1861, № 4,էջ 25։

բանելու համար եղած են. ազատությունը արդար է և արդարությունը՝ ազատ»: Ի դեպ, Զիլինկիրյանը, լինելով Հյուգոյի ամենաչերմ երկրպագուներից մեկը, իր հոդվածներում շատ հաճախ է օգտագործել նրա ասույթները: Նա նույնիսկ իր «Ծաղիկ» հանդեսի համար բնաբան էր ընտրել Հյուգոյի հետևյալ միտքը. «Մամովը ընկերային աշխարհի լույսն է, և ուր որ լույս կա, հոն կա նաև նախախնամության մատը»: Այս բնաբանը խոշոր տառերով մինչև վերջին համարը (1867) տպվել է «Ծաղիկի» անվանաթերթի վրա:

Սահմանադրական պայքարը գնալով սրվում է Զմյուռնիայի հայ համայնքում: Քաղաքական ժողովում սկսվում են վեճեր ու կոփվներ: Այդ առթիվ «Ծաղիկի» 1861 թ. 10-րդ համարում լույս է տեսնում «Ճշշմարտություն» խորագրով մի հոդված, ուր հեղինակը (Հակոբ Մարկոսյան) մերկացնում է տեղական հարուստներին: Նա բացատրում է, որ ազգային ջոշերը Քաղաքական ժողովի իշխանությունն իրենց ձեռքում պահելով, այն օգտագործում են անձնական շահերի համար, այդ պատճառով էլ զեմ են Սահմանադրությանը, որը կոչված է պաշտպանելու բուն ժողովրդի իրավունքները: Բայց միևնույն է, ասում է հոդվածագիրը, Սահմանադրությունն ի վերջո կհաղթանակի: Դա անուրանալի մի ճշմարտություն է, իսկ ճշմարտությունը ոչ մի կերպ չի կարելի խեղդել: Նույն հոդվածում, որպես բնաբան, հեղինակը Հյուգոյի պոեզիայից բերում է ճշմարտությունը գովերգով մի պարբերություն, ֆրանսերեն լեզվով, որ տալիս ենք բառացի թարգմանությամբ.

Ճշմարտությունն այն գեղեցիկ գետն է,
Որը երբեք չի ցամաքի,
Այն աղբյուրն է, որից խմում է ամեն մարդ,
Այն ոստը, որի վրա աճում է ամեն ծաղիկ,

Այն ճրագը, որով Աստված
կուսավորում է բարի գործերը,
եվ այն լուսը, որ բնությունը
Պարգևում է մտքին:

Հետագայում, երբ Սահմանադրությունը վավերացվելով ուժի մեջ մտավ և ազգային ղեկավար օրդաններում ներգրավվեցին նաև ժողովրդական խավերի ներկայացուցիչները, կղերա-ֆեոդալական հոսանքն այս անգամ պայքար ծավալեց արդեն հաստատված Սահմանադրության դեմ: Հիշյալ հոսանքի ղեկավարները 1864 թվականին անցնում են գաղտնի գործունեության: Զիլինկիրյանը տեղեկանում է այդ մասին և «Մաղիկում» տպագրում «Թե ինչ է Հիսուսյանց նպատակը» խորագրով հոդվածը¹, որտեղ առանց անուններ տալու նշում է, թե Հոգեորականներից և աշխարհականներից բաղկացած մի խումբ մարդիկ խավարի մեջ որոգայթ են լարում, թրեր են սրում հայ աղղի ապագան խորտակելու համար: Թեև Զիլինկիրյանը անուններ չի տալիս, բայց նրա հոդվածի վերնագիրը ակներեորեն հայտնում է, թե ում մասին է խոսքը: Հիսուսյան նշանակում է ճիզվիտ, իսկ տվյալ ժամանակաշրջանի հանրաճանաչ՝ «Ճիզվիտը» Հովհաննես Զամուռճյանն էր. ժամանակի առաջավոր մտավորականները նրան ճիզվիտ էին անվանում: Հիշյալ Հոդվածում Զիլինկիրյանն իր համախոհներին ղգաստության կոչ է անում. «Այսպիսի պարագաներու մեջ,— ասում է նա, — ազգասեր գրիչները արթուն հսկելու են: Նվիրական պարտականություն մ' է այս հսկողությունը, և զայն կատարելու սկզբնավորություն մ' ընկելու համար՝ այսօր Հյուկոյի հետագա անմահ տողերը կը հանձնենք «Մաղիկի» ուշիմ ընթերցողաց ուշադրությանը: Կարդալու, մտածելու բան կա անոնց մեջ»: Այնուհետև նա տալիս է Հյուկոյի «Պատիժ» ժողովածուից «Ad majorem

1 «Մաղիկ», 1864, № 79, էջ 131:

Dei gloriam» երկի թարգմանությունը, որից բերում ենք
միայն ամենաբնորոշ տողերը.

Ժեզվիթք ըսին. «Մենք պիտի ըլլանք
Աշխարհի տերեր և հաղթականներ.
Պիտի կործանենք առաջդիմություն,
Օրենք, իրավունք, տաղանդ, արժանիք.
Պիտի թողունք, որ նախապաշարմունք
Գոռան ամեն տեղ իբր ամենի շունք:
Հավատաքննության խարովի ա'լ չկա,
Այլ նորին այն հուր մենք կրնանք վառել.
Թե որ չենք կրնար հոն նետել զմարդ,
Գեթ պիտի նետենք տպված զրբերը...»:

Հյուգոյից բերված հատվածի միջոցով Զիլինկիրյանը
ուզում է ներկայացնել հայ կղերա-պահպանողականների
աղփաղավ գործունեությունը:

4

Բացի Հյուգոյի պոեզիայից, հրապարակախոսական
հոդվածներից և ճառերից, հայ մտավորականությունը
60-ական թվականներին թարգմանում է նաև նրա ծա-
վալուն աշխատությունները՝ դրամաներն ու վեպերը,
որոնցում արծարծված են հասարակական կարևոր նշա-
նակություն ունեցող հարցեր: Խնչպես հայտնի է, Հյու-
գոն, ստեղծագործական գործունեության երկրորդ շրջա-
նում իր դրամաների նյութերը վերցնելով պատմա-
կան անցյալից, դրանց միջոցով շոշափել է ժամանակա-
կից քաղաքական հարցեր, պատկերել է միապետական
կարգերի դաժանությունն ու կամայականությունները,
աղնվականների այլասերվածությունը և այդ հիմքի
վրա ցույց տվել աիրող կարգերի և իրավագուրկ ժո-
ղովրդի հակամարտությունը: Այդ դրամաների գլխավոր
հերոսները ժողովրդի ծոցից ելած վեհ ու ազնիվ մարդիկ

են, որոնք պայքար են մղում անարդարության ու բռնակալության դեմ: Հայ առաջավոր մտավորականությունը խանդավառությամբ թարգմանում է դեմոկրատ դրողի այդ գործերը: Դրանց մի մասը հրատարակվում է առանձին գրքերով, իսկ մյուսները ձեռագիր վիճակում օգտագործվում են ներկայացումների համար: Հայ բեմի վրա հետզհետե ներկայացվում են «Արքայն զրունու» (1862), «Լուկրեցիա Բորչիա» (1862), «Անջելո» (1863 և 1865), «Մարիա Թյուգոր» (1866), «Էռնանի» (1867), «Մարիոն Դըլորմ» (1867): Այդ ներկայացումները, որոնց մասնակցում են ժամանակի ամենանշանավոր դերասանները՝ Մաղաքյան, Մնակյան, Վարդովյան, օր. Գարագաջյան, Արուտյակ և ուրիշներ, մեծ ոգեռորություն են առաջացնում հասարակության մեջ: Դրանց անդրադառնում է հայ մամուլը, թատերախոսականներ են տպագրվում Կ. Պոլսի և Զմյուռնիայի «Մեղու», «Մասիս», «Մաղիկ» և այլ պարբերականներում:

Վերոհիշյալ դրամաների թարգմանություններից ամենահաջողն է «Լուկրեցիա Բորչիայի» թարգմանությունը, որը կատարել է Տիգրան Տետյանը և առանձին գրքով հրատարակել 1862 թ., Զմյուռնիայում: Այդ թարգմանության մասին Հ. Սվաճյանը իր «Մեղվում» գրում է. «Ֆրանսայի կենդանի մատենագրութեննեն Հյուկոյի այս երեկի ողբերգությունը մաքուր աշխարհաբար հայերնի թարգմանեց զմյուռնիացի հարգու պ. Տիգրան Տետյան ուսումնական երիտասարդը»¹: Նույնպիսի բարձր գնահատանքով արտահայտվում են նաև Կ. Պոլսի «Մասիսը»² և Զմյուռնիայի «Մաղիկը»³:

«Արքայն զրունու» դրաման առաջին անգամ թարգմանել է պոլսահայ թատրոնի մեկնասաներից իլիաս

1 «Մեղու», 1862, № 165, էջ 144:

2 «Մասիս», 1862, № 562:

3 «Մաղիկ», 1862, № 32, էջ 272:

Չայցանը (1862), իսկ հետագայում նաև Պետրոս Դուռը-
յանը: Այդ մասին մենք տեղեկանում ենք Հրանտ Ասա-
տուրի հուշերից, որտեղ ասվում է. «Նույնիսկ Պետրոս
Դուռյան 1868-ին ետքը նորեն թարգմանած էր Վիքթոր
Հյուկոյի այդ երկը և անոր թարգմանությունն ալ ներ-
կայացված էր Վարդովյան խումբին կողմե»¹: Սակայն,
ինչպես Չայցանի, այնպես էլ Դուռյանի թարգմանությու-
նը լույս չի տեսնում:

Իր վեպերում Հյուկոյն լայն կտավի վրա ցույց է տա-
լիս բուրժուական միջավայրի հակասությունները, աշ-
խատավոր մարդու ծանր վիճակը, քննադատում է կա-
պիտալիստական հասարակարգի հակամարդկային
բնույթը:

«Թշվառները» վեպում, մասնավորապես, հեղինակը
մարմնավորում է այն հիմնական միտքը, թե սոցիալա-
կան անհավասարությունից անխուսափելիորեն առա-
ջանում են թշվառությունը, տգիտությունը և անբարո-
յականությունը, որոնք ի վերջո աղավաղում են մարդու
բարոյական կերպարը, ապականում ընտանիքը: Ընդ
որում հեղինակը զերմ համակրանքով է նկարագրում
տիրող կարգերի դեմ պայքարի ելած բանվորների բա-
րիկադային կոփիվները:

Հյուկոյի սոցիալական հայացքները մեր իրականու-
թյան մեջ մասսայականացնելու նպատակով Զիլինկիր-
յանը 1862 թ. հունիսի 1-ից ձեռնարկում է «Թշվառների»
թարգմանությանը, որը պարբերաբար տպագրում է «Ծա-
ղիկի» էջերում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ
«Թշվառները» սկսում է հայերենի թարգմանվել, երբ
բնագիրը դեռ նոր էր լույս տեսել Փարիզում: Ի դեպ,
նույն՝ 1862 թվականին Մոսկվայում «Սովորեմեննիկը»
ևս սկսում է «Թշվառները» թարգմանելով՝ պարբերաբար

1 Սովոր Փրկիչ Աղքային Հիվանդանոցի «Ընդարձակ Տարեցուց»,
Կ. Պոլիս, 1926, էջ 296—323:

Հրատարակել, բայց ցարական գրաքննությունը այն արգելում է: Ռուսաստանում այդ երկի առաջին լրիվ թարգմանությունը լույս է տեսնում 80-ական թվականներին, այն էլ գրաքննության կողմից կատարված զգալի կըրճատումներով:

Վեպի թարգմանության ներածական հոդվածում Զիլինկիրյանը գրում է, թե Եվրոպայում լուսավորությունը սակավաթիվ մարդկանց մենաշնորհն է, այնինչ հասարակության ստվար մասը տառապում է տգիտության և թշվառության ճիրանների մեջ. «Գտնվեցավ սակայն հանճար մը,— ասում է նա, — որ ճշմարիտ լուսավորությունը մեզ ցուցնելու պաշտոնը յուր վրա առավ: ... Այս հանճարը՝ ազատության անվեհեր դրոշակակիրներեն մին է»: Վեպի մասին խոսելով, թարգմանիչն այն բնութագրում է որպես «գրական աշխարհին հուպող և հեղաշրջում պատճառող» գիրք:

Զիլինկիրյանը «Թշվառները» թարգմանելով հանդերձ, երբեմն էլ որոշ մասերի համառոտ շարադրանքն է տալիս: Թարգմանությունը շի ավարտվում: Այն ընդհատվում է «Մաղլիկի» 1865 թ. 106-րդ համարում, Զիլինկիրյանի հետևյալ խոսքերով. «Հյուկոյին սոսիալիզմի վրա գրածը հոս արժան կը համարինք վերջել: Հեղինակը անկե ետք կսկսի այն ատենի ազատականաց և հեղափոխություն պատրաստող քաջերու վրա երկարութեն խոսիլ և ընթերցողին սորվեցնել ապստամբելու և բոնության դիմադրելու արհեստը...»:

Հյուգոյի վեպի առաջավոր գաղափարներով խանդավառված՝ Զիլինկիրյանը 1868—1870 թթ. հրատարակում է «Թշվառների» լրիվ թարգմանությունը տասը հատորով, նպատակ ունենալով հայ իրականության մեջ արմատավորել այն միտքը, թե «Ճշմարիտ լուսավորության» հասնելու համար հարկավոր է «ջնջել թշվառությունը» և վերջ տալ «զորավորին՝ ի վնաս տկարին ունեցած շահըն-

կալությանը», այսինքն՝ վերացնել սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը: Թարգմանիլը, միաժամանակ, ուզում է Հյուգոյի խոսքերով հայ ընթերցողին սովորեցնել «ապստամբելու և բռնության դիմադրելու արհեստը»:

Զիլինկիրյանն իր թարգմանությունը նվիրում է Հեղինակին, հետևյալ խոսքերով. «Առ Վիքթոր Հյուկո նվերմեծի զարմացման և խորին հարգանաց»:

«Թշվառների» 1868 թ. հրատարակության առաջարանում թարգմանիլը բացատրում է, որ մեծանուն գրողը մարդկային իրավունքները՝ պաշտպանելով՝ երեխայի տգիտության, կնոջ անկման ու մարդու նվաստացման ողջ պատասխանատվությունը զցում է «ընկերային օրինաց անիրավության և անողոքության վրա»: «Հյուկոն,— շարունակում է Զիլինկիրյանը,— կը բողոքե այս օրինաց հեղինակներուն դեմ, սրամտությամբ կը բողոքե ընկերային ամեն զորությանց դեմ, կը բողոքե եկեղեցական իշխանության դեմ, կը բողոքե աշխարհական իշխանության դեմ, կը բողոքե երկրային արդարության դեմ, և այս պերճաբառ բողոքին առջե և այս շանթաձիգ որոտապմին դղրդումնեն տիեզերական խիզճը սրսփութով մը կը համակվի, հանցավորները կը սասանին, և քանդում մըն է կսկսի, քանզում հին աշխարհի, քանզում, որ այսօր աներենությ այլ վաղը երկելի է»: Այնուհետև, հայ թարգմանիլը հանդիսավորապես հայտարարում է. «Մենք կը հավատանք այս քանդումին»:

Հիշյալ առաջարանում Զիլինկիրյանը Հյուգոյին անվանում է ապստամբ, հեղափոխական, «ոչ միայն 89-ի, այլ նաև 93-ի հարազատ զավակը», այսինքն՝ զավակը ֆրանսիական մեծ հեղափոխության, որը 1789 թ. միապետական-բռնակալական կարգերը տապալելով, դեմոկրատական հանրապետություն հռչակեց, իսկ 1793 թ.

գլխատեց միապետության խորհրդանշանը հանդիսացող
Լյուդվիկոս XVI-ին:

Արևմտահայ ռեակցիոներները, որոնք ամեն կերպ
ճգնում էին, որ ապստամբության և Հեղափոխության
դադափարները չթափանցեն հայ իրականության մեջ և
ձգտում էին պահպանել տիրող սոցիալական անհավա-
սարությունը, դժողով մնացին «Թշվառների» թարգմանու-
թյունից: Հ. Զամուռճյանը, որը քարոզում էր, թե աստ-
ված մարդկանց հավասար չի ստեղծել, ոմանց ստեղծել
է իշխելու, իսկ մնացյալներին՝ ծառայելու համար, և
պնդում էր, թե տերերի ու ծառաների հարաբերությունը
պետք է անփոփոխ պահպանվի, սկսում է կատաղի հար-
ձակումներ գործել Հյուգոյի և Զիլինկիրյանի վրա: Նա
Զիլինկիրյանին ամբաստանում է, թե Հյուգոյին «աղա-
տության դրոշակակիր» անվանելով՝ նրա վնասակար
դադափարներն է տարածում: Զամուռճյանը, գեռ 1864
թվականին Ազգային ժողովում պաշտոնավես պահան-
ջում էր «Թշվառների» պարբերական թարգմանության
դադարեցումը:

Սակայն, չնայած այդ հարձակումներին, Հյուգոյի
վեպը աննախընթաց և արտակարգ հաջողություն ունե-
ցավ: Հայ ընթերցող հասարակայնության մեջ «Թշվառ-
ների» գոտած ջերմ ընդունելության մասին պատկերա-
ցում տալու համար բերենք Արփիար Արփիարյանի
հետեւյալ ուշագրավ վկայությունը, որը 1899 թ. տպա-
գրուվել է կոնդոնի «Նոր կյանք» հանդեսում: «Վիքթոր
Հյուկոյի «Թշվառներ»ուն հայացումը մեր ազգին մտա-
վոր հեղաշրջումին պատմությանը մեջ շատ մեծ էջ մը կը
գրավի: Նոր երիտասարդություն մը, որ դպրոցեն շա-
փակոր ուսում միայն ստացած էր, «Թշվառներ»-ով
կրթվեցավ 1868-ին ետքը: Պոլիս՝ վարպետ, աշկերտ,
գրագետ, սպասավոր—ամենքն ալ Հյուկո կը կարդային.
շուկան վերեն վար Հյուկո տարածված էր. Հայաստանի

ամեն քաղաքը, մինչև իսկ գյուղերու մեջ, Հյուկո մը կար: Ամենքը Հյուկո կը կարգային, ամենուն մտքին առջև նոր աշխարհ՝ մը կը բացվեր»¹:

Անդրադառնալով հայ հասարակության մեջ «Թշվառների» գործած ազգեցությանը, Արփիարյանը Վենետիկի «Գեղունի» հանդիսում 1902 թ. գրում է. «Անոնք որ մոտեն դիտած են 1860-են ի վեր մեր հանրային կյանքին փոփոխությունները, անոնք աղեկ հասկցած են թե «Թշվառները» կարևոր գեր մը կատարած է մեր մեջ: Այդ հոյակապ գործին թարգմանությունը պիտի բավեր Զիւլինկիրյանին մեր արդի գրականության մեջ կարևոր տեղ մը տալու համար»²: Իսկ 1903 թ. Արփիարյանը Պետերբուրգի «Բանբեր» հանդիսում գրում է. «Հյուկոյի «Թշվառներուն» հայացումը՝ թարգմանական ինչ թերություն որ ալ ունենա, բայց և այնպես զայն կրնանք հրաշագործություն մը նկատել: Եվրոպական լեզուներե ի հայ փոփոխած գիրք մը չկա, որ այդ գաղափարական վիպասանության շափ հղորապես բարերար ազգեցություն ունեցած ըլլա թուրքիո հայոց մտքին ու հոգիին վրա»³:

Ինչ վերաբերում է Զիւլինկիրյանի թարգմանության որակին, ապա տվյալ ժամանակաշրջանի համար այն գրեթե անգերազանցելի էր: Թարգմանիչը հաղթահարել է ոչ միայն Հյուգոյի յուրօրինակ լեզվի դժվարությունները, այլև կարողացել է հայ գրական լեզվի կազմավորման այդ շրջանում գրել մաքուր և դյուրասահ աշխարհաբարով, միաժամանակ հարազատ մնալով բնագրին: Թեկուղ տողատակի ծանոթագրությունները բավական են պատկերացում տալու համար հետազոտական խղճամիտ աշխատանքի մասին, որ կատարել է թարգմանիչը:

1 «Նոր կյանք», 1899, № 23, էջ 362 («Թրվան կյանքը»):

2 «Գեղունի», 1902, № 4, 5, 6, էջ 46 («Հայոց արդի գրականությունը»):

3 «Բանբեր գրականության և արվեստի», 1903, Ա գիրք, էջ 159 («Արևմտյան հայոց արդի գրականությունը»):

Հայտնի հրապարակագիր Մաթեոս Մամուրյանը 1885 թ. իր «Երևելյան մամուլ»-ում «Թշվառների» թարգմանության հաջողության պատճառը բացատրում է Հետեւալ կերպ. «Բավական չէ քաջահմուտ լինիլ հայերեն և ֆրանսերեն լեզուներու, լավ ըմբռնել այն ամեն պատմական, իմաստասիրական և ընկերային խնդիրները զորս կը հուզե Հյուկո իր վեպի մեջ, բավական չէ թափանցել անոր ողին ունպատակը, պետք է մանավանդ սիրել Հյուկոն, ինչպես կը սիրե մեր բարեկամը՝ Զիլինկիրյան էֆենտին այդ տիեզերահոշակ հեղինակն, անոր զգացմանց և զաղափարներուն նույն խանդով փարիլ ու սիրահարիլ և կերպով մը զանոնք յուրացնել: Զիլինկիրյան էֆենտիի թարգմանության հաջողության գաղտնիքն այս պայմաններուն կատարման մեջն է, և երբ լույս տեսավ այդ զործը 1868-ին, թարգմանիչն իր անձնագիր այլ սիրավառ և աղատաբույր աշխատության բարյական տրիտուրը գտավ հայ ժողովրդյան կողմէ տեսնված եռանդագին և համակիր ընդունելության և մտային շարժման մեջ»¹:

Երբ «Թշվառների» հայերեն թարգմանության հատորները 1868 թվականին սկսեցին լույս տեսնել, «Մասսիսը» այդ վեպի և «Թափառական հրեայի» մասին Հետեւալ տողերը գրեց. «Թափառականը» անդրլեռնականներուն համար (ակնարկում է մոլեռանդ հայ կաթոլիկներին—Հ. Գ.) մահածին հարված մ' է, իսկ «Թշվառները»՝ դարուս մարդկային ընկերությանց օրինագիրքը: Ուստի ձե՛զ կը մնա, ուսումնասեր երիտասարդք, համակիր զգացումներով այս թարգմանչաց վեհ ձեռնարկությանց պսակը տալ»²:

Հյուգոյի «Մահապարտի վերջին օրը» վիպակը 1868 թվականին թարգմանում և լույս է ընծայում թար-

1 «Երևելյան մամուլ», 1885, նոյեմբեր, էջ 559:

2 «Մասսիս», 1868, № 856, էջ 3:

թող Մաղաքյանը՝ «Դատապարտյալի մի վերջին օրը» վերնագրով։ Իր առաջաբանում Մաղաքյանը հայտնում է, թե այդ գիրքը թարգմանել է մարդկության մեջ տիրող սոցիալական անարդարության հարցը հայ ժողովրդի մեջ բարձրացնելու դիտավորությամբ։ Սոցիալական անհավասարությունից առաջանում է չքավորությունը, որն ի վերջո մարդկանց մզում է դեպի հանցագործություն։ Զքավորությունը վերացնելու համար հարկավոր է վերացնել նրա պատճառը, Մաղաքյանի խոսքերով ասած՝ «Եթե մարդկային ազգին ծառայություն մը ընելու և անոր մեջեն եղեռնագործները պակսեցնելու համար է որ զանոնք կը պատժեն, առավել բարիք մը հասցուցած կը լան, երբ շարությանց պատճառը քննեն և այն աղբյուրը ցամքեցնելու ջանան»։

Այնուհետև թարգմանիչը բացատրում է, թե չքավորությունն ու տղիտությունը կարող են ամենապնիւ բնավորություններն անգամ այլասերել, և անմեղ երիխաններից պատրաստել ապագա շարադրծներ։ «Եթե ազգին օգտակար ծառայություն մը կա անել, — շարունակում է նա, — պաշտպանելն է անոր որբ և անտերունչ զավակները և շնողով, որ ապագային մեջ սրիկաններու խումբ մը կազմեն ի նախատինս մարդկության»։

Նորահաս սերնդի դաստիարակության հարցում Մաղաքյանը հույսը դնում է հայ հարուստների վրա, որոնց կոչ է անում՝ որբերին իրենց պաշտպանության տակ առնել ու նրանց կրթությամբ զբաղվել։ Զարգացած և դիտակից երիտասարդության շնորհիվ, եզրակացնում է նա, հայ ազգը հնարավորություն կունենա վերականգնելու։

Կ. Պոլսում Հրատարակվող «Զեփյուռ Հայրենյաց» հանդեսի խմբագրությունը «Դատապարտյալի մը վեր-

1 Վ. Հյուկո, Դատապարտյալի մը վերջին օրը, Կ. Պոլսա, 1863։

շին օրը» գրքի թարգմանության օգտակարությունն ընդդեմ լուսուց հետո ավելացնում է. «Կը հուսանք, որ արդու աղքայինք փոխանակ «Աշբա Քարիստ», «Շահ Խամայել», «Թոփալ շեյթան հեքեասի» և այս տեսակ գրքեր կարդալու, պիտի հոժարին՝ զմարդիկ ի մարդասիրություն և ի գութ և ի կարեկցություն շարժող այս տեսակ ընտիր գործեր կարդալու և թշվառ անձանց օգնության հասնելու»¹:

«Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպում Հյուգոն բացահայտում է միջնադարյան Փարիզի դատարանների անարդարությունները, կրոնական մոլեռանդությունը, ժողովրդական մասսաների թշվառ վիճակը: Այդ գրքում արծարծված քաղաքական-հասարակական պրոբլեմները հայ ընթերցողներին ծանոթացնելու մտադրությամբ՝ 1869 թվականին Տ. Թերզյան անունով պոլսահայ մի երիտասարդ սկսում է դրա թարգմանությունը «Նոթր Տամ տը Փարի» խորագրով: Սակայն, առաջին հատորի հրատարակումից հետո թարգմանությունը դադարեցվում է՝ ցածրորակ լինելու պատճառով: Հետագայում նույն վեպը ամբողջությամբ թարգմանում է Մեսրոպ Նուպարյանը:

Ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում Հյուգոյի բանաստեղծությունների, հրապարակախոսական հոդվածների, ճառերի, նամակների, դրամաների, պատմվածքների և ծավալուն վեպերի թարգմանությունները ցույց են տալիս, թե 60-ական թվականների հայ առաջավոր գործիչները որքան հաճախ են օգտագործել գեմոկրատ գրողի խոսքը՝ լուսավորության, դպրոցի, կրոնի, աղքային աղատագրության, ինչպես և սոցիալական ընդհանուր հարցերի կապակցությամբ:

1 «Զեփյուռ Հայրենյաց», 1863, № 18, էջ 144:

Արևելահայ գրականության մեջ Հյուգոյի ստեղծագործությունները համեմատաբար քիչ են օգտագործվել 60-ական թվականներին, բայց այն քիչը, որ թարգմանվել է, հագեցված է եղել սոցիալական բովանդակությամբ: Այստեղ, Հյուգոյից թարգմանված առաջին երկը եղել է «Վարձատրություն առաքինության» վերնագրով բահաստեղծությունը՝ Վահագն Պատկանյանի թարգմանությամբ, որը տպագրվել է Խափայել Պատկանյանի «Հյուսիս» շաբաթաթերթում¹: Այդ թարգմանության ձեռագիրը պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում: Դրա հետ կա նաև մի այլ ձեռագիր, խոնացած և անթվակիր, ուր Վահագն Պատկանյանը գրել է նույն թարգմանության գրաբար տարբերակը: Դա արևելահայ հատվածում Հյուգոյի պոեզիայից կատարված մեկ հայտնի միակ գրաբար թարգմանությունն է: Այդ թարգմանությունը, որը կրում է «Խաչ» խորագիրը, ձոնված է Խրիմյան Հայրիկին, հետեւյալ վերտառությամբ: «Ուղերձ առ Գերաստինանյալ Սրբազն Մկրտիչ Մեծաշնորհ Արքեպիսկոպոսն և Ազգընտիր Առաքելապատիվ Հայրիկն Հասարակաց»:

Հյուգոյի հիշյալ բանաստեղծությունը 1867 թ. թարգմանում է նաև Հովհ. Քուչուբեկյանը և այն տպագրում Թիֆլիսի «Հայկական Աշխարհ» ամսագրում՝ «Ճշմարտություն»² վերնագրով: Քանի որ այդ երկում նկարագրված է ժողովրդի համար անձը զոհաբերող հասարակական գործիշը, ապա կարելի է ենթադրել, թե այն թարգմանելիս՝ Քուչուբեկյանը ևս, Պատկանյանի նման, նկատի է ունեցել ինչ-որ հայ հասարակական գործի, որը նույնպես ճշմարտություն և աղատություն է քարո-

1 «Հյուսիս», 1863, № 5, էջ 40:

2 «Հայկական Աշխարհ», 1867, № 6—8, էջ 289:

ղել, իր կյանքն է զոհել ժողովրդի համար և ենթարկվել հալածանքների: Եթե նկատի ունենանք, որ Քուչուբեկյանը եղել է «Հյուսիսափայլի» աշխատակից, Միքայել Նալբանդյանի հանդեպ տածել է անսահման սեր ու հարգանք, համակրել է նրա զաղափարները, նրան ձռնել է Թումաս Մորի «Պատանի երգիչը» բանաստեղծության իր թարգմանությունը¹, և ծրագրել է գրել «Նահատակ»—նվեր Նալբանդյանի հիշատակին»² խորագրով մի բանաստեղծություն (որի միայն սկիզբը կա ձեռքի տակ), ապա անհավանական չի թվա այն ենթադրությունը, որ Քուչուբեկյանը Հյուգոյի երկը թարգմանելիս նկատի է ունեցել ուելլյուցիոն մեծ դեմոկրատին: Հենց այն փաստը, որ Հյուգոյի երկի բովանդակությունը լիովին համապատասխանում է Նալբանդյանի հասարակական գործունեությանը, ավելի է հիմնավորում այս ենթադրությունը.

Ով քարոզեց ստության դեմ քաջ կովելավ,
Ճշմարտության, ազատության սուրբ անունով,
Աշխարհ դատեց, որ մարդկության նա որպես թռ
Հավատուրաց, աղքակործան թշնամին է:

Այնուհետև հեղինակը դանդատվում է, որ մարդիկ ապերախտ են, չեն գնահատում աղատության դրոշակակիրներին, մատնում ու հալածում են նրանց: Եվ դառնությամբ ավելացնում է.

Ո՞վ մարդկություն, լավ հասկացա քո օրենքը—
Թե մեր քարին սահմանված է այն բանումը,

Որ ընտիրը մարդկեներից լոկ յուր բաժին
Պիտի ստանա այս աշխարհում տանջանք խալին,

1 «Հայկական Աշխարհ», 1867, № 9:

2 Սկսվում է. «Ո՞չ ինչպես դու դառը վիճակ...» խոսքերով: Տե՛ս Հայկական ՍՍԾ ԳԱԱ Գրականության և արվեստի թանգարան, Քուչուբեկյանի ֆոնդ, № 12:

Պիտի զո՞հ նա մեր համար խելքն ու կամքը,
Աչքերի լույս, սիրաը, հողին, բոլոր կյանքը,

Պիտի տքնե գիշեր-ցերեկ նա անդադար,
Քրտինք թափե, արյոն թափե եղբոր համար,
Եվ վերջապես յոր մեծագործ քարության տեղ՝
Պիտի կռչվի հավատագրուժ, անխելք, տխմար...

Ազատություն և ճշմարտություն քարոզող, խավարամտության դեմ կովող, ժողովրդի ազատագրության համար կյանքը զո՞հող Մ. Նալբանդյանը նույնպես հաւածվեց հետագիմական տարրերի և բոնակալության կողմից, նույնպես հավատուրաց ու հերետիկոս կոչվեց:
Ի դեպ, ուշագրավ է այն փաստը, որ հենց ինքը՝ Նալբանդյանն էլ իրեն բնութագրել է նույնիմաստ խոսքերով.

Սկսեցի սեր քարոզել,
Սուրբ ուսումը ճշմարտության,
Եվ իմ մերձավորքը
Կամեին ինձ քարկռծ անել...

Նալբանդյանն այս տողերը թարգմանել է Լերմոնտովի «Մարգարե» բանաստեղծությունից և 1858 թ. տպագրել «Հյուսիսափայլում» (իր «Հիշատակարան»-ում) ի պատասխան «Մեղու Հայաստանի»-ի և «Մասյաց Աղավնի»-ի հարձակումներին:

Հովհ. Քուշուբեկյանը, որը նույն շրջանին աշխատակցում էր «Հյուսիսափայլին», անկասկած ծանոթ էր Նալբանդյանի հիշյալ թարգմանությանը: Այդ հանդամանքը ևս հիմք է տալիս ենթադրելու, որ Հյուգոյի երկը թարգմանելիս Քուշուբեկյանը նկատի է ունեցել Նալբանդյանին:

Ազատության մեծ երգչի մահից մեկ տարի հետո լույս ընծայված «Ճշմարտություն» բանաստեղծությունը մի սրտառուշ գովերդ էր նրա հիշատակին:

Հասարակության մեջ գրողի գերը և նրա կատարած գործի նշանակությունն ընդգծելու նպատակով և որին

Ստեփանեն 1867 թ. թարգմանում և իր «Հայկական աշխարհ» ամսագրում տպագրում է Հյուգոյի «Վիլզամ Շեքսպիր» դրբից մի հատված, «Մահից հետո» վերնագրով, որտեղ ասվում է, թե գրողի գործն անմահ է, այն մնում ու շարունակվում է նրա մահից հետո, «նրա խոսքը փայլում է խավարում և դառնում է լուսավոր աստղ»¹:

Խորեն Ստեփանեն նույն այդ թվականին թարգմանում և «Միրիել եպիսկոպոսը» խորագրի տակ հրատարակում է «Թշվառների» առաջին մասից որոշ հատվածներ: Թարգմանության վերջում նա հայ հոգևորականներին կոչ է անում ուշի-ուշով կարդալ «Թշվառները» և օրինակ վերցնել ժողովրդին նվիրված, ազնիվ և անշահախնդիր Միրիելի վարքագծից. «Առաջարկելով այս ոռմանը,— ասում է նա,— հույս ունենք առանձին ուշագրություն պիտի դարձնեն սորա վերա մեր ընթերցողները: Աղաշում ենք մանավանդ մեր բարձր սրբազան հայրերին կարդալ Միրիել եպիսկոպոսի գործունեությունը առանց կրթի, առանց ատելության, համակրելով և սիրելով սրբազան Միրիելին: Եթե մեզանում այսօրյան հայկական անապատ կյանքում այդպիսի քրիստոսակրոն հոգևոր հոր մի լինելությունը հրաշք, աստվածային հրաշալի առանձնաշնորհություն մի պիտի համարվի, մի՞թե ցանկանալն ևս, որ մեր հոգևոր հայրերը համակրեին, սիրեին, նմանեին Միրիել եպիսկոպոսին՝ ցնորք պիտի համարվիր մեզ համար: Այս հարցին պատասխանը մենք կաշխատենք լսել մեր սրբազան հայրերից»²:

Հետապնդելով նույն նպատակը, այն է՝ բարձրաստիճան հոգևորականներին բարոյապես վերափոխել Միրիելի օրինակով, Ստեփանեն 1868 թվականին պարբերաբար լույս է ընծայում «Միրիել եպիսկոպոսը» գլխի շարունակությունը³:

1 «Հայկական Աշխարհ», 1867, № 6—7,էջ 233:

2 Նույն տեղում, № 2—3, էջ 81—95:

3 Նույն տեղում, 1868, № 2—3, № 4—5, № 9:

«Հայկական Աշխարհ»-ում է տպագրվում՝ Հյուգոյի «Կլոդ Գյո» վիպակը Հայերեն՝ թամար Ասլանյանի թարգմանությամբ¹: Այդ երկում նկարագրված է, թե ինչպես Կլոդ Գյոն՝ մի պարկեցտ արհեստավոր, գործազրկության պատճառով ծայրահեղ թշվառության է մատնվում և քաղցած ընտանիքը սովամահությունից փրկելու համար ստիպված է լինում հաց գողանալը: Նրան բռնում և դատապարտում են երկարատև արգելափակման: Բանտում Կլոդ Գյոն, ընդվզելով բանտապետի անդադրում հալածանքների դեմ, վերջինիս սպանում է, հավատացած, որ այդպիսով գոնե իր բախտակիցներին կփրկի նրա ծանր լծից: Կլոդ Գյոյին գլխատում են: Հյուգոն, Կլոդ Գյոյի և նրա նմանների կատարած հանցագործությունների պատճառը տեսնում է բուրժուական հասարակարգում տիրող դաժան պայմանների մեջ և դատապարտում է անողոք օրենքները:

Վերոհիշյալ և այլ թարգմանությունները վկայում են, որ Հյուգոյի երկերը դեռ անցյալ դարի 60-ական թվականներին արգեն սկսել էին հետաքրքրել արևելահայմատավորականներին, որոնք այդ երկերի միջոցով ձգտում էին հայ հասարակական կյանքը հուզող հարցեր բարձրացնել: Հաջորդ տասնամյակներում, ինչպես հետո կտեսնենք, մեծ գրողի ստեղծագործությունները սկսում են ավելի առատ ներհոսել արևելահայ թարգմանական գրականության մեջ:

6

Հայ կյանքում անցյալ դարի 70—80-ական թվականները հանդիսացան ծանր իրազարձություններով լի մի շրջան, հատկապես Արևմտահայաստանի համար, որտեղ ապրում էր մեր ժողովրդի ստվար մասը: Գյուղացիական

1 «Հայկական Աշխարհ», 1869, № 6—8 և № 9:

մասսաների տնտեսական քայլայումը, նորանոր հալածանքները, համատարած պանդխտությունը, հայաբնակ գավառների ապստամբություններն ու նրանց ճնշվելը, թուրք և քուրդ հրոսակախմբերի հաճախակի հարձակումները՝ այս բոլորը ծայրաստիճան դժնդակ էին դարձրել հայ ժողովրդի առանց այն էլ անմիտար վիճակը:

1877—1878 թթ. ոռու-թուրքական պատերազմի հետ մեր ժողովուրդը մհծ հույսեր էր կապել և հավատում էր, որ Ռուսաստանի հաղթանակի շնորհիվ Արևմտյան Հայաստանը կազմատագրվի թուրքական լծից ու կմիավորվի Արևելյան Հայաստանի հետ: Այդ հեռանկարով ոգեշնչված՝ թե՛ Անդրկովկասի և թե՛ Արևմտահայաստանի հայերը ոռուսական բանակին զգալի օգնություն ցուց տվին և, միաժամանակ, կազմեցին կամավորական գնդեր, որոնք ոռու զորքերի հետ կողք-կողքի կուլցին ընդհանուր թշնամու դեմ:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից անմիջապես հետո ապագա մեծանուն հայագետ Ստեփան Մալխասյանը, հայ ժողովրդի վերամիավորման հեռանկարով խանդավառված՝ թարգմանում և «Արարատ» հանդեսում տպագրում է Վիկոր Հյուգոյի «Moïse sur le Nil» («Մովսեսի Նեղոսի»¹) բանաստեղծությունը, նպատակ ունենալով ընդգծել այն միտքը, թե Արևմտահայաստանի հայերն էլ, հին հրեաների նման, շուտով կազմատագրվեն բռնակալական լծից և կմիանան իրենց եղբայրներին:

Բայց, ինչպես հայտնի է, 1877—1878 թթ. ոռու-թուրքական պատերազմի հետ կապած հայերի հույսերը շարդարացան: Ընդհակառակը, արևմտահայության դրությունն ավելի ևս վատթարացավ. պատերազմից հետո սուլթանական կառավարությունը սաստկացրեց հալածանքները և ղանգվածային ջարդեր կազմակերպեց մի

1 «Արարատ», 1878, № 3, էջ 105:

շարք հայաբնակ գավառներում։ Ահա այդ աղետալի օրենքին Մալխասյանը, դառնացած՝ Հյուզոյի «L' Enfant» («Տղան») բանաստեղծության նմանողությամբ գրում և լույս է ընծայում իր «Որբ հայ տղան»¹։ Այդ երկում կոտորածների թատերաբեմը Անի պատմական քաղաքն է, որի ավելի բարեկաների վրա նստած՝ տիտոր մտածում է որբ հայ տղան։

Խուժագուժ ազգիր անցան Անին,
Եվ այդ սերճ քաղաքն շենքով ու մարդով
Ավերակի կույտ դարձավ մեկ օրեն.
Տեղը գոյացավ արյան և հրո ծով։

Ամեն կողմ դատարկ՝ անապատ լըռին,
Միայն հայ մանուկն սե-սե աշքերով՝
Քանդված, սեացած պարիսպի տակին
Նստած էր տիտոր, կորացած գլխով։

Նրան սփոփելու համար պոետը տեսակ-տեսակ նվերներ է առաջարկում։

Ի՞նչ կուզես, երգե՞ր, խաղալի՞ք, թռչո՞ւն,
Թե՞ ճակտիդ նման շուշան մի ճերմակ։

Բայց հայ պատանին, որը մտածում է միայն վրեժ լուծելու և իր հայրենիքն ազատելու մասին, անտարբեր է գեղակ երգն ու խաղալիքը։

— Բարեկամ, — ասաց մանուկը սփրուն, —
Ես կուզեմ միայն մեկ սուր և նիզակ...

Նույն այդ 1878 թվականին Զեյթունի հայերը, զենքի դիմելով, մի ամբողջ տարի պարտիզանական կոիվներ մղեցին թուրքական զորքերի դեմ։ Այնուհետեւ, ապստամբական շարժումը ծավալվեց և Վասպուրականում, Սասունում և Ալաշկերտում։ Սակայն այդ ապստամբությունները, մասնակի բնույթ կրելու և իրար հետ կապակցված մինելու պատճառով, ի վերջո ճնշվեցին սուլ-

1 «Արարատ», 1878, № 4,էջ 155։

թանական գորքերի կողմից: Սկսվեց հալածանքի և կոտորածների մի նոր շրջան:

Այս այս էր Արևմտահայաստանի քաղաքական իրադրության ընդհանուր պատկերը 80-ական թվականների սկզբներին, իրադրություն, որը չէր կարող շանդրադառնալ հայ մտավորականների տրամադրության վրա:

Սակայն հայ գրականության առաջավոր ներկայացնուցիչները՝ Ռ. Պատկանյանը, Ծերենցը, Բաֆֆին և ուրիշներ չկորցրին ազատության հեռանկարը և իրենց մարտաշունչ երկերով սկսեցին պայքարի հրահրել ժողովրդին:

Հայ գրողների և հրապարակախոսների մարտական կոչերը, լինեն զբանք ինքնուրույն թե թարգմանական, չէին կարող անարձագանք մնալ ազատատենչ ժողովրդի հոգում: Թե՛ մտավորականությունը և թե՛ ժողովրդի լայն խավերը անհագ հետաքրքրությամբ կարդում էին հայրենասիրական երկերը: Եվ դա փաստ է: Դրա ցայտուն վկայություններից է 1884 թ. «Մշակում» հրապարակված այն նամակը, որտեղ պատմվում է, թե ինչպես Վանի երիտասարդությունը խանդավառությամբ տոնել է Բաֆֆու գրական գործունեության 25-ամյակը: Նամակագիրը (ստորագր. Հրանտ) այնուհետև ասում է. «Ո՞ր զգայուն հայ կարող է անտարբեր մնալ այսպիսի ցանկության առջև: Ո՞ւր է այն հայ, որ «Դավիթ-Բեկը» կարդացած ժամանակ չի հանա: Ո՞վ կարդացած է կարդալ «Խենդը» առանց հափշտակվելու: «Կայծերը» արդեն սկսած է յուր լույս արձակել ամեն խավար անկյունների մեջ: Վանի մեջ ծերունի և տգետ հայուժիներն անդամ ձմեռ գիշերներ թոնիրի շուրջը բոլորած, իրենց տղաներին «Կայծեր» կարդացունելով մտիկ կանեին»¹:

Սա եղակի երևույթ չէ: Մենք Արփիարյանի վկայությունից էլ տեսանք, թե ինչպես ամենուրեք, քաղաքնե-

1 «Մշակ», 1884, № 39, էջ 3 («Նամակ Թուրքիայից»):

բում և գյուղերում Հայ դպրոցականը, մտավորականը, բանվորը և գյուղացին մեծ Հայիշտակությամբ կարդում էին «Թշվառները»:

Ազգային ազատագրության իդեալով խանդավառված պատանի Հովհ. Հովհաննիսյանը 1882 թ. Հյուգոյի «L' Enfant» բանաստեղծության նմանողությամբ գրում է «Հայ մանուկը»: Հովհաննիսյանի «Հայ մանուկը» և Հյուգոյի «Տղայի», Պեշիկթաշլյանի «Հայ քաջորդու» և Մալիսայանի «Որբ Հայ տղայի» նման տիխուր է: Պոետը նրան ցույց է տալիս գեղեցիկ ծաղիկներ, դալայլող թռչունը, կարկաչող առուն, ոսկի արևը, բայց դրանցից ոչ մեկը չի հրապուրում Հայրենասեր պատահուն: Նա պոետին պատասխանում է.

Տվե՛ք ինձ սուսեր ամուր պողպատե,
իմ խաղալիքը այդ պիտի լինի.

Առե՛ք ժաղիկներ, տվե՛ք ինձ հրացան,
Թող այնուհետև թշնամիք դողանլ:

«Հայ մանուկ»-ից մի տարի հետո Հովհաննիսյանը, Հյուգոյի «Le poète dans les révolutions»² («Պոետը ուղղուցիայի ժամանակ») բանաստեղծության նմանողությամբ գրում է նաև «Ուժգին հողմերը»³, ուր ընթերցողին կոչ է անում՝ լինել «խայտառակ դարուս խարազան անխնա», «լինել սոսկալի դեպի շարը» և շարունակում է.

Արհամարհելով անհեքը մարդկանց
եղ անուշագիր նոցա սպառնալլաց՝
իիստ պատժիր ձեռքը շարագործության,
և եղճի վրա թափիր հեղեղ արտասվաց:

1 Այս բանաստեղծությունը, ինչ-ինչ պատճառներով, մինչև օրս մնացել է անտիպ: Զեռագիրը գտնվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում: տե՛ս Հովհ. Հովհաննիսյանի ֆոնդ, № I-1:

2 Oeuvres Complètes, T. I, Odes et Ballades, p. 11.

3 Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, Ա Հատ., Երևան, 1937, էջ 254:

1885 թվականին, երբ ապստամբական շարժումները նորից էին աշխառժացել Արևմտահայաստանի գավառներում, «Մասիս» պարբերականում (այն ժամանակ խլմբագիրը Արփիար Արփիարյանն էր) տպագրվում է Հյուգոյի «Առ տօնելու քայլական առաջնական առաջնորդությունը, որ հայրենասեր մեծ պոետը գրել էր ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ ֆրանսիական բանակը ջախջախված էր և թշնամի զորքերը Փարիզին էին մոտենում: Հյուգոն, որն այդ երկը գրել է Բրյուսելում, Փարիզ մտնելու նախօրյակին, ասում է, թե քանի որ թշնամու հորդաները պաշարել են հայրենիքը, տները վառվում են և արյունը հոսում է վտակի նման, ահա ինքը՝ տարագիր պոետը, վերադառնում է, որպեսզի հայրենիքը պաշտպանի և ցմահ կուլի պատնեշի վրա.

Ո՞վ Գաղղիա, ի ժաման, որ գրեղ գելարան կը քաշեն մազերեղ,
Ո՞վ մայր իմ, կուզեմ ես ալ տանիլ զիմ օղակ ամբաշեն շըթայեկ:
Կը վաղեմ, ըստ որում հրանոթք թըթին վրադ հեղանկարծ ուումբ,
•պնդակ,

Դու պիտի տեսնես զիս ի պատնեշս՝ կամ յոտին կամ պառկած,
նահատակ!:

Սուլթան Համիդի բռնակալական ռեժիմի տարիներին, Երբ հայ գրողները զրկված էին սեփական ստեղծագործություններով աղդային-աղատագրական պայքարը հրահրելու հնարավորությունից, հիշյալ բանաստեղծությունը այլ բան չէր, քան քողարկված մի մարտակոշ: Այս և նման այլ փաստերը հաստատում են, որ գրաքննության հալածանքի պայմաններում արևմտահայ մամուլը եղողուսյան լեզվով ժողովրդին ոգեշնչում էր հայրենասիրական զդացմունքներով: Այդ նպատակով է հաճախ օգտագործվել նաև Հյուգոյի գեղարվեստական խոսքը: Հայ գրողները նրա բանաստեղ-

1 «Մասիս», 1885, № 3777, էջ 1189:

ծությունների, պատմվածքների, նամակների, ճառերի և հոդվածների թարգմանությամբ ժողովրդին հասցնում էին այն գաղափարները, որ Հնարավոր շեր սեփական երկերով արտահայտել:

Սակայն ավելի ուշ՝ 90-ական թվականներից սկսած, Թուրքիայում գրաքննությունն այնքան խստացավ, որ միանգամայն անհնարին դարձավ ազգային ազատագրության, ինչպես և ներկայի կամ պատմական անցյալի մասին որևէ ակնարկություն անելը։ Բացարձակապես արգելվեց ոչ միայն Հայաստան, հեղափոխություն, ազատություն, ապստամբուրյուն բառերի գործածությունը, այլև անգամ այնպիսի անմեղ բառերի, ինչպիսիք են Երիտասարդություն, Փափագ, աստղ և այլն¹, որոնք իբր կարող էին սիմվոլիկ նշանակությամբ օգտագործվել։ Այնուամենայնիվ, հակառակ այս խստության, երբեմն դարձյալ հաջողվում էր մամուլի կամ առանձին հրատարակությունների մեջ զետեղել եղողոսյան լեզվով ազատասիրական զգացմունքներ հրահրող գրվածքներ՝ թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական։ Այդ տեսակետից ուշագրավ է հետեւյալ փաստը։ 1891 թվականին, երբ սովորան Աբդուլ Համիդը նախապատրաստում էր հայերին բնաշնչելու իր դիվային ծրագիրը, Կ. Պոլսում հրատարակեց Մինաս Գափամաճյանի կազմած «Հատընտիր հավաքածուն»², ուր զետեղված էր նաև Մ. Պեշիկթաշլյանի հանրահայտ «Հայ քաջորդին»։ Բայց «կուզեմ վառոդ և գնդակներ» ուազմակոչի բացակայությունը աշք էր ժակում։ Արդ, ինչո՞վ բացատրել այդ զանցառումը։ Դրաննությո՞ւնն էր արդյոք այդ խոսքերը ջնջել, թե՛ հավաքածուն կազմողը։ Մեր կարծիքով, երկրորդն ավելի հավանական է, որովհետև կազմողը բաց գիտենա-

1 Տե՛ս Գառնիկ Ստեփանյանի «Պայքարը արևմտահայերի մոտ հանուն աշխարհաբարի հոդվածը «Ն. Մարի կարինետի աշխատություններ» ժողովածում, Երևան, 1948, էջ 175։

2 Մ. Գափամաճյան, Հատընտիր հավաքածու, Կ. Պոլսու, 1891։

լով, որ հիշյալ վտանգավոր տողն անպայման կջնջեն և իրեն էլ պատասխանատվության կենթարկեն, խոհեմությամբ այն բաց է թողել, համոզված, որ վառողն ու գնդակները ընթերցողների մտքում են: Տվյալ տագնապալի ժամանակաշրջանում նա ուղեցել է քողարկված լեզվով հայ ժողովրդին նորից հիշեցնել ապստամբության բոցաշունչ մարտակոչը:

Վառողով ու գնդակներով մայրենի հողը պաշտպանելու մարտական ոգին միշտ վառ է մնացել սասունցիների և զեյթունցիների մեջ, որոնք 90-ական թթ. հերոսաբար նորից ծառացան թուրք հրոսակախմբերի և կանոնավոր զորամասերի դեմ, որոնք ուղարկվել էին կառավարության կողմից՝ քաջ լեռնականներին կոտորելու նպատակով:

Սուլթանական կառավարության կազմակերպած կոտորածների բարձրակետը հանդիսացավ 1895—1896 թթ. սպանդը, որի հետևանքով ավելի քան երեք հարյուր հազար հայեր ջարդվեցին: Այդ համատարած վիշտ ու ցասում առաջացրեց Արևելահայաստանում, որտեղ մամուկը օրեցօր հաղորդում էր խուժադուժ անցքերի լուրերը: Զնայած որ այս հատվածում ևս նույն տարիներին ծանրացել էր ազգային-գաղղութային ճնշումը, և գրաքննությունն ավելի խստացել, այնուամենայնիվ, գրողներն իրենց վերաբերմունքը որոշակի դրսեորում էին թե՛ սեփական ստեղծագործությունների, թե՛ թարգմանությունների միջոցով: Այս առթիվ էլ Հյուգոյի պոեզիան բազմիցս հանդես եկավ որպես հայոց վշտի թարգման: 1896 թ. Թիֆլիսի «Արձագանք» լրագրում լույս է տեսնում «Արշալույսին»¹ վերնագրով մի բանաստեղծություն, որի տակ նշված է՝ «Կիկտոր Հյուգոյից», բայց իրականում այն ոչ թե թարգմանություն է, այլ հանճարեղ պոետի «Պատիժ» ժողովածուից «Il est des jours

1 «Արձագանք», 1896, № 1,էջ 2:

abjects»¹ բառերով սկսող երկի նմանողությունը: Նրանում հեղինակը (ստորագր. Ա. Հ.)² տալիս է իր ժամանակի հայ իրականության տխուր պատկերը: Նա դառնությամբ գանգատվում է, որ կյանքը դարձել է հրեշտավոր, ստոր ու կեղտոտ, այլևս ոչինչ չի շարժում մարդկանց հոգիները, խիղճը քնած է թմրության գրկում, խսկ ճշմարտության սուրբ նահատակները վաղուց թաղված են խոնավ հողի տակ: Բայց...

Բայց դարավոր շնն այս անարդ օրեր,
Գիշերն անցնում է, մոտ է արշալուս,
Ո՞վ դուք, խավարի հարբած հոգիներ,
Լուսը կը բացվի, կը կորչեք անհուս...

Այդ նույն տարին պոետ-թարգմանիչ Կ. Կրասիկ-նիկյանը «Տարագ» շարաթաթերթում տպագրում է Հյուգյի «Անցան վաղեմի հրապուրանք»³ բանաստեղծությունը, որը համակված է թախիծով և հիասթափությամբ: «Կասկածների մոայլ լծի տակ հավասս մարել է», ասում է բանաստեղծը, «Ես շեմ հավատում բարության, բախտին, նախկին գաղափարս ջարդել եմ, փշրել...»: Բանաստեղծության մոայլ տրամադրությունը լիովին համապատասխանում էր հայ մտավորականության այդ ժամանակաշրջանի հոգեվիճակին: Վերջինն ավելի լավ ըմբռնելու համար բավական է միայն կարդալ հիշյալ թերթի նույն համարում հաղորդված արկմտահայ կոտորածների քստմնելի լուրերը: Հայկական ահավոր սպանդի հանդեպ եվրոպական պետությունների եսասիրական վերաբերմունքը ցույց տալու համար անհրաժեշտ ենք համարում մի հակիրճ մեջբերում անել նույն էջից. «Արտաքին գործերի մինիստրի

1 „Oeuvres Complètes“, T. III, Les Châtiments, p. 101.

2 Ս. Հախումյան: Տե՛ս Արամ Բաբայանի «Կեղծանուների բառարանը» (անտիպ):

3 «Տարագ», 1896, № 3, էջ 620:

օդնական Կերպոն, խոսելով Հայաստանի մասին, հերքում է այն կարծիքը, թե կառավարությունը աջակցում է Հայկական ագիտացիային: Թեսպետև Անգլիան իրավունք ունի պաշտպանություն ցուց տալ Հայերի արդարացի ձգտումներին, բայց Հայաստանի համար պատերազմ չի սկսիլ: Անգլիայի շահերն են՝ խաղաղություն և բրիտանական հպատակների բարօրություն...»:

Հայկական հարցը դիվանագիտական առուծախի առարկա դարձրած իմպերիալիստական մեծ պետությունների աշքերի առաջ՝ թուրքական հորդաները մահ սփռելով անցան Արևմտահայաստանի գավառներով: Այդ տարիներին էր, որ ԱԼ. Շատուրյանը ազատ թարգմանում է Հյուգոյի նշանավոր «L'Enfant»-ը՝ թուրքական բարեարոսությունը նկարագրող, վրեժի և ազատագրության գաղափարներով տոգորուն այդ երկը, որը նա վերնագրում է «Մանուկ»: Ահա այդ բանաստեղծության սկզբի մասը և վերջին տունը.

Այստեղից անցան անգութ տաճիկներ...
Ահա ամեն ինչ բարուքանդ, ավեր,
Քիոսը—պինու այդ երկիրն առատ,
Ուր կյանքն էր առաջ գվարթ ու ազատ,
Քիոսը, որի այգիքն ու դաշտեր
Ուռում էին կապուտակ ջըրեր,
Եվ ծովի ափին կույսեր փափկասուն
Պար բռնած՝ նայում ծովի հայելուն,—

Այդ երկիրն այժմ տիսուր ավերակ,
Միայն նստած է այնտեղ մեն-մենակ
Մի հուն երեխա չոր քարափներում,
Որբ, անտիրական, խղճուկ ու տրտում.
Եվ դաժան քամուց, անձրեկից նորան
Տալիս է այնտեղ անշուր ապաստան
Մի չոր մասրենի—նորա պես մենակ,
Մոռացված ահեղ շարդի ժամանակ:

Ո՞հ, դժբախտ մանուկ, որ ստաբորիկ
Այդ լերկ ժայռերում նստած ես լըռիկ,—
Ասա, ի՞նչ տամ քեզ, որ քո աշքերից՝
Շողշողուն, որպես կապուտակն երկնից,
Յամաքն արցունք և վարդ-շրթունքիդ
Խաղա մանկական երչանիկ ժըպիտ,
Որ դու մոռանաս աղետ, փոթորիկ,
Զեռք առնես նորից սիրած խաղալիք:

... Գուցի գու ժպտա՞ս, թե պարզե տամ քեզ
Փոքրիկ ըլբուլին, որի երգն այնպես
Հնչում է քնքուշ, շոյում լսելիք...
Օ՛, ասա-ծաղի՞կ, պտո՞ւզ, թե թռչնի՞կ
Ուզում է սիրոտ, մանուկ նաղելի...
«Բարեկա՞մ»—ասաց նա դառն, թախծալի, —
Արեելք հառած աշերն կապուտակ, —
«Ինձ պետք է վառո՞ղ, ինձ պետք է գնդա՞կ...»:

Այս թարգմանությունը, որ Ծատուրյանը կատարել է 1897 թվականին և զետեղել Մոսկվայում հրապարակած իր բանաստեղծությունների ժողովածուի երկրորդ հատորում (1898), տպագրվում է նաև «Մուրճ» ամսագրում (1898, № 4, էջ 407): Սակայն «Մուրճ» տարբերակում երկը վերջանում է այսպես. «Ինձ պետք է կյանք, պետք է հաղթանակ»: Ծատուրյանի ձեռագրից, որը պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում, պարզվեց, որ Ծատուրյանը թարգմանել է՝ «Ինձ պետք է վառող, պետք է գնդակ», այնպես, ինչպես կա ժողովածուի մեջ: Մնում է ենթագրել, որ կա՞մ Թիֆլիսի գրաքննիչը Մոսկվայի պաշտոնակցից ավելի խիստ է գտնվել, և կամ «Մուրճ» խմբագրությունը, զգուշանալով սուր արտահայտություններից, մեղմացրել է հիշյալ տողի իմաստը:

7

Ազգային ազատագրության իղձը ժողովրդի մեջ վառ պահելու նպատակով հայ մտավորականությունը 1870—

1890-ական թվականներին ևս թարգմանում ու տպագրում է Հյուգոյի քաղաքական ճառերը, նամակները և հրապարակախոսական հոդվածները, որոնք առավել կամ նվազ շափով ներշնչում են աղատության գաղափարներ, հրահրում հայրենասիրական զգացմունքներ։ Այսպես, 1876 թ. «Մշակում» հաղորդվում է, թե Հյուգոն ֆրանսիական սենատում առաջարկել է՝ ներել կոմունայի ժամանակ և դրանից հետո աքսորված կոմունարներին¹։ 1877 թ. նույն թերթում տպագրվում է Հյուգոյի նամակը, նվիրված Գարիբալդիի աղատագրական բանակի երեք հարյուր հայրենասերների հիշատակին, որոնք 1867 թ. զոհվել էին Հռոմի պատի դեմ մղած կովում։ Թերթը հաղորդում է, թե իտալական ժողովուրդն այդ մարտիկների հիշատակին հուշարձան է կանգնեցրել Հռոմում, հուշարձանի բացումը կատարվել է մեծ հանդիսավորությամբ, հրապարակում հավաքվել են ավելի քան ութ հազար մարդ, արտասանվել են ճառեր և կարդացվել է Հյուգոյի նամակը։ Այդ նամակում, որի լրիվ թարգմանությունը տրված է թերթում, ճնշված ժողովուրդների բոցաշունչ պաշտպանը զայրույթով դատապարտում է բռնակալությունը, փառաբանում Գարիբալդիին ու նրա զինակիցներին, ջատագովում ժողովուրդների եղբայրությունը²։ 1875 թ. «Մասիսը» տպագրում է Հյուգոյի արտասանած դամբանական ճառը նշանավոր փիլիսոփա և պատմաբան Էդգար Քինեի դագաղի առաջ։ Քինեն, նապոլեոն III պետական հեղաշրջումից հետո Հյուգոյի և ուրիշ ընդդիմադիր մտավորականների հետ աքսորվել էր Ֆրանսիայից, տարագրության մեջ ապրել երկար տարիներ և հայրենիք վերադարձել միայն բռնակալի անկումից հետո։ Հիշյալ ճառում Հյուգոն Քինեին բնութագրում է որպես մեծ հայրենասերի, որն ընդվկել

1 «Մշակ», 1876, № 11, էջ 3, «Արտաքին լուրեր» բաժնում։

2 «Մշակ», 1877, № 89, էջ 2, «Արտաքին ակտություն» բաժնում։

է բռնակալության դեմ և աքսորում անխոնջ պայքարել ձնշված հայրենիքի ազատության համար¹:

1884 թ. «Մասիսում» տպագրվում է մի հաղորդում, որը գարձյալ քողարկված մի մարտակոչ է: Այնտեղ ասվում է, թե Հյուգոն զրուց է ունեցել Զեմալեղին անունով աֆրիկացի մի շեյխի հետ, որը հայտնել է, թե Աֆրիկայի արաբ ժողովուրդները ապստամբել են անգլիական տիրապետության դեմ և մինչև վերջ պիտի պայքարեն իրենց անկախության և ազատության համար²: Նույն 1884 թվականին «Նոր Դար» տպագրում է ստրկության մասին Հյուգոյի գրած նամակը, որտեղ մեծ հումանիստն ասում է. «Բրազիլիան ծանր հարված պատճառեց ստրկությանը: Մինչև ներկա դարիս վերջանալը պիտի ջնջվի երկրիս երեսից ստրկությունը: Մարդուս օրինավոր դրությունը աղատությունն է: Գործերի այժմյան դրությունից երևում է, որ բարբարոսությունը ընկնում է, իսկ քաղաքակրթությունը հաղթող է հանդիսանում»³:

1892 թ. Մոսկվայում լույս է տեսնում մի գրական ժողովածու, որի մեջ զետեղված են իտալիայի ազգային-ազատագրական պայքարը զովերգող Հյուգոյի երկու հառը՝ Տիգրան Հովհաննիսյանի թարգմանությամբ: Այդ ճառերից մեկը գրվել է 1856 թ., ի պատասխան Հովհանի Մաճինիի հետեւյալ նամակի: «Ենդրում եմ Ձեզ, որ Ձեր ձայնը բարձրացնեք հօգուտ իտալիայի: Իտալիան այս րոպեիս խոնարհվում է Կառավարությունների կողմը: Նախազգուշացրեք իտալացիներին և խելք դրեք նրանց գլուխուրը»⁴: Հյուգոն, անմիջապես ընդառաջելով, անգլիա-

1 «Մասիս», 1875, № 1670, էջ 2:

2 «Մասիս», 1884, № 3659, էջ 3:

3 «Նոր Դար», 1884, № 56, էջ 3:

4 «Ժողովածու» (հօգուտ սուս սովորաների), Մոսկվա, 1892, էջ 2:

կան ու բելզիական թերթերում տպագրում է իտալացիներին ուղղված մի կոչ, որտեղ ասում է. «Իտալացիներ, ձեզ հետ խոսում է մի անհայտ, բայց ձեզ նվիրված եղքայր: Զգուշացե՛ք այն բանից, ինչ այս բոպեիս վեհաժողովները, կառավարություններն ու դիվանագիտությունը ըստ երևութին ձեզ համար պատրաստում են: Իտալիան հուզվում է, նա կյանքի նշաններ է ցույց տալիս. նա վրդովում ու անհանգստացնում է կառավարություններին. նրանք անհրաժեշտ են համարում քնացնել իտալիային: Զգուշացե՛ք, նրանք ձեր հանգստությունը չեն ուղում—հանգստություն կլինի միայն այն ժամանակ, երբ բավարարություն տրվի ձեր իրավունքներին...»¹:

Այս տողերը կարդալով ո՞ր հայը կարող էր չհիշել 1878 թ. Բեռլինի վեհաժողովը, որտեղ մեծ պետությունների ներկայացուցիչները «քննեցին» Հայկական հարցը: ԶԵ՞ որ այնտեղ էլ եվրոպական դիվանագետները ջանում էին հանգստացնել ու քնացնել կյանքի նշաններ ցույց տվող հայ ժողովրդին, և նրա իրավունքներն էին ոտնահարում հօգուտ իրենց կառավարությունների:

Մեծ պետությունների խարդախ դիվանագիտությունը մերկացնելուց հետո հուետորը մատնանշում է այն ուղին, որով միայն կարելի է հասնել ազատության: «Մենք առաջ ընթացող հեղափոխության ճանապարհին ենք գտնվում,— ասում է բոցաշունչ պուետը:— Ազգերը կորցնում են ամբողջ դարեր, և նորից ձեռք են բերում կորցրածը մի ժամվա ընթացքում: Ազատության համար, ինչպես նեղոս գետի համար, հեղեղումն է պաղաքերության աղբյուրը: Հավատա՛նք: Հարկավոր չեն հաշտեցնող միջոցներ, հարկավոր չեն զիջումներ, հարկավոր չեն կիսատ միջոցներ, հարկավոր չեն կիսատ հաղթություններ... Թող ձեր զլխում միայն մի միտք լինի—ապրել ձեր

1 «Ժողովածու» (հօգուտ ոռու սովորակաների), Մոսկվա, 1892, էջ 2:

սեփական տանը, ձեր սեփական կյանքով, լինել իտալիա»¹:

Հյուգոյի հլութից կարճ ժամանակ անց իտալիայում մի խումբ հայրենասերներ Գարիբալդիի գլխավորությամբ ձեռնարկում են ազատագրության գործը: Բայց գործը գլուխ-բերելու համար հարկավոր էր նյութական օգնություն: Այդ նպատակով Հյուգոն 1860 թ. ջերսեյ կղզում անգլիական ժողովրդին կոչ է անում օգնել Գարիբալդիի ազատագրական բանակին: Այդ ճառում, որը նույնպես թարգմանել է S. Հովհաննիսյանը, Հյուգոն ասում է. «Ու ոք այսպիսի մի բռագեռում իրավունք չունի անտարբեր հանդիսատես լինել կատարվող մեծ դեպքերի. այսօր սկսված ընդհանուր ազատության վեհ գործի համար անհրաժեշտ է ամենքի ճիգը, ամենքի գործակցությունը, ամենքի օգնությունը»²:

Այնուհետև նա բացատրում է, թե ինչու Գարիբալդիի փոքր բանակը հաղթանակից հաղթանակ է ընթանում. «Ինչո՞ւմն է նրա ուժը, ի՞նչն է նրան հաղթող հանդիսացնում, ի՞նչ ունի նա հետը,— հարցնում է հոետորը, և իսկույն պատասխանում,— ժողովրդի հոգին»:

Վերջում Հյուգոն ազատագրվող իտալիայի օրինակով խրախուսում է բոլոր ճնշված ժողովուրդներին, կեղեքվող դասակարգերին. «Հուսացե՛ք ամեն տեղ, աշխարհի բոլոր երկրներում,— գուշում է նա, — թող ոուս մուժիկը, եգիստական ֆելացը, ելրոպական աղքատ բանվորը, ճնդկական պարիան, ծախված նեզը, ճնշված սպիտակամորթը—թող բոլորը հուսան: Շղթաները մի ցանց են կազմում, միմյանց պահպանում են. մեկը որ փշրվի՝ ցանցը կարծակիվ»³:

Ուշագրավ է, որ Հյուգոն ազգային-ազատագրական պայքարը կապում է դասակարգային պայքարի հետ և

¹ «Ժողովածու», Մոսկվա, 1892, էջ 3:

² Նույն տեղում, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 5:

Հիւանալի համեմատություններ է անում. «Հռոմի պապը,— ասում է նա,— սովորանին ավելի մոտ ազգական է, քան ինքը կարծում է. նա նրա հարազատ եղբայրն է: Սակայն կրկնում եմ, այդ վերջացել է: Մի տեսակ գերմարդկային բան կա մարդկանց ազատության մեջ: Ազատությունը հրաշալի անդունդ է, որ քաշում է դեպի ինքը: Առաջադիմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգողական ուժի արտահայտություն. ո՞վ կարող է նրա առաջքը առնել: Զարկը տրվելուն պես սկսվում է անընկճելի շարժումը: Ապա՝ կանգնեցրեք վայր ընկնող քարը, կանգնեցրեք հտալիան, կանգնեցրեք 1789 թիվը, կանգնեցրեք երկրագունդը, որ Աստված նետել է եթերքի մեջ...»:

Ակնհայտ է, որ ռազմական շեփորի պես հնչող այս ճառը, որը ճնշված ժողովուրդներին պայքարի է կոչում բռնակալության դեմ, չեր կարող արձագանք շդտնել ազատագրության տեհնչով բռնկված հայ ընթերցողների սրտերում:

Ահա այս և նախորդ օրինակները, որոնց շարքը կարելի է գեռ երկարել, վկայում են, որ հայ մտավորականությունը Հյուգոյի քաղաքական ճառերը, նամակներն ու հոգվածները տպագրելով, տվյալ տասնամյակներում ևս հետևողականորեն ձգտել է ժողովրդի ուշագրությունը սեեռած պահել ազատագրության գաղափարին:

8

Հայ պանդխտի թեման հաճախ է հուզել մեր գրողներին, որոնք թե՛ ինքնուրուն ստեղծագործությունների և թե՛ թարգմանությունների միջոցով երգել են նրա վիշտն ու հայրենաբարձությունը, նկարագրել նրա ծանր վիճակը:

Պանդխտ հայության մի զգալի հատվածի վիճակը պատկերող երկերից է 1877 թ. Պոլսում լույս տեսած 106

«Թշվառ աքսորյալը»¹ վերնագրով երկը (անստորագիր), որի նյութը վերցված է Հյուգոյի «Chanson»² («Երգ») բանաստեղծությունից: «Թշվառ աքսորյալը» ուշագրավ է հատկապես նրա համար, որ հարազատորեն արտացոլում է հայ ժողովրդի այդ ժամանակվա ընդհանուր տրամադրությունը. «Խեղճ աքսորյալ,— ասվում է այնտեղ,— սրբե՛ արտասուրդ, բավական է լացիր: Ամեն մարդ աքսորյալ է քեզի պես, ամեն մարդ ունի հայր, մայր, կին և բարեկամ, որք կանցնին կերթան: Մեր հայրենիքը հոս չէ, իզուր կը փնտունք զայն հոս: Այս աշխարհը, զոր հայրենիք կը կոչենք, միայն գիշեր մը հանգչելու տեղ է: Երկի՛նք, առաջնորդե՛խեղճ աքսորելուցն, անիկա թափառական կը շրջի աշխարհիս վրա»: Պարզ է, որ այստեղ «Հոս»-ը վերաբերում է բուն Կ. Պոլսին, որտեղ ապրող տասնյակ հազարավոր պանդուխտ հայերը իրենց տարագիր, աքսորյալ կամ գաղթական էին համարում: Հիշյալ տողերի հիմքում թաքնված է այն միտքը, թե պանդխտությունը պարզապես ժամանակավոր երկույթ է, թե օտար հողը «միայն գիշեր մը հանգչելու տեղ է»: Դրանից ելնելով, հեղինակը սրտապնդում է աքսորյալին, նրան հորդորում՝ սրբել արտասուրդը: Բայց ինչի՞ վրա է հենվում հեղինակի այդ լավատեսությունը: Հիշյալ երկը, ինչպես ասացինք, գրվել է 1877 թվականին, այսինքն՝ ոռւս-թուրքական պատերազմի օրերին, երբ ոռւսական զորքերը, որոնց շարքերում կռվում էին նաև բազմաթիվ հայ կամավորներ, գրավել էին Հին Բայզետը, Դիաղինը, Ալաշկերտը, Զեյդեկանը, Արդահանը, էրզրումը և արշավում էին գեպի Կարս: Այդ կռիվների ընթացքում, հայ գեներալ Արշակ Տեր-Ղուկասովը ազատագրել էր ավելի քան քսան հազար հայերի

1 «Ընթերցարան մանկանց», Կ. Պոլս, 1877, էջ 222.-223 (անստորագիր):

2 „Oeuvres Complètes“, T. II, Les Quatre Vents de l’Esprit, p. 81.

և ապահով տեղափոխել ոռւսական սահմանը։ Գուցե սխալված չենք լինի հնիտագրելով, որ «Երկինք, առաջնորդե խեղճ աքսորելուն» ուղերձի մեջ հեղինակը նկատի է ունեցել ոռւս հաղթական բանակը, որը գալիս էր փրկելու հայ ժողովրդին։

Ա. Սատուրյանը, որը պանդխտության նվիրված միշտ բանաստեղծությունների հեղինակ է, հետագայում թարգմանում է Հյուզոյի վերոհիշյալ «Chanson»-ը, վերնագրելով «Աքսորական»¹։ Թարգմանելիս Սատուրյանը փոփոխություններ է անում, որպեսզի այդ երկի միջոցով արտահայտի նաև հայ պանդխտի զգացմունքները։ Դրա համար էլ «Աքսորականի» բովանդակությունը հայ լնթերցողին հնչում է ջերմ ու հարազատ։

Ահա այդ թարգմանությունից մի քառատող։

Ես հիշում եմ հայրենական իմ բնիկ,
իմ պաշտելի նվիրական այն աշխարհ,
Ուր թաղել եմ հարազաներ, սիրելիք...
Օտար երկրում մայիս չկա ինձ համար։

Հայկական ՍՍԾ Գ.Ա. Գրականության և արվեստի թանգարանում գտնվում է նույն «Chanson»-ի մի այլ, անտիպ, ձեռագիր թարգմանությունը, «Մայիս»² վերնագրով։ Այստեղ էլ թարգմանիչը (Հովհ. Զատիկյան) բաց է թողել Ֆրանսիային վերաբերող խոսքերը և թարգմանել է միայն այն տողերը, որոնք կարող են հարազատորեն բացահայտել և հայ պանդխտի հայրենաբաղծությունը։

Օտար ափոնք ինձ չեն բերկրում.
Օտար դալլալ ինձ չկ սփոփեր.
Օտար արև, օտար մայիս
Բնավ չեն դարման իմ ցավերիս,
և այլն։

1 «Մայիսնի խոսք», Դասագիրք, Թիֆլիս, 1903, էջ 192, կաղմող՝ Կումիկյանց։

2 Տե՛ս «Մուրճի» ֆոնդ, № 221—1։

Պանդիստության թեման հուզում էր նաև մեր մեծ
վիպասանին՝ Բաֆֆուն, որն իր մի ուղևորության ժա-
մանակ անձամբ տեսել էր պանդուխտ հայ գյուղացինե-
րի դառը վիճակը: Եվ պատահական չէ, որ Բաֆֆին
թարգմանում է Հյուգոյի ա'յն «Chanson»-ը¹, որի մեջ
նա տեսնում է հայ պանդիստի քայքայված օջախը հի-
շեցնող մի պատկեր: Այդ երկում նկարագրված է, թե
ինչպես ընտանիքի հայրը տառապում է տարագրության
մեջ, մայրը հիվանդանոցում պառկած է, իսկ տանը մեն-
մենակ մնացել է անպաշտպան մանուկը, որ դողում է
օրորոցով:

Հյուգոյի հիշյալ բանաստեղծության թարգմանու-
թյունը տպագրելով «Աղբյուր» մանկա-պատանեկան
ամսագրում², Բաֆֆին, հավանաբար, նպատակ է ունե-
ցել նորահաս սերնդին դաստիարակել պանդիստության
մեջ տառապող եղբայրներին օգնելու, փոքր հասակից
նրանց ճակատագրով մտահոգվելու ոգով: Եվ որպեսզի
երկի բովանդակությունը ավելի սրտառուշ դարձնի,
Բաֆֆին որոշ շափով վերամշակել է բնագիրը:

Ի գեսկ, բնագիրը վերամշակելու կամ բնագրից շեղ-
վելու ձգտումը բնորոշ է նաև այլ թարգմանիչների, հան-
գամանք, որ անհրաժեշտ է նկատի ունենալ թարգմա-
նությունները գնահատելու և, մանավանդ, բնագրի
նկատմամբ թարգմանիչների վերաբերմունքը բացահայ-
տելու համար:

Հայ առաջադեմ գրողները Հյուգոյի քաղաքացիական
պոեզիան թարգմանել են ոչ միայն գեղարվեստական
խոսքի բարձրարժեք նմուշներով հայ գրականությունը
հարստացնելու, այլև դրանց միջոցով իրենց հուզող գա-
ղափարները պրոպագանդելու նպատակով: Նրանք դի-
մում էին Հյուգոյի պոեզիային և ընտրում հայ ժողովրդի

1 „Oeuvres Complètes“, T. III, Les Châtiments, p. 23.

2 «Աղբյուր», 1885, № 5—6,էջ 195:

Ճգտումներին հարազատ մտքեր արտահայտող, պայքարի տրամադրություններ արթնացնող բանաստեղծություններ: Ավելին, նրանք հաճախ վերափոխում, վերամշակում էին բնագիրը՝ նպատակ ունենալով հայկանքին և հայի հոգեբանությանը մոտեցնել այն: Իսկ երբեմն, տվյալ երկը բնագրին հարազատ թարգմանելով հանդերձ, տողերի արանքում ավելացնում էին ինքնուրուցն տողեր և այդ միջոցով հեղինակի անունից ընթերցողին հասցնում այնպիսի գաղափարներ, որ գրաքննության պատճառով չէին կարող ազատորեն արտահայտել սեփական ստեղծագործություններում:

Բնագրի քաղաքական իմաստը առավել ընդգծելու նպատակով կատարված շեղումներ նկատելի են հատկապես ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանի թարգմանական գրականության մեջ: Այդ մասին որոշ պատկերացում տալու համար բավական է մի քանի օրինակ բերել թեկուզ հենց ներկա աշխատության մեջ հիշատակված թարգմանություններից:

Բաֆֆին, վերոհիշյալ «Chanson»-ը թարգմանելիս, ձգտել է այն հոգեհարազատ դարձնել հայ ընթերցողին և այդ նպատակով որոշ փոփոխումներ է արել:

Բերենք, որպես օրինակ, բնագրի վերջին մասի բառացի թարգմանությունը.

Հայրը թիարանումն է, մայրը՝
Հիվանդանոցում... 0՛ թշվառություն...
Տնակը երերում է քամուց,
Դողում է խղճուկ օրորոցը.
Ո՞վ է մնացել այնտեղ: Ոչ ոք:
Հե՞ գ փոքրիկ մանուկներ!...

1 L'homme est au bâgne! La mère
A l'hospice! O misère!
Le logis tremble aux vents;
L'humble berceau frissonne.
Que reste-t-il? Personne.
Pauvres petits enfants!

Այժմ տեսնենք, թէ Բաֆֆու ազատ թարգմանությամբ
ինչ է ստացվել.

Աքսորանաց մեջ հեռու տարագիր,
Կրում է Հայրը վիշտ տաժանակիր:
Մայրը տառապյալ, հալումաշ եղած,
Հիվանդանոցում—այնտեղ է ընկած:
Փշում է քամին իր թափով ուժգին,
Դողում է տնակը, մոտ է կործանման,
Եվ նորա մեջում, անտեր, անպաշտպան,
Դողում է օրորոցը որբացած մանկան:
Ո՞վ մնաց այնտեղ:— Ո՞չ հայր, ո՞չ մայրիկ,
Դու միայն մնացիր, դո՞ւ, խղճուկ մանկիկ:

Նույնպես ազատ է վարվել Ալ. Ծատուրյանը Հյուգոյի
«Աքսորականը» թարգմանելիս: Ահա Ծատուրյանի
թարգմանությունից մի քառատող.

Ես հիշում եմ այլ շիրիմներ անբարբառ,
Եվ իմ ձեռքով հավետ փակած այլ աշեր,
Սիրելի շն աքսորյալիս այս օտար
Ո՞չ երկինքը, ո՞չ արևը կենսաբեր:

Իսկ բնագրում պարզապես ասլած է.

Ես հիշում եմ
Սիրելի աշերը, որ ես փակել եմ.
Մայիսը Ֆրանսիայից դուրս
Մայիս չէ (ինձ համար) ¹:

Մի օրինակ էլ բերենք «L'Enfant»-ի թարգմանությունից: Բնագրում երկը սկսվում է հետևյալ խոսքերով.

Les turcs ont passé là.
Թուրքերն անցան այդտեղից...

¹ Je pense
Aux yeux chers que je fermai,
Le mois de mai sans la France,
Ce n'est pas le mois de mai.

Բայց Ծատուրյանը, իր վերաբերմունքը ցուց տալու համար, ավելացնում է «անգութ» բառը.

Այստեղից անցան անգուր տաճիկներ...

Բնագրի վերջին տողերն են.

— Ami, dit l'enfant grec, dit l'enfant aux yeux bleues,
Je veux de la poudre et des balles.

— Բարեկա՛մ, — ասաց հույն տղան, կապուտաշյա տղան, —
— Ուզում եմ վառո՛դ և գնդակնե՛ր:

Իսկ հայ պոետը թարգմանել է.

— Բարեկա՛մ, — ասաց նա դառն, թախծալի,
Արկելք հառած աշքերն կապուտակ, —
Ինձ պետք է վառո՛դ, ինձ պետք է գնդա՛կ:

Ուշագրավ է, որ Ծատուրյանը հիշյալ տողերում «Հույն» բառը բաց է թողել, հավանաբար ընթերցողի երեակայության մեջ պատկերելու համար հայ տղայի կերպարը: Պատահական չէ նույնպես, որ թարգմանիլը պատանու հայացքը դարձնում է դեպի արկելք, որը իրեն համար խորհրդանշում է Արկելահայաստանը: Չէ՞ որ թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի մշտական իդան է եղել ազատագրվել և միանալ Արկելահայաստանին:

9

Ազգային-ազատագրական պայքարին զուգընթաց, հայ կյանքում 1870—1890 թթ. շարունակվում է հասարակական հոսանքների պայքարը՝ լեզվի, դպրոցի, կրոնի և այլ հրատապ հարցերի շուրջը:

Լեզվապայքարը, որն Արկելահայաստանում վերջացել էր աշխարհաբարի հաղթանակով, արկմտահայ հատվածում 1870—1890-ական թվականներին մտնում

է նոր շրջափուլի մեջ և միառժամանակ դարձյալ աշխուժանում:

Մամուլի միջոցով գրաբարի օգտին մղած բանակոփիվներից անկախ՝ գրաբարի կողմնակիցներն իրենց ստեղծագործություններում և թարգմանություններում դեռ համառորեն գործ էին՝ ածում գրաբարը՝ հատկապես շափածո գրականության մեջ, այդպիսով բացահայտելով իրենց նախասիրությունը դեպի դասական լեզուն: Այնպես որ, գրաբարն ու աշխարհաբարը արևմտահայ գրականության մեջ տակավին կողք-կողքի ապրում էին անհաշտ գոյակցության պայմաններում: Նման իրադրության բերմամբ Հյուգոյի պոեզիան ևս պետք է հանդես դար,— և իրոք հանդես եկավ,— թե՛ դասական և թե՛ կենդանի լեզվով: Սակայն գրաբարյանները Հյուգոյի բանաստեղծությունները թարգմանում էին ոչ թե դրանց գաղափարական բովանդակությունը գրաբարի դատին ծառայեցնելու նպատակով, այլ հենց այդ թարգմանությունների փաստով իրենց վերաբերմունքը դրսերելու համար լեզվական հարցում: Իսկ մյուս կողմից, եղել են նւակ դեպքեր, երբ աշխարհաբարի կողմնակիցները, ավելի շուտ՝ բուն լեզվաշինարարները Հյուգոյի ստեղծագործություններից երկեր են թարգմանել՝ իրենց հորինած բառերն ու քերականական կանոնները մասսայականացնելու և կամ դրանց առավելություններն ապացուցելու հատուկ նպատակով: Այսպիս, ականավոր գրական-հասարակական գործիշ նահապետ Ռուսինյանը, որը դեռ 50-ական թվականներին իր գրած «Ռուզախոսություն» արդի հայ լեզվի» աշխատության մեջ փորձել էր արևմտահայ աշխարհաբարի համար նոր օրենքներ մշակել, 1873 թվականին «արդի լեզվով» թարգմանում է Հյուգոյի «Ռյուփի Բլաս» դրաման: «Ռյուփի Բլասի» թարգմանությանը կցած իր վերջաբանում Ռուսինյանը ասում է, թե ժողովուրդը մշակութի բնագավառում չի կարող որևէ

առաջադիմություն անել, եթե չի հասկանում իր կարդացած կամ ունկնդրած գրական երկերը։ Հենց դրա համար էլ հարկավոր է զրել հասկանալի լեզվով՝ աշխարհաբարով։ Իսկ ինչ վերաբերում է իր հորինած գրական «արդի լեզվին», Ռուսինյանը այն համարում է «խարխափանք ռամիկ լեզվի մեջ» և միաժամանակ հույս հայտնում, որ երիտասարդ գրողները կդնահատեն իր ձգտումը, իր գործը կշարունակեն, և խոսակցական լեզուն գրական մշակման հնիքարկելով՝ աշխարհաբարի համար սկսված «գրական հեղափոխությունը» հաղթանակով կպսակեն։

«Ռյուսի Բլասի» լեզվի մասին ժամանակին թերու դեմ կարծիքներ շատ են հայտնվել։ Հակոբ Պարոնյանը, որը Ռուսինյանի լեզվական քմահաճ նորամուծությունների դեմ էր, սրամտորեն նշում է. «Վիքիթռող Հյուկոյի հաճությամբ՝ անոր «Ռյուսի Պլաս» եղերգը թարգմանեց և քաջությամբ՝ սպանեց վրյուսի Պլաս, ինչպես որ ուրիշ մեկն ալ նույն հեղինակին նոթող Տամ եկեղեցին քանդեց... թարգմանելով»¹։ Ուրիշները «Ռյուսի Բլասի» լեզուն գտնում էին «խժալուր»։ Իսկ Երվանդ Օտյանը նույն թարգմանության մասին գրում է. «Եթե՞ Գոռնելլ ու Ռասմին իրենց արժանի թարգմանն ունեցած են մեր մեջ Հյուրմյուղյանով և Բաղրատունիով, Վ. Հյուկո Ռուսինյանե լավագույնը չէ ունեցած։ Անշուշտ խժալուր թարգմանություններ կան հայերեն, նույնիսկ ֆրանսացի մեծ գրագետին գործերեն, բայց երբեք «Ռյուսի Պլասի» թարգմանությունը խժալուր չէ. ընդհակառակը, տիրող հատկությունն է ներդաշնակությունը»²։ Այդ. ապացուցելու համար Օտյանը քաղվածքներ է բերում հիշյալ թարգմա-

1 «Թատրոն», № 2874, էջ 57։ Մյուս ակնարկությունը վերաբերում է Մեսրոպ Նուպարյանի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպի թարգմանությանը, որ վերնագրված էր «Նողր Տամ» (տե՛ս Արփիար Արփիարյանի «Քննագատություն նուպարյան թարգմանության» վերնագրով հոդվածը. «Արևելք», 1884, № 194, էջ 3)։

2 «Մասիս», 1892, № 3970, էջ 247։

նությունից: իսկ Վահրամ Փափազյանը իր Հուշերում պատմում է, թե 900-ական թվականներին պոլսահայ բեմի վրա Ռյուի Բլասը անձնավորել ցանկանալով, դիմել է բանաստեղծութի Սիափիլին՝ խնդրելով, որ Հիշյալ թարգմանության լեզուն հարթացնի, որովհետև «Ռուսինյանը ուղարարիմախիկ և գործածությունից ընկած, հնացած բառերով, Հյուգոյի պիեսը վերածել էր հայերենի, որի կարդալն իսկ, ել ո՞ւր մնաց արտասանելը, անհնարին էր»¹:

Ռուսինյանի լեզվի մասին գաղափար տալու համար բերում ենք Հիշյալ դրամայի շորրորդ գործողությունից մի պարբերություն (խոսողը Ռյուի Բլասն՝ է):

Արդ պետք է, տիկին, ձեղ խոստովանիմ:
Զը տի մերձնամ: Անկեղծ կը խոսիմ,
Զեմ ես հանցավոր ձեր կարծածին չափ:
Կըզգամ, ինչպես որ կը տեսնեք և դուք,
Իմ խարեռությունս որքան սոսկալի
Տ'երեա ձեղի... դյուրին չէ պատմել:
Բայց սակայն բնավին հոգիս չէ վատթար:

Ուղիղ եմ ի բնե: Սերն ինձ մոլորցուց:
Զեմ զիս պաշտպանիմ: Գիտեմ լավ, պետք էր
Ճար մը գտնեի: Մեղքը գործված է:
Սակայն, ճշմարիտ, տեսեք, հա՛, որքա՛ն
Սիրեցի ես ձեղ:

Նշանակալից է այն, որ Ռուսինյանը իր ջատագոված «արդի լեզուն» մասսայականացնելու համար ընտրում է Հյուգոյի ստեղծագործությունը, թեև նրա բուն նպատակը եղել է, ինչպես հետո պիտի տեսնենք, այդ երկի միջոցով առաջավոր գաղափարներ տարածել հայ հանարակության մեջ:

Մի այլ լեզվաշինարար՝ Գրիգոր Օտյանը, որն իր «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա» գրքում առաջարկում էր աշխարհաբարի և գրաբարի միա-

1 Վահրամ Փափազյան, Արտիս պարտքը, Երևան, 1959, էջ 64:

ձուլմամբ ստեղծել գրական մի ընդհանուր լեզու (նրա խոսքերով՝ «Հասարակաց լեզու»), 1874 թվականին «Հասարակաց լեզվով» արձակ թարգմանում է Հյուգոյի «Ա Olympio»¹ բանաստեղծությունը: Օտյանի «Հասարակաց լեզուն» բավականին խրթին է և անմատչելի միջին ընթերցողի համար: Այս, որպես նմուշ, այդ թարգմանությունից մի քանի տող:

«Ավասիկ դու, որո երկրաքարշն այն խուժան հիանար ընդ առաքինությունն, նշավակուծ, դառիվայրի մը վրա թավալլալ որպես կաղնի դիալաստ:

«Ավասիկ դու, մախացողացդ անհամար ոտնակոխ և քրքչածայն անցավորաց, դու, որո ճակատ վսկմապանծ ուներ զայլոց ճակատներ վայրահակ:

«Տերեներդ փոշվո մեջ և սեգ քո արմատ հոլանի աշաց, ափսոս և չէ ինչ ի քեզ անքոյթ յերկրի և արձագանք և ոչ մի երկինս»:

Ի դեպ, Օտյանն իր այս թարգմանությունը վերնագրում է «Առ Խրիմյան, ի Վիրթոր Հյուկոլե» և ուղարկում է «Մասիսի» խմբագրությանը: Խմբագրությունը իսկույն տպագրում է այն²: Ընթերցող հասարակայնության մեջ առաջանում է բուռն հետաքրքրություն, ոմանք խանդավառովում են, որ տիեզերահառակ վիկտոր Հյուգոն բանաստեղծություն է ձոնել Մկրտիչ Խրիմյանին, ուրիշները՝ «Մասիսի» խմբագրությանը հարցեր են տալիս: «Մասիսի» խմբագրի Կ. Ռեթյուճյանը նույն հարցով գիմում է Օտյանին: Վերջինս պատասխանում է, թի ինքն է իր թարգմանությունը Խրիմյանին ձոնել: Դրա վրա Ռեթյուճյանը «Մասիսի» № 1585 համարում բացատրում է կատարված թյուրիմացությունը, առանց հիշատակելու թարգմանչի անունը:

1 „Oeuvres Complètes“ T. I, Les Voix Intérieures, p. 39.

2 «Մասիս», 1874, № 1583. Թարգմանչի անունը թերթում նշված չէ. մենք այն պարզել ենք Հր. Ասատրի Հովերի շնորհիվ. տե՛ս Հր. Ասատրի, Դիմաստվերներ, Կ, Պոլիս, 1921, էջ 55:

Հակոբ Պարոնյանը, որն ակնհայտորեն ուրախացել էր, որ Հյուգոն բանաստեղծություն է ձռնել սիրելի կրիմյանին, վերոհիշյալ բացատրությունը կարդալոց հետո իր «Թատրոն» թերթում գրում է. «Մասիս» մեծ ծառայություն ըրած կը լլա, եթե իր հրատարակելիքներուն վրա նախ աղեկ տեղեկություն առնե, ու վերջը հրատարակե: Բանի մը նախ ճշմարտության կերպարանք տալ ու վերջը շինծու ըլլալը ծանուցանելը, եթե անաշառությամբ խոսինը, խարեւություն է: Կը ցավինք, որ «Մասիս» այդ ոտանավորով առիթ տվավ Խրիմյանին ովատյալ թշնամիներուն, որ նորին սրբազնության սրտին վրա նոր վերքեր բանան»¹:

Կեզվապայքարի եռանդուն գործիչներից մեկը՝ Մինաս Զերազը, 70-ական թվականներին ստեղծում է իր «Ընտրողական հայերնը» և մշակում համապատասխան քերականական կանոններ: Իր հակառակորդներին ապացուցելու համար «Ընտրողական» աշխարհաբարի ճկունությունն ու դյուրաթեքությունը, Զերազը 1877 թ. թարգմանում և «Արևելյան մամուլում» տպագրում է Հյուգոյի «A mademoiselle Fanny de P.»² բանաստեղծությունը «Առ օրիորդ Ֆաննի տը Բ» վերնագրով: Այդ առթիվ նա գրում է. «Կը շարունակեմ նախորդ հոգվածս և կը ներկայացնեմ ձեզ ապացուցներ, որք պիտի հաստատեն, թե ընտրողական աշխարհաբարն՝ արձակի այնքան հարմար՝ ոչ նվազ հարմար է ոտանավորին: Ոչինչ ավելի դժվար է, քան հանգավոր ոտանավորի թարգմանել մի օտար հեղինակի երգերն, այլ ընտրողական աշխարհաբարն կարող է լուծել այդ կնճիռ: Վկա են հետագա երեք տաղերն, զորս փոխ կառնում ֆրանսական քնարի վեհագույն ներկայացուցիչներեն: Բող անաշառ

¹ «Թատրոն», 1874, № 49,էջ 1:

² „Oeuvres Complètes“, T. I, Les Rayons et les Ombres p. 17,

կատավորներ բազգատեն թարգմանությունս բնագրի հետ, և պիտի համոզվին, թե անհնար է ավելի հարազատ լինել»¹:

Այսուհետեւ Զերազը տալիս է Վիկտոր Հյուգոյի, Լամարթինի և Ալֆրեդ դը Մյուսեի բանաստեղծություններից մի-մի թարգմանություն:

Ահա Հյուգոյի երկի թարգմանությունից երկու քառասոռ.

Ո՞ զու, ում միշտ հասակդ է պահապան,
հնդա՛, զի դեռ կը ժպտի քեզ ամեն բան:
Խաղեր խաղա՛, երգեր երգե՛, լե՛ր մանուկ,
Սաղիկ լե՛ր զու, լե՛ր արշալույս զեղաբույր:

Գալով բախտին, մի՛ խորհիր զու յուր վրա.
Երկինք է սև և կանքն է խավարյա.
Աշխարհիս վրա ի՞նչ կը գործն մարդն, ավա՞ն,
Ստվերի մեջ կը հանե ճիկ աղավալ:

Վերջում, դիմելով իր հակառակորդներին, Զերազն ասում է. «Կը հուսամ թե այսքան ապացույցներ պիտի բավեն ձեզ, պարոն Գրաբարյաններ»:

Լեզվապայքարը 80-ական թվականներին նոր թափ է ստանում: Գրաբարի թունդ կողմնակիցները, զասական լեզվի համար պայքարը շարունակելու մտադրությամբ՝ 1886 թվականից (մինչև 1889 թ.) հրատարակում են ոսկեդարյան գրաբարով մի հանդես, որը կոչվում է «Ճաշակ ոսկեղբն գպրութեան»: Այդ հանդեսում, բայցի ինքնուրույն ստեղծագործություններից, նրանք տպագրում են նաև եվրոպական գրողների երկերից թարգմանություններ, որոնց թվում և Հյուգոյի մի շարք բանաստեղծությունները: Վերջիններից է, օրինակ, գրաբարի ամենակրթու պաշտպան Հակոբ Գուրգենի թարգմանած «Pour les pauvres»² («Աղքատների համար») երկը, որ

1 «Երևելան մամուլ», 1877, № 11,էջ 113—116:

2 „Oeuvres Complètes“, T. I, Les Feuilles d’Automne, p. 30.

թարգմանիչը վերնագրել է «Գթություն»¹: Ահա առաջին տունը.

Տո՛ւք, մեծատունք, քոյր աղօթից է ողորմութիւն: Եղուկ, յորժամ ծեր ոք առ վիմակերտ սեամս ծեր, Ընդարձացեալ ի ձմերանէ, կայցէ ի գուճս բնդունայն, Յորժամ մանկտի մատաղօրիայ ձեռք ցրտակէզ կարմրացեալք, Փողովիցեն առ ոտքս ծեր շուայտութեան ինչ փըշրանս, Ամենակալ Տէր Աստուած դարձուցանէ զերեսս ի ձէնչ:

Այս և ձեռքի տակ գտնվող բազմաթիվ այլ օրինակներ վկայում են, որ գրական լեզվի մասին ներհակ մոտեցում ունեցող հոսանքների պայքարը արտահայտվել է նաև Հյուգոյի երկերի թարգմանություններում:

10

Դեմոկրատական և լիբերալ հոսանքները 70—90-ական թվականներին մամուլի և գրականության միջոցով հետևողականորեն շարունակում են գաղափարական պայքարը՝ կղերա-պահպանողականների դեմ: Հակոբ Պարոնյանը իր «Թատրոն» թերթում սպանիշ ծաղրի է ենթարկում բարձրաստիճան հոգեորականներին: Ծերենցը անողոք պայքար է մղում կաթոլիկ հայերի պատրիարք Անտոն Հասունյանի դեմ: Պուշչանը «Յեցեր»-ում և Բաֆֆին «Կայձեր»-ում մի կողմից քննադատում են հոգեորականությանը, մյուս կողմից՝ հոգեորականների բարոյական կերպարի բարձրացման և կուլտուրականացման պահանջ են դնում: Գր. Արծրունին «Մշակ»-ի էջերում սուր պայքար է ծավալում կրոնամոլների դեմ, ձգտելով սահմանափակել նրանց դերը հասարակական-կուլտուրական կյանքում: Հայ մտավորականները ոչ միայն հողվածների և գեղարվեստական ինքնուրուցն

¹ «Ճաշակ ոսկեզն դպրութեան», 1886, № 4, էջ 73:

ստեղծագործությունների, այլև ոռւա ու եվրոպական հեղինակների երկերից կատարած թարգմանությունների միջոցով դիմակաղերծ են անում հետադեմ կղերականներին: Այդ ոգով նրանք թարգմանում են և Հյուգոյի այն գործերը, որոնցում հանձարեղ գրողը բուան կրոտությամբ բացահայտում է Հոգեկորականության վերնախավի ռեակցիոն գործունեությունը: Նախ նշենք, որ Հյուգոն ընդհանրապես թշնամի չէ Հոգեկորականությանը: Դրա ապացույցն այն է, որ «Թշվառների» մեջ նա համարյա իդեալականացնում է Բիենվլընյու եպիսկոպոսին: Հյուգոն թշնամի է այն հոգեկորականներին, որոնք կտրված են ժողովրդից, որոնք Քրիստոսի անունը շահագործելով կեղեքում են մասսաներին, մտահոգված են միայն իրենց փարթամակեցությամբ, չեն ծառայում իրենց բարձր կոչմանը: Ահա այդպիսիներին է նա անխնա դատապարտում իր «Christ au Vatican» շափածո երկում, որը թատերագիր Ս. Հեքիմյանը թարգմանում է նույնպիսի նպատակով և հրատարակում 1871 թվականին, Կ. Պոլսում, «Քրիստոս ի Վատիկան»¹ վերնագրով:

Իսկ «Le Pape»² («Պապը») ընդարձակ շափածո երկում (մոտ 55 էջ) Հյուգոն ձաղկում է բարձրաստիճան կղերականների կեղծիքը, նենգությունը, եսասիրությունը: Այդ երկը թարգմանում է «Արշալույս Արարատյանի» խմբագիր Հ. Կ. Սվաճյանը և առանձին գրքով հրատարակում 1879 թ., Զմյուսնիայում³: Հիշյալ երկում Հյուգոն ցույց է տալիս եպիսկոպոսների վերաբերմունքը դեպի ժողովուրդը: Ըստ վերջիններիս ժողովուրդը ստեղծված է միայն հնազանդվելու և ծառայելու, կարիք չունի կրթության: «Հարկ չէ շատ գոլբոց, ուսմունք՝

1 Վ. Հյուկո, Քրիստոս ի Վատիկան, Կ. Պոլս, 1871, թարգմ. Ս. Հեքիմյան:

2 „Օւնրե Կոմպլետ“, Տ. II, Le Pape.

3 Վ. Հյուկո, Պապը, Զմյուսնիա, 1879:

բնավ», նրա միակ զիրքը պետք է Աստվածաշունչը լինի, իսկ նրա բարձրացումը կայանում է հկեղեցու աստիճաններից ծնրադիր մագլցելու մեջ:

Երբ նոքա, ծնրադիր, յաստիճանու տաճարին
Գեպի մեզ եւանեն, բարձրացումն է նոցին...

«Պապի» միջոցով Հյուգոն միաժամանակ մատնանշում է զործունեության այն ուղին, որով կղերը պետք է ընթանա: Այդ տեսակետից շափաղանց ուշադրավ են հետեւյալ խուքերը.

Կրոնավո՛ր, մարզոց մեջ լի է վիշտն և տրտունչ՝
Մինչ պանուզն զաղիր քույդ զանձամբ պատե շորչ:
Օ՛ն, ի բա՛ց զարգերիդ,
Հանե՛ թագդ այդ գլխեդ:

Կրոնավո՛ր, զանձդ որմե՞ծ գողցար—աղքատեն:
Գիտցիր, որ կան նոթիք և ցորտեն մսողներ,
Գիտցիր, զի կիները յօտարին դիմեն ծոց,
Զի հարուստն է մոլի և աղքատն անոթի:
Կրոնավո՛ր, ետ զարձուր այդ զանձերն աղքատաց,
Զարդն անոնց կը վայե, մեզ՝ հաղուստ պատառված:

«Պապը» հայացնելով, Սվաճյանը փաստորեն նույն պահանջներն է զնում հայ կղերի առաջ: Չէ՞ որ նրա ժամանակակից հայ իրականության մեջ ևս մասսաները կեղերվում են, տգիտության մեջ պահվում, այնինչ բարձրաստիճան եկեղեցականները ժողովրդի հաշվին վարում են ճոխ ու փարթամ կյանք:

Թարգմանիշը գրքի սկզբում առաջաբանի փոխարեն զետեղել է ն. Ստեփանյանի նամակը, որտեղ ասվում է, թե այդ դիրքն իրոք անհրաժեշտ է հայ հասարակության համար, քանի որ նրա բովանդակությունը կծառայի զգաստացնելու կրոնավորներին, որոնք կողոպտում են ժողովրդին և հասարակության կյանքը բարոյապես ապականում: «Յանաստեղծին այս գործը,— ասում է նամակագիրը,— ժողովուրդին ամբողջութենեն աննման

Համակրություններով կընդունվի և որով աղքատը կսփռիվի, անմխիթարը կուրախանա և կղերը կմտածե»:

Հայ առաջավոր մտավորականությունը մի կողմից քննադատում էր կղերի կամայականությունները, մյուս կողմից՝ բուռն պայքար մղում կաթոլիկ հոգևորականության և հատկապես ճիղվիտների դեմ, որոնք ձգտում էին հայերին դավանափոխ անել: Փորձը արդեն հայ մտավորականներին ցուց էր տվել, որ կաթոլիկությունը քարոզում է կույր պաշտամունք դեպի Վատիկանը, թըմքեցնում է ազգասիրության և հայրենասիրության զգացումները: Ավելին, դավանափոխությունը միայն երկպառակություն է առաջացրել հայ ժողովրդի մեջ: Դրա համար էլ հայ գեմոկրատիան ուժեղ դիմադրություն էր ցուց տալիս ամեն անգամ, երբ կաթոլիկական պրոպագանդի նոր արշավանք էր սկսվում հայ իրականության մեջ: Օրինակ, երբ 1881 թ. ճիղվիտները Տրապիզոնում նոր դպրոց հիմնադրեցին կաթոլիկություն տարածելու նպատակով, հայ մամուկում սկսեցին երկալ ճիղվիտների դեմ ուղղված հոդվածներ, որոնցից մեկն էր Եղիա Տեմիրճիպաշչանի «Հիսուս ի Հայաստան»¹ վերնագրով ցասումնալից հոդվածը: Նրանում հեղինակը Տրապիզոնի հայերին գգուշացնում է, որ Հիսուսանների (իմա՝ ճիղվիտների) գալրոցում հայ աշակերտները պիտի սովորեն միայն խոնարհվել Հռոմի պապի հեղինակության առջե, պիտի սովորեն ատել իրենց ծնողներին, ատել իրենց հայրենիքը. «Կորսված է այն մարդը, որ Հիսուսան ընկերության իշխանության ներքև մտած է,— ասում է նա,— կորսված է այն աղքն, ոյր զավակաց դաստիարակությունն հիսուսանց ձեռքն ինկած է, կորսված է մեր Հայաստանն, եթե հայք չհալածեն իրենց ծոցեն այդ Հիսուսաններն, եթե թողուն, որ կուսավորչի տան վրա շուրջ տա Լոյոլայի տունն, եթե սև մարդերուն

1 «Մասիս», 1881, № 3041:

Հանձնեն իրենց որդիկաց սպիտակ սիրտն, մատաղ միտքն ու ամբիծ հոգին, ի մի բառ՝ սև մարդերուն հանձնեն հայոց ապագան»:

Ցույց տալու համար, թե եվրոպական ժողովուրդների մեջ ճիզվիտները մի ժամանակ ինչպիսի քայքայիչ գործունեություն են ծավալել, Տեմիրճիպաշյանը վկայակոչում է Վիկտոր Հյուգոյին և թարգմանում Ֆրանսիայի Ալգային ժողովում 1850 թ. նրա արտասանած ճառի այն մասը, որ վերաբերում է ճիզվիտներին: Այդ ճառում Հյուգոն պահանջում է ֆրանսիական դպրոցներից վերացնել ճիզվիտների վերահսկողությունը: Վերջիններիս հետագիմանական էությունը մերկացնելու նպատակով Հյուգոն սպառմում է, թե հավատաքննության ժամանակաշրջանում նրանք հինգ միլիոն մարդ են այրել խառուցկի վրա, նույնիսկ մեռելներին են գերեզմանից հանել ու վառել որպես հերետիկոսների: Նա փաստերով ցույց է տալիս, որ ճիզվիտները կործանել են իտալական քաղաքակրթությունը և արատավորել իսպանիայի փառքը: Ապա դիմելով ճիզվիտներին, բոցաշունչ հոետորն ասում է. «Ահա ձեր գործերն ու ձեր գործերի արդյունքները: Դուք մարեցիք այն հնոցը, որ կոչվում էր իտալիա, և կործանեցիք այն հսկան, որ կոչվում էր իսպանիա: Մեկը մոխիր դարձավ, մյուսը՝ ավերակ: Իսկ ի՞նչ եք ուզում դարձնել Ֆրանսիան»: Եվ հեգնությամբ բացականչում է. «Դեռ խոսում եք դաստիարակության անունից և պահանջում ուսուցանելու ազատություն: Եկեք անկեղծ լինենք, փաստորեն դուք չուսուցանելու ազատություն եք պահանջում»¹:

Հյուգոյի ճառի թարգմանությունը տալուց հետո Տեմիրճիպաշյանը ավելացնում է, թե իսպանիան, իտալիան և Ֆրանսիան ժամանակի ընթացքում հետզհետե թոթափիեցին ճիզվիտների բարոյական իշխանության

¹ Այս պարբերությունը տալիս ենք բառացի թարգմանությամբ:

«անբանացուցիչ լուծը» և այժմ հսկայաքայլ առաջադիմություն են կատարում։ Այնուհետև հոդվածագիրը խորհուրդ է տալիս երբեք շմոռանալ Հյուգոյի նախազգուշացումը։

Հայ տաղանդավոր գրողը իր հոդվածն ավարտում է հետեւյալ խոսքերով. «Եցիվ թե հայք ան օգուտ քաղեին պատմության թանկագին դասերեն, և որպես ժանտամահեն՝ երկնչեին Հիսուսյան ընկերութենեն»։

Հյուգոյի հիշյալ ճառի լրիվ թարգմանությունը Հարություն Սվաճյանը դեռ 1861 թվականին «Մեղու»-ում տպագրել էր տարբեր հանգամանքների բերմամբ և տարբեր նպատակով։ Այն ժամանակ Սվաճյանն այդ ճառը օգտագործել էր պայքարելու համար Զամուռնյանի այն դրույթի դեմ, թե հայ դպրոցներում պետք է իշխի եկեղեցու վերահսկողությունը։ Դրանից քսան տարի անց, Տիմիրճիպաշյանը նույն ճառն է օգտագործում ճիզվիտների պրոպագանդիստական քայլայիշ գործունեության դեմ պայքարելու նպատակով։

Սերենցը կաթոլիկական քարոզության դեմ 1885 թ. գրած իր ծավալուն հոդվածում¹ ցուց է տալիս, թե հայ ժողովրդի հասարակական կյանքում որքան վնասակար և սղառական դեր է կատարել դավանափոխությունը։ Դավանափոխության մասին զարգացրած մտքերը նաև հիմնավորում է Հյուգոյի այն ասույթի վրա, թե որևէ ժողովրդի համար միասնական կրոնը հանդիսանում է մի մեծ ուժ, իսկ դրսից ներմուծված որևէ նոր կրոն կարող է քայլայել տվյալ ժողովրդի ազգային կյանքը և կամ՝ ըստ Սերենցի բառացի թարգմանության՝ «Ունենալ յուր կրոնը հատուկ իրեն ազգին համար՝ մի մեծ զորություն է։ Օտար պատ մը աղքային կյանքը կը կորզե»։ Սերենցը Հյուգոյի այս խոսքերը բերում է որպես բնաբան, իսկ հոդվածում դրանց նորից անդրադառնա-

1 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1885, № 39 և № 40։

լով, ասում է. «Փամանակիս գրական հանճարներեն մին, զոր լորտ Պայրոնի ազգակիցք դարուս հսկան անվանեցին, այսպես կը խորհրդածե, և մեղ համար սիրելի է կրկնել այս ճշմարտությունը»: Այնուհետև հայ ականավոր վիպասանը լուսավորչական կղերին կոչ է անում աշալրջորեն հսկել և թռւյլ շտալ, որ ժողովուրդն ընկնի օտար եկեղեցու գիրկը, ինչպես այն եղել էր Հեհաստանի հայերի հետ:

11

Հայ հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչները 1870—1890 թթ. ևս շարունակում են թարգմանել Հյուգոյի ծավալուն աշխատությունները՝ վեպերը, պատմվածքներն ու դրամաները, որոնցում դեմոկրատ հեղինակը արծարծում է սոցիալական ընդհանուր պրոբլեմներ: 1871—1872 թթ. Մ. Նուպարյանը թարգմանում է «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը և երեք հատորով լույս ընծայում Զմյուռնիայում, «Նոդր-Տամ» վերնագրով: Պիտի ասել, որ մոտ 35 մամուլի ծավալով այս գրքի թարգմանությունը կապված էր լեզվական մեծ գժվարությունների հետ, որովհետև այնտեղ, բացի ֆրանսերնի ոճական հին դարձվածքներից, հեղինակը առատորեն օգտագործել է նաև ժարգոնը և լատինական, իտալական ու իսպանական լեզուներից բազմաթիվ տառապատճեններ ու նախադասություններ, որոնց ճշգրիտ թարգմանության համար հարկավոր էր իմանալ այդ լեզուները և կամ ձեռքի տակ ունենալ այլ լեզվով մի հաջող թարգմանություն. Սակայն Նուպարյանը բացի ֆրանսերնից ուրիշ օտար լեզու չէր իմանում: Ինչ վերաբերում է այլ լեզուներով գրված նախադասություններին, ապա նա գիտել է, ինչպես ինքն է ասում իր առաջարանում, մասնագետների օդնությանը:

Նուպարյանի թարգմանության մասին նորայր Բյու-
 զանդացին՝ ֆրանսահայ մեծահատոր բառարանի հեղի-
 նակը, 1884 թ. առանձին գրքով լույս է ընծայել 31 էջից
 բաղկացած մի գրախոսաւկան՝ «Քննադատություն Նու-
 պարյան թարգմանության՝ Վիքոր Հյուկոյի «Նոդր-
 Տամ»-ին» վերնագրով։ Այդպիսի ծավալուն գրախոսա-
 կանը, այն էլ սրանից ուժուն տարի առաջ գրված, ու-
 շագրավ մի երկույթ է հայ գրաքննադատության պատ-
 ճության մեջ։ Հեղինակը ամիսուկես աշխատել, բնագրի
 հետ տող առ տող համեմատել է թարգմանությունը,
 ապա մատնանշել թույլ տրված սխալները և տվել գրանց
 ճիշտ, պատճառաբանված թարգմանությունները։ Յյու-
 զանդացու բերած օրինակներից կարելի է հետևյնել,
 թե «Նոդր-Տամի» թարգմանությունը բավականին թերի
 է եղել։ Գրախոսի կատարած համեմատությունների մի
 ժամը մինք ստուգել ենք բնագրի հետ, և պիտի ասել, որ
 նրա գրախոսականը լուրջ ուսումնասիրություն լինելով
 հանդերձ, զուրկ չէ շափազանցություններից։ Բերենք
 մի տիպական օրինակ։ Նուպարյանը Très redouté
 seigneur նախադատությունը թարգմանել է «ամենա-
 ահեղ տեր», իսկ գրախոսը այդ սխալ համարելով, պա-
 հանջում է redouté բառն անպայման «ահավոր» թարգ-
 մանել, մինչդեռ այն փաստորեն նշանակում է ահ աղ-
 դող և, տվյալ դեպքում, կարող է, ամենայն իրավամբ,
 թարգմանվել «ահեղ», մանավանդ որ «ահեղը» ընդուն-
 ված մակդիր է եղել մի շաբթ թագավորների համար,
 ինչպես, օրինակ, «իվան Ահեղ»։ Ի դեպ, այդ նախադա-
 տությունը նուպարյանի պես է թարգմանել նաև նույն
 վեպի սովետահայ թարգմանիչ Վահե Միքայելյանը.
 վերջինիս մոտ գրված է «ահեղագույն տիրակալ»¹։

1 Տե՛ս Վիկտոր Հյուկո, Փարիզի Աստվածամոր տաճարը, Երևան, 1953, էջ 45, 10-րդ տող։

Հիշյալ քննադատականում նկատելի է նույնպես, որ հեղինակը թարգմանչից պահանջում է բառարանային ճշգրտություն և մերժում է գեղարվեստական նկատառումով կատարված որևէ շեղում բնագրից:

Անդրադառնալով Ն. Բյուզանդացու հոդվածին, Արփիար Արփիարյանը իր ժամանակին գրել է. «Գուցե ումանք առարկեն, թե պ. Նորայրի քննադատությունը խիստ է, և կրնա մինչև իսկ մահաբեր լինիլ երիտասարդ տաղանդի մը զարգացման. սակայն տարբեր կերպով մտածողներ ալ պակաս չեն: Խիստ քննադատությունը երբեք անդամալույժ չըներ գրականությունը: Արդեն տկար ծնած արարածներն անտարակույս շուտով հուսաբեկ կը լինին, սակայն կորովի մտքերու, զորավոր կամքերու բարգավաճման սքանչելի միջոց է քննադատությունը»¹: Այնուհետև Արփիարյանը հայտնում է, թե նուպարյանը խոստովանել է, որ «Նոդր-Տամ»-ի թարգմանությունը հանդուզն գործ էր: Բայց հետագա տարիների ընթացքում,— շարունակում է նա, — նուպարյանը հարատեղորեն աշխատելով՝ ձեռք է բերել գրական ու լեզվական բավականաշափ պաշար:

Ն. Բյուզանդացու դիտողությունների հիման վրա նուպարյանը 1885 թ. վերանայել ու վերամշակել է «Նոդր-Տամ»-ի թարգմանությունը, որը և մտադրել է նորից հրատարակել: Բայց այդ մտադրությունը, մեզ անհայտ պատճառներով, չի իրագործվել:

Հյուգոյի «Կլոդ Գյո» վիպակը 1872 թվականին պարբերաբ լույս է տեսնում Հարություն Սվաճյանի «Մեղու» հանդեսում², Խաչիկ Օտյանի թարգմանությամբ: «Կլոդ Գյո»-ի մեջ Հյուգոն մարմնավորում է այն միտքը, թե Ֆրանսիայում գոյություն ունեցող թշվառության և

1 «Արևելք», 1884, № 194, էջ 3:

2 «Մեղու», 1872, № № 101—111: 101-րդ համարից «Մեղվի» խմբագրությունը սկսում է վարել Հակոբ Պարոնյանը:

դրանից բխող հանցագործությունների պատասխանատուն բուրժուական դասակարգն է և այդ դասակարգը ներկայացնող կառավարությունը: Վերջում, խոսքն ուղղելով Ֆլանսիայի Ազգային ժողովի երեսփոխաններին, նա գոշում է. «Ժողովուրդը անոթի է, ժողովուրդը կը մսի: Թշվառությունը դանի ոճրագործության կամ մոլության կը մղի, ըստ սեռին: Գթացե՛ք ժողովուրդին, որո որդիքը կը խլե թիարանը, և աղջկունքը... Դուք խիստ շատ եղեռնագործ ունիք, խիստ շատ պոռնիկ ունիք: Ի՞նչ կապացուցանեն այս երկու խոցերը: Այն, թե ընկերական մարմինը ախտ մը ունի իր արյան մեջ: Աչա դուք ժողովված եք խորհրդակցիլ Հիվանդին մահճին սնարը. Հիվանդությա՛մը զբաղեցեք»: Այնուհետև Հյուգոն քննչադատում է կասավարությանը, որ փոխանակ հասարակական ախտի պատճառները վերացնելու, ընդհակառակն, անողոք օրենքներ է սահմանում՝ դրա արդյունքները ջնջելու համար: «Պարոննե՛ր,— ասում է նա, — Թրանսայի մեջ տարվե տարի շատ գլուխ կը կտրվի: Քանի որ խնայողություններ ընկելու ելեր եք, այդ գլուխներուն վրա ըրեք ձեր խնայողությունները: Քանի որ պաշտոններ կուզեք բառնալ, բարձեք դահճի պաշտոնը: Զեր ություն դահճներուն աված թոշակներով կրնաք վեց հարյուր դաստիարակ պահել:

«Կլոդ Գյո» վիպակի առաջին թարգմանությունը, ինչպիս ասել ենք, տպագրվել է 1869 թվականին, Թիֆլիսի «Հայկական Աշխարհ» ամսագրում: Բայց այդ թարգմանության մեջ Հյուգոյի վերոհիշյալ խոսքերը բացակայում են: Մեզ հայտնի չէ թարգմանիչն է այդ էջերը զանց առել, թե՛ ցարական գրաքննիշն է ջնջել:

«Կլոդ Գյո»-ի հայերեն երրորդ թարգմանությունը պատկանում է Բատերագիր և Հրապարակախոս Ալեքսանդր Աբելյանի գրչին: Աբելյանն իր թարգմանությունը հրատարակում է 1886 թվականին, Թիֆլիսում, առան-

18 79



ФЕДЕРАЛЬНЫЙ
БЮДЖЕТ СВОБОДЫ ФЕДЕРАЛЬНОГО ГОСУДАРСТВА
САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО ГОРОДА

САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО ГОРОДА

БЮДЖЕТНОГО ГОРОДСКОГО ДОЛГА

СОСРЕДОТЧИКЪ ФЕДЕРАЛЬНОГО
БЮДЖЕТА САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО ГОРОДА

И У Л Е Ё

БЮДЖЕТ

ФЕДЕРАЛЬНОГО БЮДЖЕТА САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО ГОРОДА

Составленъ 1-го марта 1879 г. въ Адмиралтействѣ

Справочникъ I

отъ I

В. С. Ч. В. Л. Б.

Справочникъ II

отъ II

Ф. И. З. В. Р. Б. Ч. Н. Е. С. 2

Справочникъ III

отъ III

ОЧЕСЧИЧ. ВІДК. 867.

Справочникъ IV

отъ IV

Ф. И. З. В.

БЮДЖЕТНОГО ГОРОДСКОГО ДОЛГА

Платы по бюджету, въключая:
Суммы по расходамъ, кроме земель.
Земель, земельныхъ и земельныхъ земель.
Земель, кроме земельныхъ земель.

9. Земель.
10. Платы земель.
11. Платы земель.
12. Платы земель.
13. Платы земель.
14. Платы земель.
15. Платы земель.
16. Платы земель.
17. Платы земель.

Составленъ 1519 г. въ Адмиралтействѣ

Составленъ 1519 г. въ Адмиралтействѣ

С. В. Ч. В. Р. Б. Ч. Н. Е. С. 2

ФЕДЕРАЛЬНЫЙ БЮДЖЕТЪ

Составленъ 1-го марта 1879 г. въ Адмиралтействѣ

Въ понедѣльникъ, 17-го декабря, въ Адмиралтѣ театре, предъ зрителемъ будетъ постаниою армейской труппы: АНДРЕЕВЪ
или ВЕНЕЦІАНСКАЯ АКТРИСА, драма въ 4 действияхъ,
оп. Виктора Гюго.

ЧИНА ЖЕСТАМЪ ОБЫКНОВЕННАЯ

Составленъ 1-го марта 1879 г.

Составленъ 1-го марта 1879 г.

ձին դրքով և այն ձոնում թաքվի իր բանվոր ընկերներին՝ հետեւալ մակագրությամբ. «Նվեր՝ թաքվում Պ. Շահզեղանյանցի երկաթի գործարանի հայ գործավորներին, իրանց գործակից ընկեր թարգմանողից»: Արելյանի առաջարանից պարզ երևում է, որ սոցիալական հարցեր արծարծելու նպատակով է նա թարգմանել այդ գիրքը. «Սրանից 52 տարի առաջ,— գրում է նա,— այն է՝ 1834 թվին, Ֆրանսիայում դուրս եկավ «Կլոդ Գյո»-ն աշխարհաճոշակ Վիկտոր Հյուգոյի գրչի տակից, յուր նմանի մեջ առաջինը, որ բողոքում է ավազակների դրության մասին, արդարացի մեղադրելով հասարակությունը և գիտության ծուռ ուղղությունը՝ իբրև բոլոր շարյաց ծնողներ»:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ «Կլոդ Գյո»-ի առաջին թարգմանությունից երկու տասնամյակ հետո, ներկա թարգմանության մեջ ևս բացակայում են այն էջերը, որոնցում Հյուգոն դատապարտում է Ֆրանսիայի կառավարությանը՝ ժողովրդի թշվառության համար: Ուստի դժվար չէ գուշակել, թե երկու դեպքում էլ այդ բացթողումը արվել է ոչ թե թարգմանիչների, այլ ցարական գրաքննիչների կողմից, որոնք իրենց թուրք պաշտոնակիցներից ավելի ընթերցաներ լինելով, հայտաբերում և ջնջում էին տիրող իրավակարգի դեմ ուղղված բացահայտ արտահայտությունները: Զէ՞ որ նույն ցարական գրաքննությունը «Սովորեմեննիկ»-ին էլ արգելել էր «Թշվառների» պարբերական թարգմանությունը շարունակել: Սակայն Արելյանը հիշյալ բացթողումը լրացնում է՝ Հյուգոյի հայտնած մտքերն ինքը շարադրելով իր առաջարանի մեջ: Միայն թե՝ ժողովրդի թշվառության պատճառները փոխանակ կառավարությանը վերագրելու, նա խոհեմորեն վերագրում է «հասարակությանը», համոզված, որ ուշիմ ընթերցողը կկուհի, թե հասարակություն ասելով ում պետք է հասկանալ:

Հիշյալ առաջաբանում ուշագրավ է նաև այն, որ Արելյանը Հյուգոյի քաղաքական հայացքները սերտորեն կապակցում է իր ժամանակի իրականության հետ. «Մեզ՝ կովկասցիներիս համար,— ասում է նա,— երբեք այդ գիրքը հին չէ, և երկար հին չէ լինելու, քանի որ Թիֆլիսը, Շամախին, Շուշին և բոլոր կովկասյան գավառները լցնում են բանտերը ամեն օր նորանոր Կլոդ Գյոներով»։ Բայց թարգմանիչը միայն փաստեր արձանագրելով շի բավականաբար անում դրանց ստեղծողին. «Հյուգոն... ամեն մեկիս ցուց է տալիս և համոզում, թե արդարեւ ինքը՝ հասարակությունն է ստեղծում և՛ գողերին, և՛ ավազակներին, և՛ մարդասպաններին», եղրակացնում է նա:

«Կլոդ Գյո»-ի թարգմանության առթիվ «Մշակի» մեջ տպադրվում է մի հաղորդում, որտեղ ասվում է. «Եյութը, որ ընտրել է պ. Արելյանց իր թարգմանության համար, շատ լավ է, և ուրիմն ուսանելի... եռհուրդ ենք տալիս հայ հասարակությանը առնել պ. Արելյանցի թարգմանած գրքույկը»¹:

Հյուգոյի սոցիալական բովանդակությամբ հագեցված գործերից մեկն է նաև «Մահապարտի վերջին օրը», որը Բարթող Մաղաքյանի թարգմանությունից տասը տարի հետո՝ 1873 թ. Կ. Պոլսում դարձյալ լույս է տեսնում այլ թարգմանությամբ: Իսկ 1887 թ. այն թարգմանում է Ա. Արելյանը և Հրատարակում Թիֆլիսում: Իր առաջաբանում Արելյանը գրում է, թե մահապարտիմն այնքան սարսափելի չէ, որքան հոգեկան անլուր տանգանքները, որ մահապարտը ապրում է մինչև կառափնարան կամ կախազան բարձրանալը: Այնուհետև նա ավելացնում է հետեւյալ նշանակալից խոսքերը. «Եթե մի ոք, որ երբեք մի բոպե յուր կյանքում չէ մտածել այն զոհերի մասին, որոնց գլխին մարդկային արդարադատու-

1 «Մշակ», 1886, № 71, էջ 2, «Ներքին լուրեր» բաժնում:

թյունը ժամանակ առ ժամանակ կատարում է յուր անողոքը, կարդա այս գրքույկը—նրա սիրու լցվելու է անբավարար դեպի մահվան պատիժը»:

Այս վերջին պարբերության մեջ նշանակալից է այն, որ Արեւանը արդեն խոսում է ոչ թե հանցագործների, այլ զոհերի մասին և միաժամանակ ձգտում է անբավարար ատելություն առաջացնել ընթերցողների մեջ դեպի բորժուական իրավակարգի անողոք օրենսդրությունը:

Շիրվանղաղեն «Մահապարտի վերջին օրը» գրքի թարգմանության մասին «Արձագանք» շաբաթաթերթում տպագրած իր գրախոսականի մեջ ասում է. «Հարկավ, այդպիսի մի հեղինակության հայերեն տպագրությունը մեր աղքատիկ թարգմանական գրականության համար արժանի է խրախուսանքի։ Թարգմանությունը հաջողված է այնշափ, որչափ Հյուգոյի հարուստ և գալարուն ոճը կարելի է թարգմանել մեր անմշակ աշխարհիկ լեզվով»։ Անդրադառնալով գրքի բովանդակությանը, գրախոսն ընդգծում է, թե Հյուգոյի բացահայտած փիլիսոփայությունը այնքան խորիմաստ է, որ անչնչելի տպավորություն է թողնում ընթերցողի վրա և «երկար ժամանակ նորա աշքերից շեն հեռանում այն սոսկալի տեսարանները, որ գուրս են բերված այնտեղ»¹:

Հյուգոյի գրած վերջին վեպն է «հննսուներեք թվականը», որի նյութը վերցված է ֆրանսիական բորժուական հեղափոխության շբջանից։ Այսաեղ Հյուգոն զերծ համակրանքով նկարագրում է քաղաքական գործիչների ողեռությունը, հանրապետական զինվորների հայրենասիրությունը, նրանց հերոսական կոլվները հակահեղափոխականների դեմ, նրանց փառավոր հաղթանակը։

1 «Արձագանք», 1887, № 35,էջ 561—562; Հոդվածը թեսանատորագիր է, բայց պարզվեց, որ այն պատկանում է Շիրվանղաղեի գրչին,

«իննուներեք թվականը» վեպից որոշ գլուխներ թարգմանում և «Եղբայրը եղբոր դիմ» խորագրի տակ առանձին գրքով 1891 թվականին Թիֆլիսում հրատարակում է Յ. Օ. ստորագրությամբ մի թարգմանիչ, որի ինքնությունը տակավին մեզ չհաջողվեց պարզել: Այդ թարգմանությունը այնքան մեծ ընդունելություն է գտնում ընթերցող հասարակության մեջ, որ վերահրատարակվում է 1898 և 1905 թվականներին:

«Թշվառների» հայերեն թարգմանության երկրորդ, վերամշակված հրատարակությունը սկսում է լուս տեսնել 1885 թվականին: Այս անգամ Զիլինկիրյանն այդ վեպը հրատարակում է հայ հասարակական կյանքի հետ սերառեն կապված հարցեր հուզելու, Հյուգոյի գաղափարներով ժամանակակից հայ երիտասարդությունը դաստիարակելու նպատակով:

«Թշվառների» առաջին հրատարակության առաջարանում, ինչպես տեսանք, Զիլինկիրյանը սոցիալական ընդհանուր պրոբլեմներ էր արծարծում, բողոքում էր «ընկերային օրինաց անարդարության և անողոքության դեմ»: Երկրորդ հրատարակության առաջարանում նա նույն վեպի բովանդակությունը մեկնաբանում է սոսկ աղքային դիրքերից: «Թշվառներու նման գիրքի մը ճշմարտությունները մեր ազգին մեջ վերստին տարածելու հարկը կզգանք այնպիսի ժամանակ՝ մը, ուր հայոց ընկերային կյանքը կը մթագնի», ասում է նա այստեղ:

Տվյալ ժամանակաշրջանում, քաղաքական շարաբաստիկ իրադարձությունների բերմամբ, որոնց արդեն անդրադարձել ենք, արևմտահայերի ազատագրության հեռանկարը տժունել էր, հայ մասսաները հետզհետե ենթարկվում էին ավելի դաժան կեղեքումների, հալածանքների: Իսկ այդ ծանր օրերին կղերա-պահպանողական տարրերը ոչ միայն հավանություն էին տալիս սուլթանի վարած քաղաքականությանը, այլև դարձել էին

նրա կամակատարները։ Ահա թե ինչու Զիլինկիրյանը վերաբատարակում է «Թշվառները», որի առաջաբանում ասում է. «Հայ կրոնավորներու, հայ դիվանագետներու, հայ գրչակներու այս աղքաղավ իրարանցումին ժամանակ, ուր սակավաթիվ են իրենց բարոյական զգայությունը անվրդով պահողները, բնավորությանց գձձության և հոգիներու անկման միջոցին, ուր ստուգիվ վտանգ կը նշմարենք հայության համար, այս գրքին հրատարակիչները մեծ ծառայություն մը կը մատուցանեն ձեռնարկելով «Թշվառներու» տպագրության»։

Զիլինկիրյանը ձգտում է «Թշվառների» վեհ ու խիզախ հերոսների կերպարներով ոգեշնչել ընթերցնդին. «Հայ եկեղեցականաց և աշխարհականաց, մանավանդ նոր սերունդը կազմելու պատրաստվող աշակերտաց խորհուրդ կուտանք,— ասում է նա,— ստեղ կարգալու «Թշվառները», ուսումնասիրելու այս երկին հերոսներուն բնավորությունները, որոնք կատարելության տիպարներ են, և որ հետզետե պարզվելով, զարգանալով՝ անվեհեր մարտիկներ կը հանդիսանան վտանգի ժամանակ, և անձնադիր ստոիկյաններ՝ պարտավորության առջև»։

Նշանակալից է, սակայն, որ թարգմանիշը մասնավորապես մատնացուց է անում Բիենվընյու (Միրիել) եպիսկոպոսի և Մարիուսի կերպարները, որովհետև հենց նրանց մեջ է տեսնում բնավորության այն գեները, որ տվյալ ժամանակաշրջանում հարկավոր էր զարգացնել հայ եկեղեցականի և հայ աշխարհականի մեջ. «Թշվառները»,— ասում է նա,— նվիրական տաճար մըն է... ուր եկեղեցականն արիություն ունի հանուն ավետարանի խոսելու և ըստ այնմ գործելու նաև զորավորներու առջև, անձնական շահը հանրականին զոհելով... ուր աշխարհականը պարտազանցության կամեությանց հրաժեշտ կուտա... և կը կատարե իր պարտքը, այսինքն

կյանքն իսկ կը վտանգե, կը զոհե՝ անմեղը և տկարը պաշտպանելու, թշվառը սփոփելու, անօրենությունը ապտակելու, արդարության և ճշմարտության առջև արիաբար, անշահասիրաբար, ստոփելյանի հատուկ անխոռվությամբ և անձնվիրությամբ երկրպագելու համար: «Թշվառներու» մեջ կը վխտան այս տեսակ բնավորությանց տիպարներ, որոնց ամենն համակրելիներուն և երևելիներուն երկուքն են՝ Պիենվընյու, որ կրոնավոր մընէ, և Մարիուս, որ աշխարհական մըն է»:

Այնուեւեւ, Զիլինկիրյանը Բիենվընյուին բնութագրում է որպես գթության և արդարասիրության մարմնացումը, իսկ Մարիուսին՝ որպես ճշմարտության անվեհեր պաշտպանը և «Հանրային առաջադիմության» սատարող քաղաքացին:

Եթե մենք Զիլինկիրյանի առաջաբանի վրա երկար կանգ առանք, պատճառն այն է, որ «Թշվառները», հայ իրականության մեջ ամենատարածված գրքերից մեկը լինելով, կարդացվում էր հայ հասարակության բոլոր խավերի կողմից: Ուստի, վեպի հերոսների մասին թարգմանչի տված ցուցմունքը անպայման պիտի որոշ շափով կողմնորոշեր ընթերցողներին: Թե այդ հերոսների կերպարները որքան խոր տպավորություն էին գործում ընթերցողների վրա, այդ մասին մեզ հավաստիացնում են ժամանակակից արժանահավատ վկայություններ, որոնցից բերում ենք մի քանի քաղվածք: Հրանտ Ասատուրը, որը «Թշվառների» վերահրատարակման ժամանակ 23 տարեկան էր, իր հուշերում գրում է. «Կարելի չէ ուրանալ, թե իմ սերունդիս երիտասարդներեն շատեր Զիլինկիրյանի թարգմանած «Թշվառներու» ընթերցումն մեծապես ազդված են, և Պիենվընյու եպիսկոպոսին ու ժան Վալժանին, Ֆանթինին ու Քողեթին, Ժավեռին ու Կավոռշին նկարագիրները շատերուն հոգիին մեջ խորունկ գրոշմ ձգած են: Պերպերյանն է, որ գրած է տեղ մը, թե իր

բարեկամներեն մեկը ըստած է իրեն. «Երբ «Թշվառներու» ընթերցումը ավարտեցի, այնչափ ազդվեցա, որ սկսած թշվառներ փնտռել՝ անոնց օգնության հասնելու համար»¹:

Բանաստեղծութիւն Անալիսը (ծնվ. 1872) ասում է, թե Հյուգոյի անմոռանալի կերպարները ապրում են և դեռ երկար կապրեն ընթերցողների հիշողության մեջ, կարծես այդ կերպարներն իրոք գոյություն ունեցած, սիրած ու տառապած մարդիկ լինեին²:

Ակնարկելով «Թշվառները» Զոպանյանը գրում է. «Ոչ մեկ վեպ ունեցած է մեր մեջ այն տարածումը, որ այս տարօրինակ դիրքն ունեցավ, ոչ ալ այն խորունկ ազդեցությունը, զոր ան գործած է մեր ժողովուրդին բոլոր խավերուն մեջ: Ֆանթին, Քողեթ, Ժան Վալժան, Մոնսենյոր Միրիել, Մարիու, Կավոոշ—սիրելի և անմոռանալի դեմքեր—և պետքալի Թենարտիկ ամոլը և դեռ ուրիշ այնքան անձնավորություններ այդ անսահման դյուցազներգության՝ ծանոթ են ամեն մեկ հայու, որպես թե մարդկային պատմության մեկ որոշ րոպեին գոյություն ունեցած իրական էակներ ըլլայլին»³:

Իսկ Հյուգոյի ծննդյան հարյուրամյակի առթիվ արձակագիր Օննիկ Զիֆթե Սարաֆը նշում է մի հետաքրքիր փաստ. «Ատեն մը եղած է,— ասում է նա,— որ իր (Հյուգոյի—Հ. Գ.) նշանավոր մեկ վեպին հերոսները վերջին աստիճան ժողովրդական եղած են մեր մեջ, և խիստ շատ անգամներ՝ վկայություններ, նմանություններ, բաղդատություններ մեջբերված են մեր մեջ ապրող անձերու, տեղի ունեցած միջադեպերու և կյանքի

1 Հրանտ Ասատոր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 142—143:

2 Տհ'ս A. Tchobanian, Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935, p. 83.

3 «Հայաստանի Կողմակ», 1935, № 41, էջ 964,

երևույթներու առիթով։ Այսպես, կը հիշեմ, որ հազ-
վագյուտ բացառությամբ բարի, անհիշալար ու ողորմած
մեր մեկ և կեղեցականին անունը հիշատակված է Միրիել
եպիսկոպոսին վերջուշումովը, անօդնական որբուժիներ
Քողեթը հիշեցուցած են, սիրո կյանքեր «քարի մը տակ
սիրտ»-ի ազդեցության տակ բաբախած են, աղտոտ
մարդիկներ ինքզինքնին տեսած են Թեհարատիկներուն
անձին մեջ։ Եվ այդ իսկ կապացուցանե, թե որ աստի-
ճան իրական ու ապրված հանգամանք մը ունին անոր
դրվագները, ինչ որ միակ գրավականն է գործի մը ապ-
րելուն»¹։

Եվ իրոք, «Թշվառների» հերոսները ոչ միայն ոգե-
շնչում էին ընթերցողներին, այլև հայ գրողների երկե-
րում հանդես էին գալիս որպես այս կամ այն բնավո-
րությունը մարմնավորող, երբեմն էլ հասարակության
այս կամ այն խավը ներկայացնող խորհրդանիշներ։
Այսպես, օրինակ, դեռ 1870 թվականին Պոլսի «Երկրա-
գունդ» պարբերականում տպագրված «Հայրենիք» վեր-
նագրով հոդվածում (հեղինակ՝ Մ. Սուրեն) հանդիպում
ենք հետեւյալ տողերին, որտեղ «Թշվառների» հերոսները
խորհրդանշում են հայ հասարակության տարբեր խա-
վերը, «Ծեր հայ Ֆոշլըվանը դարերու տգիտության,
վշտաց ու թշվառություններու ներքեւ կը հեծե, օգնու-
թյուն կը կանչե... Ե՞րբ հայը պիտի կարենա բանալ յուր
աշքերը և յուր մոտ տեսնել Մատըլեն մը, որ զինքը
խավարի ծանրութենեն դեպի լուսո գողտը թեթևություն
ձգե։ Քանի՛-քանի՛ անգութ ու անխղճմտանք Թեհար-
տիկներ ալ մեր մեջ կան, որք յուրյանց եղբոր արյամք
և արտասվաց կաթիլներով ծարավը կանցունեն, որք
որբերու և այրիներու հացը կուտեն... Քանի՛-քանի՛ Ժա-
վելերներ, անարդար դատերով՝ հազարավոր թշվառ հայ
Ֆանթիններու արյունը կը մտնեն։ Կարդա՛, Հա՛յ, «Թըշ-

1 «Մասիս», 1902, № 6, էջ 87։

վառներու» յուրաքանչյուր էջերը. կը տեսնես հոն հայուդ թշվառության չափը, զոր հայուն վրա չես ուզեր տեսնել: Այս ամեն թշվառությունք, որ հայուն վրա կը տեսնվին, տգիտության և անդաստիարակության արդյունքներ են: Վերցնե՛նք զանոնք, երջանիկ ըլլանք: Մացնե՛նք գիտությունը և բարի դաստիարակությունը, և ահավասիկ Հայաստանը կը բարգավաճի»¹:

Թետրոս Դուրյանի «Թատրոն և թշվառներ» դրամայում գլխավոր հերոսուհին՝ Վարդուհին, ուզենալով էղվարդին բացատրել, թե չքավորությունից մղված՝ ակամա հանձնվել է մի ուրիշի, իր ամբողջ խոստովանությունը խտացնում է շորս բառի մեջ. «Ես լլկյալ Ֆանթին եմ», — ասում է նա: Զէ՞ որ Ֆանթինը սիմվոլն է բոլոր անմեղ կանանց, որոնք թշվառության բերմամբ ծախում են իրենց պատիվը: Ակնհայտ է, որ Դուրյանն իր հերոսուհու բերանով չէր արտահայտի այդ բառերը, եթե վստահ չիներ, որ հանդիսականները կարդացած են «թշվառները», գիտեն, թե ով է Ֆանթինը:

Զիլինկիրյանը քաջ իմանալով, որ հայ հասարակության բոլոր խավերն անհագ հետաքրքրությամբ կարդում են ու կկարդան «Թշվառները», 1885 թվականին այդ վեպն օգտագործեց որպես պայքարի ամենաազդու զենք կղերա-պահպանողական հոսանքի դիմ:

«Թշվառները» Զիլինկիրյանի թարգմանությամբ հրատարակվել է վեց անգամ: Բացի 1885 թվականից, այն վերահրատարակվել է նաև 1909, 1922 և 1927 թթ. Պոլսում, իսկ 1953 թ. Բելութում՝ որոշ կրծատումներով: Վերահրատարակությունների այս հաճախականությունը, ինքնին, մի անգամ ևս ապացուցում է հիշյալ վեպի վայելած լայն ժողովրդականությունը:

¹ «Երկրագունդ», 1870, № 13—№ 28:

«Ծյուի Բլաս» դրաման, ինչպես ասացինք, թարգմանել է Ն. Ռուսինյանը, 1873 թվականին, նպատակ ունենալով հայ ժողովրդի մեջ առաջավոր գաղափարներ տարածել: Գրքի վերջում Ռուսինյանը «Իղձ թարգմանչի» խորագրի տակ բացատրում է, թե թատրոնը շափահասների դպրոցն է, որտեղ բեմից դեպի հանդիսականը հոսում են իմաստությունը, բարոյական դասը, օգտակար խրատն ու գրական ճաշակը: Թարգմանիչն ըղձում է, որ թատրոնը հայ իրականության մեջ զարգանա և իր դաստիարակչական դերը լավագույնս կատարի:

Հյուգոյի «Անջելո» դրաման, որը առաջին անգամ լույս էր տեսել 1863 թ. Զմյուռնիայում Հ. Տետեյանի թարգմանությամբ, 1879 թ. նորից է թարգմանվում ականավոր դերասան Գևորգ Զմշկյանի ձեռքով՝ կովկասահայ բեմի վրա ներկայացնելու համար: Այդ թարգմանության ձեռագիրն այժմ պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում¹:

«Թագավորը զվարճանում է» ողբերգությունը 1888 թ. թարգմանվում և առանձին գրքով հրատարակվում է Կ. Պոլսում «Արքայն զբոսնու» խորագրով²:

«Լուկրեցիա Բորչիա» թատերգության երկրորդ թարգմանությունը պատկանում է Կ. Մարտիրոսյանի գրչին, որը 1898 թ. այն պարբերաբար հրատարակում է Թիֆլիսի «Տարագ» հանդեսում³:

Միապետական կարգերի կամայականություններն ու ազնվականության այլասերումը պատկերող այս գործերը թարգմանվում էին ոչ միայն ընթերցանության հա-

1 Զեռագիր պիեսների ֆոնդ, № Հ—11. 707:

2 Երկը թարգմանել է Ա. Խ. Մ.: Հրատարակիչ՝ Տ. Փափազյան:

3 «Տարագ», 1898, № 26—35:

մար, այլև բեմադրելու նպատակով։ Հյուգոյի դրամաները անցյալ դարի 70—90-ական թվականներին հաճախ են ներկայացվել Հայ բեմի վրա, մեծ ոգևորություն ստեղծելով թատերասեր հասարակության մեջ։

Հյուգոյի դրամաներից՝ «Արքայն զբոսնու»-ն 1871 թ. ներկայացվում է Կ. Պոլսի Օսմանիկ թատրոնում, Վարդովյան թատերախմբի կողմից՝ Վ. Գարագաշյանի, Ա. Աստղիկի և այլ շնորհալի դերասանների մասնակցությամբ։ Նույն խմբի կողմից 1872 թ. Պոլսում բեմադրվում է «Անջելոն»։ 1879 թվականին նորից ներկայացվում է «Արքայն զբոսնուն», որտեղ Տրիբուկեի դերում Հանդես է գալիս Պետրոս Աղամյանը, իսկ մյուս դերերում՝ Մնակյանը, Վարդովյանը և ուրիշներ։ Նույն դրաման Պոլսի Հայ թատրոնում ներկայացվում է նաև 1882 թվականին, այս անդամ Տրիբուկեի դերը խաղում է Մաղաքյանը։ Ի դեպ, ներկայացման ընդմիջումներին քսան խտալացի երաժիշտներից բաղկացած մի նվազախումբ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Չուհաճյանի ղեկավարությամբ նվագում է «Օլիմպիադա» եղերերգությունը, այլ օպերաներից հատվածներ, ինչպես և «Մայր Արաքսին» և խանդավառված հանդիսականները բուռն ծափահարությամբ թնդացնում են թատրոնի սրահը¹։

«Անջելո» դրաման, Զմշկյանի թարգմանությամբ, բազմից խաղացվել է արևելահայ բեմում։ Առաջին անգամ այն ներկայացվում է Թիֆլիսում 1879 թ. (Հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին) Հայ դերասանական խմբի կողմից։ Գլխավոր դերերում խաղում են Գ. Զմշկյանը (Անջելո), Պետրոս Աղամյանը (Ռոդոլֆ), Սիրանուշը (Կատերինա), Աստղիկը (Թիգր)։ Նույն դրաման 1881 թ. նորից խաղացվում է Թիֆլիսում՝ Սիրանուշի մասնակցությամբ, 1886 թվականին այն բեմադրվում է Բաքվում,

1 Տե՛ս «Մասիս», 1882, № 3138, էջ 3։

1887 թվականին՝ Երևանում (Պ. Ֆասովյանի և Արմենյանի մասնակցությամբ), 1888 թվականին՝ դարձյալ Բաքվում (Անջելոյի ղերում՝ Հովհ. Աբելյան), 1892 թվականին՝ Շուշում, նույն 1892 թվականին՝ դարձյալ Թիֆլիսում (Սիրանույշ, Զապել, Արմենյան և ուրիշներ), 1893 թվականին՝ Ղզլարում և Բաքվում, 1895 թվականին՝ նորից Շուշում: Այս ներկայացումների մասին գրախոսականներ են գրվում «Մշակ», «Նոր Դար», «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Տարադ» և այլ պարբերականներում:

Վերջիշյալ ներկայացումների հաճախականությունը ինքնըստինքյան վկայում է, որ Հյուգոյի դրամաները հայ հասարակության մեջ մեծ հետաքրքրություն էին առաջացնում, առաջավոր գաղափարներով ոգևորում հանդիսատեսներին:

* * *

Անցյալ դարի 70—90-ական թվականներին Հյուգոյից թարգմանված երկերը զգալի շափով նպաստել են այն գաղափարների տարածմանը, որ հայ առաջավոր միտքը ձգտում էր արմատավորել ընթերցող հասարակության մեջ: Այս հարցում Հյուգոյի ղերը անդնահատելի է եղել մանավանդ այն պատճառով, որ հաճախ հայ գրողներն ու հրապարակախոսները նրա երկերի միջոցով ժողովրդին հասցնում էին հայրենասիրական, ազատասիրական և մարտաշունչ գաղափարներ, որ գրաքննության պայմաններում իրենց ինքնուրույն աշխատությունների մեջ չէին կարող ազատորեն քարոզել: Այստեղ է ահա, որ Հյուգոն հանդես է եկել որպես իր թարգմանիչների թարգմանը: Եվ արդարեւ, ո՞ր հայ դրոդը կարող էր 80-ական թվականներին իր սեփական ստորագրությամբ Պոլսում լույս ընծայել մի երկ, այս-

պիսի խոսքերով. «Քանի որ թշնամու սև հորդաները գրավել են իմ երկիրը, քանի որ արյունը հոսում է վտակի պես, ես ցմա՞ծ պիտի կռվեմ պատնեշի վրա՝ հայրենիքս պաշտպանելու համար», և կամ ո՞ր հայ մտավորականին թուզ կտային 90-ական թվականներին տպագրել մի հոդված, և հայերին գոշել. «Աղատության համար, ինչպես Նեղոս գետի համար հեղեղումն է պտղաբերության աղբյուրը: Հարկավոր չեն հաշտեցնող միջոցներ, հարկավոր չեն զիջումներ, հարկավոր չեն կիսատ միջոցներ: Թող ձեր գլխում միայն մի միտք լինի՝ ապրել ձեր սեփական տանը, ձեր սեփական կյանքով»: Եվ հայ մտավորականը նույն այս խոսքերը հայերին ասել է Հյուգոյի անունից, թարգմանելով իտալացիներին ուղղած նրա բոցաշունչ ճառը:

Ինչ վերաբերում է հանճարեղ գրողի «Թշվառներ», «93 թվականը», «Փարիզի Աստվածամոր տաճարը» և այլ երկերին, առաջ դրանք գաղափարական հղոր զենքեր էին, որ մեր մտավորականները գրաքննության մաքսատնից անց էին կացնում, փոխադրում հայ գրականության սահմանը, տարածում ժողովրդի մեջ: Թե հիշյալ երկերը ինչպիսի լայն տարածում էին գտնում հայ իրականության մեջ և ինչքան խոր տպավորություն թողնում ընթերցողների վրա, մենք այդ ցուց տվինք՝ «Թշվառների» աղղեցության վերաբերյալ հավաստի վկայություններով: Հյուգոյի առաջավոր գաղափարների տարածման գործում կարեռ ազդակ են հանդիսացել նրա խոսքի արտակարգ ուժն ու թափը, գեղարվեստական բարձր վարպետությունը, նրա կախարդական ու վարակիչ լեզուն, որը հեղեղի պես հոսելով, քաշում տանում էր ընթերցողին:

Քսաներորդ դարի սկզբներին ցարական կառավարությունն ուժեղացրեց ազգային ճնշումների իր քաղաքականությունը անդրկողվասյան ժողովուրդների և հատկապես Հայ ժողովրդի դեմ: Փակվեցին Հայկական դպրոցների մի մասը և մի շարք պարբերականներ, խըստացվեց գրաքննությունը, արգելվեց կուլտուր-կրթական ընկերությունների գործունեությունը: Քաղաքական այդ իրադրության պայմաններում Հայաստանում սկսեց վերելք ապրել Հեղափոխական շարժումը: 1902—1904 թթ. տեղի ունեցան բանվորական գործադրություններ, ցուցեր և գյուղացիական մի շարք ելույթներ: Նույն թվականներին Հիմնվեցին սոցիալ-դեմոկրատական խմբակներ, իսկ Թիֆլիսում կազմակերպվեց Հայ սոցիալ-դեմոկրատական միությունը, որը 1902 թ. սկսեց հրատարակել իր օրգանը՝ «Պրոլետարիատը»: Հաջորդ տարին Թիֆլիսում կայացած կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարի որոշումով Հայկական «Պրոլետարիատ» և վրացական «Բրձոլա» թերթերը միացվեցին և նրանց փոխարեն սկսեց լույս տեսնել «Պրոլետարիատի կոմիտ» անշեգալ թերթը՝ Հայերեն և վրացերեն: Այս թերթը, որի խմբագրական աշխատանքները տարրեր ժամանակներում զեկավարել են Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը և ուրիշներ, պատմական խոշոր դեր է կատարել Հայ և վրաց բանվորներին ուղղուցիոն պայքարի ոգով դաստիարակելու գործում: Առանձնապես ուշագրավ է այն փաստը, որ «Պրոլետարիատի կոմիտ» Հենց առաջին միացյալ Համարում տպագրվում է Հեղափոխության սասրս Հցուգովի «Նոքա կարթնանան» սիմվոլիկ երկը: Նկատի և նենալով այդ երկի արտահայտած խորիմաստ

բովանդակությունը և նրա պատմական նշանակությունը,
այն արտատպում ենք ամբողջությամբ.

«Նեան սառած է. նրա կրծքի վրա շինություններ են
բարձրացել ու ժանր կառքեր են սլանում: Այստեղ այլևս
չուր չկա. նա ամբողջովին քար է դարձել: Մի ափից
մյուսը մարդիկ՝ են անցնում այդ մարմարիոնի վրայից,
որ գետ էր առաջ: Ամբողջ քաղաք են ուզում կառուցա-
նել: Փողոցները նշանակված են արդեն, խանութներ են
բացված, խմում են, ուսում ու քնում: Կրակ են վառում
այստեղ նախսկին ջրի վրա: Այստեղ ամեն ինչ կարող եք
ձեզ թույլ տալ, ոչնչից մի վախենաք: Ուզում եք պարե-
ցեք, խնդացեք: Այստեղ, հավատացնում եմ ձեզ, ամեն
ինչ ավելի ամուր է, ավելի հաստատուն, քան հողի վրա:
Չեր ոտքերի տակ կարծեք գրանիտ է շաշում: Կեցցե՛
ձմեռը: Կեցցե՛ն սառուցի հավիտենական շղթաները:
Խսկ երկինքը. օ՞ր է հիմա, թե՞ գիշեր. գունատ, հաղիվ
նշմարելի լույս է ընկնում ձյան վրա: Արեւ մեռել է
կարծեք:

«Բայց ո՞չ, դու չե՞ս մեռնի արե—ազատություն: Մի
ժամանակ, երբ քեզ ոչ ոք չի սպասել, երբ քեզ բոլորո-
վին կմոռանան մարդիկ, դու նրանց կհայտնվես քո ամ-
բողջ փայլով՝ գեղեցիկ, որպես երկնքի հզոր լուսատուն:
Եվ այստեղ, այս ձյուների և սառնամանիքների երկրում,
այս տարածության վրա, որ կարծր է որպես քար, ու
սպիտակ որպես մեռելի սավան, այս ջրերի վրա, որ
ցրտի ու ձմռան արհավիրքներից մի անծայր ու անվերջ
սառուց է դարձել, դու կուղարկես քո ոսկե ճառագայթ-
ները, հրատապ նետերը, և՛ կյանք, և՛ լույս, և՛ շերմու-
թյուն...

«Եվ ահա... 22 շ... լսո՞ւմ եք դուք այդ խով ու եր-
կար աղմուկը, այդ հեռվից լսվող, բայց սարսափ ազդող
դղրդոցը: Դա ապստամբությունն է: Նեան բացվում է.
գետը սկսում է իր խաղը: Կենդանի ջրերը ուրախ ու

խրոխտ ճեղքել են սառուցը և փշրել կապանքները։ Առաջ թվում էր, թե դա գրանիտ է, բայց տեսեք, նա չարդվել, հաղարավոր կտորների է բաժանվել փխրուն ապակու պես։ Ապստամբությունն է, ասում եմ, լույսի և ճշմարտության տոնը, դա առաջադիմության հաղթական ընթացքն է, որ իր ճանապարհից ջնջում, ոչնչացնում, արմատից պոկում, փախցնում ու փշրում, խեղդում է իր ալիքների մեջ ու անդունդ գլորում այն ամենը, ինչով ապրում և ինչի վրա հենվում է բռնապետությունը...»¹։

Թեև լրագրում հիշատակված չէ երկի թարգմանչի անունը, բայց հետագա պրատումներից պարզվեց, որ այն թարգմանել է բոլշևիկ հրապարակագիր և քաղաքական գործիչ Աշոտ Խումարյանը։

Այս գրվածքը, որով Հյուգոն ազդարարում է հեղափոխության մոտալուս հաղթանակի և բռնապետության անխուսափելի կործանման մասին, նշանակալից է հատկապես նրանով, որ արձագանքում է թերթի նույն համարում տպագրված Լենինի «Միապետությունը տատանվում է» հոդվածի մարտական ոգուն, հոդված, որտեղ մեծ առաջնորդը հայտարարում է, թե բռնապետության դեմ բանվորների մղած հեղափոխական կռիվը երբեք չի թուլանա, թե «պրոլետարիատը կկռվի մինչև իր արյան վերջին կաթիլը»։

Հետագա տարիներին հեղափոխական շարժումը գնալով ավելի է ծավալվում Անդրկովկասում։ Հայաստանում 1905 թ. տեղի են ունենում բանվորական նոր գործադուներ և գյուղացիական ելույթներ։ Նույն թվականին Թիֆլիսում նորից վերահրատարակվում է «Եղբայրը եղբոր դեմ» գրքույկը, որը բռվանդակում է Հյու-

1 «Պրոլետարիատի կոփլ», 1903, № 2—3, էջ 6։ Սա հիշյալ լրագրի առաջին համարն է։

գոյի «93 թվականը» վեպից որոշ գլուխներ: 1906 թ. Ալեքսանդրապոլում լույս է տեսնում «Լրտես» վերնագրով գրքույկը¹, որտեղ Հյուգոն պատմում է, թե ինչպես նապոլեոն III-ի դեմ ապստամբած ֆրանսիացի աքսորականներն իրենց շարքերում հայտնաբերելով մի լրտեսի, նրա հետ դատաստան են տեսնում: Այդ թարգմանությունը մի տեսակ նախազգուշացում էր հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին՝ աշալուրջ լինելու, որ իրենց շարքերում ևս չսողոսկեն ցարական ուստիկանության լրտեսներ:

Ուսակցիայի տարիներին, և հատկապես 1910—1912 թվականներին, երբ հայ ականավոր քաղաքական գործիչները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ մամուլի միջոցով անհաջտ կոփվ էին մղում ամեն տեսակ հակահեղափոխական տարրերի դեմ, Թիֆլիսում առաջին անգամ լույս է տեսնում «93 թվականը» վեպի հայերեն լրիվ թարգմանությունը², որտեղ լայն կտավի վրա պատկերված են ֆրանսիական ուսուլուցիայի մարտիկների հերոսական կոփվները Վանդեայի հակահեղափոխական ուժերի դեմ:

Հյուգոն 1793 թվականի պատմական նշանակությունը բնութագրում է հետեւյալ խոսքերով. «93 թվականը—դա ինքը պատերազմն է. Եվրոպայի պատերազմը Ֆրանսիայի դեմ. Ֆրանսիայինը՝ Փարիզի դեմ: Իսկ ի՞նչ է հեղափոխությունը. դա հաղթություն է. Ֆրանսիայի հաղթությունը Եվրոպայի դեմ, Փարիզինը՝ Ֆրանսիայի դեմ: Դրա մեջն է կայանում այդ զարհուրելի ժամի անհուն նշանակությունը: Իննսուներեք թվակա-

1 Վիկառ Հյուգո, Լրտես, Ալեքսանդրապոլ, 1906, թարգմ. Արան Տեր-Առաքելյանց:

2 Վիկառ Հյուգո, Իննսուներեքը, Թիֆլիս, 1910, թարգմ. ֆրանսերեն բարգից, Արշակ Սափարյան:

նը—դա ավելի մեծ է, քան նույն դարի ամբողջ մնացորդ» (էջ 119):

Հետաքրքիր է, որ Սաֆարյանի թարգմանության մեջ բացակայում է այն էջը, որտեղ Հյուգոն գովերգում է Կոնվենտը, ընդգծում նրա առաջադիմական դերը, բացահայտում այն տարբերությունը, որ կա հանրապետական և միապետական կառավարությունների միջև: Այնտեղ Հյուգոն բացատրում է, թե ինչպես Կոնվենտը բոլոր քաղաքացիների համերաշխություն հայտարարեց, ձրի ուսուցում սահմանեց, սիստեմի վերածեց կրթությունը, հիմնեց նոր դպրոցներ, կոնսերվատորիաներ, թանգարաններ և ակադեմիա, հարստացրեց գիտությունը, կարգավորեց երկրի տնտեսությունը, պետության խնամքի տակ վերցրեց կույրերին, խովերին ու համրերին, որոշեց որդեգրել որբերին, ձրի ապաստաններ տվեց անօթևան ծերերին և հիվանդանոցներ հիվանդներին, նշավակեց նեգրերի առուծախը և ոչնչացրեց ստրկությունը,— «այս ամենը կատարեց Կոնվենտը, որ ծվատվում էր այնպիսի մի հիդրայի կողմից, ինչպիսին էր Վանդեան և իր թիկունքում ուներ վագրերի այնպիսի որզ, ինչպիսին էր թագավորների կոալիցիան: Գործունեության անսահման ասպարեզ»¹:

Զարմանալի է, որ ցարական գրաքննիչը չի ջնջել ամբողջ «իննսուններեքը», քանի որ այն ծայրեծայր համակված է ուսուցուցիոն տրամադրությամբ:

Սաֆարյանի թարգմանության մեջ կարդում ենք, թե ինչպես Հյուգոն դատապարտում է հակահեղափոխությունը, որը «անսանական դիմադրություն էր ցուց տալիս ճշմարտությանը, արդարությանը, իրավունքին, իմացականությանը, աղատագրությանը»: 1793 թ. քաղաքացիական կոխվների պատճառով, ասում է Հյուգոն, տարիներ շարունակ սարսափ տիրեց երկրում, տասնչորս

1 Վիկտոր Հյուգո, իննսուններեքը, Երևան, 1938, էջ 84:

դեպարտամենտներ ավերվեցին, դաշտեր քանդվեցին, հունձերը փլացան, գյուղեր հրդեհվեցին, քաղաքներ կործանվեցին, տներ կողովտվեցին, կանայք ու մանուկներ ջարդվեցին. «Ահա թե ինչ էր այդ պատերազմը, այդ անխիղճ և ազգասպան փորձը» (էջ 214):

Հակահեղափոխականների պարագլուխ մարկիզ որ կանտենակի հոգեբանության մասին հայ ընթերցողը պատկերացում էր կազմում այն հետադիմական մտքերից, որ վերջինս հայտնում է գերի ընկնելուց հետո, հանրապետական Գովենին. «Այն, ինչ մենք ցեխ ենք անվանում,— ասում է նա,— դուք կոչում եք ազգի հարկե դուք չեք պահանջելու, որ ես աղաղակեմ Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն: Այս դահլիճը իմ ազգատոհմի դդյակի մի սենյակն է. առաջ տերերը այստեղ բանտարկում էին շինականներին, բայց այժմ շինականներն են բանտարկում տերերին: Եվ այս հիմարություններին ասում են հեղափոխություն... Բայց այս բոլոր բաները երբեք չեին պատահելու, եթե կախած լինեին Վոլտերին և տաժանակիր աշխատանքների ուղարկեին Ռուսոյին... Ինչքա՞ն թանկ նստեց մեզ այդ գրչակների բարբաջանքը: Դուք ի՞նչ եք ուզում ասել ձեր իրավունքներով, մարդու իրավունքնե՞ր, ժողովրդի իրավունքնե՞ր: Բավական հիմար է այդ ձեր ասածը, բավական զառանցուն և բավական անմիտություն:

Այդ հոյակապ պատմավեպում Հյուգոն ցույց է տալիս, թե հեղափոխական գործիչները ինչպիսի նվիրվածություն են ցուցաբերում դեպի հանրապետությունը և անհաշտ ատելություն դեպի հայրենիքի թշնամիները: Քաղաքական կոմիսար Սիմուրդենը զորաբաժնի հրամանաժառ Գովենին հորդորում է անողոք լինել դեպի

1 Վիկտոր Հյուգո, Իննուներեքը, Թիֆլիս, 1910, էջ 397, 399, 400.

Հակահեղափոխականները, դեպի հին կարգերի ներկայացուցիչները:

Բացատրելով Հեղափոխության նպատակն ու խընդիրները, նա ասում է. «Այս տարին, որի մեջ այժմ ապրում ենք, Հեղափոխության մարմնացումն իսկ է: Հեղափոխությունը մի թշնամի ունի՝ հին աշխարհը, և դրա համար անողորմ է դեպի նա, ինչպես վիրահատը, որ նույնպես մի թշնամի ունի՝ փառախտը, և նույնպես անողորմ է դեպի նա: Հեղափոխությունը բնաջինը է անում թագավորությունը հանձին թագավորի, արիստոկրատիան՝ հանձին աղնվականի, նախապաշտումը՝ հանձին քահանայի... մի խոսքով՝ բնաջինը է անում այն ամենը, ինչ որ կոչվում է բռնապետություն, հանձին այն բոլորի, որ կոչվում է բռնապետ: Այս գործողությունը սարսափելի է և Հեղափոխությունը կատարում է այդ վստահ ձեռներով: Իսկ ինչ վերաբերում է առողջ մսի քանակության, որ պետք է զոհ բերել, հարցրու Բոերհավին, թե նա ի՞նչ է մտածում դրա մասին: Ո՞ր ուսուցն է, որ հատանելիս առողջ արյուն չեն կորցնում: Ո՞ր երդիքն է, որ հանգնելիս չեն զոհ բերում շինության անվնաս մի մասը: Այս ահավոր անհրաժեշտությունները հաջողության պայմաններն իսկ են... Հեղափոխությունը անձնվեր է կատարում իր այդ ճակատագրական գործը: Նա անդամահատում է, բայց և փրկում է... Նա քաղաքակրթությունը ենթարկում է մի խոր վիրահատության, որտեղից պիտի դուրս գա մարդկային ցեղի առողջությունը» (էջ 254):

Գրքում մեծ հետաքրքրությամբ կարգացվում են նաև ամամարտի, Փարիզում տիրող Հեղափոխական խանդավառության, Վանդեայում հանրապետական և միապետական բանակների կոփվների, Տուրգ ամրոցի գրավման և այլ դրվագների նկարագրությունները, որոնք հագեցված են խոր դրամատիզմով:

«իննսուներեքը» իր բովանդակությամբ համահնչուն լինելով ռեակցիայի ժամանակաշրջանում բոլղեկիլյան կազմակերպությունների պրոպագանդած մարտական գաղափարներին, հայ ընթերցողներին ոգեշնչում էր սխրագործությունների, բազմաթիվ օրինակներով և առելությամբ համակռնմ նրանց դեպի միապետությունն ու հակահեղափոխությունը:

Հայտնի գրականագետ Հ. Սուրխանյանը «իննսուներեքի» թարգմանության մասին 1912 թ. «Մշակում» տպագրած իր գրախոսականի մեջ մարքսիստական դիրքերից վերլուծելով վեպի բովանդակությունը, հատկապես ընդգծում է նրա քաղաքական-հասարակական նպատակասլացությունը: Այդ գրախոսականից բերում ենք որոշ պարբերություններ, որոնք վկայում են, թե վեպում արձարձված խնդիրները ինչպիսի այժմեականություն էին ներկայացնում հեղափոխական շարժման նոր վերելքի այդ տարիներին:

«Ահա ոռոմանտիկ պարուրանքներում ամփոփված պատմական մի կլասիկ վեպ՝ Վիկտոր Հյուգոյի «իննսուներեք»-ը:

«Ֆրանսիական մեծ հեղափոխության արյունոտ տարիներից մեկն է դա...

«Ալեկոծված երկիրը տարութերվում էր պատմական ցաման ժայթքումներով: Երկու տիտանական ուժեր մաշառում էին իրար դեմ: Ամբողջ Ֆրանսիան հրդեհված էր: Նոր հասունացած, կենսունակ բուրժուազիան ծառացել էր հին, տապալվող ազնվասկետական ավատականության դեմ, ջլախտով խոցված այդ հիդրայի դեմ: Բավական է հակադրել այդ ժամանակվա Փարիզը Վանդեին, որ ամբողջովին պատկերանա երկու հակամետ ուժերի ամբողջ տրագիզմը, հին ու նոր Ֆրանսիայի տրագիզմը:

«... Հին ֆրանսիային աջակցում էր Հին Եվրոպան, Խարուցից շառագունված հորիզոնը շշմեցրել էր բացարձակ միահեծանությունը:

«... Դա մի փոթորիկ էր, որ բարձրացել էր երկու դասակարգերի ճակատագրական կովից, մի փոթորիկ, որի աղբյուրը այդ երկու հակոտնյաների հասարական-տնտեսական կյանքի ծալքերումն էր թաքնված:

«... Վիկտոր Հյուգոն՝ ոռմանտիկ այդ կատարյալ, ամբողջացած ներկայացուցիչը, շատ հետաքրքրական գույն է տվել այս պատմական վեպին: Իր սինթետիկ ոճը՝ դա ինքը Հյուգոն է: Այս վեպի մեջ նա տվել է ֆրանսիական մեծ հեղափոխության 93 թվի սոսկ շարժման պատկերը, առանց շեշտելու նրա բազմածալ պատճառները:

«... Ռեակցիոն Վանդեի ապստամբությունը նկարագրելիս Հյուգոն տալիս է ուղղակի կենդանի պատկերներ: Բայց այդ պատկերները միայն արտաքինով շնորհական մեջ կա Վիկտոր Հյուգոյի դրած ուրույն բովանդակությունը: Կանգնած լինելով հանրապետության կողմը, նա անտառուտ Վանդեն խավար էր անվանում, իսկ ազատ կեռը՝ փայլուն ճաճանչներով պատկանում:

«... Արժե կարդալ գրչի վարպետի այս ոռմանտիկական արտադրությունը՝ պատկերացնելու համար ֆրանսիական մեծ հեղափոխության այդ հախուն ու տենդու շրջանը, այլև պատկերացնելու համար, թե որպիսի ողբերգական հեռանկարներ ունի իր առջև առհասարակ հնի ճակատագրական պայքարը կայտառ ու կենսունակ նորի դեմ»¹:

Այս վերջին տողերում, խոսելով առհասարակ հնի և նորի ճակատագրական պայքարի մասին, և մատնանշելով հնի ողբերգական հեռանկարը, գրախոսն, ամենայն

¹ «Մշակ», 1912, № 66, էջ 3:

Հավանականությամբ, ակնարկում է ցարիզմի հետագա
տապալումը:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նախօրյակին
վ. ի. կենինը իր «Սպառնացող աղետը և ինչպես պայքա-
րել նրա դեմ» աշխատության մեջ նշում է, թե ֆրան-
սիացիները 1792—1793 թթ. իսկական ռեռլյուցիոն դա-
տաստան տեսան իր դարն ապրած ֆեոդալիզմի հետ և
հերոսական հայրենասիրության ու ռազմական սխրա-
գործության հրաշքներ գործեցին: Կենինը գտնում է, որ
ֆրանսիական հեղափոխության պատմությունից կարելի
է օրինակ վերցնել: «Ֆրանսիայի օրինակը մեզ ասում է
մի բան և միայն մի բան. Ռուսաստանը պաշտպանունակ
դարձնելու համար, այստեղ էլ մասսայական հերոսու-
թյան «հրաշքների» համար համար պետք է «յակո-
բինյան» անողոքությամբ ոչնչացնել բոլոր հինը և Ռու-
սաստանը տնտեսապես նորոգել, վերածնել»¹: Հնի դեմ
պայքարելու և հաղթանակ տանելու համար կենինը, ինչ-
պես տեսնում ենք, պահանջում է սիմուրդենյան անողո-
քություն:

Մինչեւ ռեակցիայի տարիներին Անդրկովկասում
ուժեղանում էր ցարական կառավարության ճնշումը,
նույն տարիներին Երիտասարդ թուրքերի կառավա-
րությունը սաստկացնում էր Հալածանքները Արևմտա-
Հայաստանում: Ինչպես հայտնի է, Երիտասարդ թուրքե-
րի կուտակցությունը 1909 թվականին կազմակերպեց
Աղանայի եղեռնը, որի ընթացքում սպանվեցին երեսուն
հազար հայեր, թալանվեցին ու ավերվեցին բազմաթիվ
հայկական գյուղեր:

Աղանայի ջարդից հետո հայ մտավորականներից
շատերը մի անգամ ևս համոզվեցին, որ արևմտահայ
ժողովրդի փրկությունը Ռուսաստանի օգնությամբ Հա-

¹ Վ. Ի. Անդրեյ, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր II, Երևան,
1948, էջ 112:

յաստանի հետ միավորվելու մեջ է և թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի Ավետյաց երկիրը Հայաստանն է։ Հավանաբար այդ նկատառումով էր, որ Պոլսի պատրիարք Եղիշե Դուրյանը 1911 թ. «Ամենուն Տարեցուց»-ի մեջ լույս է ընծայում Հյուգոյի «Մովսես Նեղոսի վրա»¹ բանաստեղծությունը, որի նախավերջին տնում ասվում է.

Ալ մի՛ ողբար, Հակո՛ր, աքսորդ Հոգնատղետ,
Մի՛ խառներ լացքըդ նեղոսի ալլաց հետ:
Հորդանանու ափն է բաց,
Պիտի զա օր մ՞ ուր թշնամվուն երևեն
Բստրուկ ցեղին տեսնե փախուստը Գեսեմ
Դեպի երկիրն Ավետյաց:

Հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում և քաղաքական տարրեր իրազարձությունների առթիվ հաճախ թարգմանված այս բանաստեղծությունը նշանակալից է հատկապես այն հուսագրիլ խոսքերի համար, որոնք հարազատորեն արտացոլում են ճնշված հայ ժողովրդի դարավոր իդը։ Ուշագրավ է, որ այդ երկը ոգեկոչվել է ամեն անգամ, երբ պատմական ինչ-ինչ իրադրությունների բերմամբ առանձնապես ուժեղացել է Հայաստանի հետ միավորվելու ձգտումը։ Այն թարգմանվել է 1859 թվականին՝ հայ ազգային զարթոնքի շրջանում, այնուհետև՝ ոռւս-թուրքական պատերազմի ընթացքում, երբ այնքան մոտ էր թվում հայ ժողովրդի երկու հատվածների միավորման հեռանկարը, և վերջապես՝ Աղանայի մասսայական զարդից կարճ ժամանակ անց, երբ Բալկանյան երկրների ճնշված ժողովուրդները պատերազմի էին պատրաստվում թուրքիայի դեմ և արևմտահայերի աշքում նորից շողջողում էր հետագա միավորման հույսը։

1 Թեոդիկ, Ամենուն Տարեցուցը, Պոլիս, 1911, էջ 358։

Երիտասարդ թուրքերի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունը, որը ձգուում էր ձուկել օսմանյան կայսրության մեջ ապրող ոչ թուրք ժողովուրդներին՝ Հայերին, Հրեաներին, Հույներին, Ալավոններին, Ակսել էր հետզհետե ավելի սաստկացնել նրանց դեմ հալածանքները։ Բայց այդ հալածանքները, իրենց հերթին, ճնշված ժողովուրդների ներսում առաջացնում էին ապստամբական տրամադրություններ, որոնք գնալով ավելի ու ավելի էին ուժեղանում։ Այդպիսին էր քաղաքական ընդհանուր իրադրությունը, եթե 1911 թվականին Պոլսում լույս տեսավ «իննսուներեքը» վեպի արևմտահայերեն լրիվ թարգմանությունը¹։ Գրքի սկզբում հրատարակիչները՝ Երվանդ Մորլյանն ու Գաբրիել Հովհաննիսյանը զետեղել են մի առաջարան, որտեղ ասված է. «Վիթոր Հյուկոյի «իննսուներեքը» ֆրանսական մեծ հեղափոխության ամենեն հուզիչ գրվագը կը պատկերացնե... Հայ ժողովուրդին համար, որ ճշմարտապես հեղափոխական ազգ մը եղած է, շատ հրահանգիչ դասեր կը պարունակեն Ֆրանսայի հեղափոխության պատմությունը վերլուծող և անոր զանազան գրվագները պատկերացնող վեպեր, որոնց մեծագույն մասը անծանոթ մնացած են մեզի՝ երեսնամյա բռնապետության շրջանին մեջ»։

Բայց քանի որ սովորան Աբգուշ Համիդի երեսնամյա բռնակալության շրջանն արդեն վերջ էր գտել, հետաքրքիր է, թե ինչու «իննսուներեք»-ի հրատարակիչներն ուզում էին «հեղափոխական» հայ ազգին «հրահանգիչ դասեր» տալ ֆրանսիական հեղափոխության պատմությունից։ Ո՞ւմ դեմ ապստամբելու համար էին այդ հրահանգիչ դասերը, եթե ոչ Երիտասարդ թուրքերի կառավարության դեմ։

1 «իննսուներեքը» հրատարակվել է նաև Բոստոնում (ԱՄՆ) 1910 թվականին, Ա. Գույումճյանի թարգմանությամբ։

Արդարեւ, 1911 թվականին, երբ ազգային-ազատաւորական շարժումը վերելք էր ապրում Օսմանյան կայսության լծի տակ հեծող ժողովուրդների մեջ, երբ Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան և Հունաստանը պատրաստվում էին զենք բարձրացնել Երիտասարդ թուրքերի կառավարության դեմ, և շուտով բռնկվելու էր Բալկանյան պատերազմը, վերոհիշյալ առաջարկանը այլ բան չէր, եթե ոչ քողարկված պայքարի կող՝ ուղղված հայ ժողովրդին:

Հրատարակիչների նպատակը ավելի բացորոշ է դառնում, երբ կարգում ենք առաջարանի հաջորդ տողերը. «Կը հուսանք թե Ֆրանսայի հեղափոխության վրա խոսող «իննսուներեքը» անուն վեպին հայերեն բոլորովին նոր և սահուն թարգմանությունով հրատարակումը պիտի գնահատվի ընթերցող հասարակության կողմե, ինչ որ պիտի քաջալերե մեզ՝ հետզհետե ուրիշ նոր և հոչակավոր վեպեր ծանոթացնելու մեր հասարակության»: Նշանակում է, որ հրատարակիչները մտադիր էին «իննսուներեքից» հետո հետզհետե լույս ընծայել «հրահանգիշ դասեր» պարունակող այլ աշխատություններ ևս: Եվ իրոք, գրքի վերջում գալում ենք հետևյալ հայտարարությունը. «Քիչ օրեն պիտի սկսինք հրատարակել անմահն թուլթոյի «Պատերազմ և խաղաղություն» անուն հոչակավոր գործը, որ Եվրոպայի բոլանդակ գրական աշխարհը սարսած է իր իմաստասիրական ցնցող տեսություններովը: Թուլթոյ այն հուժկու միտքերեն մեկն է, որ բնատուր ձիրքն ունի ամբողջ սերունդ մը ցնցելու, և արմատացած գաղափարներ ու տեսություններ հիմնահատակ քանդելու» և այլն: Լ. Տոլստոյի վեպի ընտրությունը ևս պատահական չէր: «Պատերազմ և խաղաղությունը» կոչված էր Արևմտահայաստանի հայերին ոգեշնչելու օտարերկրյա զավթիչներին զախշախող և մայրենի հողից դուրս վոնդող ոուս ժողովրդի օրինակով:

Բալկանյան պատերազմի ամենաբուռն շրջանում
0ննիկ Զիֆթի Սարաֆը թարգմանում և Պոլսի «Բյուզան-
դիոն» լրագրում պարբերաբար տպագրում է Հյուգոյի
«Մի ոճրագործության պատմությունը» գիրքը, որ թարգ-
մանիչը վերնագրում է «Պետական հարվածի մը պատ-
մությունը»¹: Հանճարեղ հեղինակի այդ ծավալուն պար-
սավագրի թարգմանությունը սկսում է լույս տեսնել
1912 թ. նոյեմբերին և վերջանում 1913 թ. ապրիլին:
Հիշյալ գրքում Հյուգոն հուշերի ձևով տալիս է Նապոլեոն
III-ի կատարած պետական հեղաշրջման մանրամասն
պատմությունը և նկարագրում, թե ինչպես Նապոլեոնը,
ժողովրդի քվեարկությամբ հանրապետության նախա-
գահ ընտրվելուց հետո, դրժեց հանրապետությանը ծա-
ռայելու և Սահմանադրությանը հավատարիմ մնալու
խոստումները, դավաճանեց հեղափոխությանը, ժողո-
վրդին զրկեց քվեարկելու իրավունքից, կոտորեց Փա-
ռիզի ըմբռստացող բնակիչներին, բայց ի վերջու իր
պատիճը կրեց. Փրանկո-պրուսական պատերազմում
ամոթալի պարտություն կրելով՝ նա գահընկեց եղավ և
ողորմելի ձևով հեռացավ պատմության թատերաբեմից:

Ավելի վատթար վարվեցին Երիտասարդ թուրքերը:
Սուլթան Համիդին տապալելուց հետո իշխանության
գլուխն անցնելով, նրանք ոչ միայն անամոթաբար դրժե-
ցին ոչ թուրք ժողովուրդներին ինքնավարություն շնոր-
հելու իրենց խոստումները, այլև սուլթանից ոչ նվազ
դաժան հալածանքներ սկսեցին այդ ժողովուրդների դեմ,
1909 թ. կազմակերպեցին հայերի ջարդը Աղանայում:

Թուրքական բանակի կրած պարտությունները 1912
թվականին՝ Բալկանյան պատերազմում, հայերին առիթ
տվեցին նորից բարձրացնելու Հայկական հարցը, պա-
հանջելու բարենորոգումներ և ինքնավարություն Արև-
մբտահայաստանի նահանգներում: Սակայն հակոտնյա

1 «Բյուզանդիոն», 1912, № 4884-ից մինչև 1913 թ. № 5030:

շայեր ունեցող մեծ պետությունները անվերջ ձգձգեցին Հայկական հարցը, մինչև որ ծագեց առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթացքում, Գերմանիայի թելադրությամբ, թուրքական կառավարությունը 1915—1916 թթ. մեկ միլիոն հայերի գաղանաբար կոտրեց:

Հայկական կոտորածների առթիվ արևելահայ մտավորականության ապրած վշտի ահագնությունը պատկերելու համար Շիրվանդադեն 1915 թ. «Մշակում» տպագրած իր «Որքան հեշտ է» հոդվածում գրում է. «Վիկտոր Հյուգոն մի գեղեցիկ համեմատություն ունի: Մարդկային սիրտը,— ասում է նա,— նման է սպունգի. երբ նա արդեն ծծել է որոշ քանակությամբ վիշտ և լիացել, այնուհետև օվկիանոսներ կարող են անցնել նրա վրայով, և ոչինչ»: Ապա շարունակում է. «Հայ սիրտը վաղուց է լցվել դառնություններով: Եվ գուցե այդ է պատճառը, որ այլևս ոչ մի գերմարդկային վիշտ չի հուզում նրան»¹: Շիրվանդադեն շի նշում, թե որտեղից է վերցրել Հյուգոյի վերոհիշյալ պարբերությունը: Պրատումներից պարզվեց, որ նա վերցրել է «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպից, որտեղ ասված է. «Մարդկային սիրտը կարող է սպարունակել հուսահատության որոշ քանակություն միայն: Երբ սպունգը ներծծվել է, ծովն էլ վրայից անցնի, չի կարող մի կաթիլ անգամ մտցնել նրա մեջ»²:

Ինչպես հայտնի է, թուրքական կառավարությունը մասսայական ջարդերը սկսեց 1915 թ. դարնանը: Նույն տարվա ապրիլին Թիֆլիսի «Մշակը» տպագրում է Բուխարեստի սեփական թղթակցի «Բալկանյան սուրհանդակ» վերնագրով քաղաքական տեսությունը, որտեղ հեղինակը (կ. Շահնաղարյան) հույս է հայտնում, թե եռյակ համաձայնության պետությունների բանակները

1 «Մշակ», 1915, № 168:

2 Վիկտոր Հյուգո, Փարիզի Աստվածամոր տաճարը, թարգմ. Վահե Միքայելյանի, Երևան, 1953, էջ 419:

շուտով կջախջախսն Գերմանիայի ուազմական ուժը և կաղատագրեն փոքր ազգերին: Այնուհետև նա ավելացնում է. «Կարծե, որ այժմ գերման բանակին մեջ գտնվող ժիր ու փորձառու զորականները վերհիշեն Վիկտոր Հյուգոյի այն խոսքերը, զոր 1870 սկզբ. 9-ին ուղղեց գերմանացիներուն, որոնք Փարիզը խորտակելու, Ֆրանսան բոլորովին զինաթափ ընելու համար կքալեին ֆրանսացիներուն վրա»:

Հիշյալ պատմական վավերագրում Վիկտոր Հյուգոն գերմանական զորքերին կոչ էր անում խնայել Ֆրանսիայի մայրաքաղաքը: Հայրենասեր պոետը միենույն ժամանակ օրինական հպարտությամբ ընդգծում էր իր ժողովրդի աննվաճ ոգին և դիմադրելու պատրաստակամությունը: Բայց Շահնաղարյանը Հյուգոյի կոշից ընտրում է միայն մարտաշունչ արտահայտությունները: Այսպես, օրինակ. «Փարիզ երբ ըմբռստանա, Փարիզ երբ պաշտպանվի բոլոր ֆրանսացիներեն, կրնա հաղթել ու պիտի հաղթե... Զէ՛, Փարիզը չի կործանիր... իսկ եթե հաշողիք—բարսյապիս մեծցուցած, սրբագործած պիտի սլաք զայն... Այդ շիրիմը պիտի զոշէ՝ Աղատություն, Հավասարություն, Եղբայրություն... Գերմաննե՛ր, եթե կուղեք՝ համառեցեք. Փարիզը պիտի պաշտպանե ինք-պինք...» և այլն:

Հոդվածագիրը գերմանական գեներալներին խորհուրդ է տալիս՝ շմոռանալ Հյուգոյի նախազգուշացումը և լավ իմանալ, որ իրենց դեմ կանգնած է ֆրանսիական քաջամարտիկ բանակը: Այնուհետև նա շարունակում է. «Բալկանյան հորիզոնի վրա ծոյակ համաձայնության վերջնական հաղթանակի հավատը օրե օր կզորանա, հոգ չէ թե անդին՝ պոլսական նեղուցներեն ներս փակված թալիաթ բեյն ու արբանյակները կհոլովեն ու կկրկնեն իրենց հին սխալները... Կխորհիմ թե Համաձայնության պետությունները պիտի կարողանան գրավել Դարդանե-

լը թե՛ ցամաքեն, թե՛ ծովեն, և պիտի կրնան կտրել Կարպատյան շղթան, գրավելով միևնույն ատեն էրզրումն ու Վանը»¹:

Ի դեպ, Վանի գրավման վերաբերյալ Շահնազարյանի կանխատեսությունը շուտով իրականացավ, ճիշտ մեկ ամիս հետո հայ կամավորները ոռւսական զորքերի հետ գրավեցին այդ հերոս քաղաքը, որի հայ բնակիչները առասպելական քաջությամբ դիմադրում էին թուրքական բազմապատիկ ուժերին:

Ուշագրավ է այն փաստը, որ Հյուգոյի վերոհիշյալ կոչի թարգմանությունը նույն՝ 1915 թվականին տպագրվում է նաև Պոլսում, Թեոդիկի «Ամենուն Տարեցուցի» մեջ, բայց բոլորովին տարբեր ոգով ու նպատակով: Թեոդիկը իր առաջարանի մեջ բացարում է, թե 1870 թվականին, երբ պրուսական հաղթական բանակը մոտեցել էր Փարիզի դռներին, Վիկտոր Հյուգոն գրել էր մի կոչ, որը ֆրանսիրեն և գերմաներեն լեզուներով ցրել են ներխուժող բանակի մեջ. «Արյունի այդ թվականեն ի վեր,— շարունակում է Թեոդիկը,— քառասունհինգ տարիներ անցած են թեև, բայց համեմուպական այս տիեզերասաստ պատերազմին՝ իր ցնցող այժմեռությունը կվերստանա այդ կոչը»²:

Բայց ի՞նչ իմաստով Հյուգոյի կոչը «ցնցող այժմեռություն» էր վերստանում 1915 թվականին, Թեոդիկը այդ չի բացատրում, կամ գուցե զգուշանում է բացատրել: Այդ այժմեռությունը, համենայն դեպս, չէր կարող որևէ առնչություն ունենալ Ֆրանսիայի հետ, քանի որ 1915 թվականին ուազմական գործողությունների նախաձեռնությունն ու առավելությունը ֆրանսիական բանակի կողմն էր: Պարզ է, որ Թեոդիկը այդ կոչը փաստորեն ուղղել էր հենց թուրքերին, որոնք այդ օրերին ոչնչաց-

1 «Մշակ», 1915, № 84, էջ 2:

2 Թեոդիկ, Ամենուն Տարեցուցը, Կ. Պոլիս, 1915, էջ 217:

նում էին հարյուր հազարավոր հայերի, ավերում հայկական գյուղերն ու քաղաքները, պաշարում և գնդակոծում ինքնապաշտպանության օջախները։ Միայն այդ շարաշուր իրադարձությունները կարող էին ցնցող այժմեռություն ներկայացնել յուրաքանչյուր հայի համար՝ 1915 թվականին։

«Տարեցուցում» զետեղված թարգմանության մեջ կարդում ենք. «Դուք հանկարծ վրա հասաք, մեկի դեմ տասն եկաք։ Մեր զորականները ստոիկյան արիությամբ ջարդվեցան ձենե։ Այնպես որ, մինչև այսօր, այս ահավոր պատերազմին, Բրուսիա շահեցավ հաղթությունը, բայց Ֆրանսա ստացավ փառքը... Դուք կկարծեք, որ տալիք վերջին հարված մըն ալ ունիք. խուժել թարիզի վրա, օգուտ քաղել այն ժամեն, ուր մեր բանակը խաբված, մատնված, տապաստ ինկած է ռազմադաշտին վրա, որպեսզի դուք՝ 700.000 զինվորներդ, ձեր մարտական մեքենաներով, խորտընկեցներով, պողպատե թնդանոթներով, Քրուքի ոսմբերով, Տրայզնի հրացաններով, անթիվ-անհամար հեծելազորքով հարձակիք իրենց պատնեշներուն վրա կանգուն 300 քաղաքացիներու վրա, սարսափահար ընտանիքներով լեցուն քաղաքի մը վրա, ուր կիներ, բույրեր և մայրեր կան...»։

Եթե վերեկի տողերում գերմանացի բառի փոխարեն թուրք, Քրանսացու փոխարեն հայ, Փարիզի փոխարեն վան, Զեյթուն կամ Շատախ դնենք, ապա Հյուգոյի կոչք նոր իմաստավորում կստանա և միաժամանակ կպարզվի, թե ինչո՞ւ էր «ցնցող այժմեռություն» ներկայացնում մեծ եղեռնի օրերին։

1916 թվականին, երբ հայկական կոտորածները շարունակվում էին չնվազող վայրագությամբ, Թիֆլիսի «Հովիտ» շաբաթաթերթում լուս է տեսնում Հյուգոյի նմանողությամբ գրված «Բելգիային, Լեհաստանին, Սեր-

բիային և Զեռնոգորիալին» վերնագրով մի բանաստեղծություն. բերում ենք հետեւյալ ուշագրավ տողերը.

Զեր հեք վիճակը կործան ու թշվառ,
Որ դարբնեցին ձեղ Գերմանն ու Մանառ,
Դարեր շարունակ մենք վաղուց արգեն
Կրում ենք մեզ վրա անօրեն թուրքեն,

Որ այսօր դրանց հետ կամավ միացած,
Եվ նախակին ստրկի թիկունքը ստացած,
Քանդում են անխնա ձեր քաղաք-գեղեր,
Մեզ պես արնալից դարձրին շատ տեղեր...

Բայց մի՛ վճառիք, մեծ է և հզոր
Արարչի վճիռն արդար, իմաստուն.
Կը զառնա արև, կը զա մի նոր օր,
Նորից կը կանգնեք ավերած ձեր տուն:

Ճիվազ Խորհուրդը սադայիւական
Գաշավեժ եղած կը գլորվի անդունդ!...

Այս երկում, ինչպես տեսնում ենք, հայ հեղինակը ոչ միայն իր խոր աաելությունն է արտահայտում դեպի «Ճիվազ» թուրք և գերմանական պետություններն ու նրանց դաշնակիցները, այլև միաժամանակ հայտնում իր անսասան հավատը, թե նրանք դատապարտված են կործանման:

Այս երկի տակ որպես ստորագրություն դրված է ոռւսերեն Ա գլխատառը: Հետագայում պարզվեց, որ երկի հեղինակն է հրապարակագիր Նիկողայոս Տեր-Հարությունյանը²:

Համաշխարհային առաջին պատերազմի ավարտից հետո, երբ Եվրոպայի մեծ պետությունները զբաղված էին խաղաղության դաշնագրի վերաբերյալ բանակցություններով, հայ մտավորականության միակ բաղձանքն

1 «Հովիտ», 1916, № 13, էջ 204:

2 Տե՛ս Արամ Բաբայան, Սածկանունների բառարան (անտիպ):

այն էր, որ խաղաղությունը՝ ամուր հիմքերի վրա դրվի և Ելրոպայի պետությունների միջև հաստատվի մշտական համերաշխություն, քանի որ այդ համերաշխությունից էր կախված Հայկական Հարցի բարեհաջող լուծումը. չէ՞ որ մեծ պետությունների հակոտնյա շահերի պատճառով՝ միշտ և ամենից շատ տուժել էր ինքը՝ հայ ժողովուրդը: Ահա այդ նկատառումով 1919 թ. Զարդարյան եղբայրները Պոլսում առանձին բրոցուրով հրատարակում են ժողովուրդների խաղաղության վերաբերյալ Հյուգոյի ճառերը, որ վերջինս արտասանել էր 1849 թվականին: Այդ ճառերը, որ առաջին անգամ թարգմանել էր Ն. Ռուսինյանը 1849 թվականին, այժմ հրատարակվում էին (նույն Ռուսինյանի թարգմանությամբ) նոր իրադրության պայմաններում: Գրքույկի հրատարակիչներն իրենց առաջարանում ասում են. «Այսօր, երբ կիրականան հեղինակին գաղափարները տիեզերական խաղաղության նկատմամբ, երբ հանուր աշխարհ կպատրաստվի խաղաղության մեծ ժողովին, հպարտությամբ կուղեմք մամուլին հանձնել այս թանկագին վավերագիրը»¹:

Հյուգոն այդ ճառերն արտասանել էր 1849 թ. Փարիզում կայացած Խաղաղության բարեկամների միջազգային համագումարում: Առաջին ճառը նա արտասանել էր օգոստոսի 21-ին, իսկ երկրորդը՝ փակման ճառը, օգոստոսի 24-ին:

Մեծ հումանիստն իր ելույթներում զատագովում է մշտական խաղաղությունը, ցանկանում, որ պետությունների միջև եղբայրական համերաշխություն լինի և միաժամանակ ցավէ հայտնում, որ անցած 32 տարիների ընթացքում ելրոպայի պետություններն իրենց անվտանգության համար ծախսել են 128 միլիարդ

¹Տե՛ս «Տիեզերական խաղաղության ժողովին մեջ պարոն Վիքթոր Հյուկոյի խոսած ճառերը», Կ. Պոլիս, 1919:

ֆրանկ, վիթխարի մի գումար, որը եթե ծախսված լիներ գյուղատնտեսության, արդյունաբերության, առևտութի գիտությունների և արվեստի զարգացման համար, ապա ժողովուրդների բարեկեցությունը կավիլանար և, ինչ որ ամենակարևորն է՝ թշվառությունը կվերանար:

Հյուգոն միաժամանակ ընդգծում է եվրոպայում Միացյալ Նահանգներ ստեղծելու անհրաժեշտությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակով, և հավաստիացնում, որ դա կլիներ խաղաղության ամենամեծ երաշխիքը: Նման գեպում, ասում է նա, եվրոպական ժողովուրդները, առանց իրենց ազգային ինքնուրուցնությունը կորցնելու, կմիանային մի ընդհանուր եղբայրակցության մեջ, կստեղծին մի միացյալ գերագույն իշխանություն, որը կղեկավարեր Եվրոպայի գործերը, խորհրդակցաբար օրենքներ կհորիներ, քվեարկությամբ որոշումներ կընդուներ, իսկ ազգամիջյան տարածայնություններն ու վեճերը կկարգավորեր հաշտարար միջնորդությունների միջոցով:

Մեծ բանաստեղծն իր երկրորդ ճառը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Թող այս օրս հիշատակարժան օր լինի, կոտորածների և պատերազմների վերջը նշանակի, թող աշխարհի խաղաղության և տիեզերական համաձայնություններ սկիզբը հանդիսանա»:

Կարելի է պատկերացնել, թե այսպիսի վարդագույն հեռանկարները որքան ըղձափ էին կոտորված, մասնաւութած, խաղաղության կարոտ արևմտահայերի համար:

Նույն 1919 թվականին, Հովհաննես Ասպետը (Օննիկ Զիֆթե Սարաֆը) Պոլսում հրատարակում է «Պատերազմ և խաղաղություն»¹ վերնագրով մի գրքույկ, որտեղ զետեղում է Հյուգոյի այն օբագրերը, որոնք նվիրված են խաղաղության, ինչպես և եվրոպական Միացյալ Նա-

1 Վիքրոր Հյուկո, Պատերազմ և խաղաղություն, Կ. Պոլիս, 1919:

Հանգների հարցերին։ Թարգմանիլը իր առաջաբանում
բացատրում է, թե դեռևս անցյալ դարի 70-ական թվա-
կաններին Վիկտոր Հյուգոն երազել էր դեմոկրատիայի
վերջնական հաղթանակը, համաշխարհային խաղաղու-
թյան հաստատումը, Եվրոպայի Միացյալ Նահանգների
ստեղծումը... Զիֆթե Սարաֆը շտապել էր Հյուգոյի երա-
զանքն իրականացած համարել, ելնելով սոսկ այն փաս-
տից, որ եռյակ համաձայնության տերությունները հաղ-
թել էին Գերմանիային, Խաղաղության միջազգային
ժողով էր կազմվել և Ազգերի ընկերություն ստեղծվել։
Ի դեպ, այդ օրերին Ազգերի ընկերությունը շատերին
թվում էր մի գերազույն իշխանություն, որը պիտի պահ-
պաներ աշխարհի խաղաղությունը և պիտի ղեկավարեր
Եվրոպայի քաղաքական գործերը, այնպես, ինչպես
Հյուգոն էր պատկերացնում իր «Եվրոպայի Միացյալ
Նահանգները»։

Զիֆթե Սարաֆի թարգմանած գրքույկում հայ ընթեր-
ցողները կարգում էին Հյուգոյի հետևյալ խոհերը. «Պիտի
ունենանք Եվրոպայի այն Միացյալ Նահանգները, որ
պիտի պսակեն հին աշխարհը, ինչպես Ամերիկայի
Միացյալ Նահանգները կպսակեն նոր աշխարհը։ Աշ-
խարհակալության ոգին այլակերպված պիտի ըլլա գյու-
տերու ոգիին, ազգերու վեհանձն եղբայրակցությունը
պիտի ունենանք կայսրերու վայրագ եղբայրակցության
տեղ. պիտի ունենանք հայրենիքը առանց սահմանա-
գլուխի... առևտուրը առանց մաքսատան, շրջաբերու-
թյունը առանց պատվարի, կրթությունը առանց անբա-
նացումի, երիտասարդությունը առանց զորանոցի,
քաջությունը առանց կովի, արդարությունը առանց կա-
խաղանի... արորը առանց թուրի, խոսքը առանց բերա-
նակապի, խիզճը առանց լծի, սիրտը առանց ատելու-
թյան։ Քաղաքակրթության ահռելի կապանքը պիտի
քակվի... Աշխարհի վրա պիտի հոսի լույսի հեղեղ մը։

Եվ ի՞նչ է այդ լուսը։ Աղատությունն է։ Եվ ի՞նչ է այդ աղատությունը։ Խաղաղությունն է»։

Ինչ խոսք, որ արևմտահայ մտավորականները վերաբարապարակելով Հյուգոյի մտքերը, մոռանում էին ժամանակների տարբերությունը։ Եվրոպական պետությունները արգեն վաղուց բռնել էին իմակերիալիստական քաղաքականության ուղին։ Սին պատրանքներ էին նաև «Ազգերի ընկերության» (Ազգերի լիգայի) հետ կապված հույսերը։ Անցյալ դարի 70-ական թվականներին Հյուգոն Եվրոպայի Միացյալ Նահանգների լոգունգը փայփայում էր՝ ի գեմս այդ կազմակերպության տեսնելով պատերազմը կանխելու ամենահուսալի միջոցը։ Բայց հետագայում նույն հարցը քննելով իմակերիալիզմի ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական տեսակետներից Վ. Ի. Լենինը իրավացիորեն մատնանշում է, որ կապիտալիստական երկրների այդպիսի կոռալիցիան կարող է միացյալ ճակատ կազմել վերելք ապրող սոցիալիզմի դեմ, իսկ մյուս կողմից ազգերի ճնշման և հարստահարման գործիք հանդիսանալ։ Իր «Եվրոպայի Միացյալ Նահանգները լոգունգի մասին» հոդվածում Լենինը 1915 թ. գրում է. «Ի՞արկե կապիտալիստների միջև և տերությունների միջև ժամանակավոր համաձայնությունները հնարավոր են։ Այդ իմաստով հնարավոր են նաև Եվրոպայի Միացյալ Նահանգները, որպես Եվրոպական կապիտալիստների համաձայնություն... ինչի՞ մասին։ Միայն այն մասին, թե ինչպես միասին Եվրոպայում ճնշեն սոցիալիզմը, միասին պաշտպանեն կողոպտած դադութներն ընդդեմ ձապոնիայի և Ամերիկայի, որոնց ծայր աստիճան զրկել են գաղութների այժմյան բաժանման ժամանակ...»¹։ Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, Լենինը եզ-

¹ Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր երկու երկու հատորով, հատ. 1, Երևան, 1948, էջ 787։

րակացնում է, թե կապիտալիզմի օրոք Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծումը ըստ Էռլիշյան ռեակցիոն է:

Արևմտահայ առաջավոր գործիչները 1919 թ. ոգեշնչվելով Հյուգոյի ուրվագծած վարդագույն Հեռանկարից, անտեսում էին այդ տարբերությունը և միաժամանակ մոռանում, որ Եվրոպական մեծ տերությունները, որպես գաղութատիրական պետություններ, իրենց բուն էռլիշյամբ՝ թույլ ժողովուրդներին ճնշողներն ու կեղեքիշներն են: Նրանք շեխն գիտակցում, որ ճնշողից՝ ճնշվածի համար պաշտպանություն ակնկալելը պարզապես միամտություն է:

Հայ հասարակական գործիչները շուտով հասկացան իրենց սխալը, երբ արևմտյան մեծ պետությունները Վերսալի դաշնագրում բոլորովին անտեսեցին Հայկական Հարցը:

13

Քսաներորդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում Հյուգոյի դրամաներից նորանոր թարգմանություններ են կատարվել թե՝ ընթերցանության և թե՝, մանավանդ, հայ բեմի վրա ներկայացնելու համար:

1901 թ. Հակոբ Տեր-Գևորգյանը բնագրից շափածո թարգմանում է «Էռնանին», որը և առանձին գրքով լույս է ընծայում 1908 թ. Բաքվում:

Տեր-Գևորգյանը նույն տարեթվին ֆրանսերենից թարգմանում է նաև (դարձյալ շափածո) «Մյուի Բլաս» դրաման, որը սակայն չի տպագրվում: Նրա ձեռագիրը, որն այժմ պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում¹, կրում է Թիֆլիսի գրաքննիչի ստորագրությունն ու թույլտվությունը՝ պիեսը բեմադրելու մասին:

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Ճռագիր պիեսների ֆոնդ, № ВР-88:

«Բուրգրավները» դրաման 1904—1907 թթ. պարբերաբար տպագրվում է «Բազմավեպում»՝ Կ. Մինասյանի թարգմանությամբ:

Պիհսի վերածված «Թշվառները» թարգմանում է Միքայել Ստամբուլյանը 1915 թվականին. այդ թարգմանությունն օգտագործվում է բեմադրության համար, բայց չի տպագրվում¹:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ դրամաներից միայն «Բուրգրավները» չի ներկայացվել հայ բեմում: Միստիկականությամբ համակված այդ երկում հեղինակը գովերգում է ավատական իշխաններին, որոնց բոնակալությունն ու կամայականությունները նա դատապարտել էր իր նախորդ դրամաներում: Դրա համար էլ հայ առաջավոր միտքը, քննադատաբար մոտենալով այդ դրամային, հրաժարվել է այն բեմադրել:

«Էռնանին» Թիֆլիսում առաջին անգամ բեմադրվում է 1901 թ., Սիրանուշի, Աբելյանի, Զարիֆյանի և Պետրոսյանի մասնակցությամբ: Այդ դրաման Թիֆլիսում նորից է ներկայացվում 1904 թ., նույն գերասանների կողմից:

Թիֆլիսի հայ բեմում «Ծյուփի Բլասը» առաջին անգամ խաղացվում է 1910 թ., Զարիֆյանի, Արմենյանի, Հարությունյանի, Գուրյան-Արմենյանի և Հասմիկի մասնակցությամբ: 1911 թ. նույն պիեսը ներկայացվում է Գորիսում (Խարազյան, Բաբայան), 1914 թ.: Հավլաբարում, իսկ 1915 թ.: Բաքվում:

Կ. Պոլսում հայ բեմի վրա տարբեր ժամանակներում ներկայացվում են «Ծյուփի Բլասը», «Արքայն զբոսնուն» և «Ռուանին»: Վերջինս 1910 թ. բեմադրվում է Աբելյանի, Զարիֆյանի և Արմենյանի մասնակցությամբ՝ այդ խմբի բարեկալան շրջադաշտված ընթացքում:

¹ Հայկական ՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան, Ճեռադիր պիեսների ֆոնդ, № ВР-50:

ի դեպ, «Անջելո» դրաման հայ թատերասերների կողմից թեմադրվել է Թավրիզում 1901 թ.: Արամյան գպրոցի ուսուցիչների և այլ թատերասերների մասնակցությամբ այն ներկայացվում է պարսկերեն (թարգմ. Մ. Փանվելլան) ի պատճիվ Պարսկաստանի գահաժառանգի: Վերջինս, իր բացման խոսքում, ասում է. «Ես և իմ հայերը հայերին միշտ հաշտ աշքով ենք նայել. նրանք մեր պետության մեջ ամեն տեսակ ազատություն վայելել են և պիտի վայելեն: Ի սրտե ցանկանում եմ, որ հայերը միշտ առաջանան»¹: Թագաժառանգը ներկայացումից այնքան գոհ է մնում, որ խնդրում է նույն պիեսը հաջորդ օրը ներկայացնել իր հարեմի կանանց համար:

Պիտի ասել, որ հայ իրականությունից վերցրած կամ այժմեական թեմաներով գրված պիեսների կողքին Հյուգոյի գրամաները գարասկըրի առաջին տասնամյակներում արդեն սկսել էին իրենց նախկին հմայքը կորցնել. նրանք շատերին այլևս հնացած էին թվում: Ելնելով ժամանակի պահանջներից, հայ հանդիսականը բնականաբար գերազասում էր շրջապատի կյանքը պատկերող և ժամանակակից հրատապ հարցեր արծարծող պիեսներ: Բայց, չնայած այդ ընդհանուր տենդենցին, հայ մամուլում եղած հիշատակությունները ցուց են տալիս, որ հասարակության մի զգալի մասը տակալին գոհունակությամբ դիտում էր Հյուգոյի գրամաների ներկայացումները: Օրինակ, 1901 թ. Թիֆլիսում «Էռնանիի» ներկայացման մասին գրած իր գրախոսականի վերջում քննադատ Վ. Նալբանդյանը նշում է. «Ուրախությամբ պետք է նկատել, որ թատրոնում այս անդամ ավելի մեծ հասարակություն կար» («Մշակ», 1901, № 218, էջ 1): «Մյու Բլասի» 1910 թ. ներկայացման առթիվ կարդում ենք. «Ներկայացումը անցավ ընդհանրապես աջող: Թատրոնում կար բավականաշափ հասարակություն»

1 Տե՛ս «Նոր Դար», 1901, № 191, էջ 3:

(«Մշակ», 1910, № 285, էջ 4): Գորիսում 1911 թ. «Ոյու թլասի» ներկայացման առթիվ կարգում ենք. «Ոյու թլասը», որը մինչև օրս տրված ներկայացումների ամենահաջողն էր խաղի կողմից, հասարակության կողմից արժանացավ բուռն ծափահարության» («Հորիզոն», 1911, № 152, էջ 4): Թիֆլիսում 1915 թ. «Թշվառների» ներկայացման առթիվ՝ «Թատրոնը ծայրե ի ծայր լի էր. կարգապահությունը անհամեմատ լավ, քան մինչ այդ» («Մշակ», 1915, № 270): Երևանում 1916 թ. «Թշվառների» ներկայացման առթիվ՝ «Բնդիանուր տպավորությունը բավարար էր: Տոմսերը սպառվել էին» («Աշխատանք», Երևան, 1916, № 10, էջ 3) և այլն:

Այս բոլոր հիշատակությունները վկայում են, որ Հյուգոյի գրամաների ներկայացումները, հակառակ միշտ քննադատությունների, դեռևս ժողովրդականություն էին վայելում XX դարի առաջին տասնամյակներում:

* * *

Մինչև այժմ խոսեցինք Վիկտոր Հյուգոյի միայն քաղաքական-հասարակական բովանդակությամբ երկերի թարգմանությունների մասին: Սակայն պիտի ասել, որ Հայ գրականության մեջ մտել են նաև հանճարեղ պոետի լիրիկական ստեղծագործությունները:

Ումանտիկ պաթոսով համակված Հայ գրողները հափշտակությամբ կարգում էին Վիկտոր Հյուգոյի՝ բնության, սիրո և քնարերգական այլ թեմաներով գրած գործերը, հաղորդակից լինում նրա հոգեզեղ ապրումներին և իրենց նախասիրած երկերը թարգմանում՝ ումանտիկ գրականության լավագույն նմուշները Հայ ժողովրդի սեփականությունը դարձնելու, ընթերցողների գեղարվեստական ճաշակը բարձրացնելու, հումանիստական և

խաղաղասիրական գաղափարներ տարածելու մտադրությամբ:

Հայ գրողներին ամենից շատ գրավել է Վիկտոր Հյուգոյի խոր հումանիզմը, որն ամենաբազմազան երանգներով է բացահայտվում նրա ստեղծագործությունների մեջ: Մեծապես իր քնարով երգում է սերը գեղի մանուկը, գեղի կինը, ծերունին: Նա ամբողջ հոգով կարեկցում է որբերին, որոնք զրկված են ծնողական խնամքից և որոնց սպասում է մութ ապագան, կարեկցում է այն կանանց, որոնց կարիքն ու հոռի կարգերը նետել են անբարյականության վիճը, աղքատին, որը սոցիալական անարդար պայմաններում ապրում է հետին թշվառության մեջ, լրված զառամյալ ծերունիներին, որոնք իրենց կյանքի մնացած օրերը քարշ են տալիս որևէ անկելանոցի խոնավ խցիկներում: Բանաստեղծը կարեկցում է նույնիսկ վիրավոր գետնագորտին, ցրտից գողացող անբույն թռչնիկին:

Հյուգոյի հումանիզմով թաթափուն լիրիկական լավագույն ստեղծագործությունները տարբեր ժամանակներում մտել են մեր գրականության մեջ, այն էլ հաճախ մի քանի տարբեր թարգմանություններով, հանգամանք, որն ինքնին մի վկայություն է այդ երկերի վայելած ժողովրդականության մասին: Այսպես, օրինակ. «La prière pour tous»¹ բանաստեղծությունը ունեցել է շուրջ թարգմանություն: Ըստ մեր ունեցած տվյալների, այն եղել է Հյուգոյի պոեղիայից հայ գրականության մեջ մտած առաջին երկը, որ 1853 թ. գրաբար լեզվով թարգմանել է Խորեն Նար-Պելը և վերնագրել «Աղոթք հասարակաց»²: Հետագայում, նույն բանաստեղծությունը թարգմանել է Անթեոս Պերպերյանը, դարձյալ գրաբար,

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Feuilles d’Automne, p. 36.

2 «Բաղմալեպ», 1853, № 12, էջ 181:

«Աղոթք վասն ամենեցուն»¹ վերնագրով, Զ. Բալուղյան՝ ցը՝ «Աղոթք ամենքի համար»², Ալ. Շատուրյանը՝ «Աղոթքիր»³: Սակայն 421 տողանոց այդ ընդարձակ երկից վերոհիշյալները թարգմանել են միայն հատվածներ:

Այդ երկում հեղինակը մանուկին հորդորում է աղոթքել իր ծնողների համար, հիվանդների և ծերերի, շքավորների և դժբախտների, բանտարկյալների, նույնիսկ մեռածների համար: Ահա հիշյալ բանաստեղծությունից մի հատված՝ Ալ. Շատուրյանի թարգմանությամբ.

Աղոթքիր, մանկիկ, մայրիկիդ համար,
Զէ՞ որ քո բարի մայրը անդադար
Քեզ օրորում էր, քեզ գգվում, պաշտում:
Հիշիր զու նույնպես, սիրելի մանկիկ,
Մութը բանտի մեջ շղթայվածներին,
Հիշիր, ով մանկիկ, և նրանց անունն,
Որոնք պառկած են նեղ շիրիմում.
Անտեղ բարի տակ, ու հողի գրկում
Նորա տանջլում են, պետք է աղատել,
Մեղքերի բեռան տակիցը փրկել:
Մանկան խնդիրը մեռած ու կենդան
Վշտալից թշվառ մարդկերանց մասին
Կը թոշէ երկինք կնդրուկի նման,
Կը ծխէ բուրմոնք Տիրոջ աթոռին:

Հյուգոյի հումանիզմի մի այլ արտահայտությունն է «Pour les pauvres» բանաստեղծությունը⁴, որտեղ հեղինակը հարուստներին կոչ է անում ողորմած լինել դեպի աղքատները: Այդ երկը ունեցել է հայերեն հինգ թարգմանություն, որոնցից առաջին երեքը՝ դրաբար: Այն առաջին անգամ թարգմանել է Մխիթարյան միա-

¹ «Ճաշակ ոսկեղին դպրութեան», Կ. Պոլիս, 1886, № 5, էջ 90:

² «Աղբյուր», 1889, № 11, էջ 381:

³ «Հայ լեզու» (դասագիրք 4-րդ դասարանի համար), Ալեքսանդրապոլ, 1913, կազմեց Ա. Փորսուղյան:

⁴ „Oeuvres Complètes“, T. I, Les Feuilles d’Automne p. 30.

բաններից Հ. Գավիթ Նազարեթյանը (Հ. Գ. Ն. ստորագրությամբ) և տպագրել «Բազմավեպում», 1875 թվականին՝ «Վասն աղքատաց»¹ վերնագրով։ Երկրորդ թարգմանությունը, որը պատկանում է Կարապետ Գառագաշյանի գրչին, լույս է տեսել «Մասիսում», 1879 թ., նույն վերնագրով², երրորդը՝ գրող և գրաբարագետ Հակոբ Գուրգենի թարգմանությամբ տպագրվել է 1886 թ. «Ճաշակ ոսկեղէն դպրութեան» հանդեսում՝ «Գթություն»³ խորագրով։ Չորրորդը թարգմանել է Ալ. Շատուրյանը «Ողորմած եղեք»⁴ վերնագրով և լույս ընծայել 1898 թ. իր բանաստեղծությունների ժողովածուում, իսկ Հինգերորդը, որը թարգմանել է պոետ Ալ. Փանոսյանը՝ «Կոչ հարուստներուն»⁵ վերնագրով, գետեղվել է 1912 թ. Պոլսում լույս տեսած «Գանձարան» դասագրքում։

Հետաքրքիր է նշել, որ Կ. Գարագաշյանը հիշյալ երկը թարգմանել է Հատկապես հայկական հիվանդանոցի ինպաստ արվելիք պարահանդեսի առթիվ, որպես կոչ պոլսահայ մհծահարուստներին։ Այդ կապակցությամբ «Մասիսի» խմբագրությունը հետևյալ առաջարանն է գրել. «Դարուս հոյակապ հանձարներեն մին՝ պ. Վիքթոր Հյուկո, որ յուր կորովի և պերճարան գրչովն ընկերային մեծ խնդիրներ կը հուզե, մարդկային օրենսդրության հոռությունները կը քննադատե, հզոր պաշտպան մ'եղած է միշտ թշվառաց դատին, և յուր անմահ զրածներն ընթերցողաց սիրտը հուզելով, կը հարկադրեն զանոնք մտածել և արտավել այն բազմազան թշվառությանց վրա, որովք մարդկությունը կը տառապի յուր ստորին

1 «Բազմավեպ», 1875, հատ. 1, Գ., էջ 41:

2 «Մասիս», 1879, № 2252, էջ 3:

3 «Ճաշակ ոսկեղէն դպրութեան», 1886, № 4, էջ 73:

4 Ալ. Շատուրյան, բանաստեղծություններ, հատ. Բ, Մոսկվա, 1898:

5 «Գանձարան» (թարձրագույն դասընթացք), Կ. Պոլիս, 1912, կազմեց Ա. Անտոնյան։

իսավերուն մեջ: Մեր ուսումնական բարեկամներեն մին՝ Մեծապատիվ Կարապետ էֆենդի Գարագաշյան, մեծանուն հեղինակին մեկ ոտանավոր գրածն (որ խիստ սրտառուց և աղղու հրավեր մ' է առ մեծատունս՝ իրենց գեղազվարճ խրախճանաց մեջ աղքատն հիշելու և անոր ողորմելու) գրաբար ոստանավորի թարգմանած է նախնյաց շափով, հիվանդանոցի պարահանդեսին առթիվ, որ աղքատաց օգնելու սահմանված լինելով, Հյուկոյի հրավիրանաց ճահավորապես կը պատասխանե»:

Հիշյալ երկի առաջին չորս թարգմանություններն էլ կատարվել են ուղղակի ֆրանսերենից և այնքան հարազատ են բնագրին, որ միմյանցից տարբերվում են պարզապես բառերի տեղադրությամբ: Յերենք, որպես օրինակ, թեկուզ առաջին տողը.

Տո՛ւք, մեծատունք, քոյր աղօթից է ողորմութիւն (Հ. Գուրգեն) Տո՛ւք, աղէ՛, մեծատունք. ողորմութիւն քոյր աղօթից

(Կ. Գարագաշյան)

Տո՛ւք, քոյր է, ճո՛խք, ողորմութիւն աղօթից (Դ. Նազարեթյան) Ողորմեցե՛ք, հարուստներ, տուրքն՝ եղբայրն է աղօթքին.

(Ալ. Փանոսյան)

Միայն Փանոսյանի մոտ «քույրը» դարձել է «եղբայր»: Իսկ Ծատուրյանը, որը, ամենայն հավանականությամբ, ուստերենից է թարգմանել, որոշ շափով հեռացել է բնագրից: Բայց Ծատուրյանի մոտ նկատված հեռացումները արդյունք են ոչ միայն մի երկրորդ լեզվից կատարված թարգմանության, այլև թարգմանչի յուրահատուկ վերաբերմունքի: Հայտնի է, որ Ծատուրյանը եղել է սոցիալական անհավասարության զոհերից մեկը, ամբողջ կյանքում ապրել է շքավորության մեջ և իր ստեղծագործություններում դառնությամբ երգել «անարդ բախտից հալածված թշվառի» վիճակը: Ուստի թարգմանելիս նա ձգտել է ընդգծել իր վերաբերմունքը դեպի հարուստները, որոշակիորեն խտացրել է գույները և նույնիսկ իր կողմից ավելացրել մի շարք տողեր, որոնք

բնագրում շկան: Օրինակ, շքեղ դահլիճի նկարագրությունը թարգմանելուց հետո նա իր կողմից ավելացնում է հետևյալը.

Եվ այդքան գանձերն առատ ու անբավարար էն եւ շացնում ձեր աշքը բնավ...

Մի այլ տեղ, աղքատի ծանր վիճակը պատկերելուց հետո, նա իր կողմից հետևյալ խոսքերն է ուղղում հարուստներին.

Բայց զուք, զո՞ւք բախտի հարուստ ընտրյալներ,
Զեղ ի՞նչ փուլի... ձեր կյանքն առատ է, լիցուն...

Սակայն, եթե Ծատուրյանի թարգմանությունը մասսամբ տուժել է հարազատության տեսակետից, ապա մյուս կողմից նրան հաջողվել է ապահովել պոետական չեղվի անկաշկանդ ու սահուն ընթացքը, մի հատկանիշ, որն, անկասկած, բարձրացնում է երկի գեղարվեստական որակը: Որպես ճաշակ, ստորև տալիս ենք մի հատված հիշյալ թարգմանություններից:

Ողորմած եղեք: Ահա՝ զործ վսեմ...
Երբ անտեր մի որբ կամ ծեր մորացկան
Զեր դըռան առաջ ահով տիրադեմ,
Լուս սպասում է ձեր ողորմության,
Եվ դուք մնում եք անհոգ, անտարբեր—
Դուք տիրոջ սիրտն եք խոցում, հարուստներ:

Ծատուրյանը Հյուգոյի քնարերգական պոեմիայից թարգմանել է նաև «Թոշնիկներ», «Գետի ափին» և այլ բանաստեղծություններ: Այդ թարգմանություններում ևս նկատվում են մի շարք հեռացումներ, որոնք պարզապես արդյունք են Ծատուրյանի սուրյեկտիվ վերաբերմունքի:

«Թոշնիկներ» երկում հեղինակը պատմում է, թե ինչպես մանուկ հասակում բներից որսում էր թոշունների ձագերին, նրանց պահում իր հյուսած վանդակի մեջ: Երբ նրանք մեծանում ու թևավորվում էին, պոետը նրանց

արձակում էր, և թոշուններն աղատ ճախրում էին օդում,
երգում ու ճլվում։ Իսկ երբ նրանց ետ էր կանչում,
նրանք լսում էին ու վերադառնում։ Հյուգոն իր երկը
վերջացնում է հետեւյալ բառերով.

Une colombe et moi longtemps nous nous aimâmes.

Maintenant je sais l'art d'appriroiser les âmes.¹

Մի աղավնի և ես երկար ժամանակ իրար սիրեցինք.

Այժմ ես զիտեմ հոգիներն ընտելացնելու արվեստը...

Սատուրյանը բաց է թողել այս երկտողը և դրա փոխարեն գրել հետեւյալ ինքնուրույն տողերը, որոնք արտահայտում են հայ պոետի հիասթափությունը՝ իրեն շրջապատող դառը կյանքից.

Բայց այժմ, ավա՞զ... այժմ էլ շրկան
Ո՞չ այն հըրապույր, ո՞չ այն քաղցրություն.
Ա՞յս, ո՞ւր սըլացար անդարձ հավիալան
Դու իմ ծաղկավար, անմեղ մանկություն²...

Մանկության օրերի կարուց բնորոշ է Սատուրյանին
և նա սեփական ստեղծագործությունների մեջ հաճախ է
խոր թախիծով վերհիշել «նվիրական հիշատակները
մանկական կյանքի»։ «Մայրը բանաստեղծության մեջ
նա ասում է.

Մաղիկ մանկության շատ հիշատակներ,
Որ գեռ եռում եք իմ մատաղ կրծքում,
Եվ հաճախ այնքան խաղաղ բռպեներ
Ինձ պարզեւմ եք կյանքի փոխորկում,
Որ երբեմն այնպես խուռըն երամով
Հանդես եք բերում ուրախ անցյալից
Գողտրիկ պատկերներ, և վառ թոփշքով
Միտքըս անշատում տխուր անցյալից,—
Ով զիտե, զուցե, ժամանակն յուր հետ
Զեղ մի օր տանհ, ավերե անհետ³...

¹ „Oeuvres Complètes“, T. I, Les Rayons et les Ombres
p. 40, „J'eus toujours l'amour...“.

² «Աղբյուր», 1889, № 2, էջ 84։

³ Ալ. Սատուրյան, Բանաստեղծություններ, Երևան, 1958, էջ 85։

Ժամանակակից դաժան կյանքից դառնացած հայ պուտը Հյուգոյի հիշյալ բանաստեղծության միջոցով ևս ցանկացել է ոգեկոչել իր մանկության անմեղ և հրճված օրերը:

Հյուգոն իր ստեղծագործություններում հաճախ է ցուց տվել, որ ի հակադրություն հարուստների, շքավոր մարդկանց ողորմածությունն այնքան ինքնաբուխ է, որ բնավ չի սպանում հատուկ կոչերի: «Les pauvres gens»¹ («Զքավոր մարդիկ») շափածո երկում նա պատմում է, թե ինչպես շքավոր մի ձկնորս որդեգրում է մահացած հարեւանի որբ երեխաներին, լիովին գիտակցելով, որ այս նոր պարտավորությունը իրեն և բաղմանդամ ընտանիքին ենթարկելու է ավելի ծանր զրկանքների: Հյուգոյի այս բանաստեղծության արձակ թարգմանությունը՝ «Խեղճերը» վերնագրով, տպագրվել է 1901 թ. Կ. Պոլոսում, Ս. Գարամաճյանի կազմած «Հավաքածու ընտիր գրվածոց» դասագրքում, որտեղ սակայն հիշատակված չէ թարգմանչի անունը:

Ի գեապ, որբ երեխաների թեման շատ հարազատ է եղել մեծ հումանիստին, որը հաճախ է մտահոգվել նրանց ճակատագրով: Այսպես, «L'Enfance»² («Մանկություն») երկում նա պատմում է, թե ինչպես մեռնում է հիվանդ այրին, իսկ նրա հինգ տարեկան երեխան մնում է անտեր ու անպաշտպան: Այս երկի թարգմանությունը տպագրվել է 1898 թ. «Էլույս» հանդեսում³:

«La grandmère»⁴ («Տատիկը») երկում մեռնողը տատիկն է, որի խնամքի տակ են երկու որբ թոռնիկները: Մահացած տատիկի սնարի մոտ երեխաները, քաղցած,

1 „Oeuvres Complètes“, T. II, La Légende des Siècles, p. 244.

2 „Oeuvres Complètes“, T. I, Les Contemplations, p. 17.

3 «Էլույս», 1898, № 20, թարգմ. Հ. Ս. Խ.:

4 „Oeuvres Complètes“, T. I, Odes et Ballades, p. 91.

ցրտից ու սարսափից գողահար, գիշերն ի բուն հեծկլտալով աղերսում են նրան, որ արթնանա, բայց իզուր: Այս բանաստեղծությունը՝ 1906 թվականին թարգմանում և «Մամիկը»¹ վերնագրով լույս է ընծայում Մեսրոպ Նուպարյանը: Հետագայում այն թարգմանում է նաև բանաստեղծությի Սիպիլը, «Մեծ մայրը»² վերնագրով: Ահա, Սիպիլի թարգմանությամբ, երկի վերջին տողերը.

Այսպես իզուր հեծկլտացին անհարիր,
Այսպ արթնցավ. կը քնանար դեռ հանին.
Զանգակն հնչեց խոռվ հարվածներ օդային,
Եվ անցորդ մը տեսավ դուռնեն հյուղակին
Բափուր մահճին, սուրբ գրքին քով լալազին՝
Որբ տղաքն, որ կաղոթեին ծնրադիր:

Վաղահաս մեռնող աղջիկների համար մեծ պոետի սիրտը հաճախ է վշտով համակվել: Այդ անբախտներին մտարերելիս՝ նա նույնիսկ չի ուղում հավատալ, որ նրանք իրոք անկենդան պառկած են շիրմաքարերի տակ, աշքերը զուրկ հայացքից, շրթներին՝ ձայնը լուած: «Les Fantômes»³ («Ուրվականները») բանաստեղծության մեջ պոետը ողբում է վաղամեռիկ աղջիկների եղերական ճակատագիրը: Այդ երկը 1864 թ. գրաբարի է թարգմանել Մկրտիչ Պեշիկթաշլյանը, «Ուրվականը»⁴ վերնագրով: «Ուրվականքը» իրավամբ համարվում է մեր թարգմանական գրականության գոհարներից մեկը: Արևմտահայ մտավորականությունը, հատկապես, շատ բարձր է գնահատել այն: Ականավոր հասարակական դործիչ և հրապարակագիր Գրիգոր Օտյանը դրա մասին ասում է: «Անկարելի է, որ այս թրթուան տողերը ավելի

1 «Արևելան մամուլ», 1906, № 13, էջ 310;

2 Հ. և Զ. Ասառու, Թանգարան, Միջին զասընթացք, Կ. Պոլիս, 1921, էջ 162;

3 „Oeuvres Complètes“, T. I, Les Orientales, p. 38.

4 Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1961, էջ 166:

գողտիրկ թարգման մ'ունենային հայ լեզվի մեջ»¹: Արփիար Արփիարյանի խոսքերով՝ «Հյուկոյի Ուրվականքի թարգմանությունը հմայիլ է, թերևս մինչև իսկ բնագիրը գերազանցող գեղեցկություն մը»²: Հրանտ Ասատրովը նույնպիսի հիացմունքով է արտահայտվում այդ թարգմանության մասին, իսկ Ա. Չոպանյանը այն որակում է «Հրաշալիք մը»:

Ինչ վերաբերում է թարգմանության հարազատությանը, ապա համեմատությունից պարզվեց, որ չնայած հանգի ու շափի հարմարեցման դժվարություններին և հայոց լեզվի ոճական առանձնահատկություններին, Պեշիկթաշլյանը ամենամեծ բարեխզճություն է ցուցաբերել գեպի բնագիրը: Հաճախ մի ամբողջ հնգատողում նա ոչ իսկ մի բառ իր կողմից չի ավելացրել կամ պակասեցրել: Դրանցից է, օրինակ, հետեւյալ հնգատողը: Համեմատության համար թարգմանության հետ բերում ենք նույն տողերի բնագիրը.

Քանի՞ո տեսի կենազրաւ, մին վարդագոյն և ճերմակ,
Միւսըն թըւէր ականջել երկնախօսիկ նըւազաց.
Ալ ոք, կըթուտ, ըզմի թէ դընէր ճակտին իւր խեչակ.
Եւ զերթ թոշոն հոլաթե թեքէ զճիւղ յիւրն ի սլաց,

Que j'en ai vu mourir! L'une était rose et blanche;
L'autre semblait ouir de célestes accords;
L'autre, faible, appuyait d'un bras son front qui penche;
Et, comme en s'envolant l'oiseau courbe la branche
Son âme avait brisé son corps.

Համարյա ամբողջ երկը (150 տող) թարգմանված է նույնպիսի հարազատությամբ: Իսկ եթե ծայրահեղ անհրաժեշտությունից մղված Պեշիկթաշլյանը կատարել է չնշին շեղումներ, ապա դրանք արել է նույր ճաշակով,

¹ Տե՛ս Ա. Չոպանյանի կաղմած «Մկրտիչ Պեշիկթաշլյանի քերթվածներն ու ճառերը», Փարիզ, 1904, էջ 174:

² «Գեղունի», 1902, № 4—6, էջ 40:

միշտ զանալով հավատարիմ մնալ տեքստի ողուն։
Օրինակ, բնագրում օգտագործված են ժամանակակից
երևութների և առարկաների անուններ, որոնց համա-
պատասխանը չկա գրաբարում։ Նման դեպքերում Պե-
շիկթաշլյանը դիմել է արտահայտչական ուրուլն հնա-
րանքների։ Այսպես։

Mais elle, par la valse ou la ronde emportée,
Volait.

Բայց նա, վաւսից կամ շորջպարից տարված՝
Թռչոտում էր։

Պեշիկթաշլյանը, շուղենալով նորամուտ «վալս» բա-
ռի գործածությամբ աղավաղել ոսկեղարյան հայերենի
հարազատությունը, բնագրի միտքը վերարտադրում է
այլ խոսքերով։

Սակայն կայրից ի դոփին նա սրաթոիշ պարառաջ
Հոլաթեր։

Բնագրում նույնպես ասված է։

Et son coeur éclatait en fanfare joyeuse.

Եվ նրա սիրտը թնդում էր, ինչպես փողային ուրախ
երաժշտություն։

Իսկ հայ պոետը փողային գործիքների փոխարեն
դարերի խորքից բերում է հին ժամանակների բամբիոը։

Եվ սիրտ զբարթ զերդ բամբիոս ի ծոց խնդարու։

Պեշիկթաշլյանը հրաժարվում է նաև այնպիսի ար-
տահայտություններից, որոնք հայերենում կամ պոետա-
կան չեն հնչում և կամ խախտում են բանատողի շափը
(բառացի թարգմանելու դեպքում)։ Այսպես։

Elle est morte à quinze ans, belle, heureuse, adorée.

Նա մեռավ տասնհինգամյա հասակում՝ գեղեցիկ, երջանիկ,
պաշտված։

Այստեղ, «տասնհինգամյա հասակում»-ը, որը բաղկացած է յոթ վանկից, խախտում է հայերեն բանառողի 4—3—4—3 շափը: Հետևապես, Պեշիկթաշլյանը գործ է ածում գրեթե նույնիմաստ, բայց միաժամանակ ավելի պատկերավոր մի արտահայտություն.

Մեռաւ կենացն ի զարուն, աղուտ՝ ր, գգուեա՛լ, երանեա՛կ:

Ստեղծագործաբար մոտենալով թարգմանական արվեստին, Պեշիկթաշլյանը որոշ դեպքերում գործ է ածում իր ինքնուրուցն մեկնաբանությունը, առանց սակայն բնագրի միտքը փոխելու: Օրինակ, բնագրում ասված է.

Pensez à l'espagnole éteinte sans retour.

Հիշեցեք իսպանուհուն, որը հանգավ անդարձ:

Բայց քանի որ հանգչելը ինքնըստինքյան «անդարձ» է, ապա թարգմանիչը, զանց առնելով «անդարձ»-ը, առում է.

Ճըսպանուհին յուշ ածէք, որոյ շիշաւ կենաց լոյս:

Նույնպես, «Les Fantômes»-ի առաջին տողում կարդում ենք.

Hélas! que j'en ai vu mourir de jeunes filles!

Ավա՞զ, քանի՞ երիտասարդ աղջիկների մահանալն եմ տեսել...

Նկատի ունենալով, որ «աղջիկ» հասկացության մեջ արդեն մարմնավորված է երիտասարդության գաղափարը, թարգմանիչը բաց է թողնում «երիտասարդ» բառը, բայց մյուս կողմից ավելացնում է երիտասարդների մահը բնորոշող «անժամ» էպիտետը, որը միաժամանակ ծառայում է բանատողի շափը լրացնելու.

Քանի՞ս, աւա՞զ, տեսի ես աղջկունս անժամ կենազրաւ...

Ինչ վերաբերում է Պեշիկթաշլյանի լեզվին, ապա պիտի ասել, որ տվյալ թարգմանության մեջ այն լիովին

ներդաշնակվում է բնագրի ոճին և հարազատորեն արտացոլում երկի լիրիկական ջերմությունը: Ահա, որպես ճաշակ, «Les Fantômes»-ի թարգմանության առաջին տունը.

Քանի՞ս, աւա՞ղ, տեսի իս աղջկունս անժամ կենազրաւ.
Ճակատագրի՞ն են օրէնք. հա՞րկ է մահուան իւր աւար.
Հարկ է խոսոյ անկանիլ ընդ սայրասուր մանգազաւ,
Հարկ է պարոց ի հանդէս զուարձ կայթից սրավար՝
Կոխել ըզփունչըս վարդից:

Հյուգոյին բնորոշ է այն, որ բարոյական քարացած սկզբունքների տեսակետից դատապարտելի համարվող արարքների և երեսութների վրա նա նայում է վերլուծող հայցքով, գտնում դրանց սոցիալական պատճառները և հենց այդ պատճառների վրա դնում շեշտը: Այսպես, գողության մեջ նա հաճախ տեսնում է քաղցի հարկադրանքը, մահափորձի մեջ՝ բռնակալության ձնշումը, պոռնկության մեջ՝ թշվառության դրդումը: «Մի մեղադրեք այն կինը, որ ընկած է» խոսքերով սկսվող անվերնագիր երկում¹ նա արդարացնում է ինքնամատուց կանանց, ցուց տալով նրանց բարոյական անկման դրդապատճառները:

Հիշյալ երկը հայ մամուլում լույս է տեսել երկու տարբեր թարգմանությամբ: Առաջին թարգմանությունը տպագրվել է «Երկրագունդ» հանդեսում² 1870 թ., իսկ երկրորդը՝ «Մասիսում»³ 1882 թ.: Ահա երկրորդ թարգմանության սկզբի մասը.

Բարե՛, մի՛ երբեք անգոսեք կին մ՞որ ընկնի յուր գահեն,
Ո՞վ գիտե, թե ինչ ծանըր բեսի տակ թշվառն այդ հեծե,
Ո՞վ գիտե, թե քանի օր անոթության դեմ մաքառած է,

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Chants du Crépuscule, p. 24.

2 «Երկրագունդ», 1870, № 13, էջ 196 (թարգմ. Հ. Պոնճուկյան):

3 «Մասիս», 1882, № 3218 (թարգմ. Օ. Երկանյան):

Եվ ո՞վ չէ տեսած ձնշյալըն այդ կին, որ երկար ատեն
Անզոր ձեռքով փարի յուր գահում, երբ հովին շար բախտին
Ի վեր անդր զբարդե նորա ամոթիսածություն...

Ինչպես սկզբում ասացինք, Հյուգոն հաճախ է կա-
րեկցանք զգացել դեպի խեղճ ու արհամարհված կենդա-
նիները: «Le crapau»¹ («Գորտը») շափածո երկում նա
պատմում է, թե ինչպես դպրոցական երեխաները տան-
ջում են վիրավոր գետնագորտին: Ճիշտ այն պահին, երբ
նրանցից մեկը պատրաստվում է քարով սպանել նրան,
տղաները նկատում են մոտեցող մի սայլ: Նրանք որոշում
են թողնել, որ գորտը անիվների տակ ջախչախվի. այդ
ավելի հետաքրքիր տեսարան է: Սակայն սայլը քաշող
բազմաշարչար էշը նկատում է իր բախտակցին և ի գին
մտրակի նոր հարվածների՝ շեղում է կառքի ընթացքը,
շրջանցում գորտին և այդպիսով երեխաներին տալիս է
հումանիզմի վսեմ մի օրինակ: Այս երկի արձակ և պարզ
շարադրանքով թարգմանությունը 1903 թ. լուս է տեսել
«Աղբյուր» մանկական հանդեսում՝ երեխաների մեջ հու-
մանիստական զգացմունքները զարգացնելու ակնհայտ
դիտավորությամբ:

Համաշխարհային գրականության գլուխ-գործոցներից
մեկն է Հյուգոյի «La Conscience»² («Խիղճը») հանրա-
հայտ բանաստեղծությունը: Այստեղ պոետը նկարա-
գրում է, թե ինչպես խիղճը, մեծ ու լայնաբաց աշքի
կերպարանքով, շարունակ հետևում է եղբայրասպան
Կայենին, նրան հիշեցնում գործած ոճիրը: Կայենը նրա
հալածանքներից ազատվելու համար փախչում է հեռա-
վոր երկրներ, թաքնվում ամրափակ և անլուսամուտ
սենյակում, նույնիսկ իշնում խավար նկուղների խորը,

¹ „Oeuvres Complètes“, T. II, La Légende des Siècles,
p. 247.

² Նույն տեղում, էջ 12:

բայց իզուր, աշքը միշտ և ամենուր երևում է նրան, նայում անթարթ, հիշեցնում ոճիրը:

Հյուգոյի այս երկը ունեցել է հայերեն մի քանի թարգմանություն: Այն թարգմանել են՝ Հակոբ Տեր-Գևորգյանը, Ռեթեռս Պերպերյանը, Ռուբեն Զարդարյանը (արձակ) և ուրիշներ: Ահա «Խիղճը» բանաստեղծության սկզբի մասը Տեր-Գևորգյանի թարգմանությամբ.

Յուր զավակների հետ, մորթիներ հազած,
Հերախառն, կապտադիմ, փոթորկի միջին
Կայենը փախուստ տվալ Եհովայի առաջին.
Մուայլ մարդը հասավ երեկոյան դիմաց
Արձակ դաշտում կանգնած մի լեռան սուրոտին.
Զավակներն շնչասպառ և կինը հոգնած
Ասացին. «Պառկենք և քննենք գետնի վրան»,
Կայենը արթոն երազում էր միայն:
Նայնց, և շարագույժ երկնքի խորքում
Նա տեսավ մի աշք մեծ ու լայն բացլած,
Որ անշարժ, խավարում նորան էր դիտում:
«Ես շատ մոտ եմ», — ասաց նա մի սարսուռով,
Զարթեցրեց խեղճ կնոջը և զավակներին,
Եվ սկսեց փախչել կորստարեր շավլով¹:

Ինչպես տեսնում ենք, Տեր-Գևորգյանի լեզուն դյուրասահ է և անպաճույն: Նա թարգմանել է ուղղակի բնագրից, որին ջանացել է Հնարավորին շափու հավատարիմ մնալ:

Պերպերյանի թարգմանության մեջ թեև հանգի և շափի կանոնավոր համաձայնեցում չկա, սակայն այդ մի խանգարել լեզվի մելոդիկ հնչեղությանը: Պերպերյանը թարգմանել է գրաբարով, նույնպես բնագրից, գրեթե բառացի: Նրան հիանալիորեն հաջողվել է պահպանել Հյուգոյի հանդիսավոր ու գյուցազներգական ոճը և տալ բնագրի հմայքը: Ահա, նրա թարգմանությամբ, նույն հատվածը².

1 «Մուրճ», 1897, № 7—8, էջ 993;

2 «Երկրագունդ», 1887, № 1—2, էջ 83,

Յերեսաց Եհովլայի եղրայրասպանն յորժամ կայէն,
 Հերարձակ, կապարագոյն, ի մէջ ահեղ մըրկաց,
 Խոյս ետ որդւոքն որ զգաղանաց արկեալ էին զանձամբ ըգմորթ,
 Քանզի օրն տարածամէր, հհաս ալրըն դախճաղէմ
 ի ստորոտ լերին միոյ ի մեծանիստ ուրեք դաշտի.
 Կին իւր վաստակաբեկ և ոգեսպառ իւր որդիք
 Ասեն ցընսա.— Եկ, ի կողմըն լեալ ի գետնի և նիրհեսցուք:—
 Կայէն, յաշացն հատեալ քոմ, խոկայր լերանցըն ի ստորոտս:
 Ամրարձեալ ահա զզլուխն, ի մահաստուեր երկինցն ի խորս
 Ետես ակն ինչ մեծարաց յաղջամզից անդ ի խավար:
 Որ անքթիթ անթարթափ լինքըն հայէր ի ստուերի:
 — Մերձ կամ յոյժ, — ասէ հարեալ ըզդողանի, և զարթոյց
 Ընդուստ զորդիսն որ ննչէին և ըզկին իւր պարտասեալ,
 Եւ էառ փախչել անդրէն դժնէաղէմ ի միջոցի:

Այս լիարժեք թարգմանությունը կարդալիս ընթեր-
 ցողին երեմն թվում է, թե նույն ինքը Հյուգոն է այն
 գրել դասական հայերենով:

Հյուգոյի սիրային մոտիվներով քնարական բա-
 նաստեղծությունները նույնպես առինքնել են հայ պո-
 ետներին և դրանցից մի քանիսը թարգմանվել են մեկից
 ավելի անդամներ: Օրինակ, «Nouvelle chanson sur un
 vieil air»¹ («Նոր երգ հին եղանակով») բանաստեղծու-
 թյունը գեռ 1865 թ. թարգմանել է Ն. Ռուսինյանը՝ «Ո՞վ
 իմ գեղեցիկ»² վերնագրով, Հովհ. Հովհաննիսյանը՝
 1880 թ. «Նոր երգ հին եղանակով»³, իսկ Ա. Փանոսյանը՝
 1882 թ. «Հին երգ»⁴ վերնագրով: Որպես ճաշակ, բերում
 ենք այդ երկի առաջին տունը՝ վերոհիշյալ գրողների
 թարգմանությամբ.

¹ „Oeuvres Complètes“, T. I, Les Chants du Crépuscule, p. 30.

² Տե՛ս «Մասիս», 1904, № 20, էջ 307:

³ Հայկական ՍՍԻ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Հովհ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 1-1, էջ 44: Այս, ինչպես և մի շաբթ
 այլ թարգմանություններ գենուս անտիպ են:

⁴ Ա. Փանոսյան, Այգեկութք, Կ. Պոլիս, 1908, էջ 129:

Նահապետ Ռուսինյան

Թե կ'անդ ցողով եթերաց
Եզեմ երշանիկ,
Ուր փողփողի մշտաբաց
Նորանոր ծաղիկ,
Ուր քաղել է բարդ ի բարդ
Շոշան, հասմիկ, այծիվարդ,
Զանի քու ոտիցդ ընեմ
Ճեմարան, նաղելի:

Հովին. Հովհաննիսյան

Թե գեղազվարձ կա դալարիք,
Որ որոգում է երկինք,
Ուր փայլում է, երբոր կամիք,
Բացված քանի մի ծաղիկ,
Ուր քաղում են առատ ու լի
Շոշան, հասմիկ, նունուֆար,
Կպճնեմ նրանցով այն ճանապարհ,
Ուր ոտդ դընես, նաղելի:

Ալ. Փանոսյան

Թե կա փափկիկ մի մարմանդ,
Զոր այզն ողողե,
Մի մարմանդ, ուր երկնալանդ
Մի բուրում ցողե,
Եվ ուր քաղել կարևնամ
Հասմիկ, շոշան, շահոքրամ,
Ո՞հ, ես հավետ կը բաղձամ,
Որ ոտքդ անդ կոխե:

Այս երեք թարգմանություններն էլ կատարված են
Քրանսերենից, բայց բնագրին ամենահարազարտը Հովհաննիսյանինն է: Ի գեպ, հետաքրքիր է, որ chèvre feuille
բառը Ռուսինյանը թարգմանել է այծիվարդ, Հովհաննիսյանը՝ նունուֆար, Փանոսյանը՝ շահոքրամ, մինչդեռ
Միհրան Հովհաննիսյանի ֆրանսահայ բառարանում (Կ. Պոլիս, 1911) այդ բառի դիմաց գրված է՝ հարսնամատն:

«A une femme» բանաստեղծությունը («Մինչաղի երգեր» ժողովածուից), որքան մեղ հայտնի է, ունեցել

է երկու թարգմանություն: 1880 թ. այն թարգմանել է Հովհաննիսյանը՝ «Մի կնոշ»¹ վերնագրով, 1905 թ. Հովհաննիսյանը՝ «Մանուկ»² վերնագրով:

«Contempler dans son bain» խոսքերով սկսող անվերնագիր բանաստեղծությունը («Աշնան տերևներ» ժողովածուից) թարգմանել է Հ. Թաթարյանը, «Աշկունք նորա»³ վերնագրով և այն տպագրել «Մասիսում» 1886 թ.:

Հյուգոյից սիրային մոտիվներով բանաստեղծություններ շատ են թարգմանվել, բայց մենք կրավականանանք բերելով ևս մի նմուշ, որը պատկանում է Ա. Չռպանյանի գրչին: Դա՝ «J'ai cueilli cette fleur» բառերով սկսող երկն է «Հայեցողություններ» ժողովածուից: Ահա դրանից մի հատված.

Սիրելիս, քեզ համար ծաղիկն այս քաղեցի.
Տժուկն է ան, չոնի շափրակ անուշահոտ,
Անոր արմատը, լեռներոն կատարին վրա՝
Գառըն բուրմունքն առած է խած մամուներուն:
Ես ըսի. խեղճ ծաղիկ, այս սարին զիսեն
Պիտ երթայիր զուն անսահման այդ վըհին մեջ,
Ուր չըիմուներն, ամպն ու նալերը կը քալեն.
Մեռի՛ր սրտի մը վրա, որ վի՞ մ' է խորագույն,
Բոռմէ՛ կուրծքի մը վրա, որ աշխարհ մը կը տրովիե՛:

Հյուգոյի՝ բնությունը գովերգող բանաստեղծությունները համեմատաբար քիչ են թարգմանվել հայերենի: Այդ քշերից մեկն է՝ «Parfois, lorsque tout dort»⁵ («Երբեմն, երբ ննջած է ամեն բան») երկը, որը բնագրից գրեթե բառացի թարգմանել է Հովհաննիսյանը,

1 Հայկական ՍՍԾ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Հովհաննիսյանի ֆոնդ, № 1—1, էջ 31:

2 «Թաղմալեպ», 1905, № 2, էջ 87:

3 «Մասիս», 1886, № 3827, էջ 1013:

4 «Անահիտ», 1935, № 5, էջ 12:

5 „Oeuvres Complètes“, T. I, Les Feuilles d’Automne, p. 23.

գեռ պատանի հասակում։ Այդ թարգմանության մեջ,
շնայած որոշ թերությունների, արդեն երևում է ապագա
տաղանդավոր բանաստեղծը.

Երբեմնապես, երբ ննջած է ամեն բան,
ես նստում եմ լի հրճվանքով
Աստեղաղարդ գմբեթի տակ, որ մեր վրան
Սփռում է լուս, փողփողելով.
Ես լսում եմ երկնքիցը շշնչուն.
Եվ ժամն անցնում ունախաբար,
Երբ ես, շարժված, այս հանգեսին եմ նայում,
Որ երկինքը կտոնե պայծառ!:

Մեծ գրողի պոեզիայից թարգմանված «Վարդ ու գերեզման», «Ծաղկն ու թիթեռնիկը», «Օվկիանոսն ու ակը» և այլ երկերում տեսնում ենք, թե ինչպես բնությունն ու կենդանական աշխարհը բարբառում են մարդկային լեզվով, արտահայտելով այն մտքերը, որ պոետը նրանց վերագրում է: «Արևն ու երկիրը»² բանաստեղծության մեջ Հյուգոն պատկերում է արեի և երկրի ձմեռացին «փոխհարաբերությունը»: Այդ երկը, որը թարգմանել է Վահան Թեքեյանը, տալիս ենք ամբողջությամբ.

Զմեռ ատեն կուզա երկիրն.
Արեք մեղմ, դժույն ու պաղ,
Ուշ կհասնի՝ գեշ ժամադիր,
Ու գեշ սիրող՝ կմենինի վալ!

Սերը անոնց տըխուր է շատ.
— Արե՛, սիրենք իրար:— Փորձե՛նք.
Երկի՛ր, ո՞ւր են վարդերդ առատ:
— Ա'ստղ, ո՞ւր են քու շողերդ աննենք!

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Հովհաննիսյանի ֆոնդ, № I—1, էջ 33:

² „Oeuvres Complètes“, T. II, Les Quatre Vents de l’Esprit, p. 84: Այս երկը բնագրում անվերնազիր է և սկզբում է „En hiver la terre pleure“ բառերով:

Ան պատրվակ մը կփնտռե, —
Կարկուտ կամ հով, թեթև մեկ ամպ,
Եվ ըսելով՝ ալ զիշեր է,
Զայն կստեղծե իր հեռացմամբ,

Զերթ սիրահար մը, որ օրեօր
Կաղատե սիրտն իր օդակեն
Եվ զի չունի ալ խոսք մը նոր՝
Կհեռանա արագորեն1:

Հյուգոյի քնարական երկերի թարգմանությունների
ուսումնասիրությունից պարզվում են մի քանի առանձ-
նահատկություններ, որոնց վրա անհրաժեշտ ենք հա-
մարում գեթ հարկանցիորեն կանգ առնել: -

Ընդհանրապես նկատելի է այն, որ արեկելահայ
թարգմանիչները որոշակիորեն ձգտել են, որ իրենց
թարգմանությունն ունենա մայրենի լեզվի համն ու հո-
տը, հնչե ինչպես ինքնագիր ստեղծագործություն: Դրա
համար էլ՝ անհրաժեշտության դեպքում, նրանք հեռացել
են բնագրից այնչափով, որքան հարկավոր է ապահո-
վելու մայրենի լեզվի հարազատությունը: Եվ պիտի
ասել, որ այդ տեսակետից նրանք մեծ մասամբ հասել
են ցանկացած արդյունքին: Հետևյալ քաղվածքները հա-
մոզիչ կերպով վկայում են այդ մասին:

Ա. Ծատուրյանի թարգմանած «Թոշնիկներ» բա-
նաստեղծությունից.

Շատ էի սիրում մանուկ հասակում
Ես թոշունների սիրում ձագերին,
Եվ որսում էի նոցա մեր այգում,
Կանալ, ցողապատ թըփերի միջին2:

Զ. Բալուղյանցի թարգմանած «Աղոթք ամենքի հա-
մար» բանաստեղծությունից.

1 Վահան Թեմեյան, Երկեր, Երևան, 1958, էջ 456:

2 «Աղբյուր», 1889, № 2, էջ 84:

Աղոթիր, մանուկ... գիշեր է հանդարտ,
Պայծառ եթերում լողում է լուսին,
Անդորր է տիրում մարդկանց սըրտերին,
Ննջում է այնտեղ տառապանքն ու դարդ1:

«Աղջկանս» վերնագրով բանաստեղծությունից
(թարգմ. Գ. Ա.).

Եկ աչքըս հառած փակ թերթերունքիդ
Աղոթում էի ևս ու արտասվում,
Երբ վըրդովում էր հանկարծ ինձ մի միտք,
Թի ինչեր է մեզ այս գիշեր սպասում2...

Նույն թվականին և նույն հանդեսում տպագրված այս
երեք տարբեր թարգմանությունները հատկանշական են
այն տեսակետից, որ նրանցում խորթ բառեր կամ օտար
հնչող ոճական արտահայտություններ չկան, լեզուն սա-
հուն է և անկաշկանդ: Ուշագրավ է նաև այն, որ չնայած
հիշյալ թարգմանությունները կատարվել են սրանից
ավելի քան 70 տարի առաջ, այնուհանդերձ նրանց լեզուն
զուտ աշխարհաբար է և ոչնչով չի տարբերվում այսօրվա
հայերենից:

Ինչ վերաբերում է արևմտահայ թարգմանիչներին,
ապա նրանք մեծ մասամբ Հյուգոյի պոեզիան թարգմա-
նում էին ուղղակի ֆրանսերենից: Դրա շնորհիվ էլ
նրանց հաջողվել է համեմատաբար ավելի հարազատ
մնալ բնագրին: Սակայն մյուս կողմից, ֆրանսիական
լեզվի ազդեցությամբ նրանք հայերենի մեջ մտցնում
էին ֆրանսերենին հատուկ արտահայտչական ձևեր ու
ոճական դարձվածքներ: Օրինակ.

Նման է կաթիլ մ' անձրես... ուր զա փայլվիլ արևն կամ երկին3.

Une goutte de pluie où le ciel vient briller.⁴

1 «Աղյուր», 1889, № 11, էջ 381:

2 Նույն ակադ., № 8—9, էջ 308:

3 «Մասիս», 1882, № 3218, 8-րդ տող:

4 „Oeuvres Complètes“, T. I, Les Chants du Crénuscule,
p. 24, „Oh, n'insultez jamais“.

Դու, զոր ոչինչ կուզա տանջել...

Vous que rien ne vient éprouver² ...

Մայրն հուսկ ապա զնաց ննջել սալաբարերուն տակ վանքին³...

La mère alla dormir sous les dalles du cloître⁴ ...

Վերեկի «գա փայլիլի», «կուզա տանջել» և «գնաց ննջել» խոսքերը պարզապես բառացի թարգմանություններ են: Հայոց լեզվին հարազատ մնալու համար՝ «vient briller», «vient éprouver», «alla dormir» պետք է թարգմանել «կը փայլիլի», «կը տանջե» և «ննջեց»:

Գալլիցիլմի ցայտուն նմուշներ են նաև հետեւյալները.

Առ նա դիմեն, երբ վարանի հաղորդյուն⁵.

On a recours à lui quand la victoire hésite⁶.

Եվ ծովը... խորեն համոզված... կը նվազի⁷.

La mer... se laisse convaincre par la dune... et se décroît⁸.

Ո՞հ, ինչ ախոր էի խորեն այս խոկումներուն⁹

J'étais triste au fond de ma pensée¹⁰.

1 «Արկելյան մամուլ», 1877, № 11, էջ 415, 13-րդ տող:

2 „Oeuvres Complètes“, T. I, Les Rayons et les Ombres, p. 17, „Mademoiselle Fanny de P.“.

3 «Լույս», Կ. Պոլիս, 1898, № 20, 9-րդ տող:

4 „Oeuvres Complètes“, T. I, Les Contemplations, p. 17, „L'Enfance“.

5 Թովմաս Թերզյան, Բանաստեղծությանց ամբողջական հավաքածու, Վենետիկ, 1929, հատ. II, էջ 263, տող 18: «Հայրությունն բանաստեղծությունից»:

6 „Oeuvres Complètes“, T. II, La Légende des Siècles, p. 153, „Paternité“.

7 Թովմաս Թերզյանի նույն երկը, էջ 262, տող 21—22:

8 Հյուդոյի նույն երկի համապատասխան տողերը:

9 «Անահիտ», 1935, № 5, էջ 12, տող 14:

10 „Oeuvres Complètes“, T. I, Les Contemplations, p. 84, „J'ai cueilli cette fleur“.

Կարելի է այլ օրինակներ ևս բերել, բայց մենք այս-
քանով բավականանում ենք:

Արևմտահայ թարգմանիչներին բնորոշ է նաև մի այլ
առանձնահատկություն: Հյուգոյից, և ոչ միայն Հյուգո-
յից, որևէ բանաստեղծություն աշխարհաբարով թարգ-
մաննելիս հանդի կամ չափի համաձայնեցման համար
նրանք հաճախ դիմում են գրաբարի օգնությանը և գործ
ածում այնպիսի բառեր կամ արտահայտություններ,
որոնք անհարիր են աշխարհաբար գրական լեզվին: Այս-
պես, «ցերեկ»-ի փոխարեն գրում են տիվ, այնտեղ՝ անդ,
իմ մեջ՝ յիս, եղի՞ր՝ լեր, կամ օգտագործում են հոգնակի
թվի գրաբարյան ձևը. որոնք՝ որք, ճառագայթներ՝ ճա-
ռագայթք, կամ էլ գրաբարի հոլովումներ՝ սրտիվ, ջրոց,
վշտաց և այլն: Բերենք մի քանի օրինակ.

Յիս սպասառանող ամեն մի կույս հոգին,
Ես մի պերճ հրեշտակ կը շինեմ հրեղեն.

(«Վարդ և դերեկման», թարգմ. Ալ. Փանոսյան.
տե՛ս «Ընտանիք», 1883, № 4, էջ 56)

Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե գրաբարախառն
հայերենով, այլ, ինչպես տեսնում ենք, զուտ աշխարհա-
բարով կատարված թարգմանություններին:

Մանուկ, հաճախ դեղածիծաղ այն աշքեր,
Որք, ճառագայթք առատապես կարձակեն,
Նաև արտոսը կը հոսեն գետորեն:

(«Առ օրինութ Ֆաննի տը Բ.» թարգմ. Մ. Զերադ.
տե՛ս «Արեկլյան մամուլ», 1877, № 11, էջ 415)

Սիրվե՛, ուրեմն արդ, ա՛հ, սէր է իսկ կյանք,
Մինչ երիտասարդին կը սահին վայրկյան.

(«Աստված», թարգմ. Ս. Մ. Ղաղարյան, տե՛ս
«Արեկլյան մամուլ», 1877, № 3, էջ 114)

Ճակատդ կուղեմ որ հանգլի
Անդ դիշեր և տիվ.

(«Առ ճելահ», թարգմ. Ալ. Փանոսյան. տե՛ս
«Երկրագունդ», 1886, № 9, էջ 439)

Հե՞ք հրեշտակ, մենք ենք պատճառ մեր վշտաց.

Գուցե ընդ երկար գալով ծնրադրած...

(«Հույս առ Աստված», թարգմ. Օ. Երկանյան,
տե՛ս Հայկական ՍՍԾ ԳԱ Գրականության և ար-
վեստի թանգարան, Թորոս Աղատյանի ֆոնդ,
№ 9—1)

Այսպիսով, մեկ կողմից գալիցիզմի, մյուս կողմից
գրաբար բառերի և ձեռերի օգտագործման հետևանքով
արևմտահայ մի շարք թարգմանիչների պոետական լե-
զուն որոշ դեպքերում ինչ-որ շափով աղավաղվել է կամ,
ավելի շուտ՝ այսօր մեզ է այդպիս թվում:

Հայտնի է, որ աշխարհաբար գրական լեզուն իր կազ-
մավորման շրջանում և գրանից էլ հետո ապրել է անընդ-
հատ էլույսուցիայի պրոցես, որի ընթացքում փոխ են
առնվել գրաբարից և գավառաբարբառներից բազմաթիվ
բառեր ու ձեռք, որոնք հետագայում քաղաքացիական
իրավունք են ստացել: Օրինակ՝ ցավոք, օրոք, իրավամբ,
ի դիմաց, ի դեմս, հանձին, հանուն, այսուհանդերձ,
զլուս-զործոց, այնուամենայնիվ, ընդ որում գրաբարյան
ձեռն այսօր այլևս խորթ չեն հնչում, որովհետև աշխար-
հաբարի հետ արդեն շաղախսվել են և մտել անգամ
խոսակցական լեզվի մեջ: Նույնպիս, Սփյուռքում այսօր
օգտագործվում են զայն, զի, զերք, ցարդ, սակավ առ
սակավ և այլ բազմաթիվ գրաբարյան ձեռք: Բայց վերե-
վում նշված յիս, որք, նառագայթք, անդ, տիվ, վշտաց,
ընդ երկար գրաբարյան ձեռքը ժամանակի ընթացքում
դուրս են մղվել աշխարհաբարից, և հենց դրա համար
էլ զուտ աշխարհաբար տեքստերի մեջ նրանց ներկայու-
թյունը այսօր մեզ մի տեսակ խորթ է հնչում:

Վերոհիշյալ առանձնահատկությունները, սակայն,
հետզհետե վերացվում են. արևմտահայ թարգմանիչնե-
րը գնալով ավելի հոգատար են դառնում աշխարհաբարի
անաղարտության նկատմամբ, իսկ արևելահայ թարգ-
մանիշներն ավելի նախանձախնդիր՝ բնագրի հարազա-
տությունը պահպանելու հարցում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո էլ Վիկտոր Հյուգոյի ստեղծագործությունները թարգմանվել ու թարգմանվում են հայերենի:

Սովետական բազմադպ մտավորականությունը միշտ հարկ եղած պատիվը մատուցել է համաշխարհային կլասիկներին և քննադատաբար մոտենալով նրանց գրական ժառանգության՝ վերցրել է այն, ինչ առաջադիմական է, ուսանելի և օգտակար: Հետեաբար, Հյուգոն իր դեմոկրատական, հումանիստական և մարտաշունչ գաղափարներով միշտ առաջնակարգ տեղ է գրավել սովետական թարգմանական գրականության մեջ, իսկ նրա երկերը մեզ մոտ հրատարակվել են նոր կարգերի հաստատման հենց առաջին տարիներից:

Սովետական շրջանում Հյուգոյի պոեզիայից կատարված անդրանիկի թարգմանությունը պատկանում է Եղիշե Չարենցի գրչին: Դեռ 1923 թվականին, նա, իրեն հատուկ պաթոսով, հայացնում է «Dans l'ombre»¹ («Խավարում») բանաստեղծությունը, որտեղ նկարագրված է, թե ինչպես ժամանակի ալիքը ահեղ հորձանքով քանդում է անցյալի օրենքները, սովորությունները, վաղուց նիրհած մտքի հետքերը, ստրկության շղթան: Հին կարգերի ներկայացուցիչը ալիքին մերթ աղաշում, մերթ հուսահատորեն հրամայում, ապա նորից պաղատում է խնայել այդ «սրբությունները»: Բայց մոլեգնած ալիքը ոչինչ չի լսում. նա քշում, տանում է արքայական գահը, մաշված մի ձեռագիր, արյունոտ մի կառափինատ, ծովն է զցում դատավորներին, կրոնավորներին և հեղեղում է հնի բոլոր մնացորդները:

Ֆ դեմս հին իրավակարգը կործանող, ստրկության շղթան փշրող և արքայական գահը տապալող այդ վիթ-

1 „Oeuvres Complètes“, T. III, L’Année Terrible, p. 101.

իսարահսկա ալիքի, սովետական բոցաշունչ ողոետի
երևակայությունը տեսնում է հեղափոխությունը, ա'յն,
որը տապալեց ցարական գահը, նրա իրավակարգն ու
շղթաները: Հիշյալ երկը թարգմանելով, Զարենցը, ան-
կասկած, ուզում է ցույց տալ, որ Հյուգոյի մարդարեա-
կան տեսիլքը այսօր հոյակապ իրականություն է
դարձել մեր երկրում, իսկ վաղը այն իրականություն
կդառնա ամբողջ աշխարհում: Ահա որոշ հատվածներ
Զարենցի թարգմանությունից.

Կանգնի՛ր, ալիք, ե՛տ նահանջիր, գեպի ե՛տ.
Տործոք երրեք շի ծառացիլ այլքան խենթ,
Ալդքան խիզախ... ինչո՞ւ ալիք, զու աղի,
Ալդքան պաղ ես, մուեգին ու կատաղի:
Եվ ինչո՞ւ է կես-զիշերի այս ժամին—
Ունոցդ ահեղ, հեղեղատդ ու քամիդ:
Որպես հրաշք մի ահավոր, հողմ ու ջուր,
Ուր ես այդպես զու թոշում ու մոնշում:
Կանգնի՛ր, ալի՛ք, լսի՛ր զու ինձ ու մնա.
Սա՛ է վերջին քո սահմանը էլ հիմա.
Մի՛ կործանի գրահներով քո մոլի
Օրենքները, սովորություններն անցյալի:
... օ՛, մի՛ դիպչիր, կանգնի՛ր, սուրբ են մեղ զրանք՝
Հին, զորավոր պատճեշները այն մոայլ,
Որ կանգնեցի ես շուրջը ողջ մարդկության:
... Բայց զու նորից բարձրանում ես, զու նորից
Մակընթացով քո թոշում ես ծնկներիս,
Խուժում ես ներս մենանոցը իմ բարի...
Ալիք

— Մակընթա՛ց ես կարծում ինձ:— ես հեղե՛ղն եմ աշխարհի!...

Հյուգոյի «Dans l'ombre»-ը թարգմանելիս Զարենցը, սոցիալիստական հեղափոխության բանաստեղծը լինելով, հին աշխարհի դաժանությունը և մռայլությունն ընդդեւու համար ավելի է խտացրել զույները:

1 Եղիշե Զարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 525:

Այսպես, բնագրում Հին կարգերի ներկայացուցիչը հոգևորականների մասին ասում է՝ «Ces hommes sacrés» (այդ նվիրական մարդիկ): Զարենցը, իր վերաբերմունքը ցույց տալու համար, «նվիրական մարդիկը» դարձնում է «պատարագի վերջին քուրմերն ահաղեմ»: Հին կարգերի ներկայացուցիչը, մոտեցող ալիքին դիմելով, գոշում է. «C'est le juge. Arrête!» Զարենցը հարազատորեն թարգմանում է «դատավորներն ահա.—կանգնի՛ր» և ապա իր կողմից ավելացնում է. «Դրանք սկ նժղեհներն են կառափնատան մի վսեմ...»: Այնուհետև բնագրում ասված է. «Մի՛ քանդիր կնոջ վրա տղամարդու ունեցած Հին հեղինակությունը» (...L'ancienne autorité de l'homme sur la femme): Սովետական պոետը, շանկանալով անցյալում կնոջ վրա ծանրացած լուծը մեղմորեն անվանել «տղամարդու հեղինակություն», այդ միտքը վերաբետադրում է այսպես.

0՝, մի՛ քանդիր սարկության այն շղթան,
Որ ճնշում է կնոջը սկ ծանրությամբ¹...

Հյուգոյի հայրենասիրական պաթոսով լի բանաստեղծություններից մեկն է «Sur une barricade»-ը² («Բարիկադի վրա»), որտեղ նկարագրված է մի կոմունար պատանու անվեհեր անձնազոհությունը: Այդ երկը, որն ունի երկու տարրեր թարգմանություն՝ Ա. Խոնդկարյանի և Ս. Տարոնցու, 20-ական թվականներից մինչև 50-ական թվականները, երեսուն տարի շարունակ, տպագրվել է բազմաթիվ դասագրքերում՝ «Կարմիր արև», «Դասա-

¹ Զարենցը, ամենայն հավանականությամբ, «Խավարում»-ը թարգմանել է ռուս բանաստեղծ Պավել Անտոկոլսկու թարգմանությունից: Վերջինս նույն նախադասությունը թարգմանել է՝ „Не трогай... покорность женщины и власть над ней мужчины“. Յե՞ս Վիկտօր Գյոգ, Собрание сочинений, Т. 13, Москва, стр. 137.

² „Oeuvres Complètes“, Т. III, L'Année Terrible, p. 77,

գիրք լեզվի և գրականության», «Այբբենարան և ընթերցարան», «Գրականության քրեստոմատիա», «Մայրենի եղվի ընթերցարան», «Հայրենի գրականություն» և այլն:

Ուշադրավ է այն, որ հիշյալ երկի թարգմանիչները կոմոնարների դեմ կովող կառավարական դինվորների նկատմամբ պատանի ընթերցողների հակակրանքն ուժեղացնելու նպատակով գործ են ածել «բիրտ դինվորները», «ձեռքը հանցագործ» և այլ արտահայտություններ, որոնք բնագրում շկան:

Համեմատության համար ստորև բերում ենք բնագրի առաջին երեք տողը, դրանց բառացի թարգմանությունը և ապա՝ Ա. Խոնդկարյանի և Ս. Տարոնցու թարգմանությունները.

Sur une barricade, au milieu des pavés
Souillés d'un sang coupable et d'un sang pur lavés,
Un enfant de douze ans est pris avec les hommes.

Բառացի բարգմանուրյուն

Բարիկադի վրա՝ հանցավոր արյունով ներկված
Եվ արդար արյունով մաքրված սալահատակի մեջտեղում,
Կովողների հետ գերվեց տասներկու տարեկան մի տղա:

Խոնդկարյանի բարգմանուրյունը

Բարիկադում,
Որ արդարների արյունով է ներկել ձեռքը հանցագործ,
Կովողների հետ, որպես կոմոնար,
Մի տղա գերվեց տասներկու տարվան:

Տարոնցու բարգմանուրյունը

Քաջաբար կովող կոմոնարների
Արյունով ներկված բարիկադներում՝
Բիրտ դինվորները վերցրին գերի
Նաև մի տղա տասներկու տարու:

Ուշադրավ է նաև, որ ո՞չ Խոնդկարյանը ո՞չ էլ Տարոնցին շեն թարգմանել հիշյալ բանաստեղծության երկրութ մասը, որտեղ կառավարական դինվորների կապի-

տանը ներում և բաց է թողնում կոմունար պատանուն: Նկատի ունենալով, որ տվյալ դրվագի բովանդակ դյուցազներգությունը պարփակված է առաջին հատվածում, — որը ինքնին մի ամբողջություն է, — թարգմանիշները գանց են արել շարունակությունը:

Հայրենական պատերազմի ծանր օրերին, երբ հիւլիրյան բանակները գրավել էին մեր երկրի զգալի մասը, ավերում էին քաղաքներն ու գյուղերը, բնաշնչում սովետական մարդկանց, բանաստեղծ Հովհաննեսը թարգմանում և լույս է ընծայում Վիկտոր Հյուգոյի «L'Expiation»¹ («Քավություն») ընդարձակ բանաստեղծության առաջին մասը, որը և վերնագրում է «Նապոլեոնի փախուստը Ռուսաստանից»²: Հիշյալ երկում, որը Հյուգոյի ուղղմաշունչ պոեզիայի լավագույն նմուշներից մեկն է, հաջորդաբար նկարագրված են՝ նապոլեոնի փախուստը Ռուսաստանից, նրա պարտությունը Վատերլոյի ճակատամարտում, նրա աքսորվելը, մահը, կուի թոնապարտի պետական հեղաշրջումը և վերջապես՝ նապոլեոնի հտմահու տեսիլքը: Ըստ Հյուգոյի, ճակատագիրն այդ աղետները տնօրինել է, որպեսզի այդպիսով նապոլեոնը քավե իր այն ոճիրը, որ նա գործեց Բրյումերի 18-ին՝ հեղափոխության ստեղծած Հանրապետությունը տապալելով: Դրա համար էլ երկը վերնագրված է «Քավություն»:

Սակայն Շիրազը թարգմանում է միայն առաջին մասը, որտեղ նկարագրված է, թե ինչպես նապոլեոնը, թողնելով հրո ճարակ Մոսկվան, դիմում է նահանջի: Ռուսական զորքերը կրնկակոխ հետևում են զավթողներին: Շաշում են ոռոմբերը: Զմեռ է, սարսափելի ցուրտ: Տափաստանը անծայրածիր է, նահանջը՝ դժվարին, մահարեր: Քայքայվում է նապոլեոնյան մեծ բանակը...

1 „Oeuvres Complètes“, T. III, Les Châtiments, p. 69.

2 «Մովեսական զրականություն», 1942, № 3,էջ 3:

Յրվել է զորքն, ու չկա թե, չկա կենտրոն, զորասյուն,
Մարշալները չեն երևում, ու դրոշները չեն ծփում.—
Երեկ բանակ էր ահռելի, այսօր՝ նախիր մի ցրված...

Ահեղ արշավի ելած այդ ուազմիկները խավարի մեջ
խարիսափող սև ուրվականների նման փախչում էին սար-
սափահար, այնին՝

Պայթում էին դեռ կարտեշները ուստական արկի հետ,
Տեսնում էին փախչողները հետապնդող թշնամու
Մորուքները անտառներից, կազակի տեղն ահարկու,
Ու թվում էր՝ գալիս էին անտառները դեռ բուքով,
Ու փախչում էր մահախուճապ զորքն ահավոր շշուկով:
Ետ չէր նայում կայսրն ահից, ու չէր դրոշ ծածանվում...
Օ՛, հիրավի, որ մահազարկ դոռ բանակն էր կործանվում:

Հայրենական պատերազմի ժամանակ Շիրազը, սո-
վետական բազմաթիվ այլ զրոյների նման, սեփական
ստեղծագործություններով երգել է Կարմիր Բանակի հե-
տագա հաղթանակը: Սակայն Հյուգոյին վկայակոչելով,
նա ուզեցել է պատմական փաստով ևս ապացուցել, որ
Ռուսաստանը զավթող թշնամիներն անխուսափելիորեն
դատապարտված են պարտության: Անցյալի և ներկայի
միջև զուգահեռներ անցկացնելու և երկի նշանակությունն
արդիական դարձնելու նպատակով Շիրազը որոշ տողեր
փոփոխել է, որոշ պատկերներ խտացրել, որոշ տողեր էլ
իր կողմից ավելացրել: Այսպես, հետևյալ տողերի հեղի-
նակը հենց ինքը թարգմանիշն է.

... Եվ քայլում է զորավարը, իր մահն առած հայացքում.
... Փախչում էին կայսրի հետ իր համհարզներն ահարեկ.
... Խուճապում էր կայսրն այդպես ու փախչում էր տիրապին.
... Համհարզները թե-թեկ տանում էին կայսրին հոգնած. և այլն:

Այս տողերը չկան ոչ միայն բնագրում, այլև Գ. Շեն-
գելիի թարգմանության մեջ, որից, ըստ երևույթին,
թարգմանել է Շիրազը: Հիշյալ տողերի ներկայությունը

կարելի է բացատրել միայն նրանով, որ Շիրազը, ամենայն հավանականությամբ, ուղեցել է հանձին կայսրի պատկերել հոգնած, խուճապահար, փախուստի մատնըված Հիտլերին:

Թարգմանիչը միանդամայն հասկանալի պատճառով բաց է թողել այն տողերը, որոնցում Հյուգոն համակրանքով է արտահայտվել Նապոլեոնի նկատմամբ: Հիշյալ երկի հետ ազատորեն վարվելու իրավունքն ունենալու համար է, հավանաբար, որ Շիրազը իր թարգմանության վերևում գրել է «Ազատ թարգմանություն»:

Եթե Շիրազը «L'Expiation»-ը լրիվ թարգմանած լիներ, ինչպես այդ արել էր Արսեն Ղազիկյանը 1908 թվականին¹, ապա Հիշյալ հատվածը երկի ամբողջության մեջ ձուվելով՝ բոլորովին այլ իմաստավորում կստանար: Մինչդեռ այսպես, որպես առանձին երկ ներկայացվելով, ընթերցողի մտքում այն ինքնուրույն նշանակություն է ստանում և իր բովանդակությամբ առընչվում հայրենական պատերազմին:

Բանաստեղծ Աշոտ Գրաշին 1952 թ. թարգմանում և լույս է ընծայում Հյուգոյի «Les deux côtés de l'horizon»² («Հորիզոնի երկու կողմերը») շափածո երկը: Ուշագրավ է, որ այդ ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ի կառավարությունը «սառը պատերազմ» էր ծավալում Սովետական Միության դեմ, սովետահայ պոետը Հյուգոյի բազմահարյուր բանաստեղծություններից ընտրում ու թարգմանում է հատկապես այն, որում մեծ գրողը դեռևս 1840 թ. դիպուկ խոսքերով բնութագրում է Ամերիկան: Հիշյալ երկում հեղինակը ափսոսանք է հայտնում, որ արվեստի և գրականության հայրենիքի՝ իտալիայի աստղը հետզհետե շիշում է, իսկ դրա փոխարեն սկսում է փայլել շահութի երկրի՝ Ամերիկայի

1 «Թազմավեպ», 1908, № 7, էջ 313:

2 „Oeuvres Complètes“, T. III, Toute la Lyre, p. 25.

աստղը: Եվ բանաստեղծը վրդովմունքով մտածում է, որ այսուհետև Ֆիլադելֆիան, ուր առևտուրն է միայն եռում, կփոխարինի Հռոմին, որտեղ երազել էր Միքել Անջելոն և երգել Հորացիոսը: Ահա այդ երկից երկու քառատող, Գրաշու թարգմանությամբ: Պոետը, աստծուն դիմելով, ասում է.

Խորտակվում է, տեսնո՞ւմ ես, քո Հռոմը հինավորց,
Ամերիկան ուզում է տանել աշխարհն իր ճամփով,
Մարդը արդյոք, ասա ինձ, չի՞ շեղվի իր ճիշտ ուզուց,
Եվ չի՞ փոխի խառնվածքն իր այլանդակված բարքերով:

Ամերիկան՝ երկիր է սառուցապատ, պաղ հոգու,
Նա աշխարհիկ գործերում շահույթն ընտրեց նպատակ,
Այնինչ աստղն իտալիայի, որ կորցրել է փայլ ու գույն,
Պուղիայի հրով է բոցավառվել շարունակ!:

Այս երկը թարգմանելով, սովետահայ պոետը Հյուգոյի միջոցով իր վերաբերմունքն է դրսկորում ժամանակակից ԱՄՆ-ի նկատմամբ, որտեղ գոլլարն իշխում է ամենուրեք և շահույթի համար մրցավազքն այլանդակում է մարդկային հոգին:

Գրաշու թարգմանության մեջ ևս տեղ-տեղ հանդիպում ենք ինքնուրույն մեկնաբանության դեպքերի, որոնցից հատկանշական է հետևյալը: Հյուգոն Ֆիլադելֆիան բնութագրում է որպես «առևտրականների վաճառատուն» (comptoir de marchands): Ըստս թարգմանիլ Վ. Շորը այն թարգմանել է՝ «Филадельфия, где властвует купец»², իսկ Գրաշին, որը Շորից է թարգմանել, մի քայլ ևս հեռանալով, ասում է. «Ֆիլադելֆիան, ուր տեր է ոսկի հորթը անհոգի»: Մենք այստեղ դիտմամբ բերինք Շորի թարգմանությունը, պարզապես

1 «Գրական թերթ», 1952, № 8, էջ 11.

2 Տե՛ս Վиктор Гюго, Стихотворения, 1956, т. 13, стр. 467, „Две стороны горизонта“, перевод В. Шора.

ցուց տալու համար, որ Հայերենում տեղ գտած շեղումը արդյունք է Գրաշու սեփական մեկնաբանության:

Ի միջի այլոց, ինչպես այս, այնպես էլ նախորդ դեպքերում մենք նկատի ենք առել ո՛չ թե ոռւս թարգմանիշների կատարած և Հայերենում նույնությամբ կրկնված շեղումները (այդպիսի դեպքերում ինքնուրուցնությունը պատկանում է ոռւս թարգմանիչներին), այլ այն շեղումները, որ Հայ թարգմանիչները ըստ իրենց մեկնաբանության կամ վերաբերմունքի, մտածված և դիտավորյալ կերպով կատարել են ոռւսերենից թարգմանելու ժամանակ:

Այս առթիվ Հարկավոր է նշել, որ արևելահայ հատվածում Հյուգոյի երկերի թարգմանությունների մի զգացլի մասը կատարվել է ոռւսերենից, որը, որպես միջնորդ լեզու, շնորհակալ դեր է խաղացել Հայ թարգմանական գրականության հարստացման գործում: Բաֆֆուց և Ծատուրյանից մինչև Զարենցը՝ Հանճարեղ պոետի ստեղծագործությունները թարգմանել են ոռւսերենից: Ճիշտ է, մի երկրորդ լեզվից կատարված թարգմանությունն այն չէ (Հարազատության տեսակետից), ինչ որ բնագրից կատարվածը, բայց այդ պակասը լրացվում, փոխհատուցվում է ավշալ թարգմանչի տաղանդով, որը (եթե այդպիսին է) կարող է շատ ավելի արժեքավոր գործ տալ, քան բնագրից թարգմանող միջակ թարգմանիչը:

Հյուգոյի պոեղիայից թարգմանություններ կատարել են նաև Հր. Հովհաննիսյանը, Ս. Կապուտիկյանը, Հռ. Պողոսյանը և ուրիշներ, բայց այդ թարգմանությունները, չգիտես ինչու, մինչև այժմ անտիպ են մնացել:

Բացի «Բարիկադի վրա» բանաստեղծությունից, մի շարք արձակ երկեր ևս թարգմանվել և մտել են դպրոցական դասագրքերը: Այսպես, օրինակ, 1925 թ. «Կարմիր արև» դասագրքում (4-րդ տարի) զետեղվել է Արազու թարգմանած «Կարմիր բարիկադ» երկը, որտեղ նկա-

բագրված է, թե ինչպես Փարիզում Կոմունայի կռիվների ժամանակ անձնագործ մի աղջիկ մեկ բարիկադից մյուսն է գնում՝ կոմունարներին օգնելու համար։ Այս պատմվածքը տարիներ շարունակ մնացել է Հիշյալ դասագրքի հաջորդական հրատարակություններում։ Այն զետեղվել է նաև «Հարվածային պոլիտեխնիկ», «Խորհրդային գյուղ» և «Հայոց լեզվի լնթերցարան» դասագրքերում (վերջինում՝ «Հերոսուհին» վերնագրով):

«Միտինգ» երկում տեսնում ենք, թե ինչպես հազարավոր ածխագործներ անտառի մեջ ժողով են անում և որոշում իշխանությունը տապալել, հանքերը դարձնել ժողովրդի սեփականությունը։ Այս պատմվածքը 1931 թ. տպագրվել է «Կյանք և աշխատանք» լեզվի դասագրքում (3-րդ տարի)։ 1933 թվականին նույն երկը «Կապիտալի լծի տակ» վերնագրով զետեղվում է կիսագրագետների և բանվորական առաջին խմբերի համար կազմված «Հայ լեզվի դասագիրք»-ում։

«Թշվառներ» վեպից թարգմանվում ու «Լեզվի և գրականության դասագիրք»-ում (5-րդ տարի, 1933) զետեղվում է այն հատվածը, որտեղ փոքրիկ Գալրոշը բարիկադային կոիլների ժամանակ ապստամբների համար փամփուշտներ հավաքելիս զոհվում է։ Հիշյալ հատվածը կրում է «Բարիկադների վրա» վերնագիրը։ Նույն վերնագրով այն լուս է տեսնում «Գրականության քրեստոմատիա»-ում (5-րդ տարի, 1934) և այդ գրքի հետագա հրատարակություններում։ Այնուհետև նույն հատվածը ավելի ընդարձակ ծավալով և «Գալրոշ» վերնագրով զետեղվում է «Մայրենի լեզու» դասագրքում (4-րդ տարի, 1941) և մոտ երկու տասնամյակ անընդհատ տպագրվում է այդ դասագրքում։

«Գրականության քրեստոմատիա»-ում (5-րդ տարի, 1930) զետեղված է «Խննություններեքը» վեպի «Մոնդրեյան անտառը» գլուխից մի հատված, որտեղ նկարագրված է,

թե ինչպես հեղափոխական բանակի գումարտակներից մեկը անտառում հանդիպում է մի այրի կնոջ ու երեխաներին, որոնք քաղցած և անօթևան թափառում էին: Գումարտակի զինվորները, խղճալով, իրենց պաշտպանության տակ են առնում նրանց, կերակրում և հետները տանում: Այս պատմվածքը քրեստոմատիայի հաջորդ հրատարակություններում ևս տպագրվում է:

Մեր նպատակը չէ առանձին-առանձին ցույց տալ, թե ո՞ր դասագրքերում և ժամանակագրական ինչպիսի՝ հաշորդականությամբ են լույս տեսել վերոհիշյալ պատմվածքները: Մեզ հետաքրքրողն այն փաստն է, որ սովետական կարգերի հաստատումից հետո Հյուգոյի երկերը հենց առաջին տարիներից տեղ են գտել հայ գասագրերում, տասնամյակներ շարունակ տպվել ու վերատպվել են և հայրենասիրության ու հումանիզմի սքանչելի օրինակներով ոգևորել մի քանի սերունդների:

Պետհրատի ՀՀԿԵՄ ԿԿ կից մանկա-պատանեկան գրականության բաժինը, իր հերթին, դպրոցականների համար առանձին գրքույկներով հրատարակել է Հյուգոյից մի շարք երկեր: Այսպես, 1932 թ. առանձին գրքով լույս է տեսնում «Գավրոշը», ուր մեկտեղված և իրար հետ շաղկապված են այդ փոքրիկ հերոսի վերաբերյալ տարբեր հատվածները: Դա շարադրանք-թարգմանություն է, պարզ և մատչելի լեզվով գրված, պատանիների համար:

«Կողետա» պատմվածքը, որը «Թշվառներից» վերցրած ու վերամշակված մի այլ դրվագ է, 1937 թ. լույս է ընծայլում Տ. Խոջոյանի թարգմանությամբ:

«Խննսուներեքը» վեպը հրատարակվում է 1938 թ. Հ. Հարությունյանի թարգմանությամբ: Այս թարգմանությունը կատարված է Վ. Շիշմարեայի ոռուսերեն թարգմանությունից, որ մեծահասակ երեխաների համար վե-

րամշակել է Սոֆյա Վինոգրադովսկայան, որոշ կրծատումներով:

«Իննուներերի» հայերեն մի այլ համառոտ թարգմանությունը, դարձյալ ոռւսերենից (թարգմ. Մ. Մ.), Մոսկվայում լույս է ընծայում «Մուրճ և Մանդաղ» հրատարակչությունը՝ «93 թիվը» վերնագրով։ Գիրքը թեև թվական չի կրում, բայց պրատումներից պարզվեց, որ այն հրատարակվել է 1923 թվականին։

Սովետական կարգերի օրոք է, որ առաջին անգամ արևելահայերեն լույս է տեսնում «Թշվառների» լրիվ թարգմանությունը, որը պատկանում է բազմավաստակ թարգմանիչ Վահե Միքայելյանի դրչին։ Վեպը հրատարակվել է Երևանում՝ հինգ հատորով¹։

Ի դեպ, «Թշվառների» թարգմանությունը ծրագրվել էր գեռես 1937 թ.։ Այդ ժամանակվա Պետհրատի դիրեկտիան Վահե Միքայելյանին առաջարկել էր Գր. Զիլինկիրյանի թարգմանությունը խմբագրել և ոռւսահայերենի վերածել, մի աշխատանք, որն ավելի դժվար և հոգնեցրցից է, քան ուղղակի բնագրից թարգմանելը։ Հետեւապես Միքայելյանը նախընտրել է կրկին ֆրանսերենից թարգմանել։ Ի պատիվ Միքայելյանի պիտի ասել, որ նրա թարգմանությունը աշքի է ընկնում ոչ միայն հարազատությամբ բնագրին, այլև ճոխ ու գեղեցիկ հայերենով։ Նրա դյուրասահ ոճը, հարուստ բառապաշտը և ֆրանսերենի իմացությունը մեծապես նպաստել են թարգմանության հաջողությանը։

Վիկոր Հյուգոյի մյուս խոշոր վեպը՝ «Փարիզի Աստվածամոր տաճարը» առաջին անգամ արևելահայերեն լույս է տեսնում սովետական շրջանում՝ 1953 թվականին, դարձյալ Վ. Միքայելյանի թարգմանությամբ։ Այդ վեպը, ինչպես արդեն ասել ենք, ամենադժվար թարգ-

1 Առաջին հատորը լույս է տեսել 1940 թ., երկրորդը՝ 1946, երրորդը՝ 1949, չորրորդը՝ 1950 և հինգերորդը՝ 1951 թվականին։

մանելի գրքերից մեկն է, որովհետև պարունակում է իսպաներեն, լատիներեն և միջնադարյան ֆրանսերեն բազմաթիվ պարբերություններ: Թարգմանիչը լեզվական այդ յուրահատուկ դժվարությունները հաղթահարել է մասամբ սեփական պրավտումների շնորհիվ, մասամբ էլ ուսւերեն թարգմանության օգնությամբ: Միքայելյանի արժանիքը հատկապես նրանում է, որ նա կարողացել է ֆրանսիական հումորը մեզ հաղորդել, առանց մեղանշելու հայ լեզվի հարազատության դեմ:

«Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպի թարգմանության մասին գրականագետ Վ. Մնացականյանը 1953 թ. «Գրական թերթ»-ի № 45-ում տպագրած գրախոսականի մեջ ասում է. «Վեպի հայերեն թարգմանությունը քիչ դժվարություններ չի հարուցել թարգմանչին՝ հեղինակի ինքնատիպ ոճի առանձնահատկությունները պահպանելու, նրա գլուխ-գործոցներից մեկի «ներքին կյանքը» հարազատորեն վերարտադրելու ուղղությամբ: Այդ նպատակին հասնելու համար թարգմանիչը պետք է ուսումնասիրեր վեպի ժամանակաշրջանը, հերոսների բարքերն ու սովորությունները, ինչպես նաև գտներ բազմաթիվ հասկացողությունների, դարձվածքների, արխաիկ բառերի պատմական իմաստն ու նշանակությունը, որոնք հետագայում կամ դուրս են մղվել ժողովրդի կենցաղից ու լեզվից, կամ այլ իմաստ են ստացել»:

Գրախոսը ավելացնում է, թե Միքայելյանը մեծ զանք է թափել՝ ճշգրիտ կերպով թարգմանելու համար բազմաթիվ այլաբանություններ, կրոնական տերմիններ և այլն, որոնց ճիշտ իմաստը երեմն հնարավոր չէ գտնել բառարաններում, և կարողացել է վեպի գեղարվեստական հմայքը պահպանելով՝ ապահովել վեպի թարգմանության հաջողությունը:

Սովետական Հայաստանում Հյուգոյի երկերը թարգմանվել են որպես անցյալի գրական ժառանգություն,

բայց, ինչպես տեսնում ենք, մեծանուն Հեղինակի երկերից ընտրվել են մասնավորապես նրանք, որոնք հագեցված են քաղաքական-հասարակական առաջավոր գաղափարներով, որպեսզի ընթերցողը ծանոթանա ու միայն մեծ գրողի արվեստին, այլև նրա դեմոկրատական հայացքներին:

Սովետական շրջանում՝ Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունները տպագրվել են բազմահազար օրինակներով և դա մեծապես նպաստել է այդ երկերի լայն մասսայականացմանը:

15

Վիկտոր Հյուգոյի երկերը, հայերենի թարգմանվելով, զգալիորեն նպաստել են մեր լեզվի և գրականության զարգացմանը:

Հանճարեղ գրողի ստեղծագործությունները, ինչպես տեսանք, սկսել են թարգմանվել պատմական այն ժամանակաշրջանում, երբ աշխարհաբար գրական լեզվի կազմավորման հետ զուգընթաց մեծ թափով առաջ էր տարվում լեզվաշխարհությունը, բազմաթիվ նոր բառեր էին հորինվում, կազմվում և փոխ առնվում։ Այդ պայմաններում թարգմանական արվեստը պետք է հանդիսանար և իրոք հանդիսացավ բառակերտման գիտավոր դարբնոցը, ուր հայ թարգմանիչները նոր բառեր և արտահայտչական ձևեր էին հորինվում ամեն անգամ, երբ օտար բառի դիմաց բացակայում էր համապատասխան հայերենը։ Զէ՞ որ թարգմանության դեպքում է ամենից ավելի զգացվում բառակերտման անհրաժեշտությունը։

Մեզ հայտնի չէ, թէ 60—80-ական թվականների ամենաբեղուն (լեզվաշխարհության տեսակետից) շրջանում քանի հազար բառ է հորինվել և փոխ առնվել:

բայց այն փաստը, որ միայն Մեսրոպ Նուպարյանը 1892 թ. իր քրանսահայ բառարանում մոտ վեց հազար նոր բառ է կազմել¹, ինքնին բավական է պատկերացում տալու համար նախորդող երեք տասնամյակների ընդհանուր բառաստեղծման հսկա համեմատությունների մասին:

Միայն 60—80-ական թվականներին Հյուգոյի ծավալուն երկերից կատարված հայերեն թարգմանությունների քանակը հասնում է մոտ 220 տպագրական մամուլի, առանց հաշվելու բանաստեղծությունների, պատմվածքների, հոդվածների և ճառերի թարգմանությունները: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ այդ վիթխարի ծավալով գրականությունը թարգմանելիս ահագին թվով նոր բառեր են կազմվել: Հյուգոյի երկերից «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը (մոտ 35 մամուլ) թարգմանել է նույնինքը բառարանագիտ Մեսրոպ Նուպարյանը, որն այդ առթիվ կազմել է մեծ քանակությամբ նոր բառեր: Դրա մասին նորայր Բյուզանդացին իր գրախոսականում արդեն ակնարկել է, բայց լուսությամբ անցնելով հաջող բառերը, որոնք իր կարծիքով խորթ էին և անընդունելի:

«Թշվառների» թարգմանության առնչությամբ Գր. Զիլինկիրյանը ևս կազմել ու հորինել է բազմաթիվ բառեր: Վեպի 1868 թ. թարգմանության առաջաբանում Զիլինկիրյանը բացատրում է, թե լեզվական արտասովոր հարստությամբ այդ բազմահատոր երկը աղքատիկ աշխարհաբարով՝ թարգմանելը կապված էր հսկայական դժմառությունների հետ: «Լեզվագիտ աղքայինք միայն

1 Տե՛ս Մեսրոպ Նուպարյանի «Ֆրանսերենե հայ-աշխարհիկ բառարան», Կ. Պոլիս, 1892: Բառագրքի առաջարանին հաջորդող ծանոթագրություններում (էջ ինք) հեղինակը գրում է, «ևաշանիշներն, որք թվով 5000—6000-ի կը հասնին, մեզմե կազմված բառերը կը ցուցնեն, որոնց մեջ հին բառեր ևս կան, մերձավոր կամ նոր առամբ զրծածված... ինչպես նաև մերձանեիշ դավառական բառեր»:

կրնան երևակայիլ,— ասում է նա,— թե թարգմանիչը որքան նեղություն ու աշխատություն կը կրե այդպիսի եվրոպական գիրք մը հայերենի թարգմանելու համար։ Ինչպես ըստինք արդեն, «Թշվառներու» մեջ կը վխտան այս գժվարությունները, որոնց առաջինն է՝ գտնել, կազմել, բարդել կամ հարմարցնել այնպիսի բառեր, որոնք հայ մատենագրությանց և բառարաններու մեջ չկան։ Այս տեսակ բառերու առջև ստիպվեցանք ֆրանսերենն ալ դնել»։

Անդրադառնալով Զիլինկիրյանի կատարած թարգմանություններին, Հրանտ Ասատրյան ընդգծում է, որ նրանք (և հատկապես «Թշվառները») զգալի դեր են խաղացել աշխարհաբար լեզվի զարգացման գործում։ «Զիլինկիրյան խղճամիտ թարգմանիչ մըն է, — ասում է նա, — և աշխարհաբարի զարգացման մեջ որոշ դեր մը ունեցած է իր բազմահատոր հրատարակություններով։ Մանավանդ «Թշվառներու» թարգմանությունը, իր հոգնացան գժվարություններուն հակառակ, իզմիրի Տեսեցան տպարաննեն լույս տեսած գործերուն լավագույններին է»¹։

«Մյուի Բլասի» թարգմանության կապակցությամբ Հր. Ասատրյան իր հուշերում գրում է, թե Ն. Ռուսինյանը կերտել է բազմաթիվ բառեր, օրինակ՝ տարփիկ, սիրագիր, տածուհի, սիրասեր, ծնրակալություն, բազկաթոռ, կեղծամ, արմկահեց, կլլոր, զինանիշ, տիար, հովկով, սպասիկ, և այլն²։ Նույն թարգմանության մեջ մենք ևս, մեր հերթին, նկատել ենք մի շարք նորամուտ բառեր, ինչպիսիք են՝ խուրել, կամարակաց, հեղներգ, թողանց, ուսընդիշ, դայլոտիկ, դերազգեստ, փշիշալ, աշխարհավանդ և այլն, որոնք չկան այդ շրջանի հայ բառարան-

1 Հրանտ Ասատրյան, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 142։

2 Նույն գրքում, տե՛ս «Նահապետ Ռուսինյան» գլուխը»

Ներում: Անշուշտ, այս բառերից բոլորը չեն, որ հաջող են
և ընդունելություն են գտնել:

Բառակերտման և փոխառության հարցում առաջմղից
ազգակ են հանդիսացել նաև տաղաշափական առանձ-
նահատուկ այն պահանջները, որոնք բխում են պոետա-
կան շափը պահպանելու և հանգերը հարմարեցնելու ան-
հրաժեշտությունից: Այդպիսի դեպքերում թարգմանիչը
պարտավոր է թե՛ բանատողի վանկերի թիվը համաձայ-
նեցնել, թե՛ տողավերջերի համար նմանհնչուն բառեր
գտնել և թե՛, միաժամանակ, բնագրի տեքստին հավա-
տարիմ մնալ: Դրա համար նա հաճախ ստիպված է
հրաժարվել հայերենում գոյություն ունեցող բառերից և
հորինել նորերը: Հյուգոյի պոեզիայից կատարված մի
շարք թարգմանությունները բնագրերի հետ համեմա-
տելիս պարզվեց, որ իրոք տաղաշափական պահանջների
բերմամբ թարգմանիչները հաճախ նոր բառեր են կեր-
տել, չնայած որ ֆրանսերեն բառերի հոմանիշները կա-
յին հայերենում: Այդպիսի նորակերտ բառերից են՝ երկ-
նավանդ, գետնագլոր, սիրազդեցիկ, վրդովահուզ,
դժնեռդի, զվարթաթիո, դյուրափետ և այլն:

Լեզվաշինարարության ժամանակաշրջանում կազմ-
ված, հորինված կամ փոխ առնված բառերի մի զգակի
մասը հետագայում քաղաքացիական իրավունք ստա-
նալով, մտել է հայ լեզվի բառապաշտրի մեջ: Դրանց
թվում կան նաև, ինչպես տեսանք, Հյուգոյից կատարված
թարգմանությունների առթիվ կազմված բազմաթիվ բա-
ռեր: Հենց այդ առումով էլ կարելի է ասել, որ աշխար-
հաբար գրական լեզվի զարգացման գործում Հյուգոյի
երկերի թարգմանությունները, անկասկած, արժեքավոր
ավանդ են մուծել:

Վիկառը Հյուգոյի վեպերի, դրամաների, բանաստեղ-
ծությունների և այլ ստեղծագործությունների թարգմա-
նությունները մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում

գրալիորեն հարստացրել են Հայ թարգմանական գրականությունը։ Փաստ է, որ հվորապական գրողների մեջ ամենից ավելի Հյուգոյի երկերն են մտել Հայ գրականության մեջ, այն էլ տաղանդավոր թարգմանիչների և անվանի գրողների թարգմանությամբ։ Հյուգոյի բազմաթիվ Հայ թարգմանիչների շաբրում իրենց արժանի տեղն ունեն անվանի այնպիսի գրողներ, ինչպիսիք են Մ. Պեշիկթալլանը, Գ. Օտյանը, Թ. Թերզյանը, Ռաֆֆին, Հովհ. Հովհաննիսյանը, Ալ. Սատուրյանը, Միպիլը, Ալ. Փանոսյանը, Ա. Չռպանյանը, Վահան Շեքեյանը, Ե. Զարենցը, Ս. Տարոնցին, Հովհ. Շիրազը և ուրիշներ, որոնք Հայ թարգմանական գրականությունը հարստացրել են Հանճարեղ պոետի ստեղծագործության գոհարներով։ Բայց Հյուգոյի պոելիալից, Հայ գրականության սեփականությունն են գարձել նրա «Թշվառները», «Փարիզի Աստվածամոր տաճարը», «Իննուուներեքը», «Մահապարտի վերջին օրը», «Կլոդ Գյոն», «Մի ոճրագործության պատմությունը», «Անջելոն», «Էռնանին», «Մյուսի Բլասը», «Թուրքավները», «Թագավորը զվարճանում է», «Լուկրեցիա Բորչիա» և այլ ծավալուն աշխատություններ, որոնց մեծ մասը մի քանի տարբեր թարգմանություններով։

Հյուգոյի երկերի թարգմանությունները նպաստել են նաև Հայ գրական ոռմանտիզմի հիտագա զարգացմանը։ Ճիշտ է, Հայ գրական ոռմանտիզմը բխել է իր սեփական ակունքներից, այն եղել է բուն Հայ ժողովրդի կյանքի արտահայտությունը և պայմանավորվել է պատմական յուրահատուկ հանգամանքներով, բայց այնուամենայնիվ Հայ գրական միտքը երբեք կտրված չի եղել Համաշխարհային գրականությունից։ Այն ժամանակաշրջանում, երբ Հայ ոռմանտիզմը վերելք էր ապրում, մեր մտավորականները մեծ հետաքրքրությամբ և անսահ-

ման սիրով կարդում էին խոշորագույն ռոմանտիկների գործերը, հափշտակվում նրանց գաղափարներով, զգացմունքներով և արվեստով, ծանոթանում նրանց աշխարհայեցողությանը, բազմազան թեմաներին, արտահայտչական ձևերին ու պոետական մտածողության եղանակներին:

Հոչակավոր ռոմանտիկների թվում Վիկտոր Հյուգոն իր գեղարվեստական խոսքի շացուցիչ փայլով այնքան մեծ հմայք է ձեռք բերել հայ մտավորականների մոտ, մասնավորապես արևմտահայ հատվածում, որ դարձել է ամենաշատ կարդացվող հեղինակը։ Այդ կապակցությամբ հրապարակագիր Գ. Մսերյանը 1881 թ. գրում է հետևյալը. «Հյուկո ամեն հայ դպրոցականի բերնին մեջ է, ամեն հոդվածի վերև, կրնանք ըսել՝ ամեն հայ գրողներու մտքին մեջ, վասնզի նա թե՛ իբրև փիլիսոփա, թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ իբրև գիտուն՝ դարուս առաջին մարդը նկատված է և,— ինչպես կըսե էմիլ Զոլա, — կրոն մը դարձած է»¹:

«Թշվառների» 1885 թ. հրատարակության առաջարանում Զիլինկիրյանը անդրադառնում է հայ իրականության մեջ այդ վեպի կատարած խոշոր դերին և հայունում, թե 1868 թվականին ինքը ձեռնարկել է «Թշվառների» լրիվ թարգմանությունը, հուսալով, որ նրա միջոցով կստարե հայ գրականության դարգացմանը։ Զիլինկիրյանը ավելացնում է, թե իրոք «Թշվառների» թարգմանությունը հայ գրողներին խանդավառեց, նրանց մեջ գրգռեց ստեղծագործելու փառասիրությունը. «Կը համարձակինք կարծելու, — շարունակում է նա, — թե մեր հույսը բոլորովին ի դերև չեղավ, և թե Ֆրանսայի անվանի բանահյուսին այս գործին թարգմանությունը հայոց

1 «Մասիս», 1881, № 3055, «Վիքտոր Հյուկո և էմիլ Լիթրե»:

ընթերցասիրության մի հրապուրիշ գրգիռը, նաև ազգացին գրագետներու եռանդը և գրական փառասիրությունը դրդող մի դեպքը եղավ։ Մեր այս կարծիքը մասսամբ իվիք հաստատություն կը գտնե այն տարբերութենե, որ ի նպաստ հառաջադիմության կիրեա հայոց 1868-ի և 1885-ի գրական կյանքին մեջ։ Տասնյոթ տարիե ի վեր հայ միտքը հառաջադիմ մղում մը ստացած է, և կը շարժի բավական արդյունավոր կերպով։ Այս շարժումն ևս քան զես կաճի, կը բեղմնավորվի և հայ գրականության նկատմամբ անողոքելի սկեպտիկյանները իսկ կը ստիպի փոքր-ինչ հավատք ունենալու»։

Յուրի Վեսելովսկին, որը մոտիկից հետեւ է հայ գրական կյանքին, 1902 թ. գրում է, թե կամարթինը, Ժորժ Սանդը, Ալ. Գյուման, Էժեն Սյուն և ուրիշ ոռմանտիկներ մեծ ժողովրդականություն են վայելել արևմտահայ գրողների և ընթերցող հասարակության մեջ, սակայն ամենից ավելի Վիկտոր Հյուգոն է ամենազերմ ընդունելություն գտել։ Նա եղել է արևմտահայ գրողների ամենասիրելի հեղինակը, և վերջիններս «միշտ աշխատել են հետեւ Հյուգոյին, և թարգմանել են նրա խոշոր երկերը»¹։

Սիյուռքահայ գրականագետ Փ. Սանասարը նույնպես հաստատում է, թե 1850-ական թվականներից մինչև դարավերջը արևմտահայ գրողները հետեւ են ֆրանսիական գրականությանը, հատկապես ոռմանտիկական դպրոցին։ «իսկ այս ոռմանթիք դպրոցի շունչը և խմորը եղած է ինքն իսկ՝ Հյուկոն»²։

Նկատի ունենալով Հյուկոյի երկերից կատարված թարգմանությունների հսկա քանակը, նրանց գտած ամենազերմ ընդունելությունը, հայ գրողների վրա

1 Տե՛ս «Նոր Դար», 1902, № 37, էջ 1։

2 «Հայաստանի Կոչնակ», 1935, № 42, էջ 989։

նրանց ունեցած խոր ազդեցությունը, կարելի է առանց
շափազանցության ասել, որ ֆրանսիական ոռմանտիզմը
հայ գրականության մեջ ներհոսկել է առավելապես Վիկ-
տոր Հյուգոյի երկերի միջոցով, որոնք իրենց հետ բերել
են թեմատիկայի բաղմազանություն և ոճական նոր
երանդներ։ Այդ ներհոսումը բնականաբար արագացրել
է հայ ոռմանտիզմի զարգացման ընթացքը և նպաստել
նրա հետագա ծավալմանը։

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՅԻ Ա.ՋՈՒՅՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ.

Հայ մտավորականությունը բոլոր ժամանակներում վառ հետաքրքրություն է ցուցաբերել դեպի այլ ժողովուրդների և մասնավորապես հարեան ժողովուրդների գրականությունները, սակայն XIX դարի երկրորդ կեսից այդ հետաքրքրության սահմանները հետզհետեւ ավելի են ընդլայնվել:

Ուստի և եվրոպական գրականությունների ուսումնասիրությունը տվյալ ժամանակաշրջանում զգալիորեն նորանուած է Հայ գրողների գեղագիտական հայացքների զարգացմանն ու գաղափարական վերելքին: Նոր գաղափարներով առողջապահ Հայ հեղինակները աստիճանաբար դուրս գալով գրական հին արագիցիանների սահմանափակ շրջանակից՝ ժամանակակից Հայ իրականության ձգտումներն ու իդեալները իրենց երկերում արտացոլելու Համար սկսել են օգտագործել գեղարվեստական պատկերման նոր ձևեր ու միջոցներ:

Եվրոպական մեծահոչակ գրողների թվում Վիկտոր Հյուգոյի երկերը ևս օգնել են Հայ հեղինակների սահմանագործական առաջընթացին: Եթե, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, գպրոցական աշակերտից մինչև կի-

սագրագետ արհեստավորն ու գյուղացին կարդում էին
նրա երկերը, ապա հայ գրական գործիչները՝ առավել ևս:

Ինչ վերաբերում է Հատկապես արևմտահայ գրողներին, ապա նրանք արտակարգ ոգևորությամբ էին կարդում Հյուգոյի երկերը: Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Նար-Պեյի, Պետրոս Ռուբյանի, Ծերենցի, Եղիա Տեմիրճիպաշ-յանի, Գրիգոր Օտյանի, Թովմաս Թերզյանի, Հովհ. Սեթյանի, Ռեթեռս Պերպերյանի և այլ ոռմանտիկ հայ գրողների ամենասիրելի հեղինակը Վիկտոր Հյուգոն է եղել: Նույնիսկ ոեալիստ գրողները՝ Արփիար Արփիար-յան, Լեռն Բաշլյան, Տիգրան Կամսարական, Հրանտ Ասատոր, Գրիգոր Զոհրապ, Արշակ Չոպանյան և ուրիշներ սիրով ու հետաքրքրությամբ էին կարդում մեծանուն գրողի ստեղծագործությունը և նրանից ուսանելի դասեր քաղցւմ: «Անսահման են,—ասում է Ա. Չոպանյանը,— իմ սերս և երախտագիտությունս այդ հզոր ու բարի քեր-թողին համար, որուն գործերուն ընթերցումը՝ կյանքիս առաջին նախապատրաստական շրջանին ինձի անհուն հոգեկան հրճվանքներ պարգևած, մարդն ու գրագետը իմ մեջս կազմելու համար մեծապես նպաստած է»¹:

1935 թ. Վիկտոր Հյուգոյի մահվան 50-ամյակի առ-թիվ Փրանսահայ գրողների միության կազմակերպած Հոբելյանական հանդեսում Արշակ Չոպանյանը, անդրադառնալով Հյուգոյի նկատմամբ պոլսահայ մտավորականության տածած պաշտամունքին, հիշում է, թե Կեդրոնական վարժարանի գրականության դասատուները նրա պոեզիայի միջոցով սեր էին արթնացնում դեպի գեղեցիկ արվեստը: Բանաստեղծ Թովմաս Թերզյանը աշակերտաներին կարդում էր Հյուգոյից բազմաթիվ քերթվածներ, որոնք հիացմունքով համակում էին պատանիներին²:

1 «Անսահման», 1935, № 5, էջ 6.

2 A. Tchobanian, Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935, p. 73.

Նույն հանդեսում բանաստեղծուհի Անալիսը (ծն. 1872) խոսում է իր ժամանակի պոլսահայ երիտասարդ սերնդի դաստիարակության, նրա գրական հակոմների մասին և պատմում, թե ինչպես Պերպերյան վարժարանի հիմնադիր և գրականության ականավոր դաստու Ռեթես Պերպերյանը աշակերտների հոգում «կաթիլկաթիլ ծորում էր Հյուգոյի հանճարի կախարդանքը, որն ինչպես սքանչելի մի հեղուկ, մշտագալար էր պահում պոեզիայի ծաղիկը»³:

Հայտնի է, որ Պերպերյան և Կեդրոնական վարժարանները թուրքահայ լուսավորության կենտրոններն են եղել և տասնամյակների ընթացքում պատրաստել են բազմաթիվ մտավորականներ ու գրողներ։ Պերպերյան վարժարանում սովորել և գրական ճաշակ են ստացել Սիամանթոն, Լևոն Բաշալյանը, Վահան Թեքեյանը, Ռուբեն Սևակը, Տիգրան Չյուկյուրյանը և ուրիշներ։ Կեդրոնական վարժարանում սովորել են Արշակ Չոպանյանը, Միսաք Մեծարենցը և ուրիշներ։ Հիշյալ վարժարանները եղել են այն օջախները, որտեղ Հյուգոյի պոետական շնչով դաստիարակվել են բազմաթիվ գրողներ։

Արևելահայ գրողները ևս մեծ հետաքրքրությամբ կարդում էին Հյուգոյին։ Գաբրիել Սունդուկյանը իր նամակներից մեկում, ինչպես տեսանք, գրում է, թե զեռևս 1862 թ. բնագրից կարդացել է Վիկտոր Հյուգոյի «Մահապարտի վերջին օրը» վիպակը, որն իր վրա գործել է անջնջելի տպավորություն։

Հովհաննես Հովհաննիսյանը իր պատանության օրերից բնագրից կարդում էր Հյուգոյի «Աշնան տերեւներ» և «Մթնշաղի երգեր» բանաստեղծությունների ժողովածուները, որոնցից և կատարում էր թարգմանություններ։ Հովհաննիսյանը իր բանաստեղծությունների անդրանիկ հատորի համար բնաբան է ընտրել Հյուգոյի «Մթնշաղի

¹ A. Tchobanian, Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935, p. 83.

երգեր» ժողովածուի առաջարանից մի հատված, որ իր ձեռագիր տեսրի տիտղոսաթերթի վրա զհտեղիլ է ֆրանսերեն և հայերեն։ Մենք բերում ենք միայն հայերենը, որը բնագրի հարազատ թարգմանությունն է։ «Այս գրքի մեջ կա ամեն հակասություն, երկրայություն և հավատ, օր և գիշեր, խավար անկյուն և լուսավոր կետ, ինչպես ամեն բանի մեջ, որ մենք տեսնում ենք, ինչպես ամեն բանի մեջ, որ մենք մտածում ենք այս դարումը»¹։ Այս բնաբանը, ըստ երեսութիւն, ջնջվել է Պետերբուրգի գրաքըննական կոմիտեի կողմից, քանի որ այն չկա 1887 թ. Հրատարակված հիշյալ ժողովածուի անվանաթերթի վրա։

Նար-Դոսը իր ինքնակենսագրության մեջ գիկուր Հյուզոյի անունը հիշատակում է այն հեղինակների թվում, որոնց երկերը իր ստեղծագործական վաղ շրջանում նպաստել են իր մտավոր զարգացմանը²։

Իսո՞ւ, որը մեր գրականության մեջ հայտնի է նաև որպես վիպասան, Յուրի Վեսելովսկուն ուղղած իր նամակում գրում է, որ Հյուզոն, ի շարս այլ հեղինակների, նշանակալից դեր է խաղացել իր գրական հաշակի և իդեալների մշակման հարցում³։

Բայց եթե Հյուզոյի արվեստը նպաստել է մի շարք գրողների սոսկ մտավոր զարգացմանն ու ճաշակի ձևավորմանը, ապա, մյուս կողմից՝ այլ գրողների վրա այն ունեցել է գաղափարական կամ գեղարվեստական որոշակի ազդեցություն։

Խռովով գրական աղքեցությունների նշանակության ու գերի մասին, Նար-Դոսը 1908 թ. Յուրի Վեսելովսկուն ուղղած իր նամակում իրավացիորեն ասում է. «Եթե գո-

¹Տե՛ս Հայկական ՍՍՌԴԱ Գրականության և արվեստի թանգարան, Հովհաննեսի արխիվ, № 18—I:

² Նույն թանգարանում, Նար-Դոսի արխիվ, № 63, էջ 25։

³ Ю. Веселовский, Литературные очерки, т. II, Москва, 1910, стр. 282.

յություն շունենար գրողների փոխադարձ ազդեցություն, նրանց ստեղծագործությունը կլիներ չափազանց աղքատ, և մանավանդ, եթե տարբեր ժողովուրդների գրողները միմյանց վրա շաղգեին, ապա շուտ կցամաքեր և ընդհանուր գրականությունը, որովհետև գրականության գարգացումը պայմանավորված է առանձին ցեղերի շփման օրենքով»¹:

Նար-Դոսից ավելի քան կես դար հետո՝ սովետական գրող Վլադիմիր Սոլոովյովնը նույն միտքն է արտահայտում իր «Ենչն է մեզ հարազատացնում» հոդվածում: «Ժողովուրդների կուլտուրաները, — գրում է նա, — ընդհանրապես չեն կարող գոյություն ունենալ և արդյունավետ զարգանալ մեկը մյուսից մեկուսացած. Բայցոնք ազգեր է Պուշկինի վրա, Պուշկինը՝ Խրիստո Բոտկի, Մուսասանը՝ Զեխովի, Զեխովը՝ Բերնարդ Շոուի վրա և այլն»²:

Ինչ վերաբերում է Վիկտոր Հյուգոյին, ապա նա իր հոյակապ երկերով և ստեղծագործական նորարարություններով հանդիսացել է իր դարաշրջանի ռոմանտիկ դրականության ամենակարկառուն գենքը և նրա ազդեցությունը կրել են բազմաթիվ մեծանուն գրողներ: Նույնիսկ Դոստոևսկու նման հանճարեղ գրողը որոշակիորեն ներշնչվել է «Թշվատներ»-ի գաղափարական բովանդակությունից և բացեիրաց ընդունել, որ իր «Կրոտկայ» պատմվածքը գրել է Հյուգոյի «Մահապարտի վերջին օրը» վիպակի հետևությամբ:

Վիկտոր Հյուգոն իր արժեքավոր ավանդն է մուծել նաև հայ գրողների գաղափարական աճի և գեղարվեստական վարպետության բարձրացման գործում:

Հյուգոյի գաղափարական ազդեցությունը կրող հայ

¹ «Գրական ժառանդություն», Երևան, 1961, Հատ. 1, էջ 243.
Կազմողներ՝ Գ. Ն. Ազնավորյան, Պ. Ե. Սիմոնյան:

²Տե՛ս «Գրական թերթ», 1962, № 7 (1127):

Հեղինակները կյանքի այս կամ այն երկութիւնների նկատմամբ նրա հայացքները առավել կամ նվազ շափով բաժանելով՝ դրանց միջոցով արձագանքել են ժամանակակից քաղաքական, հասարակական կամ մշակութային հուզող հարցերին: Ընդ որում, նոր պայմանների ու պահանջների համաձայն նրանք Հյուգոյի մտքերին ու հայացքներին հաղորդել են նոր իմաստ:

Ինչ վերաբերում է Հյուգոյի գեղարվեստական աղդեցությունը կրող հայ հեղինակներին, ապա նրանք մեծ գրողի լեզվա-արտահայտչական միջոցներից և պատկերավոր մտածողությունից որոշ տարրեր ստեղծագործաբար յուրացնելով՝ հորինել են յուրօրինակ պատկերներ: Այնպես որ նրանց ոճը անհատական մնալով հանդերձ, հարստացել է նոր երանգներով, դարձել է ավելի բազմազան:

Հյուգոյի գեղարվեստական աղդեցությունը կրող հայ հեղինակներից մեկն է եղել ականավոր վիպասան Բաֆֆին, որը միշտ ոգեորվել է նրա երկերով: Կինելով Հյուգոյի ամենաշերմ հիացող՝ Բաֆֆին չեղ կարող մեծ արվեստագետի ստեղծագործության կողքով անցնել առանց հաշվի առնելու նրա փորձը, առանց կրելու նրա բարերար աղդեցությունը:

Անցյալում մի շարք գրողներ ու գրականագետներ տարբեր առիթներով անդրադարձել են այդ աղդեցության հարցին:

Շիրվանզադեն «Բաֆֆիի կյանքից»¹ վերնագրով իր հուշերում 1894 թ. գրում է, թե Բաֆֆին միշտ կարդում էր Հյուգոյի երկերը, ոգեորվում նրանցով և հավատում, որ մեծ գրողն իր փայլով դեռ երկար ժամանակ կնսեմացնի ամենին:

Այսուհետեւ Շիրվանզադեն ավելացնում է. «Բնական է, ուրեմն, որ մի այդպիսի անպայման հավատ պետք է

1 «Հորիզոն», գրական հանդես, 1894, Ա. զիրք, էջ 114—148:

ստիպեր Բաֆֆիին և նթարկվելու Հյուգոյի ազդեցությանը: Ապագա քննադատին մեծ դիտողություն հարկավոր չէ, որպեսզի նա Բաֆֆիի գրականական ձևերի մեջ գտնի մի անհերքելի նմանողություն Հյուգոյին: Նույն ձբդառում՝ ամեն մի փոքր թե խոշոր երևությ ընդհանրացնելու և բնական կամ հասարակական օրենքների տակ դնելու, նույն փափազը միշտ պարագործուներով դատելու, նույն սերը դեպի հանկարծակի էֆեկտներ և, վերջապես, նույն ցանկությունը հակիրճ և հատուկառու գարձվածներով գրելու, ինչ որ Հյուգոյի մեջ»: Շիրվանզադեն նշում է, որ Բաֆֆին Հյուգոյին նմանվում է նաև իր հաճախակի կրկնություններով, «որոնցով լիքն են Բաֆֆիի վեպերը»:

Յուրի Վեսելովսկին 1902 թ. իր «Վիկտոր Հյուգոյի ազդեցությունը հայ գրականության վրա»¹ հոդվածում պրում է, թե Բաֆֆին երիտասարդության տարիներին կարդացել է Հյուգոյի երկերը, որոնց հումանիզմը բավական ուժեղ ազդեցություն է գործել նրա վրա, նրա մեջ առավել զարգացնելով սերն ու կարեկցանքը դեպի կյանքի թշվառները:

«Սամվելի» 1940 թ. հրատարակության առաջաբանում պրոֆ. Արսեն Տերտերյանը նշում է, թե «Բաֆֆու ոռմանտիզմի ուսուցիչը Վիկտոր Հյուգոն է եղել»: Տերտերյանը ավելացնում է, թե Բաֆֆին, հետեւելով Հյուգոյին, իր վեպերում օգտագործել է հիպերբոլիզմը, կռնտրաստները, ֆանտաստիկականը, թե նրա մոտ էլ շեշտված են ոռմանտիզմի լիրիկական ու իդեական պաթուը, թե նա էլ Հյուգոյի նման հավատում էր մարդու բարոյական վերափոխմանը, սիրում էր կրկնությունները, սիրում էր պատկերները բացատրել և ընդհանրապես

1 ՏԵ՛՛ Յ. Վեսելովսկի, Очерки армянской литературы и жизни, 1906, стр. 89, „Влияние В. Гюго на армянскую литературу“.

իր վեպերը դարձնում էր «ակատմագիտական դիսերտացիաներ»՝ իր այս կամ այն թեղը ապացուցելու համար։ Իսկ Արշակ Չոպանյանը իր «Վիքիոր Հյուկո և Հայ ժողովուրդը» հոդվածում անդրադառնալով Հայ զրողների վրա Հյուգոյի ազգեցությանը, ասում է. «Եյդ ազգեցությունը մին եղած է այն տարրերին, որ Բաֆֆի վիպասանին գործը կազմած են»¹:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ Հեղինակների հայտնած կարծիքները մեծ մտամբ համապատասխանում են իրար. Եվ իրոք, նրանց ասածների մեջ Ցշմարտությունները կա, բանի որ վերևում թվարկված առանձնահատկությունները փաստորեն առկա են թե՛ Հյուգոյի և թե՛ Բաֆֆու վեպերում։ Կարելի է նույնպես ավելացնել, որ Բաֆֆին Հյուգոյին հիշեցնում է ստեղծագործական մի շարք այլ բնորոշ զծերով ևս։ Հայ վիպատանն էլ, Հյուգոյի նման, կերտել է անսովոր ու բացառիկ կերպարներ, նրա հերասներն էլ հեղինակի գաղափարների կրողներն են, նրա երկերում էլ կոնֆլիկտները հաճախ լուծվում են դիպլածների և պատահական իրադարձությունների բերմամբ, նրա մոտ էլ ակնհայտ է սուրյեկտիվ վերաբերմունքը դեպի կյանքի երևույթներն ու գործող հերոսները և այլն։

Ինչպես ասացինքթե՛ Հյուգոն և թե՛ Բաֆֆին ստեղծել են բարյատիս վերափոխված մի շարք կերպարներ։ Այստեղ երկու Հեղինակների միջև ընդհանուրը՝ բարոյական վերափոխման ոռուոյտական կոնցեպցիան է։ Բայց, մյուս կողմից՝ Բաֆֆու կերպարների բնավորություններն ու վարքագծերը միանդամայն տարրեր են։ Ավելին, նրա կերպարների հոգեբանության մեջ բացասականից դրականի անցումը կատարվում է բոլորովին յուրահատուկ հանգամանքների բերումով։

1 «Կոչնակ Հայաստանի», 1935, № 42, էջ 989։

«Օրինակ, ժան Վալժանի և քավոր Պետրոսի կերպարների ընդհանրությունը նրանումն է, որ երկուսն էլ նախապես գող են եղել, իսկ հետազայտմ ուղղվել են Բացի դրանից՝ Հիշյալ կերպարները ոչնչով իրար չեն հիշեցնում: Ժան Վալժանին գողության մղողը ծայրահեղ թշվառությունն է, քավոր Պետրոսինը՝ շահասիրությունը: Ժան Վալժանի ուղղվելու պատճառը եղել է Միրիել և լիսկոպսի վեհանձն արարքը, քավոր Պետրոսինը՝ իր մեղքերի գիտակցությունն ու զղջումը: Ժան Վալժանը բնավորությամբ պարզ ու շիտակ էր, քավոր Պետրոսը՝ նենդ ու խորամանկ: Ժան Վալժանի կյանքն ընթացել է այլ ուղիով, քավոր Պետրոսինը՝ այլ:

Հետաքրքրական են նաև Ժավիրի և Թոմաս էֆենդիի զուգազրությունից բացահայտվող տարբերությունները: Նրանց միակ ընդհանրությունը նրանում է, որ երկուսն էլ տարիներ շարունակ հալածել են անմեղ մարդկանց, իսկ վերջում, խղճի խայթից՝ ինքնասպանություն են գործել:

Ժավիրը անողոք կերպով հալածում է Ժան Վալժանին, որովհետեւ անկեղծորեն հավատում է, որ ինքը, իրեր ոստիկանության գործակալ, պարտավոր է ամեն գնով բանտ վերադարձնել նախկին թիավարարին. նա այդ բանը համարում է իր սրբազն պարտականությունը: Նույնիսկ Ժան Վալժանի ձեռքով փրկվելոց հետո Ժավիրը շարունակում է իր փրկարարին հետապնդել: Բայց ահա խիզճը սկսում է տանջել նրան, Ժավիրի հոգում տեղի է ունենում սրտի և բանականության միջի անհաշտելի մի պայքար, որի հետեանքով նա սրոշում է ինքնասպան լինել և իրեն պցում է պետք:

Մինչդեռ Թոմաս էֆենդին անսկզբունք և անսիրտ մի հրեշ է: Գեղեցիկ Լալային տիրանալու համար նա սառնարյուն կերպով կործանում է տանուտեր և աշոյի ընտանիքը, իսկ ուստի թուրքական պատերազմի ժամանակ

Հաղարավոր հայերի մահվան պատճառ է դառնում։
Սակայն վերջում, խղճի խայթից ցնորված՝ նա իրեն
գցում է անդունդը։

Եթե անտեսենք հոգեկան վերափոխման ընդհանրու-
թյունը, ապա թումաս էֆենդին և ժավերը ընթերցողին
կներկայանան որպես հակադիր կերպարներ։

Ռոմանտիկ հեղինակներին բնորոշ է նաև անզիջող և
մոլեպանդ կերպարների պատկերումը։ Թե՛ Հյուգոյի և
թե՛ Ռաֆֆու հերոսների թվում հանդիպում ենք այն-
պիսի թունդ հայրենասերների, որոնք հայրենիքի շա-
հերի համար չեն խնայում նույնիսկ իրենց ամենամոտ
սիրելիներին։

«Թշվառներում» բարիկադային կոփվների ժամանակ
ապստամբների պարագլուխ Անժելրասը հրացանով նշան
բռնում և սպանում է հարձակվող կառավարական զոր-
քերի սպային։ Անժելրասի կողքին կանգնած ապստամբ-
ներից մեկը նրան ասում է. «Գուցե նա եղբայրդ էր»։
Նա պատասխանում է. «Եղբայրս էր»։

«Իննսուններեքը» վեպում հեղափոխական Սիմուրդե-
նը խոր ապրումներից հետո իր ամենասիրելի բարեկա-
մին՝ Գովենին, մահվան է դատապարտում, որովհետև
վերջինս ազատ էր արձակել գերի ընկած կանգընակին,
որը այնուհետև նորից պիտի կովեր հանրապետության
դիմ։

Նույնպիսի անզիջողության օրինակների հանդիպում
ենք Ռաֆֆու վեպերում։ «Կայծերում» Կարոն սպանում
է իր մտերիմ ընկերոջը՝ Ռափայելին, կասկածելով, որ
բերանբացությամբ նա հայտնել է ընկերների գաղտնի-
քը։ «Սամվելում» Սամվել Մամիկոնյանը իր ձեռքով
սպանում է իր հարազատ ծնողներին, որովհետև վեր-
ջիններս դավաճանել էին հայրենիքին։ Նա հոգեպես
տառապում է, որ ստիպված է այդ դաժան արարքին ձեռ-

նարկել, բայց երբ ժամը հասնում է; նա շի ընկրկում իր պարտականության մեջ:

Սակայն ո՞չ Անժելրասն է բնավորության գծերով Կարոյի նման, ո՞չ էլ Սիմուրդենը՝ Սամվելի: Նմանությունը ո՞չ թե կերպարների բնավորության մեջ է, այլ բուռն հայրենասիրության վերաբերյալ երկու հեղինակների մտահղացման մեջ:

Այնուհետև, թե՛ Հյուգոյի և թե՛ Բաֆֆու վեպերում հերոսներն ընդհանրապես հանդես են գալիս որպես հեղինակի գաղափարների խոսափողները: Սակայն այս երկու հեղինակների հերոսների միջև կան մի շարք էական տարբերություններ:

Նախ, Հյուգոյի հերոսները «սքոռված» խոսափողներ են, մինչդեռ Բաֆֆու հերոսները կարծես բացեիբաց հայտարարում են, թե իրենք հեղինակի անունից են խոսում: Երկրորդ, Հյուգոն նվազ առիթներով է իր հերոսներին օգտագործում որպես խոսափող և ընդհանրապես հեղինակային խոսքով է շարադրում իր դատողություններն ու խորհրդածությունները, իսկ Բաֆֆին առավելագույն շափով է օգտագործում իր հերոսներին և մեծ մասամբ նրանց միջոցով հայտնում իր սեփական մտքերը: Երրորդ, Հյուգոյի վեպերի հերոսները համեմատարար սակավախուս են, մինչդեռ Բաֆֆու հերոսների ելույթները հաճախ ամբողջ էջեր են լցնում: Օրինակ, «Խենթը» վեպում Դուդուկջանը տանուտեր խաչոյի տանը վարդանի և մյուսների հետ զրուցելիս՝ առանց ընդհատման հինգ էջ խոսում է¹: Եվ սա բացառիկ դեպք չէ: Բաֆֆու այլ հերոսներն էլ՝ Վարդանը, Ասլանը, Կարոն, Ավոն և ուրիշներ, հեղինակի մտքերը արտահայտելու համար երկարաշունչ ճառեր են արտասանում: Չորրորդ, Բաֆֆու հերոսներին բնորոշ է այն, որ նրանց խոսքը

1 Բաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1955, հատ. 3, էջ 200—204:

բացահայտորեն քարողական բնույթ ունի: Իսկ այդ քարողական, հրապարակախոսական շեշտված տենդենցը Հյուգոյի հերոսների ելույթներում նվազ է զգացվում: Եվ վերջապես, ամենապիտավոր տարբերությունն այն է, որ Բաֆֆու հերոսները զործում են հայկական միջավայրում և հանդիսանում են հայ աղքային ազատազրության դադարախոսները:

Շիրվանղաղեն ասում է, թե Բաֆֆին, Հյուգոյի նման, սիրում է «Հանկարծակի էֆեկտները»: Այս, սիրում է: Եվ իրոք, Բաֆֆու վեպերում շատ կան հանկարծակի էֆեկտի օրինակներ: Հանկարծակի էֆեկտներից են նաև անակնկալ հանդիպումները, որ թե՛ Հյուգոն և թե՛ Բաֆֆին հաճախ զիտավորյալ կերպով կազմակերպում են՝ իրենց հերոսներին ինչ-որ անհայտ իրողություն պարզելու նպատակով:

«Խենթը» վեպում Վարդանը պատերազմից հետո ամենուրեք փնտրում է Լալային, բայց չի գտնում: Այդ ըրունումների ժամանակ նա զիտվածարար ականատես է լինում Թոմաս էֆենդիի ինքնասպանության տհարանին: Վարդանը մահամերձ Թոմաս էֆենդիին փոխադրում է մոտակա գյուղը և մտնում պատահած առաջին տունը: Այնտեղ, անակնկալ կերպով նա հանդիպում է Ջավոյին՝ ա'յն քրդուճուն, որը Լալային ծածուկ փախցրել էր ուռական սահմանը: Եվ այդ տոիթով Վարդանը Ջավոյից իմանում է, թե որանդ է գտնվում Լալան: Բաֆֆին այս պատահական հանդիպումը հորինել է, որպեսզի Վարդանի համար հնարավորություն ստեղծի Լալայի հետք գտնելու:

Այժմ համեմատության համար Հյուգոյից բերենք հետեւյալ օրինակը:

Ժան Վալժանը, ոստիկանների հետապնդումից խուսափելու համար՝ Փարիզի ստորերկրյա կոյուղու միջով փախցնում է վիրավոր և ուշագնաց Մարիուսին: Եվ ահա

այդ ամայի կոյուղու մեջ նա հանկարծ հանդիպում է Թենարդիեին—Հսկա Փարիզի միլիոնավոր բնակիչներից հնաց Թենարդիեին։ Հյուգոն այս անակնկալ հանդիպումը մտահղացել է, որպեսզի Մարիուսը հետագայում Թենարդիեի միջոցով կարողանա իմանալ, թե ո՞վ էր եղել իր անծանոթ փրկարարը։

Այս օրինակներում ընդհանրությունը՝ անակնկալ հանդիպման միջոցով վեպի հերոսներին որևէ գաղտնիք բացահայտելու գեղարվեստական հնարի մեջ է միայն իսկ գեպքերի մանրամասները բոլորովին տարբեր են իրարից։

Այսուհետեւ, թե՛ Հյուգոն և թե՛ Բաֆֆին սիրում են վանքեր ու ամրոցներ նկարագրել։ Երկուսի վեպերում էլ հանդիպում ենք վանքերի և ամրոցների երկար ու մանրամասն նկարագրությունների։ Սակայն ծավալուն նկարագրության ձգտումից բացի՝ երկու հեղինակների միջև ուրիշ ոչ մի ընդհանրություն չենք գտնում։

Վ Հյուգոն և Բաֆֆին հաճախ են նկարագրել պատերազմական գործողություններ։ Հյուգոյի «Իննսուներեքը» վեպում կարդում ենք Տուրք ամրոցի գրավման հոյակապ նկարագրությունը, կարդում ենք նաև «Դավիթ Բեկում» Զեռ բերդի գրավման ընդարձակ ու հիանալի նկարագրությունը։ Կարելի էր ակնկալել, որ Բաֆֆին իր այդ նկարագրության մեջ այս կամ այն ձևով ինչ-որ շափով հիշեցներ քրանսիացի մեծ վարպետին։ Եվ սակայն, իրականում, Հյուգոյին հիշեցնող ոչինչ չկա այնտեղ։

Վերևում բերված օրինակները վկայում են, որ Բաֆֆին կյանքի երեսությունների արտացոլման և կերպարների կերտման գեղարվեստական սկզբունքները Հյուգոյից ընկալելով հանդերձ՝ ոչ միայն չի կրկնել Հյուգոյին, այլև բոլոր գեպքերում հանդես է եկել նոր, ինքնուրուցին խոսքով։ Նա իր վեպերի նյութը քաղել է հայ-

իրականությունից և իր քաղաքական գաղափարախոսությանը հանգել է՝ ելնելով հայ կյանքի պատմական կոնկրետ պայմաններից: Եթե Բաֆֆին քարոզել է բռնակալության դեմ զենք բարձրացնելու միջոցով ազատագրություն ձեռք բերելու գաղափարը, ապա այդ գաղափարը նրան թելադրել է ոչ թե Հյուգոն, այլ հայ ժողովրդի ժանր գրությունից բխող անհրաժեշտությունը:

Նույնը կարելի է ասել և Բաֆֆու հումանիզմի մասին: Երբ Յուրի Վեսելովսկին Բաֆֆու հումանիզմը վերագրում է Հյուգոյի ազդեցությանը, նա անտեսում է այն հանգամանքը, որ հումանիզմը, որպես առաջավոր գրականության հիմնական առանձնահատկություններից մեկը, Բաֆֆու մեջ ձևավորվել է հայ իրականության դժնդակ վիճակի անմիջական դրդումով:

Ինչ վերաբերում է Բաֆֆու ոճին, ապա Շիրվանդադեն գտնում է, որ այդ տեսակետից ևս հայ վիպասանը կրել է Հյուգոյի ազդեցությունը: Նա իր «Լեզու և ոճ»¹ հոդվածում 1896 թ. գրում է, «Բավական է մի թեթև համեմատություն, և հետաքրքիր ընթերցողը կգտնի Բաֆֆիի ոճի մեջ ահազին նմանություն Վիկտոր Հյուգոյի ոճին»:

Հայտնի է, որ Բաֆֆու ոճը «Սալբիի»-ից մինչև «Սամվել»-ը ունեցել է գեղարվեստական խոշոր զարգացում: Այդ մեծաքայլ առաջադիմության դործում զգալի գեր պետք է իսպացած լինեն նաև արտաքին ազդեցություններ: Շատ հավանական է, որ հայ վիպասանն իր նախասիրած հեղինակի՝ Հյուգոյի արտահայտչական միջոցներից որոշ ատրեւ յուրացրած լինի: Եթե այդպես է, ապա Բաֆֆին այդ տարրերն այնքան օրդանապես է ձուլել սեփական ոճի մեջ, որ ազդող հեղինակի ներկայությունը աննկատելի է դարձել: Գոնե այդ մասին է

1 Շիրվանգաղի, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, հատ. 9, էջ 186:

վկայում մեր կատարած համեմատությունը։ Ուստի մենք չենք կարող համաձայնել Շիրվանզադեի վերոհիշյալ հայտարարությանը։ Ոճական «ահագին նմանության» փաստը (եթե իրոք այն կա) ինքնըստինքյան բացառում է ազդեցության ստեղծագործական բնույթը և ենթադրել է տալիս մեխանիկական փոխառությունների հավանականությունը, մի բան, որ ազդվող հեղինակին զրկում է ինքնուրույնությունից։ Ըստ երևույթին, Շիրվանզադեն ժամանակ չի տրամադրել հարցի ավելի խոր ուսումնասիրությանը և բավականացել է, ինչպես ինքն է ասում, «թեթև համեմատությամբ»։

Թափփու գեղագիտական հայացքների ձեավորման գործում նշանակալից դեր է խաղացել ոռւսական առաջավոր միտքը հանձինս Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի, սակայն այդ հայացքների զարդացմանը զգալիորեն նպաստել է նաև Հյուգոն։ Զէ՞ որ Հյուգոյից ընկալած և իր ստեղծագործություններում կիրառած գեղարվեստական սկզբունքները՝ հայ հեղինակի գեղագիտական հայացքների կոնկրետ դրսերումներն են։ Անկախ դրանից, գրականության մասին թափփու շարադրած մտքերում ևս ընդհանուր շատ բան կա Հյուգոյի գրականագիտական ըմբռնումների հետ։

Այսպես, օրինակ, Հյուգոն արվեստը համարում է մի հայելի, որը համակենտրոնացած ձեռվ անդրադարձնում է իրականությունը։ Այս գրույթից ելնելով, «Կրոմվելի» առաջարանում նա պահանջում է, որ գրականության մեջ կողք-կողքի արտացոլվեն և իրենց բազմազան կապերով ու փոխարարերություններով հանդես գան գեղեցիկն ու այլանդակը, սովորականն ու անսովորը, ողբերգականն ու կատակերգականը։

Տարբեր առիթներով համանման մտքեր է հայտնել նաև Թափփին։ «Փունջի» առաջին հատորի առաջարանում նա ասում է. «Ի՞նչ գիրք կարող է լինել ժողովրդի

սրտին և հոգուն այնքան մոտ, որքան մի վեպ, որը կա-
խարդական հայելվո նման պատկերացնում է յուր մեջ
նոր կյանքը, երևան է հանում հասարակական տիպեր՝
յուրյանց գեղեցիկ և այլանդակ նկարագրերով»։ Իսկ
«Սալբիի» առաջարանում նա 1865 թ. գրում է. «Մոման-
ները. են այն կախարդական հայելվը, որոց մեջ ազգե-
րը՝ տեսանելով յուրյանց կյանքի տգեղ և ավերված
պատկերը, յուրյանց մոլությունների ամոթալի նկա-
րագիրը, ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց
դրությունը»։

Նշանակում է, կյանքի ու մարդկանց այլանդակ կող-
մերը բացահայտելով, Բաֆֆին ևս ձգտում է ուսանելի
դասեր հաղորդել, որպեսզի ժողովուրդն իր մեջ եղած
թերությունները տեսնելով, շանա դրանք վերացնել:

Գալով այն հարցին, թե գրականության մեջ ինչ
չափով պետք է պատկերել կյանքը, Հյուգոն գտնում է, որ
զրոյզ իրականությունից պետք է վերցնի միայն իրեն
հարկավոր փաստերը և դրանք վերամշակելով՝ ընդգծի
քննության առարկա երևությունների որոշ հատկություն-
ներն ու հերոսների բնավորության որոշ գծերը։

Իրականությունից կամ պատմությունից միայն ան-
հրաժեշտ փաստերը վերցնելու և ստեղծագործաբար վե-
րամշակելու գաղափարին հանդիպում ենք նաև Բաֆֆու
մոտ։

«Պ. Հայկունու Կրիտիկան և Կայծերը» հոդվածում
նա ասում է. «Բանաստեղծը, արդարն, կարդում է ժա-
մանակագրություններ, ծանոթանում է պատմության
հետ, ծանոթանում է իր ընտրած ժամանակի հետ, իր
ընտրած անձիքների հետ,—բայց այդ բոլոր ուսում-
նասիրություններից նա առնում է այն գծերը միայն, ինչ
որ պետք է իր ստեղծագործության համար, իսկ զլիա-
վոր գործողությունները իր ֆանտազիայի ծնունդն են

լինում»¹: Այնուհետև Բաֆֆին շարունակում է. «Բանաստեղծը վեր է առնում պատմությունից շոր ու ցամաք կմախքը միայն, նրան վերաստեղծում է, հոգի և մարմին է տալիս և մի առանձին պատկերով ներկայացնում է մեզ»:

Պատմությունը գեղարվեստորեն վերարտադրելու կապակցությամբ Հյուգոն «Կրոմվելի» առաջաբանում գրում է. «Դեղարվեստը թերթում է պատմության էժերը... վերականգնում է այն, ինչ կրծատել են տարեգիրները, համաձայնեցնում է այն, ինչ նրանք աղավաղել են, կուահում է նրանց բաց թողածները և դրանք վերականգնում, իր երեակայության ստեղծումներով լրացնում նրանց պակասները և հավաքում ինչ որ նրանք մեկ կողմ են նետել...»²:

Համանման միտք է հայտնում Բաֆֆին իր «Սամվել» վեպի առաջաբանում: «Պատմությունը,—ասում է նա,— իրեւ շոր ու ցամաք տարեգրություն, իմաստ նվազ նյութ է տալիս մի վիպասանի, որով կարող լիներ նա նկատել անցյալի ճիշտ պատկերը յուր բոլոր երեսովներով... ինչ որ թերի է թողել պատմությունը, կարող էին լրացնել բանաստեղծական գրվածքները... Մեր հին գրականության մեջ, թեև կյանքի և սովորությունների, ընտանիկան և հասարակական կազմակերպության լիակատար նկարագիրներ չկան, բայց կան հաղիվ նկատելի նշմարներ, փոքրիկ բեկորներ, որոնք ի մի ամփոփելով, պարզելով և դասավորելով, կարելի էր, եթե ոչ բոլորովին ամբողջական, գեթ մասնավոր գաղափար կաղմել պատմական հայ կյանքի մասին»: Այնուհետև Բաֆֆին ավելացնում է, թե տարեգիրների բաց թողածները լրացնելու

1 Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 228:

2 Victor Hugo, Cromwell, Paris, ed. Nelson (s. d.), Préface, p. 48.

և վերականգնելու համար զրողը «պետք է ուժ տա յուր երևակայությանը»:

Ուրիմն այս հարցում ևս Հյուգոյի և Բաֆֆու տեսակետները լիովին համընկնում են: Սակայն շտապենք նշելու, որ Բաֆֆին այս եղրակացություններին հանգել է անձնական փորձի հիման վրա և այստեղ նկատի ունի այն կոնկրետ դժվարությունները, որոնք իր առջև ծառացել են «Սամվել» վեպը գրելուն նախապատրաստվելիս: Այնուամենայնիվ, գեղագիտական տեսակետների նմանության այս փաստը, ինքնին, հույժ հետաքրքիր է:

Հիշյալ վիպասանների գրականագիտական սկզբունքների կարևոր ընդհանրություններից մեկն էլ այն է, որ նրանք երկուսն էլ մերժել են «արվեստը արվեստի համար» նշանաբանը և պահանջել, որ գրականությունը ծառայի ժողովրդին:

Բաֆֆու նման Ծերենցն էլ ոգևորվել է Հյուգոյի արվեստով և գերազանցապես նրա երկերի միջոցով է ընկալել ոռմանտիկական մեթոդի գեղարվեստական սկզբունքները: Այդ սկզբունքները ինքնուրույնաբար կիրառելով՝ Ծերենցը ևս կարողացել է հասնել ստեղծագործական նվաճումների:

Սակայն, ի տարբերություն Բաֆֆու, Ծերենցը որոշ դեպքերում ոգեշնչվել է Հյուգոյի ստեղծած այս կամ այն կոնկրետ կերպարից:

Այսպիս, օրինակ, Ծերենցի «Երկունք Թ դարու» վեպում Հովնանի և Գուրգեն Արծրունու բնավորության որոշ գծերը, նրանց գործելակերպը, փոխհարաբերությունները և նույնիսկ ֆիզիկական առանձնահատկությունները մոտիկից հիշեցնում են Հյուգոյի «Իննուներեքը» վեպի հերոսներից Սիմուրդինին ու Գովենին:

Ճիշտ է, Հովնանն ու Գուրգենը գործում են հայկական շրջապատում, քաղաքական տարրեր իրադրության պայմաններում և պատմական տարբեր ժամանակա-

շրջաններում, բայց, այնուամենայնիվ, որոշ նմանություններ նկատելի են նրանց և Հյուգոյի հիշյալ հերոսների միջև:

Սիմուրդենն ու Գովենը նվիրված հայրենասերներ են: Նրանք միաժամանակ կապված են սերտ մտերմությամբ: Սիմուրդենը ժողովրդի ծոցից ելած մարդ է, ազնիվ, մոլեռանդ, անզիջող, միջին տարիքի և միջին կազմվածքով: 1793 թվականին, երբ Ֆրանսիայի հեղափոխական կառավարությունը պատերազմում էր արտաքին ու ներքին թշնամիների դեմ, Սիմուրդենը, որպես քաղաքական կոմիսար, մասնակցում է միապետականների դեմ մզլող կռիվներին: Սիմուրդենը անողոք է դեպի հայրենիքի դավաճանները: Նա վերջիններիս գնդակահարել է տալիս, երբ գերի են ընկնում, որպեսզի այդ պատիժը օրինակ ծառայի մնացյալներին: Սիմուրդենի անողոքությունը հիմնված չէ անձնական ատելության վրա, այլ բխում է իր քաղաքական անսասան սկզբունքներից: Նա հետապնդում է միապետականների պարագում մարկիզ դը Լանդենակին, որը անգլիացիների հետ դաշնակցած՝ կուլում է Հանրապետության դեմ: Երբ վերջինս գերի է ընկնում, Սիմուրդենը որոշում է զինվորական ատյանում նրան դատելով՝ գլխատել տալ: Սիմուրդենի բոլոր արարքներից երեսամ է, որ դատողությունն է իշխում նրա զգացմունքների վրա:

Հովնանն էլ, Սիմուրդենի պես, ժողովրդից ելած շարքային մարդ է, ազնիվ, մոլեռանդ, անզիջող, միջին տարիքի, միջին կազմվածքով: Նա կուլում է արտաքին ու ներքին թշնամիների՝ արարքների և հայ դավաճանների դեմ: Նա հետապնդում է երեք հայ իշխաններին, որոնք մատնությամբ դավաճանել են հայրենիքին և անցել արարք ամիրայի կողմը: Հովնանը նրանց դեմ անձնական ոխ շունի, բայց ուղում է նրանց անողոքաբար պատժել, որպեսզի սարսափեցնի թույլ կամքի տեր մարդկանց և

այդպիսով վերացնի դավաճանությունը հայերի շարքերում: Նա մատնի իշխաններին բռնում է, դատաստանական խորհուրդ կազմում, նրանց դատում և հրապարակով կախել է տալիս: Բանականության և զգացմունքների բախման դեպքերում Հովնանն էլ, Սիմուրդենի նման, հնազանդվում է բանականության ձայնին:

«Իննուներեքը» վեպի մյուս հերոսը Գովենն է: Նա պատկանում է ազնվականության դասին, երիտասարդ է, քաջ, հաղթամարմին, ուժեղ, կրթությամբ զինվորական: Գովենը հարել է հեղափոխությանը և կովում է Հանրապետության համար: Բայց ի տարբերություն Սիմուրդենի, Գովենը փափկասիրտ է և ներողամիտ: Նա հաճախ խղճում և բաց է թողնում թշնամի գերիներին, որոնք հետո նորից իր դեմ են կովում: Նա ազատ է արձակում նույնիսկ իրեն սպանել փորձող վանդեացի զինվորին: Երբ Գովենի վնասաբեր ներողամտության կապակցությամբ Սիմուրդենը նկատողություն է անում, երիտասարդ հրամանատարը պատասխանում է, թե ինքը զինվորական է և չի կարող «ընկածին խփել»:

«Երկունքի» մյուս զլիավոր հերոսը՝ Գուրգեն Արծրունին, շատ գծերով նման է Գովենին: Նա էլ իշխանական տոհմից է, զինվորական, երիտասարդ, աժգահա, ուժեղ և անվիճեր: Նա էլ, ի տարբերություն իր ընկերոջը՝ Հովնանի, փափկասիրտ է ու ներողամիտ: Գուրգենը կովում և պարտության է մատնում դավաճան իշխաններին, բայց նրանց գերի բռնելուց հետո խղճում ու ներում է, իսկ վերջիններս նորից նրա դեմ դեմք են բարձրացնում: Իշխան Վասակ Արծրունուն ու նրա զորքերին հաղթելուց և գերի բռնելուց հետո Գուրգենը բոլորին էլ ազատ է թողնում, ասելով. «Ես զինաթափ մարդիկ շեմ կրնար սպանել, իմ սուրս զինվորի է և ոչ դահճի»:

Սակայն այս բոլոր ընդհանրություններով հանդերձ Հյուգոյի և Սերենցի հիշյալ հերոսների միջև կա մի

էական տարբերություն: Մինչդեռ Հյուգոյի հերոսները տոգորված են XVIII դարի ֆրանսիական հեղափոխության իդեալներով, Ծերենցի հերոսները բոցավառված են միայն ազգային ազատագրության ոգով և նրանց համար գոյություն չունի դասակարգային պայքարի հարց: Գուրգենը մինչև վերջ պահպանում է իր իշխանական տիտղոսը և տիրանում է նորանոր գավառների, այնինչ կոմս Գովենը հրաժարվում է իր տիտղոսից և կովում իր դասակարգի դեմ: Հայ նախարարների կողմից հարստահարվող հասարակ ժողովրդի զավակը՝ Հովնանը, ամբողջ ազգի շահերից ելնելով, դաշնակցում է նույն այդ նախարարների հետ, որպեսզի միասնական ուժերով Հայաստանից վոնդեն արար զավթիչներին: Մինչդեռ Սիմուրգենը միապետության և աղնվականության անհաշտ թշնամին է, նրանց համարում է հին, մեռնող աշխարհի ներկայացուցիչներ և ոչ մի դեպքում չի կարող դաշնակցել նրանց հետ:

Այսպիսով, Ծերենցը իր հերոսներին օժտել է տվյալ դարաշրջանի պատմական կոնկրետ պահանջներից բխող քաղաքական ուրույն գաղափարախոսությամբ:

Եթե Վիկտոր Հյուգոյի վեպերը նպաստել են Բաֆֆու և Ծերենցի ստեղծագործական սկզբունքների ձևավորմանն ու գեղագիտական հայացքների զարգացմանը, ապա այլ գրողների էլ ոգեշնչել են իրենց գաղափարական բովանդակությամբ:

Օրինակ, Պետրոս Դուրյանը, որը Հյուգոյի երկերը կարդում էր մեծ ոգեսրությամբ, 1870 թ. իր «Թատրոն և թշվառներ»¹ դրամայի համար որպես հիմնական զաղափար վերցրել է «Թշվառների» առաջարանում հայտնը ված այն միտքը, թե քանի դեռ չքավորությունը առկա է հասարակական կյանքում, այնքան ժամանակ վտանգի տակ կմնա կնոջ բարոյականը: Եվ պատահական չէ,

1 Պետրոս Դուրյան, երկեր, երես, 1947:

որ Դուրյանն էլ Հյուգոյի նման իր երկը վերնագրում է «Թշվառներ»: Նույնպես պատահական չէ այն, որ Դուրյանի հերոսուհին՝ մանկամարդ Վարդուհին, իրեն համեմատում է «Թշվառների» հերոսուհու՝ Ֆանտինի հետ: Չէ՞ որ ինքն էլ, Ֆանտինի նման, շքավորությունից մղված՝ ստիպվել է փողի համար ուրիշին հանձնվել: Այդ կապակցությամբ Վարդուհին իր սիրողին ասում է, «Ես Ակյալ Ֆանտին եմ»: Ֆանտինի անվան հիշատակությունը, ինքնին, բավականաշափ ցուցմունք է, թե ումից է Դուրյանը փոխ առել իր գրամայի հիմնական գաղափարը: Արծագանքելով Հյուգոյի արծարծած սոցիալական հարցերին, Դուրյանը իր հերոսուհու բերանսվ դատապարտում է բուրժուական իրավակարգում տիրող անհավասարությունը: «Պիտի տեսնենք, էպլարդ,— ասում է Վարդուհին,— պիտի թողունք այս աշխարհը, հորում մարդրկ իրաբու հավասար եղբայր չեն, հորում միայն տկար արարածներն ամոթ, խիղճ ու ցավ ունին: Անգութ է այս աշխարհիս վերատեսուշը, քաղաքականությունն ըսել կուղեմ, որ չը ներեր անոթիին կտոր մը հաց գողնալ՝ հարկավ ունեցողե մը, չը ներեր խեղճ աղջկա մը, որ իր սիրույն մեջ խաբված է անոթի շմնալու համար կամ ստիպված է իր երկնային լուման ազօրինավորապես ծախսել... սիրելի մը կամ ալեոր հայր մը անոթի շձգելու համար»:

Այստեղ Վարդուհին առանց անուններ տալու ակնարկում է Ֆանտինին, որը ստիպվել էր իր պատիվը ծախսել՝ «սիրելի մը անոթի շձգելու համար» և ժան Վալժանին, որը «կտոր մը հաց» էր գողացել:

Սակայն ավելացնենք, որ Դուրյանի երկը թե՛ ձեի և թե՛ բովանդակության տեսակետից ոչ մի առնշություն կամ նմանություն չունի Հյուգոյի վեպի հետ: Դրամայի սյուժետային կառուցվածքը, զարդացող գործողությունները և հերոսների բնավորություններն ու փոխհարաբե-

բությունները ոչնչով շեն հիշեցնում Հյուգոյի վեպը։ Հայ տաղանդավոր պոետը կարողացել է կերտել բոլորովին ինքնուրույն՝ մի երկ, որտեղ ցուց է ավել, որ ժամանակակից հայ իրականության մեջ ևս չքավորություն կա, և քանի դեռ չի վերացել այն, միշտ կդտնվեն լպիրշ հարուստներ, որոնք իրենց հաճույքի համար պատրաստ են փողի ուժով աղարտելու հայ կնոջ պատիվը։ «Թատրոն և թշվառներ» դրամայի միջոցով Դուրյանը իր բողոքն է հայտնում հայ իրականության մեջ տիրող-սոցիալական ներհակությունների դեմ։

Իսկ «Անկումն Արշակունի հարստության»¹ դրամայում Դուրյանը սցուժետային մի որոշ գիծ է մշակել Հյուգոյի «Թագավորը զվարճանում է» պիեսի նմանողությամբ²:

Հյուգոյի հանրահայտ երկում Ֆրանս I թագավորը պատահմամբ տեսնում է իր խեղկատակի՝ Տրիբուլեի դեռատի աղջկան, հրապուրվում է նրա գեղեցկությամբ և որոշում նրան տիրանալ։ Անառակ կյանքի սիրահար թագավորը մի քանի պալատականների աշակցությամբ առևանգում է երիտասարդուհուն և հագեցնում իր ցանկությունը։ Իսկ Դուրյանի երկում ցոփակյաց Արտաշեր թագավորը դիպվածով հանդիպում է իր զինվորներից մեկի՝ Բարելի աղջկան և հրապուրվում է նրա գեղեցկությամբ։ Նա պալատական Սմբատի միջոցով առևանգում

1 Պետրոս Դուրյան, Երկեր, Երևան, 1947։

2 «Անկումն Արշակունի հարստության» և «Թատրոն կամ թշվառներ» դրամաներում Հյուգոյի աղջեցության հարցին անդրադառներ է նաև Վահրամ Թերզիբաշյանը իր «Պետրոս Դուրյան» արժեքավոր աշխատության մեջ։ Բայց Թերզիբաշյանը բավականացել է միայն մատնանշելով սյուժետային ու գաղափարական նմանությունները, առանց բացահայտելու այն տարրերությունները, որոնցով պայմանավորվում է աղջեցության մոմենտի ստեղծագործական բնույթը։ Նման հարցադրումը հմուտ գրականագետի նպատակազրումից դուրս է եղել։

է գրավիչ Շահանդուխտին՝ նրան տիրանալու նպատակով:

Այս ընդհանրությունը չէր կարող զուտ պատահականություն լինել, մանավանդ երբ նկատի ունենանք, որ Դուրյանն իր գրաման գրելուց կարճ ժամանակ առաջ կարգացել ու թարգմանել էր «Թագավորը զվարճանում է» պիեսը:

Բայց Դուրյանի գրամայում այդ էպիզոդը հանդիսացել է պարզապես մի մեկնակետ, որտեղից հայ հերոսների գործողություններն ու փոխարարերությունները զարգացել են բոլորովին այլ ուղղությամբ, քան Հյուգոյի երկում:

Արտաշիր թագավորը դեռատի Շահանդուխտին անարգել վայելելու համար ուզում է ազատվիչ Հերանուշ թագուհուց և թունավորում է նրան: Թագուհու հայրը՝ սյունյաց Փառներսէհ իշխանը և մի քանի այլ նախարարներ վրեժ լուծելու նպատակով որոշում են Արտաշիրի դեմ բողոքել պարսից Վռամ շահին և նրան զրկել տալ թագից: Մեսրոպ Մաշտոցի գրչակից Սահակ կաթողիկոսը, որը գրամայում Դուրյանի գաղափարների գլխավոր խոսափողն է, բմբոսաներին կոչ է անում հաշտվել թագավորի հետ, համախմբվել նրա շուրջը և պաշտպանել հայրենիքի անկախությունը: Բայց իզուր: Իշխաններն ու նրանց համախոն Սուրմակ երեցը Վռամ շահից խնդրում են Արտաշիրին գահընկեց անել: Շահը վճռում է հայերի անմիաբանությունից օգտվելով, տիրանալ Հայաստանին: Նա Հրամայում է աքսորել Արտաշիրին, իսկ մատոնիչ նախարարներին դիմելով ասում է, «Այսուհետեւ հայրենիք և պատություն բառերն ա'լ մի հիշեք»: Այսպիսով, Հայաստանն ընկնում է պարսկական գերիշխանության տակ:

Դուրյանը պատմական նյութի նկարագրման միջոցով փաստորեն արծարծել է ժամանակակից քաղաքա-

կան-Հասարակական հարցեր: Հայտնի է, որ 1860-ական թվականների վերջերին սուլթանական կառավարությունը ուժիղացրել էր ազգային ճնշումը Հայերի նկատմամբ և Արևմտահայաստանի գավառներում կատարվում էին ամեն տեսակ կեղեքում, կողոպուտ և սպանություն: Այդ դժնդակ պայմաններում Հայ առաջավոր միտքը շարունակում էր բացահայտ կամ քողարկված ձևով Հայրենասիրության և ազատագրության գաղափարներ պրոպագանդել, մինչդեռ ոեակցիոն կղերա-ֆեոդալական տարրերը քարոզում էին Հլու-Հնազանդություն սուլթանական կառավարությանը: Վերջիններս ձգտում էին խափանել ազատագրական շարժման կողմնակիցների գործունեությունը, շվարանելով դիմել նույնիսկ մատնության: Այսպիսով, Հայ ազգի ներսում ստեղծվել էր երկպառակության պղտոր մթնոլորտ:

Դուրյանը, որը այդ տարիններին իր Հայրենասիրական պոեզիայի միջոցով իր գայրույթն ու բողոքն էր արտահայտել ազգային ճնշման դեմ, վերոհիշյալ դրամայում քողարկված ձևով դատապարտում է ոչ միայն սուլթանական բոնակալությունը, այլև Հայ կղերաֆեոդալական տարրերի ազգադավությունը:

Իր դրամայում Դուրյանը ձգտում է ցույց տալ, որ ազգին գալաճանողները արհամարհվում են նույնիսկ թշնամինների կողմից: Պարսից Վոամ շահը, որն ակրն-հայտորեն անձնավորում է թուրք սուլթանին, հեղնանքով է արտահայտվում Հայրենիքը ծախող Հայ նախարարների մասին. «Խե՞ղձ Հայ, որ իր սսոին ու բարեկամը չճանշեր, շվարներ իրեն դարնողին և կխոնարհի» ասում է նա և ապա շարունակում. «Վա՞յ այն Հարվածյալ ազգին, որ օտարին պատրիչ ու թունավոր լեզվեն կը խաբվի, վա՞յ այն անձին, որ յուր ազգը փառասիրության

կամ մեծության կը զոհե, վա՞յ քեզ, հա՛յ, եթե Պարսկաստանի գիրկը նետվիս»¹:

Նկատի ունենալով IV դարում Հայաստանում տիրող քաղաքական դրությունն ու պատմական յուրահատուկ պայմանները, Դուրյանը պաշտպանում է միապետության գոյության անհրաժեշտությունը, որովհետև Արտաշիրի անկման մեջ նա տեսնում է Հայաստանի պետականության թուլացումն ու հայ ժողովրդի հետագա ստրկացումը: Բայց անկախ այս նկատառումից, Դուրյանն ընդհանրապես միապետական կարգերի դեմ է և Հյուգոյի նման իր դրական հերոսների բերանով շարունակ դատապարտում է թագավորների բռնակալությունը: Հերանուշի խոսքերով՝ արքայական ծիրանին ժողովրդի արյունով կարմրած մի պատանք է, պալատը՝ մի վիրապ, որտեղ շղթա ու տապար են պատրաստում մարդկանց ստրկացնելու և կոտորելու համար, թագավորը՝ թագ կրող մի շոր գանգ, որը հարվածում է մութի մեջ: Բայց ավելի սուր է Հրաշյալի դիպուկ և ընդհանրացնող արտահայտությունը. «Մի՞թե աշխարհիս վրա կա թագ մը որ արյունոտ չըլլա»:

Սահակ կաթողիկոսը Հերանուշի և Հրաշյալի նման դատապարտում է Արտաշիրի կամայականությունները, բայց ելնելով Հայրենիքի շահերից, ավելի նախամեծար է համարում բռնակալ ու ցոփակյաց մի հայ թագավոր ունենալ, քան նրան թշնամուն մատնելով՝ կորցնել Հայաստանի անկախությունը և օտար լծի տակ դնել հայ ժողովուրդը:

Տվյալ դեպքում, միապետական կարգերի վերաբերյալ Դուրյանի սոցիալական հայացքները վերջին հաշվով տեղի են տալիս աղքային-քաղաքական նկատառումների առաջ և այդպիսով հայ հեղինակը գտղափարապես հեռանում է Հյուգոյի բացարձակ և անզիջող դիրքերից:

1 Պետրոս Գուրյան, Երևան, 1947, էջ 160, 161:

Վիկտոր Հյուգոյի ազդեցությունը նկատելի է ոչ
միայն հայ թատերագրության ու վիպագրության, այլև
պոեզիայի բնագավառում։ Նրա գաղափարական ներ-
գործությունը՝ կրող հայ բանաստեղծներից է Թովմաս
Թերզյանը, որը ստեղծագործել է անցյալ դարի 50-ա-
կան թվականներից մինչև 1909 թվականը և այդ հիսու-
նամյա գրական գործունեության ընթացքում գրել է
գրաբար, աշխարհաբար և գրաբարախառն հայերենով
բազմաթիվ արժեքավոր երկեր։

Թերզյանը հաճախ է ոգևորվել Հյուգոյի արձարծած
մտքերով, բազմից անդրադարձել վաղամեռիկ աղջիկ-
ների թեմային, մտահողվել է թշվառների ճակատագրով,
մանուկների նկատմամբ համակվել է հայրական գորո-
վով, նա էլ Հյուգոյի նման հաճախ խորհրդածել է մահ-
վան ու գոյության գաղտնիքների մասին։

Թերզյանի լիրիկական շնչով գրած բանաստեղծու-
թյուններից է «Աստղունք»-ը, որն առաջին անգամ լույս
է տեսել 1865 թվականին, Կ. Պոլսի «Թոշնիկ Պեգասյան»
երկշաբաթաթերթում։ Այս երկում պոետը ի գիմս աստ-
ղերի տեսնում է վաղամեռիկ կույսերի փայլիլող հոգի-
ները։ Նա վերջիշում է ջահել հասակում մեռած աղջիկ-
ներին և իրեն մի պահ թվում էր որ նրանց ուրվականները
դալիս, հավաքվում են իր շուրջը, խոսում են իր հետ և
սկսում են ուրախ ծիծաղել։ Պոետը ճանաշում է այդ աղ-
ջիկներին, մին երազկոտ էր, մյուսը թախծոտ, մին՝ պար
ու խնջույք էր սիրում, մյուսը նախընտրում էր հրեշտակ-
ների հետ խոսել։

Նրանք, ովքեր ծանոթ են Հյուգոյի «Les Fantômes»¹
(«Ուրվականներ») բանաստեղծությանը, իսկույն կնկա-
տեն, որ Թերզյանն իր երկի թեման վերցրել է Հյուգոյից։
Ընդ որում որոշ առջեր հիշեցնում են «Ուրվականներ»-ը։

¹ „Oeuvres Complètes“, T. I, Les Orientales, p. 38.

Օրինակ, վերջիշելով վաղամեռիկ աղջիկներին, Հյուգոն ասում է.

... Մին վարդագույն էր և սպիտակ,
Մյուսը կարծես ունկնդրում էր ինչ-որ երկնային մի նվազի:
Մի ուրիշը՝ թույլ՝ իր վայրաճակ ճակատը հենում էր թևին,
Ինչպես թուզումը սլանալիս ճյուղն է թերում,
Այնպես էլ հոգին խորտակում էր նրա մարմինը...

Մին՝ դալկաճար, մտամոլոր, ոև զառանցանքի անձնատոր,
Շշնչում էր ինչ-որ անոն, որը դժվար է հիշել,
Մյուսը նվազում էր ինչպես քնարի վերջին հնչյունը,
Մյուսը՝ հոգին ավանդելիս ժպտում էր այնպես մեղմ—
Ասես նորածին մի հրեշտակ:

Իսկ թերզյանը իր ծանոթ վաղամեռիկ աղջիկներին
պատկերել է հետեւյալ տողերով.

... Մին երազիր զիշերն ի բուն
Վարդ ու ժըպիտ, լուս ու բըլոր,
Մյուսն հառաշիր զազտնի, անքուն,
Զերիտասարդն յուր բոցահուր:

Մին լուսնեկի նըշուլից տակ
Արծաթ ծովերը դիտելով՝
Հոգվոյն քնարին զանույշ նվազ
Ի մեղմաշունչ ավանդեր հով:

Մյուսն, ըսպիտակ թևին կոթնած,
Հրեշտակներուն հետ կը խոսեր...
Մյուսն երազիր ծայնս նըշագաց
Պարս և խնչույս և գգլանքներ...

Հյուգոյի նման, Թերզյանն էլ առանձնապես հիշում է
առանձինդամյա գեղեցիկ մի աղջկա մահը և պատմում,

1 «Թուչնիկ Պեպոսյան», 1865, № 28, էջ 302:

թե մայրը ինչպիսի գուրգուրանքով էր մեծացրել նրան,
առանց իմանալու նրա մոտալուտ աղետալի վախճանը:

Սակայն, շնայած այս թեմատիկ ընդհանրություններին, Հյուգոյի և Թերզյանի հիշյալ բանաստեղծությունները մեկնաբանության տեսակետից հիմնովին տարբերվում են:

Հյուգոն իր երկում ուզում է ցույց տալ ճակատագրի երկաթյա օրենքը, որը կյանքն ու երկույթները շարժման մեջ է դնում ինչ-որ անխուսափելի նախասահմանվածությամբ. «Այդպես է ճակատագրիրը,—գրում է նա «Ուրվականների» սկզբի տողերում,—պետք է մահը իր ավարն ունենա, պետք է խոտն ընկնի մանգաղի հարվածով, պետք է ցամաքեն ձորի մեջ վազող ջրերը, կայծակի փայլատակումը պետք է միշտ ակնթարթային լինի, և պետք է նախանձուտ ապրիլը իր սառը քամիներով տոշորի ծաղկափթիթ խնձորենին։ Այո, այդպես է կյանքը. ցերեկվա լույսին պետք է հաջորդի գիշերվախավարը»։ Եվ ահա նույն ճատակագրի կամքով մահանում են նաև երիտասարդ աղջիկները։

Սակայն Թերզյանը ճակատագրի վերաբերյալ հարցեր չի արծարծում։ Նա պարզապես արծանագրում է փաստը և իր վիշտն է արտահայտում։ Իր վիշտը, սակայն, սփոփում՝ է այն հավատով, որ վաղաժամ մեռնող աղջիկների հոգիները երկինք սլանալով՝ շողշողուն ու զվարթ աստղեր են դառնում։

Թերզյանը «Սեր» բանաստեղծությունը գրել է, ինչպես ինքն է նշում, Հյուգոյի նմանողությամբ։ Թեև հայպետը չի հիշատակել Հյուգոյի երկը, բայց հետազոտությունից պարզվեց, որ նա ներշնչվել է մեծ գրողի «Jeune fille, l'amour c'est d'abord un miroir»¹ («Զահել աղջիկ, սերը նախ մի հայելի է...») խոսքերով սկսող անվերնագիր բանաստեղծությունից։ Իր երկում, Թեր-

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Voix Intérieures, p. 34.

զյանը հայ աղջիկներին հորդորում է զգուշանալ սիրո
գայթակղություններից ու կրքերից: Համեմատության
համար բերում ենք Հյուղոյի երկի բառացի թարգմա-
նությունը և Թերզյանի բնագիրը.

Ճանել աղջիկ, սերը նախ մի հայելի է,
Որի մեջ պճառասեր ու գեղեցիկ կինը սիրում է իրեն դիտել,
Եվ զվարթ ու երաղկոտ՝ հակվում է առաջ,
Իսկ հետո, երբ սերը զրավում է ձեր սիրութ, առաքինության պես
Նա այնտեղից վանում է ծաղրածու մոլությունն ու չարությունը,
Մաքրում ու զտում է ձեր հոգին:

Հետո, երբ սկսում եք խորանալ, հանկարծ սահում է ձեր ոտքը...
Անդո՞ւնդը... դուք իզուր շանում եք ձեռքերով կառչել նրա եղրից,
Եվ ի վերջո ընկնում եք հորձանուտի մեջ
Սերը հմայիլ է, շինչ, բայց և աղետարեր Չխարվե՛ք...
Երեխան էլ, զետից հրապուրվելով, մոտենում է քայլ առ քայլ,
Զրի մեջ իրեն դիտում, լողաննմ և խեղդվում...

Թերզյանը, այս երկի գաղափարն իր ստեղծագործական
պրիզմայի միջով անցկացնելով՝ նրան հաղորդել է սե-
փական երանգներ: Ահա նրա երկը.

Աղջի՛կ, պայծառ վըճիտ վտակ մըն է Սեր,
Ոյր լուսահոս ու պաղպաջոն ալյակներ
Կը պատկերեն քո երազող սկ աշեր,
Քո ձյուն ծըզիկդ ու կարմրալար շրթունքներ:

Բայց շըխարվի՛ս... այդ անապակ հայելին,
Ուր թոշնիկներ, անցնող ամպեր կը նկարվին,
Լեռներն ի վար վազող վայրագ հեղեղին
Ուղխերն ունի յուր վիհերուն մեջ մըթին:

Դու, նստելով ծիծաղագեղ ափին քով,
Զբոսնիր անոր մեջ ծաղիկներ ցանելով,
Զըլա՛ նալակդ, ո՛հ, արձակես անդր ի ծով...
Զի կը խոռվին հանկարծ հոսանք մաքրասուն,
Պատկերդ ալյաց մեջ կեղծանի թըխադույն,
Եվ դու՝ անմեղ՝ կը կորսվիս ծովամույն...

1 «Սաղիկ», 1905, № 17:

ինչպես տեսնում ենք, հայ պոետն իր տաղանդի և ինքնուրուցն մեկնաբաննության շնորհիվ կարողացել է նույն թիման ստեղծագործաբար վերամշակելով՝ լիարժեք մի երկ հորինել:

Թերզյանը «Աղորմություն»¹ երկում հայ հարուստների կանանց կող է անում օգնել աղքատներին: Այդ երկում նա յուրովի արձագանքում է «Pour les pauvres»² («Աղքատների համար») բանաստեղծության մեջ Հյուգոյի հայտնած մի շարք մտքերին: Բայց Թերզյանն այդ մտքերը բացահայտում է գեղարվեստական ուրույն արտահայտչամիջոցներով և, ըստ իր յուրահատուկ խառնվածքի և հուզականության՝ դրանց հաղորդում է նոր իմաստ: Բացի այդ, ի տարբերություն Հյուգոյի, Թերզյանն իր երկի ներածականը (9 տուն) նվիրել է կանանց գովերդմանը: Այդ ներածականը, ինքնըստինքյան, մի առանձին, ամբողջական բանաստեղծություն է, որը ոչ մի բնդհանրություն չունի Հյուգոյի երկի հետ:

Եթե հայ պոետներից ոմանք Հյուգոյից գաղափարական լիցք են ստացել, ապա եղել են ուրիշներ, որոնք առավելապես հրապուրվել են մեծ վարպետի գեղարվեստական արտահայտչամիջոցներով: Այս խմբի ամենատիպիկ ներկայացուցիչներից է արևմտահայ բանաստեղծ Հովհաննես Սեթյանը, որի պոեզիայում համեմատաբար ավելի ակնհայտ են Հյուգոյի լեզվա-ոճական առանձնահատկություններն ու պատկերավոր մտածողության ձևերը: Դրա համար էլ՝ հենց Սեթյանի ստեղծագործությունն ենք վերցնում որպես օրինակ:

Հայ պոետի ստեղծագործության մեջ առաջին հերթին աշքի է զարնում հյուգոյան յուրահատուկ բառապաշարի օգտագործման փաստը:

1 «Բաղմավեպ», 1873, էջ 305:

2 „Œuvres Complètes“, T. I, Les Feuilles d’Automne, p. 30.

Հյուգոն ունի իր նախասիրած մի շարք բառերը, որոնցից են՝ անդունդ, խավար, տիեզերք, ճակատագիր, գֆոխը, հրեշտակ, հրեշ, ուրվական, վիշապ, օվկլան, կոհակ, աստված, երկինք և այլն։ Այս բառերը, ինչ խոսք, բաղմաթիվ բանաստեղծների կողմից էլ բոլոր ժամանակներում օգտագործվել և օգտագործվում են, բայց Հյուգոն դրանք այնպիսի մեծ քանակությամբ է գործ ածել, որ նրա մոտ այդ քանակը արդեն որակ է կազմել։ Հյուգոյի յուրաքանչյուր բանաստեղծության մեջ բազմիցս հանդիպում ենք այդ նույն բառերին։ Գաղափար տալու համար նշենք, որ միայն «Ce que dit la bouche d'ombre»¹ բանաստեղծության մեջ նա 30 անգամ օգտագործել է «խավար» բառը, 18 անգամ՝ «անդունդ», 21 անգամ՝ «աստված», 8՝ «տիեզերք», 15՝ «երկինք», 13՝ «հրեշտակ», 23՝ «հրեշ», գեռ շնչարած՝ «ուրվական», «կոհակ», «ճակատագիր» և «վիշապ» բառերը։

Հյուգոյի նախասիրած այս բառերը Սեթյանի պոեզիայում ևս օգտագործված են նույնպիսի առատությամբ։ Ավելին, Սեթյանն էլ, Հյուգոյի նման, այդ բառերից մի քանիսը մեծ մասամբ գործ է ածում փոխաբերական իմաստով։ Վերցնենք, օրինակ, «անդունդ» բառը։ Հյուգոն իր յուրօրինակ մեկնարանությամբ այդ բառի մեջ տեսնում է իրարից բոլորովին տարբեր իմաստներ՝ մահ, երկինք, հավիտենականություն, գերեզման, առեղծված, անբարոյականություն, խորություն և այլն։

... Հեքնանքը կարո՞ղ է արդյոք հակվել անդունդի վրա,

... Անդունդի խորքում հեկեկում էր թշվառությունը

... Անդունդից բարձրանում էր սիրո երկար մի ճառագալի

... Հավիտենականությունն այն պիհն է,

Ուր դատարկվում է գերեզմանը...

Ուշագրավ է, որ Սեթյանն էլ «անդունդ» (կամ վիճ) բառը հաճախ օգտագործում է փոխաբերական իմաստով։

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Contemplations, p. 118.
244

... Զտեսնել անկումն այդ հեք սրտերուն յանդունդն անել
... Չափեցի... կենաց բարձունքն և անդունդներ
... Անթարթ աշոր նային, գտնեն ի ձնդ անդունդներ
... Այդ վեհ՝ ամենեկին չէ թափուր Աստուծմե...

Ինչպես տեսնում ենք, Սեթյանը ոչ միայն փոխարեւական իմաստով օգտագործում է Հյուգոյի նախասիրած բառերը, այլև դրանցով հորինում այնպիսի պատկերներ, որոնք հիշեցնում են մեծ վարպետի պոհտական մտածողության ձևերը: Այդ բանն ավելի համոզիչ դարձնելու համար մի քանի օրինակ էլ բերենք «խավար» բառի կապակցությամբ:

Հյուգոյի պոեզիայում հանդիպում ենք հետեւալ պատկերներին,

... Նա հանդինեց մազլցել խավարն ի վեր
... Երազը իր փոս աշքերով նայում է խավարին
... Իմ հոգու խավարում երթեք չէր փայլել այսքան լույս...

Իսկ Սեթյանի մոտ՝

... Ամեն ինչ խոսի, թե այս աշխարհ է խավար
... Երբ անոնց խավար սրտին եմք վկա
... Խավար անհուն, անհոելի,
 Ուր թշվառ մարզն է ինկեր...

Այս օրինակներում ևս նմանությունը ոչ թե արտահայտված մտքերի մեջ է, այլ պատկերների մտահղացման հյուգոյահատուկ եղանակների մեջ: Առաջին հայցքից երբեմն թվում է, թե Սեթյանի վերոբերյալ տողերում ինչ-որ գաղափարական ընդհանրություններ էլ կան, բայց երբ այդ տողերը զետեղում ենք համապատասխան երկերում, ապա նրանք ուրույն իմաստ են ստանում և տարբերությունը դառնում է ավելի ակընհայտ:

Հյուգոյի և Սեթյանի լեզվա-ոճական ընդհանրության հատկանշական գծերից մեկն է՝ մի շարք գոյական-

ների օգտագործումը որպես ձայնարկություն (Հրաշք, սոսկում, դժուխք, գաղտնիք, աղետ և այլն): Այդ գոյականների յուրօրինակ օգտագործմամբ Սեթյանն էլ Հյուգոյի նման ձգտել է իր հայտնած մտքերն ավելի արտահայտիչ ու պատկերավոր գարձնել և միաժամանակ իր վերաբերմունքը դրսեռի այս կամ այն արարքի, երեսովի նկատմամբ: Օրինակ.

Երկի՞ն, ծիծաղ շունին բնավ ի շրթունս,
Գլուխ ի խոնարհ կերթան կենաց ճանապարհ...

Քանզի, ո՞ւ զաղանիք, չենք զիտեր թե ո՞ւր
Պիտի կորնչին մեր զույգ գոյտթյունք...

Աղետն... այս ինչ ահեղ անդունդ էս բացած
Մեջ կենդանյաց և մեռկոց, ո՞վ Ասաված...

Ել հոռ, ո՞վ Խորհուրդ,
Խառնելով իր ձայնն ալլաց շառաշման,
Գոշեր (մտրացիկը) խուլ, գժնե և զիվանման...

Ահա զայրադին թքնեին, սոսկում,
Կուցր տարրն և կուրը մարդն լնդդեմ քաղաքին,
Մին՝ իր փրփուր, մյուսն՝ ահեծք ահազին...

Այս և նման գոյականների բացականշական ձեռվ օգտագործումը, ինչպես զիտենք, հայ գրականության մեջ լնդանրացած չէ: Բայց Սեթյանի բանաստեղծություններում կարելի է հաճախ հանդիպել այզպիսի գոյական-ձայնարկությունների:

Հյուգոյի ոճական առանձնահատկություններից մեկն է պատմական մի ամբողջ շարք անուններ իրար ետևից հիշատակելու մաները.

On est Antiochus, Chosroès, Artaxerce,
Sésostris, Annibal, Astyage, Sylla,
Achille, Omar, César, on meurt, sachez cela.¹

¹ „Oeuvres Complètes“, T. II, La Légende des Siècle ,
p. 102, „Zim-Zizimi“ կրկից,

Կամ¹

... les Dantés disparus
Socrate, Scipion, Milton, Thomas More,
Eschyles, ayant en main les palmes frissonnantes!.

Պատահական չէ, որ Սեթյանի երկերում ևս հաճախ հանդիպում ենք պատմական բազմաթիվ անունների հաջորդական հիշատակումների.

Աշխարհակալ զորավարներն, որ կապրին ցարդ՝
Սեսոստր մեծ, Կյուրոս, Կեսար ու Պոնարարդ,
Լուտուլիկոս և Աղեքսանդր, Աննիբալ²...

Կամ³

Մովսես, Սոկրատ, Կոմիլովինոս, Հուգոն
Ճամբան մեղ կը պատահին³...

Հյուգոյի արվեստին բնորոշ է նաև այն, որ նրա բանաստեղծություններում հաճախ որևէ մի ոգի, ուրվական, թռչուն կամ անտեսանելի էակ տարածության, խավարի կամ լուսական միջից սկսում է խոսել պոետի հետ, պատասխանել նրա հարցերին: Օրինակ՝ «L'Expiation» («Քավություն») հանրահայտ երկում կարդում ենք, թե ինչպես մի անձանոթ ձայն խավարի միջից խոսում է նապոլեոն I-ի հետ, պատասխանում նրա հարցերին: «Feu du Ciel» («Երկնից հուր») երկում երկնային մի ձայն խոսում է բոցավառ ամպի հետ և նրան հրամայում կործանել Սոդոմ և Գոմոր քաղաքները: Մի ուրիշ բանաստեղծության մեջ ծիծեռնակն է խոսում պոետի հետ և այլն:

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Contemplations, p. 20, „Halte en marchant“ երկից:

2 Հովին, Սերյան, Արշալույսեն վերջալույս, Կահիրե, 1912, «Ան ու ես» բանաստեղծությունից:

3 Նույն գրքում, «Աստարտե» բանաստեղծությունից:

Գեղարվեստական այս հնարք օգտագործում է նաև Սեթյանը: «Հսկա երազ» բանաստեղծության մեջ պոետը տեսնում է ամպերին հենված երկնային մի էակի, որին չի ճանաշում և հարցնում է: «Ո՞վ է այդ գեմք սպիտակահոն»: Անծանոթ ձայներ (չգիտենք թե ո՞ւմ, կամ ո՞րտեղից) պատասխանում են, որ նա Վիկտոր Հյուգոն է: «Միայնության մեջ ձայներ» երկում՝ լոռության միջից հանկարծ թռչնային մի ձայն սկսում է խոսել պոետի հետ: «Խնդրություն» երկում նույնպես, խնդրության ձայնը պոետին հրավիրում է խաղաղ բնության ծոցը և այլն:

Եերված օրինակները վկայում են, որ Սեթյանը բացահայտորեն կրել է Հյուգոյի ազգեցությունը: Մինչդեռ Բաֆֆու ստեղծագործության մեջ ոճական ընդհանրության այսպիսի շոշափելի փաստեր չկան: Դրա համար է, որ մենք շբաժանեցինք Շիրվանզաղեի այն կարծիքը, թե ոճական «ահագին» նմանություն կա Բաֆֆու և Հյուգոյի միջև:

Գալով Սեթյանին, պետք է ասել, որ նա հանճարեղ արվեստագետի լեզվա-արտահայտչական մի շարք առանձնահատկությունները յուրացնելով՝ ստեղծել է բավականին հաջող պատկերներ: Այդ յուրացումը միշտ ստեղծագործորեն չի կատարվել, որովհետև Սեթյանը, մեծ տաղանդ վիճնելով, չի կարողացել լիովին հաղթահարել Հյուգոյի ազգեցությունը: Այնուամենայնիվ, Հյուգոյի արվեստից լիառատ սնունդ ստանալով է, որ նրա պոելիան նկատելի ծաղկում է ապրել: Եթե Սեթյանի անունը հայ գրականության մեջ մտել է, ապա այդ հղել է շնորհիվ նրա պատկերավոր լեզվի և արտահայտչական բազմազան հնարների, որոնք ձեւավորվել են Հյուգոյի ոճական ազգեցությամբ: Այդ առումով կարելի է ասել, որ Հյուգոյի արվեստը զգալիորեն նպաստել է հայ պոետի գեղարվեստական վարպետության բարձրացմանը, ի-

Հարկե, վերջինիս համեստ հնարավորությունների սահմանում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եղել են նաև մի շարք հեղինակներ, որոնք թեև չեն կրել Հյուգոյի ազդեցությունը, բայց նրա այս կամ այն մտքից, կերպարից, թեմայից կամ պատկերից ստեղծագործական լիցք ստանալով՝ գրել են նոր, ինքնուրույն երկեր: Այդպիսի առանձին դեպքերը ոչ թե ազդեցության փաստեր են, այլ սոսկ ներշնչման օրինակներ:

Այսպես, հայ պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Դանիել Վարուժանը, որը խոր հիացմունք էր տածում դեպի Վիկտոր Հյուգոն, իր «Թեգասը»¹ գրել է, ամենայն հավանականությամբ, ոգեշնչվելով «Le Cheval»² («Երիվարը») բանաստեղծությունից:

Հյուգոյի և Վարուժանի հիշյալ երկերի թեմատիկ ընդհանրությունը նրանումն է, որ երկու դեպքում էլ պոետը, Պեգասին հեծած, սլանում է դեպի մուսաների աղբյուրը՝ ներշնչվելու համար:

Հյուգոյի պոետը տիեզերական թոփքի ընթացքում նկարագրում է, թե ինչպես ինչքը փորձում է Պեգասին քշել գեպի իդիլիայի անդորրավետ բնակավայրը, որտեղ իրենց երգերն են հնում հորինել լատին և ֆրանսիացի հովվերգակները: Բայց անդունդների սիրահար ձին դիմադրում է և կատաղությամբ թերը թափահարելով մրրիկներ ստեղծում, աստղերը սարսուացնում: Պոետը, սանձը պինդ բռնած, ջանում է նրան ուղղել դեպի այն դալար դաշտը, ուր «ծիծաղի և համբուլյորի միջև ծաղկում է հովվերգությունը», ուր «արեի ջերմ ճառագայթների տակ էպիգրամներ և տրիոլեներ են բուսանում»: Հարկավոր է գնալ այնտեղ և բնությունը գովերգել: Պոետը Պե-

1 Գ. Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955, էջ 262:

2 „Oeuvres Complètes“, T. I, Les Chansons des Rues et des Bois, p. 3.

գասին վերջապես զսպում ու քշում է դեպի նպատակավայրը, որտեղ իրեն. դիմավորում է բնության ու սիրուամենամեծ երգիշներից մեկը՝ հանճարեղ Վիրգիլիոսը:

Վարուժանի պոետը, նույնպես, նկարագրում է իր ճանապարհորդությունը, որը, սակայն, կատարվում է ոչ թե եթերում, այլ երկրի վրա: Պետքասը՝ գլուխը հպարտ ու վիզն աղեղնաձև՝ սլանում է բարձունքից բարձունք:

Ճանապարհին պոետը հանդիպում է ծաղկած վարդենուն, որն ուղում է նրա քղանցքից կառշիլ, խաղողի հասած ողկույզները նրան հրավիրում են, աղբյուրի մոտ կանգնած կանայք իրենց սափորներն են նրան երկարում, փրփրագեղ ջրվեժները կանչում են նրան, բայց պոետը ուղիղ դիմում է վեր, դեպի նպատակը: Պետքասի սմբակների դոփյունից թնդում են լեռները և հղի օձերը սարսափից իրենց ձագերն են վիժում...

Պոետը վերջապես հասնում է բարձունքների ամենաբարձր կատարը, ավելի վեր, քան ամպերը: Նրա հոգին աստվածանում է արեի ոսկեղօծ շողերով: Պոետը ներշընչվում է և իր մտքերը լիաբուռ սերմանում վարը ասկրող կավելին մարդկանց մեջ:

Ինչպես տեսնում ենք, Վարուժանը փոխ առած գաղափարի մեջ գրել է ինքնուրուցն բովանդակություն: Բացի այդ, նրա երկի կառուցվածքը տարբեր է, լեզուն յուրահատուկ, մտապատճերները նորատեսակ: Անգամ նույն երկույթները պատճերելիս Վարուժանը հանդիս է եկել նոր մտահղացումներով: Ենքնով թեմայի բնույթից, Վարուժանը ևս անդրադարձել է այն մանրամասներին, որ Հյուգոն նկարագրել է իր երկում՝ երիվարի տրամադրությունը, նրա խրխինջները, սմբակների դոփյունը, աշքերի արտահայտությունը և այլն: Հենց այստեղից էլ կարող էր առաջանալ պատճերների որոշ նմանության հնարավորությունը: Սակայն հայ պոետը իր տաղանդի և յուրօրինակ երևակայության շնորհիվ ստեղծել է միան-

գամայն ինքնատլու պատկերներ: Համեմատության համար բերենք մի քանի օրինակ:

Հյուգոն իր երիվարի թոփշը բնութագրում է հետևյալ խոսքներով, որ բերում ենք բառացի թարգմանությամբ.

Անայրածիր ու մահաշուք մշուշի միջով
Նա ճախրում է ու սավառնում,
Խոյանում խավարների մեջ,
Մինչև որ հասնում է լույսին:

Իսկ Վարուժանի Պետասը ոչ թե սուզվում է խավարների խորը, այլ սլանում դեպի սպիտակ ու լուսաշող լեռնագագաթները: Եվ երբ հրեղեն ձին խիզախում է վերեից գլորվող ահապին ձյունահյուսի դեմ, պոետը խանդավառությամբ գոչում է.

Ո՞հ, ի՞նչ պայքար, թեղա՛ս.—
Անոր վըբա պերճասոսորդ կը խոյաս.
Առջի ոտքերդ լուսադրոշմ պայտերով
Աշխույժով
Արդեն ահա փիսրուն ծոցին մեջ անոր
Կը միաբնին ահավոր...

Հյուգոյի երիվարը, ընդէղելով, մերժում է գնալ իդիլիաների բուրաստանը և զայրույթից խրխնջում է.

Նա խրխնջում էր դեպի անտեսանելին
Եվ օգնության կանչում խավարը,
Ահավոր երկինքը նրա կանչին
Արձագանքում էր խուլ որոտներով:

Իսկ Վարուժանի երիվարը սիրահոժար դիմում է դեպի պոետի նպատակակնար և վրնջում է ոչ թե զայրույթից, այլ հրձվանքից.

Կը տարածի քու խրխնջդ անհունին մեջ ալեկոծ,
Եվ աստղերուն ժայռակույտերն ոսկեղօծ
Շունչեդ ահա կարծարձվին
Իրմ բոց:

Վարուժանի երկում էլ երկինքը որոտում է: Բայց
այստեղ որոտումը ոչ մի աղերս չունի ձիու խրսինջի
հետ:

Ամպերն են մեր ստքին տակ՝
Ռոռնք ծուլլ ծուլլ կը սողան կայծակներով բեռնաբարձ.
Կը տեսնե՞ս վարը, — հանկա՞րծ
Թուխ ամպրովի մը խորեն փայլակ մը աշքն ամենի
Կը բանա,
Հետո դարձյալ խուզ որոտ մ՞արձակելով կը թագիկ
Երկրիս ցեխին մեջ հըսկա:

Հյուգոյի ձիու սրատես բիբերում վառվում է այն
աճարկու հայացքը, որ նա բերել է անհայտի մեջ կատա-
րած թրիչքներից, իսկ երբ Վարուժանի ձին կոթողվում
է լեռան գլխին, նրա բիբերի մեջ գաղափարն է փայլա-
տակում:

Հյուգոն մի հիանալի գյուտ է անում պատկերելով,
որ Պեղասի սմբակների դոփյունից էսքինեսը իր չափածո
տողերի շեշտերն է քաղել: Վարուժանը մի այլ համե-
մատություն է անում. նա սմբակների դոռոցից պատկե-
րում է որպես առնական մի երգ: Ահա այդ բացառիկ
գեղեցկությամբ պատկերը.

Եվ սմբակներն ուսկեկուո՞ որոնց ներքն իբրև պայտ
կուպնկաներ գամեցի,
Ժայռերուն վրա իղեալի մը պողպատ
Կերպեին երգն առնացի՝
Զոր խըմելու համար ևս սիրտըս բացի
Զերթ ծովու
Խեցի:

Բայցի հիշյալ տարբերություններից, պետք է նաև
նշել, որ Վարուժանի նպատակադրումը ևս այլ է եղել:
Այնինչ Հյուգոյի ոլոետն ուզում է մուսաների աղբյուրը
գնալ՝ բնության ու սիրո մասին քնքուշ իդիլիաներ հորի-
նելու համար, Վարուժանի պոետը ուզում է երգել «Ազա-
տությունը Մարդուն և գերությունն Աստծո»:

Հյուգոն իր «Le Cheval»-ից հետո զրել է «Առ
Cheval»¹ («Առ երիվարը») երկը, որը նախորդի մի տե-
սակ շարունակությունն ու լրացումն է: Այս երկում պոե-
տը Պեգասին կոչ է անում թոշել դեպի գեղեցիկը, բարին
ու ճշմարիտը, վերափոխել մարդկանց, բռնակալի հո-
գուց դուրս քաշել գաղանը, աստվածների հոգուց՝ գա-
ճաճը, քահանայի մեջ հայտաբերել մարդը, փրկել բան-
տարկյալներին, փշրել կառափնարանները, պայքարել
ատելության դեմ, ծառայել խաղաղության գործին:

Հայ մեծատաղանդ բանաստեղծ Սիամանթոն իր «Աս-
պետին երզը»² խոհական-լիրիկական պոեմը գրելիս,
ըստ երևութին, նույնպես ներշնչվել է դեպի իդեալը սլա-
ցող հեծյալ պոետի կերպարից: Այս ենթագրությանը
հիմք են տալիս մի շարք ընդհանրություններ, որոնք առ-
կա են թե՝ Հյուգոյի և թե՝ Սիամանթոյի երկում: Օրինակ,
Սիամանթոյի պոետն էլ, Հյուգոյի պոետի նման, ձիավա-
րելով արշավում է դեպի մի վեհ նպատակ: Երկրորդ,
Հյուգոյի պոետը իր մտքերն արտահայտում է թևավոր
երիվարին ուղղած խոսքերի միջոցով: Նույն գեղարվես-
տական հնարին օգտագործում է և Սիամանթոն: Երրորդ,
Հյուգոյի պոետը համակված է ամենաբուռն շտապանքով
և ժամանակ շունի կանգ առնելու նույնիսկ ամենացնցող
ու սրտակեղեք տեսարանների առջեւ. նա իր երիվարին
ասում է.

Սուրա՛ անդադար, մտաբերիր բանտերը,

Մտաբերիր հարյուր արմկաշափ բարձր պարիսպները,

Եվ անցիր գաղափարների կույս անտառը՝

Առանց մի ծիլ իսկ պոկելու:

Նման տրամադրությամբ է վարակված նաև Սիա-
մանթոյի ասպետ-պոետը.

1 „Oeuvres Complètes“, T. I, Les Chansons des Rues et des
Bois, p. 72.

2 Սիամանթը, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 138:

Արագաթուիլ երիվար, զինեխնդիր՝ պիտք է սուրաս
... աստղածոր երկնքին տակ կանգ մի՛ առներ, երիվա՛ր,
Քարայրներուն առջեն ստվերի մը պես պիտք է անցնիս,
Անտառներեն, հնձաններեն, այդիներեն ալ անդին:

Այնուհետև, Հյուգոյի պոետը, շարունակելով հրահրել
իր ձին, գոշում է.

Սլացի՛ր գերեզմանների ու դժոխքների,
Անդունդների, ստերի և անէոթյան վրայով...

Նույն ոգով է խոսում և հայ պոետը.

Օ՛, կանգ մի՛ առներ դիակներուն դեմ այս ցիրուցան,
Հեռու փախիր գերեզմաններեն ու սպիտակ շիրիմներեն...

Մակայն ի ամրբերություն Հյուգոյի պոետին, որը
տոգորված է համամարդկային զգացմունքներով, Սիա-
մանթոյի պոետը ամբողջովին կլանված է խոր հայրենա-
սիրությամբ և հետապնդում է մի մտասկեռուն նպա-
տակ. այն է՝ միանալ ազատության համար կովող հայ
մարտիկներին, խրախուսել նրանց, իսկ հաղթանակից
հետո նրանց փառքը գովերգել.

Եվ երբ տեսնենք ծովացումը մրրկազեն վաշտերուն,
Անոնց հետ է որ պիտի քալենք նպատակին ճանապարհեն...
Եվ ես փառքը պիտի երգեմ և պսակումը մարտիկներուն,
Զի բամբիոս պիտի հնչե և զահերս ալ պիտի վառին:

Հայ պոետը անցնում է իր ծննդավայրի, Եփրատի,
Արևմտահայաստանի փլատակ քաղաքների վրայով և
վնարչապես հասնում է այն ուազմագաշտը, որտեղ Աղա-
տության ուահվիրանները կովի են պատրաստվում: Այն-
տեղ նա երիվարին հրամայում է կանգ առնել.

Կանգ ա՛ռ այստեղ... և օրհնյա՛լ ըլլաս աստվածավայել երիվար,
Եղեալին ի տես մտածում և հոգիս արցունքներով ծանրացան...
Հաղթանակը մեծ օրենքն է անկշռելի գեղեցկության,
Ահավասիկ՝ հոն, վեց դարերն՝ մոռալլորեն հրագինված:

Հյուգոյի երկում գործող գլխավոր հերոսը երիվարնէ: Նա է, որ պոետի թելադրությամբ պիտի կատարի բոլոր սիրագործությունները: Մինչդեռ Սիամանթոյի գըլիավոր գործող անձը պոետն է: Նրա համար երիվարը լոկ փոխադրամիջոց է, որի շնորհիվ նա պետք է սրբնաց հասնի իր նպատակին: Եթի հայ պոետը հասնում է ուազմադաշտ, նա արձակում է ձին և հույսի կայծեր է ցանում տառապանքի ըմբոստ որդիների հոգիներում:

Հայ տաղանդավոր բանաստեղծը Հյուգոյից տարբերվում է նաև իր պատկերավոր մտածողությամբ և արտահայտչական եղանակներով:

Սիամանթոն ու Վարուժանը «պեղասյան» թեման վերամշակելով՝ հիանալի քննություն են բռնել: Նրանց վերոհիշյալ երկերը գեղարվեստական վարպետության տեսակետից ոչնչով չեն զիջում Հյուգոյի «Երիվարը» և «Առ երիվարը» բանաստեղծություններին:

Հյուգոյի երկերը ներշնչման օրինակ են ծառայել նաև ուրիշ հայ հեղինակների: Մեր նպատակը չէ առանձին-առանձին անդրադառնալ նրանցից յուրաքանչյուրին: Մենք մի քանի նմուշ բերեցինք պարզապես ցուց տալու համար, թե ինչպես հայ գրողները խոշորագույն ուսման-տիկի այս կամ այն մտքից, պատկերից կամ կերպարից ոգեշնչվելով, ստեղծել են գեղարվեստական լիարժեք երկեր, որոնցից միայն շահել է հայ գրականությունը:

Պարզ է, որ որևէ երկի գեղարվեստական արժեքը որոշվում է ոչ թե այն հանգամանքով, թե հեղինակը որտեղից է քաղել իր նյութը, այլ նրանով, թե ինչպես է նա այդ նյութը մշակել, զարգացրել ու մատուցել: Գեղարվեստական երկերի գնահատման հարցում ուշադրավ է այն կարծիքը, որ հայտնել է Հյուգոն իր «Արևելյան» բանաստեղծությունների ժողովածուի առաջարանում. «Այս ժողովածուի հեղինակը,—ասում է նա, —քննադատներին իրավունք չի վերապահում վիճարկելու իր

պոետական երևակայությունը, կամ հարցնելու, թե ինչո՞ւ է նա ընտրել այս կամ այն թեման, օգտագործել այս կամ այն գույնը, քաղել այսինչ ծառից, օգտվել այնինչ աղբյուրից: Տվյալ աշխատությունը լավ է, թե՞ վատ: Ահա հարցը, որ գրաքննադատությունը պետք է որոշե: Գովասանքը կամ մեղադրանքը չպետք է վերաբերվեն օգտագործված գույներին, այլ գույների օգտագործման ձևին... Դուք միայն քննեցք, թե ինչպես ենք աշխատել, և ոչ թե ինչի՞ վրա ենք աշխատել կամ ինչո՞ւ ենք դրա վրա աշխատելու:

Եվ իրոք, որևէ այլ հեղինակի երկից ներշնչվելը կամ փոխառություններ անելը ոչնչով չի նվազեցնում նոր երկի գեղարվեստական արժեքը, եթե, իհարկե, ներշնչվող արվեստագետը օժտված է տաղանդով:

Հյուգոն ինքն էլ հաճախ ստեղծագործական լիցք է ստացել հունական դիցաբանությունից, Աստվածաշրջնից, իսպանական էպոսից, արաբական ու պարսկական աղբյուրներից և այլ գրողների աշխատություններից: Շեքսպիրը իր ովերգությունների և կոմեդիաների նյութերը մեծ մասամբ վերցրել է այլ հեղինակների երկերից, երբեմն նույնիսկ պահպանել է նրանց սյուժեներին կառուցվածքն ու դրամատուրգիական տեխնիկան, և անգամ չի փոխել մի շարք հերոսների անունները: Իսկ Վիրագիլիոսը, ինչպես հայտնի է, իր «Ենեականը» դրել է «Ոդիսականի» և «Իլիականի» նմանողությամբ: Բայց այս գրողներն իրենց փոխ առածի մեջ դրել են նոր ձև ու բովանդակություն և այդպիսով հասել ստեղծագործական նվաճումների: Նույնը կարելի է ասել նաև վերոհիշյալ հայ գրողների առնշությամբ:

Վիկտոր Հյուգոն նշանակալից դեր է խաղացել XIX դարի երկրորդ կեսի հայ գրական մտքի պատմության մեջ և զգալիորեն նպաստել է մեր ոռմանտիկ գրականության զարգացմանը:

Հանճարեղ գրողի երկերը օգնել են բազմաթիվ հայ
հեղինակների ճաշակի մշակմանն ու գեղագիտական
հայացքների ձևավորմանը: Ավելին, հայ վիպասաններից
ումանք, ինչպես Ծերենցն ու Բաֆֆին, նրա վեպերի մի-
ջոցով մոտիկից ծանոթացել են ոռմանտիկական ուղղու-
թյան ստեղծագործական տրադիցիաներին և դրանք ինք-
նուրույնաբար կիրառելով, ստեղծել են հոյակապ երկեր:
Հյուգոյի պոեղիան զանազան առիթներով որպես ներ-
շընչման օրինակ է ծառայել հայ բանաստեղծներին,
որոնց թվում և Պեշիկթաշլյանին, Նար-Պեյին, Դուրյա-
նին, Թերզյանին, Հովհաննիսյանին, Վարուժանին, Սիա-
մանթոյին և այլոց: Մի շարք հայ գրողներ էլ՝ Գր. Օտ-
յան, Գր. Զիլինկիրյան, Ռ. Պերպերյան, Հովհ. Սեթյան
ուրիշներ, Հյուգոյի ազդեցության շնորհիվ հայ լեզվի մեջ
մտցրել են արտահայտչական զանազան ձևեր, և մեր
գրականությունը հարստացրել պատկերավոր մտածո-
ղության նորանոր երանգներով:

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՅԻ ՀԵՏ

Վիկտոր Հյուգոն հայ գրողների, հրապարակախոսների և այլ մտավորականների հետ ունեցել է անձնական ու նամակագրական հետաքրքիր կապեր:

Հենց այն հանգամանքը, որ «Թշվառների» հեղինակը համաշխարհային գրականության հսկաներից է, պատմական ուրույն նշանակություն է տալիս այդ կապերին և դրանց դարձնում հայ-ֆրանսիական մշակութային հարաբերությունների ամենաարժեքավոր փաստերից մեկը: Վիկտոր Հյուգոն բարեկամական կատեր է պահպանել մի շարք հայ մտավորականների հետ, որոնց շնորհիվ մոտիկից ծանոթացել է հայ ժողովրդին և հետաքրքրվել նրա ճակատագրով: Այդ հարցում կարեոր դեր է խաղացել անվանի գրողի երկարամյա մտերմությունը կուսինյան ընտանիքի հետ:

Վիկտոր Հյուգոն իր կյանքի վերջին յոթ տարիներին ապրել և ստեղծագործել է Գվիդոն կուսինյանի տանը, եղել է նրա վարձակալը, հարեւանը և ընտանիքի բարեկամը: Քանի որ այդ բարեկամությունը եղել է նշանակալից իրադարձություններով լի, ապա արժե նախ երկու խոսք ասել կուսինյանների մասին:

Գվիդոնը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության
նախկին անդամ Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանն է,
բանաստեղծ Խորեն Նար-Պելի ավագ եղբայրը: Դեռ վան-
քում պաշտոնավարելիս Ամբրոսիոսը զբել է մի շարք
պատմագիտական աշխատություններ¹, իսկ հետագա-
յում կազմել ֆրանսերեն-հայերեն երկհատոր «Հուսին-
յան բառարանը», որը մինչև օրս հրատարակված
ֆրանսահայ բառարանների ամենաընդարձակն է և
ներկայումս էլ դեռ լայնորեն օգտագործվում է հայ
թարգմանիչների կողմից: Ի դեպ, այդ բառարանի պատ-
րաստության գործում հեղինակի հետ մի ժամանակ աշ-
խատակցել է ականավոր երգիծաբան Երվանդ Օտյանը,
իսկ ավելի ուշ՝ բազմահմուտ լեզվաբան Հրաշյա Աճառ-
յանը՝ իր ուսանողության շրջանում:

Ամբրոսիոս վարդապետը, Մուրատ Ռափայելյան
կտակի կապակցությամբ Մխիթարյանների հետ գծովե-
լով, անցյալ դարի 50-ական թվականներին հեռանում է
միաբանության շարքերից և հաստատվում Փարիզում,
որտեղ դասատու է նշանակվում նորահաստատ Մու-
րատյան վարժարանում, իսկ որոշ ժամանակ անց վերջ-
նականապես թողնում է կրոնական սրեմը և դառնում
աշխարհական:

Այնուհետև Ամբրոսիոսը և իր եղբայրը՝ Խորենը, Կիպ-
րոսում գտնված մի ձեռագիր հիշատակարանի հետքերով
«Հայտնաբերում» են, որ իրենք սերած են Կիլիկիայի
վերջին կուսինյան թագավորի՝ Առու Զի տոհմից: Հիշյալ
փաստաթղթի հիման վրա նրանք դիմում են նապոլեոն
Երրորդ կայսրին, խնդրելով վավերացնել իրենց արքա-
յական ծագումը: Կայսրը ընդառաջում և պաշտոնական

1 «Համառոտ պատմություն հին աղքաց», Վենետիկ, 1849, «Հա-
մառոտ պատմություն Միջին դարու», Վենետիկ, 1850, «Համառոտ
պատմություն նոր աղքաց», Վենետիկ, 1851, «Համառոտ ժամանա-
կակից պատմություն», Վենետիկ, 1851 և այլ աշխատություններ:

Հրովարտակով Ամբրոսիոսին ճանաշում է որպես «իշխան Հայաստանի, Կիպրոսի և Կիլիկիայի»: Այսպիսով, նախկին Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը դառնում է իշխան Գվիդոն զը Լուսինյան: Նրան որպես արքայազն իշխան ճանաշում են նաև անգլիական և այլ եվրոպական կառավարություններ:

Իշխան դառնալուց հետո Գվիդոնը ամուսնանում է Մարի անունով երիտասարդ և մեծահարուստ մի տիկնոջ հետ: Նորապսակները էլլո ծառուղիում կառուցում են մի գեղեցիկ ապարանք և սկսում շքեղ կյանք վարել, բարեկամական կապեր հաստատել Փարիզի արիստօկրատական վերնախավի և ականավոր մտավորականների հետ: Ապարանքի լնդարձակ պարտեղում նրանք կառուցում են նաև մի փոքր շենք: Ահա այդ շենքում է, որ 1878 թ. նոյեմբերի 10-ից մինչև իր մահը ապրեց և ստեղծագործեց Վիկտոր Հյուգոն:

Աշխարհահռչակ գրողը շուտով մտերմանում է կուսինյանների հետ, որոնց և հաճախ հրավիրում է իր մոտ: Այդ կապակցությամբ երվանդ Օտյանը իր հուշերի մեջ ասում է, «Մարի իշխանուհին՝ մանկամարդ, գեղեցիկ, մտացի ու խիստ տաղանդավոր դաշնակահար, կրցած է հմայել մեծ քերթողը, որուն գրական երեկույթներուն ներկա կը գտնվին եղեր իշխանն ու իշխանուհին»¹:

Մարի իշխանուհու նկատմամբ մեծ պոետի տածած հայրական գորովի ապացույցներից մեկն է հետևյալ գողտրիկ երկտողը, որ նա գրել է 1880 թ. փետրվարի 25-ին. «Մեր հասակների տարբերությունը, Տիկին, ներկայացնում է «էռնանի»-ի հիսնամյակը: Իմ ութսուն տարիները իրենց հարգանքն են մատուցում ձեր երեսուն տարիներին, և ձեր շրմներս համբուրում են ձեր երիտասարդ ձեռքերը»²:

1 Երվանդ Օտյան, երկերի ժողովածու, Երևան, 1935, էջ 38:

2 Hugo, Correspondance, tome IV, Paris, 1952, p. 69.
260

ի դեպ, «Էլուանի»-ի մասին Հյուգոյի արած հիշատակությունը պատահական չէ: Շատերին հայտնի է, որ 1830 թ. Փարավարի 25-ին Փարիզի «Théâtre Français» թատրոնում կայացավ Հյուգոյի «Էլուանի» ողբերգության առաջին փոթորկահույզ ներկայացնմբ, որի ընթացքում կլասիցիզմի և ռոմանտիզմի կողմնակիցները դահլիճի մեջ իրար դեմ կատաղի պայքար մղեցին: Այդ խորհրդանշում էր երկու հակառակորդ՝ դպրոցների կենաց և մահու գոտեմարաք, -որը երկար և բուռն ընդհարումներից հետո վերջացավ ռոմանտիզմի հաղթանակով: Դրանից հիսուն տարի անց Փարիզի գրական շրջաններում նշվեց հիշյալ պատմական ներկայացման հորելանը: Ըստ երկութիւն, Մարի Լուսինյանը այդ առթիվ նամակով շնորհավորել էր «Էլուանի»-ի ծերունակարդ հեղինակին, որը պատասխանել էր վերկի երկտողով:

Մարի Լուսինյանը ոչ միայն տաղանդավոր դաշնականար էր, այլև օժտված էր սքանչելի ձայնով: Նա իր երգեցողական տաղանդը ամենափայլուն կերպով գրաւորում է այն համերգի ժամանակ, որ տալիս է 1880 թ. հունիսի 26-ին, Լուսինյան ապարանքի մեծ սրահում՝ հօգուտ Հայաստանի սովորականին: Համերգին ներկա են լինում ֆրանսիական հանրապետության նախագահը, մինիստրներ, պառլամենտի և Ազգային ժողովի անդամներ, օտար դեսպաններ, Հյուպատոսներ, ազնվականներ, ականավոր գրողներ և արվեստագետներ: Երիտասարդ իշխանութիւն, ելույթ ունենալով, երգում է Ամինայի արիան «Սոմնամբուլա» օպերայից, Մարդարիտայի արիան «Ֆաուստ» օպերայից և իր բարձր արվեստով գերում ունկնդիրներին: Համերգից գոյացած ամբողջ հասույթը՝ չորս հազար ֆրանկ, իշխանութիւն նվիրում է հայ ազետյաներին:

Հիշյալ համերգը նշանակալից է այն խմաստով, որ միաժամանակ բացահայտում է երեք տարբեր հանգամանք. Մարի իշխանուհու մեծ տաղանդը, հայերի նկատմամբ նրա ջերմ վերաբերմունքը և կուսինյան ընտանիքի սերտ կապը փարիզյան վերնախավի հետ:

Համերգի մասին տպված հաղորդագրության մեջ թեև հիշատակված չեն առանձին ներկաների անունները, բայց կարելի է ենթազրել, որ Հյուզոն՝ կուսինյան ընտանիքի բարեկամն ու հարկանը, նույնպես ներկա էր, մանավանդ որ, ինչպես վկայում է Օտյանը, նա հմայված էր իշխանուհու երածշտական տաղանդով: Մեր այս ենթազրության հիմք է տալիս նաև այն փաստը, որ Հայատանի սովյալների Օգնության կոմիտեն հիշյալ համերգից գեռ ամիսներ առաջ Հյուզոյին դիմել էր՝ խնդրելով նրա աջակցությունը այդ բարենպատակ գործին: Հայկական ՍՍԾ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում կա մի ձեռագիր նամակ, որն անհերքելիորեն վկայում է այդ մասին: Նամակագիրը՝ ումն Ս. Ռաֆայելյան, 1880 թ. մարտի 3-ին Փարիզից հետևյալն է գրում Կ. Պոլսում ապրող հայտնի բանասեր և Թաղիադյանի առաջին կենսագիր Հովհաննես քահանա Մկրտչյանին. «... Այժմ նոր և ավելի ստիպողական խնդիր մը հուզեցինք, այն է՝ Գաղղիո հասարակության մեջ ի նպաստ Վանա, Պայազետի և Ալաշկերտի սովելոց հանգանակություն մը ընել: Այս ձեռնարկին հաջողությանը համար՝ ընկերության¹ կողմանն ընտրյալ մասնաժողովը, որո ես ալ անդամ եմ, Վիքթոր Հյուկոյին, Կամպեթթային, էմիլ տը Ժիռարտենին, «Թան»-ի հայասեր խմբագրին և այլ սոցա նման երեկի գաղղիացվոց և հայոց դիմած է, և հույս մեծ ունինք, որ ընդունելություն գտնելով՝ մեր նպատակին պիտի հասնինք ի միաթարու-

1 Ակնարկում է Փարիզում հիմնադրված Հայկական Ուսումնասիրաց ընկերությունը:

Haworth Nov. 16th
1869

"ai in class, now
a man more fit to write
the letter & tell us just what
are improvements I offer
you. In truly bid you
fare, "I am ever
true to my duty & duty.
Every assurance of
your continuing welfare

Victor Hugo

թյուն և ի սփոփանս մեր համարյուն սովատանց եղբարց»¹:

Մեզ թվում է, որ թեկուզ հայ սովլալներին աջակցելու տրամադրությամբ, հայասեր մեծ գրողը պիտի ուզենար Մարի Լուսինյանի համերգին ներկա գտնվել:

Վիկտոր Հյուգոյի և Լուսինյանների մոտիկ բարեկամության մասին 1881 թվականին հետևյալ ուշագրավ տողերն է գրել Հովհաննես Թյույյուլյանը՝ Ս. Ոսկանի «Արևմուտք» հանդեսի հախկին հրատարակիչներից մեկը, որը ծանոթ է եղել նաև Մ. Նալբանդյանի հետ². «Վիքթոր Հյուգո, Ավելյան տ' էլլո № 130 կը նստի, Լուսինյան իշխանուհիուն ապարանին կից... Սույն մերձակայությունն մեծ մտերմություն պատճառած է այս երկու նշանավոր ընտանյաց մեջ և, երջանիկ եմ ըսելու, խիստ օգտավետ է հայոց ազգին համար: Այս կերպիվ, անմահ բանաստեղծը մեր վրայոք կատարյալ տեղեկություն ստացած է և զերմաշերմ համակրություն զգացած է մեր սիրելի ազգին համար»³:

Եվ իրոք, անմահ բանաստեղծը այնպիսի ջերմ մտերմությամբ էր կապված հարեւան հայ ընտանիքի հետ, որ իր ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ ընդունելություն է կազմակերպում ոչ թե իր, այլ Լուսինյանների տանը, որի դահլիճն ավելի ընդարձակ էր: Հյուգոյի ծննդյան 80-ամյակը ամենամեծ շուքով է տոնվում Փարիզում: Այդ կապակցությամբ, 1881 թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 2-ը տեղի են ունենում Հոբելյանական մի շարք հանդեսներ: «Փետրվար 27-ին Վիքթոր Հյուկոյի հանդեսը գրեթե ամբողջապես հայկական շքեղ հարկի մը տակ կատարվեցավ,— գրում է Թյույյուլյանը, որը հավանու-

1 Բորսա Աղատյանի ֆոնդ, թղթապանակ № 72, փաստաթուղթ № 9863:

2 Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 395:

3 «Փարիս Հայաստանի», 1881, № 4, էջ 23—24:

րեն ներկաներից մեկն էր:—Լուսինյան ապարանին վանդակյա երկաթն գռները առավոտյան ժամը տասնմեկն ի վեր բաց էին, և բազմաթիվ ազգայինք և մեծամեծ գաղղիացիք և օտարականք խուռն բազմությամբ կը դիմեին անդ, և ասիական հյուրասիրությամբ բազկատարած կընդունվեին»¹: Մինչգեռ հրավիրյալները հյուրասիրվում էին գահիճում, խանդավառված հասարակ ժողովուրդը խոնվել էր պարտեզում, որտեղ նվազում էր 110 երաժիշտներից բազկացած նվազախումբը: Բազմությունը հետպհետե այնքան է խտանում, որ պարտեզում այլևս տեղ չի մնում: Դուրսը գտնվողները ուզում են գոնե դրսից դիտել ներսի անցուդարձը: Եվ նամակագիրը նշում է մի այսպիսի մանրուք. «Խեղճ կին մ'ալ, սանդուխ մը դրած էր ապարանին մեկ պատին վրա և ստակով միշին դասու մարդկանց վարձու կուտար»²:

Ընդունելության ժամանակ Գվիգոն Լուսինյանը Վիկտոր Հյուգոյին մատուցում է, արծաթյա ափսեի մեջ, իշխանուհու ձեռքով ասեղնագործված մի գեղեցիկ բարձ: Ծերունի պոետը, սաստիկ հուզված և հիացած, գոշում է. «Ահա մի խսկական հավերժահարսի հրաշակերտը» և ձեռքով օդային համբույրներ է ուղարկում իշխանուհուն:

Երեկոյան ընդունելության ժամանակ Հյուգոն շնորհակալություն է հայտնում Գվիգոնին՝ փառավոր հյուրասիրության համար³ և հետք մտերմորեն զրուցում: Նա հարցուփորձ է անում նար-Թեյի մասին և այդ առթիվ ասում. «Ես սիրում ու հարգում եմ ձեր եղբորը և ինձ երջանիկ կհամարեմ օդուակար լինելով նրան ու նրա հոգեոր հովվության հանձնված ժողովրդին»:

1 «Փարսու Հայաստանի», 1881, № 4, էջ 23—24:

2 Նույն տեղում:

3 Լուսինյան ապարանքում կայացած հանդիսի մասին հաղորդումներ են տպագրվել Փարիզի „Événement“, „Globe“ և այլ լրագրերում, որոնք գովարանել են Լուսինյան ընտանիքի հյուրամեծարտիթյունը:

Վիկտոր Հյուգոն այլ առիթներով էլ գովասանքով է խոսել Նար-Պեյի մասին: Իսկ վերջինս մեծ վարպետի նկատմամբ այնքան խոր հիացմունք էր տածում, որ 1881 թ. նրան ձոնում է ֆրանսիական լեզվով մի բանաստեղծություն: Այդ կապակցությամբ «Echo de Paris» լրագրի նոյեմբերի 26-ի համարում լույս է տեսնում «Վիկտոր Հյուգո և Հայաստան» վերնագրով մի հաղորդում, որտեղ տպագրվում է հիշյալ տաղի վերաբերյալ Գվիդոն Լուսինյանի նամակը, ուղղված Վիկտոր Հյուգոյին:

Պոլսի «Մասիսի» խմբագրությունը թարգմանում և թերթի № 3058-ում տպագրում է այդ հաղորդումը: Նկատի ունենալով վերջինիս պատմական նշանակությունը Հայ-ֆրանսիական մշակութային կապերի տեսակետից, մենք այն բերում ենք լրիվ, «Մասիսի» թարգմանությամբ.

«Վիքթոր Հյուկո և Հայաստան»

«Երեք օր առաջ իշխան Գուիտոն տը Լուսինյան, որ սերյալ է ի թագավորացն Կիպրոսի, ուղղած էր հետեւյալ նամակն առ Վիքթոր Հյուկո.

Փարիզ, 25 նոյեմբեր, 1881

«Հույժ սիրելի և հոյակապ քերթող,

«Իմ եղբայրս՝ Խորեն արքեպիսկոպոս Լուսինյան՝ Զեր Հավատարիմ և անձնվեր աշակերտն, որ միանգամայն Զեր վրա հիացողներուն ամենեն եռանդունն է, ինձ հաճոյական պաշտոն կը տա Զեղ նվիրելու այն տաղերգությունն, որուն ձոնը հաճեցայք արդեն ընդունիլ:

Քաջ գիտեմ, որ Գուք կը սիրեք զՀայաստան: Գուք հաճախ խոսած եք ինձ, հուզյալ սրտիվ, նորա վաղեմի փառացը, նորա տառապանացն և նորա ապագայի վրա:

Ես համոզված եմ, որ պիտի սիրեք նաև զայս տաղերգ, որ կը հիշեցունե մեղ զայնս այնքան ճշմարտությամբ և հայրենասիրությամբ:

Զերդ անձկալիս

Գուխտոն տը կուսինյան»:

«Հետեւյալ օրը Վիկտոր Հյուկո հացկերույթ մը տվավի պատիվ կուսինյան իշխանին և իշխանութվուն: Սեղանին վրա քերթողը խոսեցավ սրտահուզ այն տաղերգության վրա, գովեստներ ըրավ հեղինակի վրա, ըսելով թե Խորեն տը կուսինյան արքեպիսկոպոսն ազգային բանաստեղծ մ'է և միանգամայն խորունկ քաղաքագետ և երեխի հայրենասեր մը, որ յուր բոլոր կյանքն Հայաստանի վերածնության նվիրած է:

«Նորա տաղերգն,—ավելցուց Վիքթոր Հյուկո,—արժանի է յուր անվանն և յուր ցեղին՝ բարձրությամբ մտածությանցն և յուր հայրենասիրական ավյունով¹:

«Հետո դառնալով առ իշխան Գուխտոն, խնդրեց, որ յուր թարգմանը լինի հարազատի քով, շնորհավորեղինքն և իրեն արտահայտե, որ ինքը (Վիքթոր Հյուկոն) նորա ընթացքին յուր հաճությունը կը տա, և սրտովն իրեն հետ է միշտ:

«Նույն երեկոյին, ելումտից նախարար պ. Ալեն Թարժե և յուր տիկինը, Պ. Լոքրուա և տիկինը, համառոտ ըսելով՝ Վիքթոր Հյուկոյի բոլոր մտերիմները կողջունեին մեր մեծ քերթողն, որո խոսակցությունն արտաքո կերպիվ կը փայլվիլեր աշխուժիվ և մտքի կորովով»:

1 Նար-Պեյի պոետական տաղանդի մասին ժամանակին բարձր գնահատականով են արտահայտվել նաև ֆրանսիացի հայագետ Էդուար Դյուկորինն, մատենագիր Ռոմեն Կոռնուն, բանաստեղծ Յուլիս Ռուետը, խոալացի ականավոր պոետ Ալեարդո Ալեարդին և արիներ: Նրանք Նար-Պեյի բանաստեղծություններին ծանոթանում էին «Մասյաց Աղավնի» ամսագրի միջոցավ, որը հրատարակվում էր Փարիզում (1855—1858) հայերեն և ֆրանսերեն:

Նույն բովանդակությամբ Հաղորդումներ են տպագրվել նաև «Événement» լրագրում և Փարիզում Հրատարակվող «The American Register» ամերիկյան թերթում¹:

Սակայն վերոհիշյալ թերթերից ոչ մեկի մեջ չի հատակվում Հիշյալ տաղի վերնագիրը: Նար-Պեյլ դեռևս 1858 թվականին մեծանուն պոետին ձոնել էր «Առ Վիքթոր Հյուկո»² վերնագրով մի ներող, որը հետագայում ապագրել է իր «Քնար պանդստին» բանաստեղծությունների ժողովածուում: Բացի դրանից, նա հետագայում Հյուկոյին նվիրել է «Օրհնյալ որ սիրեն զհեգ Հայատան»³ Հայրենասիրական տաղը, որ հայագետ Վ. Լանգուան ֆրանսերենի է թարգմանել «Bénis soient qui aiment l'Arménie» խորագրով: Հիմնվելով «The American Register» թերթի այն բացատրության վրա, թե տակը Հայրենասիրական էր, և զատելով Գվիգոն Լուսինյանի նամակից, որտեղ ասվում է, թե տաղը Հայատանի մասին է գրված, կարելի է ենթադրել, թե խոսքը վերաբերում է Հենց Լանգուայի թարգմանած երկին:

1882 թ. հուլիսի 29-ին Փարիզի գրական հասարակայնությունը լայնորեն նշում է Վիկտոր Հյուկոյի անվանակոչության տոնը: «Événement» թերթի հուլիսի 30-ի համարում Հաղորդվում է, թե այդ առթիվ մեծահույս գրողը ճաշի է Հրավիրել իր մոռափիկ բարեկամներին, որոնց թվում և կուսինյան ընտանիքին: Հաղորդման մեջ այնուհետեւ նկարագրվում է, թե կուսինյան ապարանքի պարտեզն այդ երեկո լուսավորված էր գույնըզգույն լավտերներով: Ժամը 9-ին Հյուկոյի թոռը՝

1 Փարիզյան թերթերի այդ Հաղորդումները նույն օրերին արտապնդել են Կ. Պոլսում Հրատարակվող „Levant Herald“ և „Istanbul“ թերթերում, ինչպես և Հայկական «Մասիս», «Էռլյան» և այլ պարբերականներում:

2 Խ. Նար-Պեյլ, Քնար պանդստին, Ա. Պոլս, 1868, էջ 389—397:

3 Նույն տեղում, էջ 1—13:

պատանի ժորժը, արձակում է Հրախաղության առաջին փունջը, որը երկինք բարձրանալով՝ օդի մեջ ձևացնում է մեծ պոետի անունը։ Այդ Հրախաղությունը կազմակերպվել էր պոետի բարեկամների կողմից, որպես սյուրապրիդ-նվեր¹:

«Դարերի լեգենդի» հեղինակը շատ հաճախ էր իր մոտ Հրավիրում ինտելիգենտ և գիտական հայ Հարեանին։ Քիչ հետո պիտի տեսնենք, թե ինչպես հանճարեղ պոետը գանգատվում է, երբ կուսինյանները ուշացնում են իրենց այցելությունները։

Վիկոր Հյուգոյի ծննդյան 83-րդ տարեդարձի առթիվ ֆրանսիական հայտնի գրող Արսեն Հուսեյը «Figaro» թերթում Հրապարակում է պոետի հետ ունեցած իր տեսակցությունը և ի մեջ այլոց պատմում է հետեւյալ հետաքրքիր գեղաքը։ Մի անգամ Հյուգոն, ցանկանալով կուսինյանների ապարանքը գնել, իշխանուհի Մարիին հարցնում է, թե կուղենա՞ր այն ծախել և ի՞նչ գնով։ Շենքի իսկական արժեքն էր հարյուր հազար ֆրանկ, բայց Մարին պահանջում է յոթ հարյուր հիսուն հազար ֆրանկ։

— Յոթ հարյուր հիսուն հազար ֆրանկ,— բացականչում է Հյուգոն։

— Զնշին գումար է,— պատասխանում է Հարեանուշին։

Հյուգոն, զարմացած, նայում է իշխանուհուն։

— Զնշին գումար...

— Այո, չնշին, որովհետեւ այս փոքր ապարանքն ունի այն անգնահատելի առավելությունը, որ նրա մեջ ապրում է Վիկոր Հյուգոն։

Պոետը ժամանում է։

— Բայց ես, տիկին, այնքան հարուստ չեմ, որ կա-

1 Այս հաղորդման թարգմանությունը ևս տպագրված է «Մասիսում»։ Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, № 3252, էջ 3։

րողանամ գնել այն տունը, որտեղ ապրում է Վիկտոր Հյուգոն¹...

Ըստ երեսովթին, Հյուգոն լրջորեն է արել այդ առաջարկությունը, որովհետև իշխանուհու սրամիտ և փաղաքական մերժումից կարճ ժամանակ անց Պոլսի «Արևելք» լրագրում տպագրվում է մի այսպիսի հաղորդում. «Վիքթոր Հյուգո տիեզերացուակ բանաստեղծն, այժմ 83 տարեկան, 337,365 ֆրանք վճարելով գնած է Լուսինյան ապարանքի յուր վարձյալ բնակարանին կից հող մը՝ անոր վրա շենք մը կառուցելու համար, որո հատակագիծն ինք պիտի շինե»²:

Սակայն Հյուգոյին չի վիճակվում այդ ծրագիրն իրագործել, որովհետև հողամասը գնելուց քիչ ժամանակ անց վախճանվում է:

Մեծ արվեստագետը մինչև վերջ պահպանում է իր սերտ բարեկամությունը հարեան ընտանիքի հետ: Մահաբեր հիվանդությունից դեռ մի քանի օր առաջ ծերունազարդ պոետը կուսինյան ապարանքի դռան առջե հանդիպում է Գվիդոնին, կանգնում, մտերմաբար զրուցում է նրա հետ: Այդ առթիվ նա դարձյալ հավաստիացնում է հայ ժողովրդի նկատմամբ իր տածած անմար սիրո մասին: Այնուհետև նա գանգատվում է, որ վերջին ժամանակներում Գվիդոնն ու Մարին այնքան հաճախ իրեն շեն այցելում, որքան ինքը կցանկանար: Եվ հարեվանի ձեռքն ամուր սեղմելով, ասում է. «Թեև մեր բնակարանները այս դալարագեղ ու քաղցրաբույր պարտեզով բաժանված են, բայց մեր սրտերը պետք է միշտ անբաժան լինեն: Այս մասին հիշեցրեք նաև հրեշտականման իշխանուհուն, և նրան հաղորդեցեք իմ սիրալիր ողջույնները... և եկե՛ք, հաճա՛խ եկեք ինձ տեսնելու»³:

1 Տե՛ս «Մասիս», Կ. Պոլսի, № 3758, էջ 730 (թարգմանությունը):

2 «Արևելք», 1885, № 306, էջ 1:

3 Տե՛ս «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, № 7, էջ 126:

Հյուգոյի մահից հետո Եղիա Տեմիրճիպաշյանին
ուղղած իր նամակում Գվիդոն Լուսինյանը գրում է.
«Տիեզերահռչակ Հյուկոն հայ զավակաց օթևանն ութ
տարի իբրև Հյուր սիրամեծար կը հանգեր, հոն հրաշա-
կերտներ կարտազրեր, և հոն իր անմահ վեհազն հոգին
իր աստվածացումն (apothéose) ընդուներ էր... Բոլոր
գաղղիացիք և օտարազգիք երանի կուտային մեղ, և կու-
տան մինչև ցարդ, որ վեհանուն Վիքթոր Հյուկոն այնշափ
տարի վարձաբնակ տնակից ունեցանք և նորա սերտ բա-
րեկամությունն վայելեցինք»¹:

Հյուգոյի վերջին, մահաբեր հիվանդությունը տևել է
ութ օր: Գրող և հասարակական գործիչ Գրիգոր Օտյանը,
որն ալդ ժամանակաշրջանում ապրում էր Փարիզում,
ամեն օր գնացել է պոետի տունը՝ նրա առողջության
մասին հարցնելու: Օտյանը, 1885 թ. մայիսի 24-ին իր
ընտանիքին գրած նամակում մանրամասն տեղիկու-
թյուններ է հաղորդում մեծանուն գրողի մահվան
մասին, իսկ հունիսի 4-ի նամակում նկարագրում է նրա
փառաշուր հուղարկավորությունը, որին մասնակցել էր
և ինքը՝ Օտյանը: Նույն նամակում նա գրում է. «Կը
հարցնես, թե գացի՞ ես ալ: Անտարակո՞ւյս: Հիվանդու-
թյանը՝ գրեթե ամեն օր, և մահվան օրն ալ»²:

Քանի որ Օտյանը ամեն օր գնում էր Հյուգոյի տունը,
նշանակում է նա անձնապես ծանոթ էր պոետին ու
նրա ընտանիքին: Հայ անվանի հրապարակախոսը, որ
ճանաշված էր որպես լուրջ, ծանրաբարո և արժանավոր
անձնավորություն, իրեն թույլ չէր տա անկոչ կերպով
ուրիշների տունը գնալ: Ի դեպ, Օտյանը մտերմական
հարաբերություններ ուներ նաև այլ ականավոր անձանց
հետ և մի ժամանակ մոտիկ բարեկամն էր եղել Ֆրան-

1 Տե՛ս «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, № 7,
էջ 126:

2 Հ. Գուրգեն, Պատկեր աշխարհիկ գրականության, II հատոր,
Կ. Պոլիս, 1893, էջ 50:

սիայի մինիստրների խորհրդի նախկին նախագահ Թիերին: Վիկտոր Հյուգոյի հետ Գրիգոր Օտյանի ունեցած անձնական կապերի մասին վկայում են միայն վերոհիշյալ երկու նամակը: Դժբախտաբար ձեռքի տակ այլ փաստաթղթեր գենես չկան:

Վիկտոր Հյուգոյին անձնապես ծանոթ է եղել նաև նշանավոր հրապարակախոս Ստեփան Ռսկանը, որին մեծ գրով նվիրել է իր գրքերից մեկը՝ ձեռագիր մակադրությամբ:

Վիկտոր Հյուգոն վախճանվեց 1885 թ. մայիսի 22-ին: Նրա հուղարկավորությանը, որը տեղի ունեցավ աննախընթաց հանդիսավորությամբ, մասնակցել են հարյուր հազարավոր մարդիկ և ավելի քան հարյուր նվագախումբ: Իսկ զանազան երկրներից, վայրերից և հիմնարկություններից ուղարկվել է ավելի քան տասը հազար ծաղկեպսակ: Հայերից թաղմանը մասնակցել են Լուսինյան ընտանիքը, Գր. Օտյանը, փարիզահայ գաղութի այլ անդամներ և մի խումբ հայ ուսանողներ¹:

1 Ի դեպ, Հյուգոյի թաղման հետ կապված է հետևյալ հետաքրքիր գեպքը: Փարիզի հայ ուսանողները ցանկացել են Հյուգոյի հուղարկավորությանը մասնակցել ոչ թե անհատական կարգով, այլ որպես առանձին հայկական կազմակերպություն: Սակայն դրա համար հարկավոր էր ներկայանալ ազգային դրոշակով: Իսկ ուսանողները չեն իմանում, թե ինչպիսին է հայկական դրոշակի դույների դասավորությունը: Նրանք մտածում են, մտածում, և ի վերջո որդում են հեռագրել Վենետիկ, Ալենդ Ալիշանին: Ալիշանը պատասխանում է, թե հայկական դրոշակը եղել է կարմիր, կանաչ և սպիտակ, այսինքն՝ ծողի մոտ նախ կարմիր գույնը, հետո կանաչը, ապա սպիտակը: Երիտասարդները իսկոյն պատրաստում են այզպիսի մի դրոշակ և մասնակցում թաղմանը: Գրանից երկու տարի անց ժնկի հայ ուսանողները հիմնադրում են հնչակյան կուսակցությունը, և Փարիզի հայ ուսանողներից իմանալով հայկական դրոշակի նկարագրությունը, այն սարքում են և ընդունում որպես ազգային դրոշ: Հնչակյան կուսակցության հիմնադրիներից Խան Ազատը իր հուշերի մեջ դրում է: «... Փատահեց, որ 1892 թվին ոտքս Վենետիկ ընկալ մի քանի օրով: Մխիթարյանների սուրբ Ղազարի վանքն այցելելով, հայր Ալիշանի հետ

Լուսինյանների հետ իր հարևանության տարիներին վիկտոր Հյուգոն ստեղծել է իր գրական գործունեության վերջին շրջանի գործերը: 1879 թ. նա լույս է ընծայել «La Pitié Suprême» («Գերագույն ողորմածությունը») պոեմը, 1880 թ.՝ «L'Ane» («Ավանակը») փիլիսոփայական պոեմը և «Religion et Religions» («Կրոն և կրոններ») բանաստեղծությունների ժողովածուն, 1881 թ. «Les Quatre Vents de l'Esprit» («Մտքի չորս հովերը») բանաստեղծությունների ժողովածուն, որի մի զդալի մասը նա գրել է հիշյալ ժամանակաշրջանում, 1882 թ.՝ «Torquemada» շափածո դրաման, 1883 թ.՝ «La Légende des Siècles»-ի («Դարերի լեգենդը») երրորդ հատորը, 1884 թվականին, այսինքն մահից մեկ տարի առաջ, նա հրատարակում է «L'Archipel de la Manche» («Մանշի կղզեխումբը») աշխատությունը: Բազմաբեղուն արվեստագետը թողնում է նաև մի շարք անտիկ գործեր, մի քանիսը անավարտ, որոնք հրատարակվում են նրա մահից հետո: Դրանք են՝ «Années Funestes» («Աղետալի տարիներ»), «Dernière Gerbe» («Վերջին խուրձը»), «Choses Vues» («Տեսածո բաները»), «La Fin du Satan» («Սատանի վերջը») և այլն:

ունեցած տեսակցության ժամանակ, հանկարծ հիշեցի մեր դրոշակի պատմությունը և ուղեցի ստուգել, թե արդյոք նա ի՞նչ աղբյուրից է գուրս քաղել հայկական դրոշակի գույներն ու դասավորումը:

— Դիտե՞ք, — պատասխանեց ինձ հայր Ալիշանը, — պատմական ոչ մի աղբյուրն քաղած շեմ հայկական դրոշակի մասին հեռազրածս: Ինկատի ունենալով, որ հայերս զատկավան առաջին կիրակին Կարմիր կիրակի կանգանենք, իսկ երկրորդը՝ Կանաչ կիրակի, մտածեր եմ, որ հայկական դրոշակն ալ այդ գույներով և դասավորությամբ ըլլալու էր:

«Դիտնականին ոչ վայել այս վերին աստիճանի տարօրինակ բացատրությունը միանգամայն հիմասթափեցրեց ինձ, բայց արդեն ոչ էր. կարմիր, կանաչ ու սպիտակ գույներով «Հայկական» դրոշակը արդեն մեծ ժողովրդականություն էր ստացել և մինչև այսօր էլ գործ է ածվում որպես ազգային դրոշակ: Տե՛ս «Զիթենի» (հայկան ժողովածու), Բիֆլիս, 1915, էջ 141:

* * *

*

Վիկտոր Հյուգոյի հետ հայ մտավորականության ուժնեցած նամակագրությունը նշանակալից է այն իմաստով, որ վկայում է փոխադարձ հարգանքի և սիրո մասսին: Այդ նամակագրությունը թեև քանակապես շատ չէ, բայց այնուամենայնիվ ավելի է, քան այն, որ հանձարեղ գրողն ունեցել է ուրիշ առանձին ժողովուրդների, նրանց թվում և եվրոպական ժղովուրդների գրական գործիշների հետ:

Մեր արամագրության տակ եղած տվյալների համաձայն ամենաառաջին թղթակցության պատիվը ժամանակագրական կարգով պատկանում է Գաբրիել Սունդուկյանին: Հայկական ՍՍԲ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է Հյուգոյի ձեռագիր մեկ նամակը, որ նա ուղարկել է իր աքսորավայրից՝ Գերմանիա կղզուց ականավոր հայ թատերագրին: Այդ նամակում Հյուգոն գրում է.

«Պարոն,

Ես բացակայում եի. վերադարձիս գտա Զեր Հիանալի նամակը: Մեծ հոժարությամբ ընդունում եմ այն առաջարկությունը, որ բարեհաճում եք ինձ անել, և Զեր հղում եմ հաջողության բոլոր ցանկություններս:

Հաճեցեք ընդունել իմ լավագույն զգացմունքների հավաստիքը:

Վիկտոր Հյուգո»¹:

Թե ի՞նչ առաջարկություն է արել «Պեպոյի» հեղինակը «Էռնանիի» հեղինակին, այդ մեղ անհայտ է, որովհետև մինչև օրս Սունդուկյանի գրած նամակի հետքը դեռ չի գտնվել: Բայց նկատի ունենալով, որ

¹ Տե՛ս Գ. Սունդուկյանի ֆոնդ, № 141—55—8:

Սունդուկյանը ֆրանսերեն գիտեր և կարդացել էր Հյու-
գոյի ստեղծագործությունները, կարելի է ենթագրել, թե
նա հավանորեն ուզեցել է Հյուգոյի պիեսներից մեկնու-
մեկը թարգմանել կամ բեմագրել: Այդ կապակցությամբ
մենք պրատեցինք Սունդուկյանի արխիվը, կարդացինք
նրա գրած և ստացած նամակներն ու գանազան սեա-
գրությունները, բայց վերոհիշյալ առաջարկության վե-
րաբերյալ որևէ ակնարկության չհանդիպեցինք: Ի վերջո,
դիմեցինք Վիկտոր Հյուգոյի Տուն-թանգարանի վարիչ
պ. Մերժանին, խնդրելով հայտնել՝ արգյո՞ք Թանգա-
րանի արխիվում կա Գաբրիել Սունդուկյանից որևէ նա-
մակ, ուղղված Վիկտոր Հյուգոյին: Պ. Մերժանը պատաս-
խանեց, թե իր մոտ գտնվող արխիվում այդպիսի նամակ
չկա: Այնուհետև նույն հարցով դիմեցինք նաև հրատա-
րակչութիւնի տիկին Դոբրեյին, որը 1952 թ. հրատարակել էր
Հյուգոյի նամակագրությունները: Բայց պատասխան
շտացանք: Հետո պարզվեց, որ մեր նամակն ուղարկե-
լուց կարճ ժամանակ առաջ տիկին Դոբրեյը մեռել էր:
Ի վերջո, տողերին գրողը նամակագրություն սկսեց Վիկ-
տոր Հյուգոյի ծոռան՝ պ. Ժան Հյուգոյի հետ: Վերջինս՝
մեծ բանաստեղծի թոռան՝ Ժորժի անդրանիկ որդին է,
ծնված 1894 թ. և զբաղմունքով գեղանկարիչ է: Սովե-
տական կառավարության հրավերով 1952 թվականին
նա այցելել է Մոսկվա՝ ներկա գտնվելու Վիկտոր Հյու-
գոյի ծննդյան 150-ամյակին նվիրված հորելանական
տոնակատարություններին: Մոսկվայում նրան ցուց
տրված չերմ ընդունելության կապակցությամբ պ. Ժան
Հյուգոն իր 1960 թ. հովհանուշ 14-ի նամակում մեղ գրում
է, «Ես սրտառուշ հիշատակ եմ պահպանել այն ընդու-
նելությունից, որին արժանացա այնտեղ, և այն հե-
տաքրքրությունից, որ Սովետական ժողովուրդը ցուցա-
բերում է գեղի իմ պատճ»: Իսկ մեր հարցին պատաս-
խանելով, նա ցավոք հայտնում է, որ իր թղթերի մեջ չկ

գտնվում Սունդուկյանի նամակը: Սակայն այդ առթիվ նա մատնանշում է, որ Հյուգոյի նամակի թվականը ոչ թե 1869 է, ինչպես մենք էինք զրել, այլ՝ 1867, ինչպես այն տպագրված է Վիկտոր Հյուգոյի «Correspondance»-ի («Նամակագրություններ») գրքում, որը լույս է տեսել 1952 թ. Փարիզում¹:

Այս ցուցմունքը մեր մտքում որոշ տարակուսանք առաջացրեց, որովհետև հիշյալ նամակի թվականի վերջին թվանշանը ավելի նման է 9-ի, քան թե 7-ի: Հետևապես, ստիպվեցինք Հյուգոյի նամակի լուսապատճենն ուղարկել պ. Ժան Հյուգոյին, և վերջինս, որն զբաղվում է իր պապի զրական ժառանգությամբ և քաջածանոթ է նրա ձեռագրին, 1960 թ. նոյեմբերի 8-ի իր պատասխան նամակում մեզ զրեց հետեւյալը. «Մեծապես շնորհակալ եմ, որ ինձ ուղարկեցիք Վիկտոր Հյուգոյի՝ Սունդուկյանին ուղղած նամակի լուսապատճենը: Աշքի առաջ ունենալով այս փաստաթուղթը, ես այլևս ոչ մի տարակույս չունեմ² նամակի թվականի մասին. այն պետք է կարդալ վաթունյոթ»: Այսպիսով, պարզվեց, որ Սունդուկյանին ուղղած Հյուգոյի նամակի ճիշտ թվականը 1867 է և ոչ թե 1869:

Հիշյալ նամակի թվականը ճշտելու հարցը մեզ հետաքրքրում էր առաջին հերթին նրա համար, որ մինչեւ օրս այն սխալ էր ներկայացվել: Օրինակ, «Գրական թերթի» 1935 թ. 12-րդ համարում այդ նամակի թարգմանությունը տպագրվել է սխալ թվականով: Նույն թերթի 1952 թ. փետրվարի 29-ի համարում Վիկտոր Հյուգոյին նվիրված հոդվածի մեջ էլ հիշյալ նամակի կապակցությամբ հիշատակվում է սխալ թվականը:

1 Հետազոտմ պարզվեց, որ Հյուգոյի նամակի պատճենը «Correspondance»-ի հրատարակիչ արկին Դորեքին է տրամադրել Արտասահմանի հետ կուլտուրական կապերի ընկերությունը:

2 Ընդգծում պ. Ժան Հյուգոյինն է:

Մուկվայում Հրատարակվող „Литературное наследство“ հանդեսի 1937 թ. № 31—32-ում „Վиктор Гюго и его русские знакомства“ վերնագրով ընդարձակ ուսումնասիրության մեջ զետեղված Հյուգոյի նամակի ուսուերեն թարգմանությունը բերված է նույնպես 1869 թվականով։ Ավելին, այդ սխալ թվականը հիմք ունենալով, տողատակի ծանոթագրության մեջ տրված է հետեւյալ բացարությունը։ „В 1869 г. Гюго совершил путешество по Швейцарии“, այնինչ, Հյուգոյի կատարած ճանապարհորդությունը ոչ մի առնշություն չունի նամակում հիշված բացակայության հետ, որը փաստուրեն վերաբերում է 1867 թվականին։ Այսպիսի շփոթություններ իհարկե տեղի չեն ունենա, եթե ականավոր գրողի նամակի թվականը ճշտված լիներ։ Կա ևս մի այլ հանգամանք, որն ավելի կարևոր է։ Քանի որ Սունդուկյանը Հյուգոյին ինչ-որ կոնկրետ առաջարկություն է արել և ստացել է վերջինիս համաձայնությունը, ապա, ամենայն հավանականությամբ, նա ճեռնարկել է տվյալ գործին։ Ճիշտ է, այդ մասին վկայող որևէ փաստաթուղթ առայժմ չկա ԳԱ Գրականության թանգարանի արխիվում, բայց այդ չի նշանակում, որ այդպիսի փաստաթուղթ առհասարակ գոյություն չունի։ Հնարավոր է, որ հետագայում հայտնաբերվի մի որևէ նամակ կամ սեագրություն, որտեղ ինչ-որ ակնարկություն լինի տվյալ գործի մասին։ Նման դեպքում Սունդուկյանի գրական-հասարակական գործունեությունն ուսումնասիրող բանասերը Հյուգոյի նամակի ստույգ թվականի հիման վրա կկարողանա ճիշտ ուղղությամբ կատարել իր պրալտումները՝ Սունդուկյանի անհայտ նամակի բովանդակությունը պարզեցու գործում։ Ահա թե ինչո՞ւ հարկավոր էր վերացնել այդ նամակի թվականի շուրջն ստեղծված թյուրիմացությունը։

Հյուգոյի սոցիալական առաջավոր հայացքները հայիրականության մեջ տարածելու մտադրությամբ Գրիգոր Զիլինկիրյանը, ինչպես գիտենք, 1868—1870 թթ. հրատարակում է «Բշշառների» լրիվ թարգմանությունը, տասը հատորով։ Այդ առթիվ նա Վիկտոր Հյուգոյին գրում է մի նամակ, որտեղ ցանկություն է հայտնում իր թարգմանությունը հեղինակին ձոնել։

Ահա նամակի թարգմանությունը.

Զմյուռնիա, 8 մարտի 1868 թ.

«Անվանի վարպետ,

Մարդ որքան կարգում է Ձեր երկերը, այնքան ավելի է հիանում Ձեզնով, որովհետեւ Գուք տառապող մարդկության բարերարն եք, իսկ Ձեր անունը՝ տասնիններորդ դարի առաջադիմության խորհրդանշանն է։

Դուք արժանի եք ամբողջ աշխարհի երախտագիտության։

Դժբախտ ժողովուրդների թվում, որոնք հանձին Ձեզ տեսնում են իրենց բարոյական և ֆիզիկական աղատագրության պաշտպանին, հայերը ևս չեին կարող ավելի ուշացնել Ձեր նկատմամբ զգացած երախտագիտության և սիրո արտահայտությունը։

Ես՝ իմ հայրենակիցների խոնարհ ներկայացուցիչս, համարձակվում եմ նրանց ամենաշերմ զգացմունքներն արտահայտել՝ հայացնելով «Բշշառները»՝ հանձարի և սիրո այդ անմահ հուշարձանը, որի թարգմանությունը ձոնում եմ Ձեղ, ի նշան ամենաբարձր ակնածանքի և հիացման։

Հաճեցեք լնդունել, Անվանի վարպետ, իմ ամենախոր հարգանքի հավասարից։

Գրիգոր Զիլինկիրյան»¹։

1 Նամակի բնագիրը տպված է «Բշշառների» 1868 թվականի հայերեն թարգմանության սկզբում։

Ղստ երևուցին Զիլինկիրյանի նամակը ինչ-ինչ
պատճառներով չի հասնում Հյուգոյի ձեռքը: Զիլինկիր-
յանը գրում է նույն բովանդակությամբ մի երկրորդ նա-
մակ և ստանում հետեւալ պատասխանը.

Հոթվիլ Հառա, 12 գեկտեմբերի 1868 թ.

«Պարոն,

Զեր առաջին նամակն ինձ չի հասել, իսկ երկրորդը
ստացա, երբ վերադարձա երկար բացակայությունից
հետո: Դա է պատասխանիս ուշացման պատճառը:

Ես Զեր հնամենի լեզուն շգիտեմ, բայց սիրում եմ
այն: Նրա մեջ ես զգում եմ արևելքը և նշմարում դարերը:
Նրա մեջ ես տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի
ճառագայթումը:

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելս:
Եբախտագիտությամբ ընդունում եմ Զեր աղնիվ ձոնը և
շնորհակալություն եմ հայտնում:

Վիկտոր Հյուգո»¹:

Հյուգոյի չերմ երկրագուներից մեկն է եղել նաև
ականավոր հասարակական գործիչ, հրապարակախոս և
գրող Նահապետ Ռուսինյանը, որը 1873 թվականին
թարգմանում է «Մյուի Բլաս» դրաման, նպատակ ունե-
նալով հայ ընթերցողներին ծանոթացնել հեղինակի
հայտնի գործերից՝ մեկը: Այդ առթիվ Ռուսինյանը նա-
մակով Հյուգոյի թույլտվությունն է խնդրում՝ իր թարգ-
մանությունը հրատարակելու համար: Նա գրում է.

Կ. Պոլիս, Բերա, 29 վենդող, 1873

«Վարպետ,

Թույլ տվեք մի արեկցու, որ Զեր անմահ գործերից
«Մյուի Բլաս» հայերեն թարգմանելով՝ Զեր շքեղափայլ

¹ Նամակի բնագիրը տպված է «Թշվառների» 1868 թվականի
հայերեն թարգմանության սկզբում:

Հանճարից մի քանի նշույլ սփոխի իր հայրենակիցների
վրա: Թարգմանիչը՝ իրեն փառավորված պիտի զգար,
եթե Զեր թուլավությամբ Զեր համակրանքն արտա-
հայտեիք դեպի իր հայ եղբայրները, որոնք ժամանակին
փայլել են Արևելքի մի անկյունում՝ մարդկության օրրա-
նը հանդիսացող Արարատի ստորոտում: Այդ ժամանա-
կից ի վեր, ավաղ, նրանք ընկել էին խոր թմրության
մեջ, բայց այժմ վերջապես բացում են աշքերը և զմայ-
լանքով նայում են ֆրանսիական քաղաքակրթության
արևին, որի ամենաշողողուն ճառագայթումը տեսնում
են Զեր մեջ, Վարպետ:

Զեր անկեղծ և անձնվեր երկրպագուն՝
Ռուսինյան»¹:

Վիկտոր Հյուգոն պատասխանում է.

Գերնսեյ, Հոթվիլ Հառու, 4 Մհամիդոր, 1873

«Պարոն,

Զեր գեղեցիկ և պերճախոս նամակը շատ ուշ հասավ
ինձ: Այն ստացա այսօր և իսկույն պատասխանում եմ:

Ես սիրում եմ Արևելքը, Դուք այդ գիտեք, և իմ աշքերը
հաճախ են դառնում դեպի արշալուսի այդ երկիրը: Ես
շատ ուրախ կլինեմ, եթե «Ռյուի Բլասը» հայերն թարգ-
մանեք, և Զեր արտոնում եմ այն հրատարակել:

Եթե դրա վաճառքը որևէ արդյունք բերե, ապա ինձ
համար նշանակեցեք, որպես հեղինակի բաժին, Զեր ար-
դար թվացող մի գումար, և այն տվեք աղքատներին:

Հավատացեք զերմ համակրանքիս,

Վիկտոր Հյուգո»:

1 Ռուսինյանի նամակների բնագիրը, ինչպես և Հյուգոյի պատաս-
խանը զետեղված են «Ռյուի Բլասի» թարգմանության սկզբում: Տե՛ս
Վ. Հյուկո, Խել Պլաս, Կ. Պոլիս, 1873:

Հյուգոյի թույլտվությունը ստանալուց հետո Ռուսիանը հրատարակում է «Մյուսի Բլասի» թարգմանությունը և գրքից մի օրինակ ուղարկում հեղինակին, որպես նվեր: Ռուսիանը հանճարեղ գրողին ուղարկում է նաև շնորհակալական մի նամակ, որտեղ շատ նուրբ ձևով հասկացնում է, թե հիշյալ գիրքը թարգմանելիս ինքը շահադիտական ոչ մի նպատակ չի հետապնդել: Այդ ապացուցելու համար նա իր բաժինն էլ տրամադրում է աղքատներին: Ահա Ռուսիանի նամակի թարգմանությունը.

Կ. Պոլիս, Բերա, 16 Թերմիդոր, 1873

«Վարպետ,

Ես ուշացա երախտագիտությունս հայտնելու այն սիրալիրության համար, որով Դուք ինձ արտոնություն շնորհեցիք՝ «Մյուսի Բլասի» հայերեն թարգմանությունը հրատարակելու: Ես ուրախ եմ, որ այսօր ի վիճակի եմ իմ շնորհակալությանը միացնելու թարգմանությանս առաջին օրինակը, որը պատիվ ունեմ Զեղ նվիրելու:

Միակ շարժառիթը, որն ինձ գրգեց ձեռնարկելու այնքան դժվար, բայց նույնքան հրապուրից այս աշխատանքը, եղել է Զեր փայլուն հանճարի ցոլքերով իմ հայրենակիցներին լուսավորելու ցանկությունը: Ես հուսով եմ, որ միենույն ժամանակ մեր նորահաս սերնդին կծանոթացնեմ արվեստի գաղտնիքները, նրանց հաղորդելով Զեր ստեղծած արդի դպրոցի հոյակապ գործերից մեկում ավանդված ուսանելի դասը:

Թարգմանիչը, հետեւելով հեղինակի ազնիվ օրինակին, ամբողջ նյութական շահը թողնում է այն նպատակին, որը վեհանձնութեն ցույց տվիք իրեն:

Գրքի ճակատում, իմ խնդրագրի դեմ հանդիման, պարծանքով հրատարակում եմ Զեր սիրալիր թույլտվու-

թյան գրությունը, որը, հեղինակի մեծ հմայքով, կրաքացնի թարգմանչի համեստ արժանիքը:

Ծուսինյան»:

Ուշագրավ է այն, որ Ծուսինյանը իր նամակներում օգտագործում է ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ հորինված, բայց հետո իսպառ գործածությունից ընկած ամսանուններ՝ Վենտոպ¹ և Թերմիդոր²: Այդ ցուց է տալիս, թե նա որքան տոգորված է եղել 1789 թվականի հեղափոխության ոգով: Դրա մասին վկայում են նաև հայտնի արձակագիր Արփիար Արփիարյանի հուշերում գրված հետեւյալ տողերը. «Ծուսինյան կրոնք մը ունի՝ Ֆրանսայի հեղափոխությունը, և կուղե հայ ժողովուրդը այդ կրոնքին դարձնել, անոր սկզբունքներով կազմակերպել Հայոց Վարչությունը: Հեղափոխական տարեցույցը կը շինե, հայացնելով մեծ հեղափոխության ամիսները»³:

Բայց ավելի հետաքրքիրն այն է, որ Հյուգոն ևս, արձագանքելով Ծուսինյանին, իր պատասխան նամակում օգտագործում է հեղափոխության ստեղծած մեսսիդոր⁴ ամսանունը, մի բան, որ նա երբեք չի արել ուրիշներին գրած իր նամակներում:

Հրապարակագիր, բառարանագետ և թարգմանիչ Մելիքոս Նուապարյանը, որը 1871—1872 թթ. թարգմանել ու հրատարակել էր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը», 1885 թվականին վերանայում ու վերամշակում է իր թարգմանությունը՝ այն վերահրատարակելու

1 Վենտոպ (ventose —քամիներ) փետրվարի 19-ից մարտի 20-ը:

2 Թերմիդոր (thermidor —տաքություն) Հուլիսի 20-ից օգոստոսի 18-ը:

3 «Նոր կյանք», 1900, № 4, էջ 60:

4 Մեսսիդոր (messidor —հունձք) Հունիսի 20-ից Հուլիսի 19-ը:

մտադրությամբ։ Այդ առթիվ, ցանկանալով իր թարգմանությունը հեղինակին ձոնել, նա վերջինիս գրում է մի նամակ, որի սկզբի մասը բերում ենք հենց նրա՝ նուպարյանի թարգմանությամբ։

«Հոյակապ Վարպետ,

«Ահավոր տարին»¹ թույլ շտվավ ինձ՝ Զեզմե արտոնություն խնդրել Զեր անունին նվիրելու հայերեն թարգմանությունը «Նոդր-Տամ-Բարիզի» անունը կրող Հրաշակերտին, որ պատիվ կը բերե մարդկային հանճարին։ Այդ թարգմանությանս երկրորդ տպագրությունը Հրատարակելու առթիվ կը համարձակիմ, մեծ Վարպետ, աղաշել Զեզ, որ թույլ տաք ինձ իրագործել իմ մեծագույն երազս, այն է՝ իրը աստեղաշող լուսատու մը՝ ամեննեն բարձր զետեղել ընդհանուր սքանչացումի առարկա Զեր վեհ անունը»²։

Այնուհետև նուպարյանը խոսում է իր պատրաստած ֆրանսերեն-հայերեն բառարանի մասին, որը պետք է ծառայի ֆրանսիական ճոխ լեզվի հետ ծանոթացնելու գործին։

Այդ շրջանում Հյուգոն հիվանդ էր։ Նրա թելադրությամբ և նրա անունից նուպարյանին պատասխանում է Հրապարակագիր Ռիշար Լեսկլիդը³, որը սիրահօժար կերպով քարտուղարություն էր անում մեծ պոետին։ Ահա

1 Ակսարկում է 1870 թվականը, երբ Ֆրանսիան շախատիլ պարտություն կրեց պրուսական բանակից։ Այդ պատերազմի կապակցությամբ Հյուգոն զրել է «Ահավոր տարին» բանաստեղծությունների ժողովածուն, որը լույս է տեսել 1872 թ.։

2 «Ծանթ», 1919, № 22, էջ 256։ Նուպարյանը տալիս է իր գրած նամակի թարգմանությունը միայն, առանց ֆրանսերեն բնագրի։

3 Մեղ հաջողվեց պարզել, որ Ռիշար Լեսկլիդը Հյուգոյի մոտ որպես քարտուղար է ծառայել նրա կյանքի վերջին տարիներին։ Լեսկլիդը պիեսի է վերածել Հյուգոյի «Ռյուգ ժարդալ» վիպակը, զրել է հանճարեղ պոետի կյանքից հուշեր, ինչպես և այլ աշխատություններ։

նամակի բովանդակությունը՝ նուպարյանի թարգմանությամբ.

«Պարոն Վիքթոր Հյուկոն ազդվեցավ Զեր նամակին պատվական խոսքերեն, և հաճուքով կը շնորհե Զեղ արտոնությունը զոր կը խնդրեք: Կրնաք իր անունին նվիրել «Նողր-Տամ-Բարիզի» իր վեպին ձեր հայերեն թարգմանությունը, և իր կողմէ հաջողություն կը մաղթե ձեր գիրքին ու ձեր խորհուրդներուն:

Հավատացեք իմ սրտագին զգացումներուս»¹:

Այս նամակի առաքումից կարճ ժամանակ անց Վիկտոր Հյուկոն վախճանվում է:

Մեծանուն գրողի հետ թղթակցություն է ունեցել նաև տաղանդավոր պոետ Եղիա Տեմիրճիպաշյանը: Նա, 1875 թ. Վիկտոր Հյուկոյին ձոնում է մի ներբող, և վերջինս պատասխանում է սիրալիր նամակով: Տեմիրճիպաշյանը, որն այդ շրջանում Մարսելում հրատարակում էր «Moniteur Littéraire et Financier» անունով ֆրանսերեն մի հանդես, դրա մեջ տպագրում է Հյուկոյից ստացած նամակը: Այդ պարբերականից ընդամենը մի քանի համար է լուս տեսել, որոնցից օրինակներ չկան երևանում, իսկ Հյուկոյի նամակը արտատպված չէ մեր տրամադրության տակ գտնվող արևմտահայ մամուլի մեջ: Այդ մասին հիշատակություն չկա նաև 1955 թ. Կ. Պոլսում հրատարակված «Եղիա Տեմիրճիպաշյանի քերթվածները և նամակները» գրքում: Սակայն, 1921 թվականին Պոլսում հրատարակված «Եղիա Տեմիրճիպաշյան» խորագրով գրքից տեղեկանում ենք, որ այդ նամակը սկսում է հետեւյալ բառերով. «Je te salue, ô noble esprit de l'orient»² («Ողջունում եմ քեզ, ո՛վ

1 «Ծանթ», 1919, № 22, էջ 257: Նուպարյանը տալիս է նամակի թարգմանությունը միայն, առանց ֆրանսերեն բնագրի:

2 Տե՛ս Գ. Ֆեներենյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Կ. Պոլիս, 1921, էջ 196:

Արևելքի ազնիվ միտք»): Մեր խնդրանքին սիրալիրությամբ ընդառաջելով, ալ ժան Հյուգոն պրադտումներ կատարել տվեց Փարիզի, Մարսելի և էքսի գրադարաններում, բայց չկարողացավ գտնել վերոհիշյալ պարբերականի հետքը:

Հիմքեր կան ենթադրելու, թե «Թշվառների» հեղինակը նամակագրություն է ունեցել նաև Մկրտիչ Խրիմյանի հետ: «Մասիսի» խմբագիր Կ. Ռիթուճյանը 1874 թ. գրում է, թե Խրիմյանի «Հրավիրակ Արարատյան» և «Հրավիրակ Երկրին Ավետյաց» աշխատություններից ընտիր հատվածներ ժամանակին թարգմանվել և ուղարկվել են Հյուգոյին և Լամարթինին: Նա ավելացնում է, թե «այդ քերթվածները... երկուքին ալ հավանությանն արժանացած են. մանավանդ Լամարթինը շատ հավնած է անոնց պարզ և բնական վսեմությունը»¹: Ութուճյանի այս հիշատակությունը վկայաբերելով՝ մենք պարզապես ուզում ենք ընդգծել Հյուգոյի և Խրիմյանի միջև նամակագրության հավանականությունը: Արդարե, քանի որ Ութուճյանը իմանում էր, թե Խրիմյանի քերթվածները Հյուգոյի և Լամարթինի հավանությանն են արժանացել, նշանակում է, որ վերջիններս գրել են իրենց կարծիքը, իսկ եթե գրել են, ապա ո՞ւմ կարող են գրած լինել, եթե ոչ նույնինքը հեղինակին՝ Մկրտիչ Խրիմյանին:

Ռոմանտիզմի պաթոսով համակված և Հյուգոյի պոեզիայով գերված պոլսահայ երիտասարդության մեջ գտնվել են խանդավառ բանաստեղծներ, որոնք համարձակություն են ունեցել իրենց անդրանիկ ստեղծագործություններն ուղարկել «Արևելականք»-ի անմահ հեղինակին՝ նրա կարծիքն իմանալու համար: Նրանցից մեկն է Պետրոս Անմեղյան անունով բանաստեղծը, որ 1878 թ. Հյուգոյին ուղարկում է իր գրած 94-տողանոց չափածո-

1 «Մասիս», 1874, № 1585, էջ 3:

երկը։ Հյուգոն հավանում է այն և գրում հետեւալ երկ-
տողը.

Փարիզ, 12 ապրիլի 1878 թ.

«Զեր ոտանավորը, պարոն, թափանցող է և հաճելի.
այն ինձ հուզում և հմայում է։ Զեղ ուղարկում եմ գորո-
վագին շնորհակալությունս։

Վիկոր Հյուգո»¹։

Անմեղյանը՝ ֆրանսիական կրթություն ստացած մի
երիտասարդ, հետագայում նվիրվում է գրականությանը
և ֆրանսերեն լեզվով գրում արժեքավոր բանաստեղծու-
թյուններ ու պիեսներ։ Նա աշխատակցում է նաև «Sémaphore» և «Istamboul» ֆրանսիական թերթերին
և գառնում հայտնի հրապարակագիր։ Հյուգոյի հետ Ան-
մեղյանի ունեցած նամակագրության կապակցությամբ,
հետագայում, արձակագիր Տիգրան Արփիարյանը ասում
է. «Տասնհինգ տարի առաջ, եթե չեմ սխալիր, հայ երի-
տասարդ մը, որ իր նախափորձերուն մեջ էր, ֆրանսերեն
լեզվով ոտանավոր մը գրեց, զոր Վիքթոր Հյուկոյին ու-
ղարկելու հանդուգն ներշնչումը ունեցավ։ Մեծ քերթողը
խրախուսիլ նամակով մը պատասխանեց անծանոթ երի-
տասարդին, որ այդ խրախուսին շնորհիվ սիրտ առավ,
գրեց, հրատարակեց, և այսօր Պոլսո առաջնակարգ հրա-
պարակագիրներեն մին է Անմեղյան, ֆրանսերեն լրագրի
մը մեջ»²։

Արտակ Մոսիկյան անունով մի այլ շնորհալի եղի-
տասարդ 1877 թ. մարտի 21-ին Վիկոր Հյուգոյին գրում
է հայրենասիրությամբ տոգորուն մի նամակ, որտեղ իր
անսահման հիացմունքն է հայտնում մեծանուն հեղինա-
կի աշխատությունների նկատմամբ։ Նա Հյուգոյին ան-
վանում է Ֆրանսիայի պաշտպան Հրեշտակը, որովհետեւ

1 Նամակի բնագիրը տպագրված է «Թերթեմանը էֆքեար» հայա-
տառ թուրքերեն լրագրում, Կ. Պոլսո, 1878, № 244։

2 «Արևելք», 1892, № 2606։

պոետը իր ստեղծագործություններով ժողովրդին սփոռ-
փում է, երբ վերջինս վշտի մեջ է, և պայքարի մզում,
երբ նա ճնշվում է բռնակալության լծի տակ: Հայ ազգը,
ասում է նամակագիրը, հանձին Հյուգոյի տեսնում է նաև
իր պաշտպանին, քանի որ մեծ պոետը սիրում է հայե-
րին: Անդրադառնալով հայ ժողովրդի ծանր գրությանը,
Մոսիկյանն ավելացնում է. «Ես հուսահատ հոգիով կը
գրեմ այս տողերը: Ներկայեն ոչինչ կարող եմ սպասել
իմ ազգին համար: Եթե կա մի բառ որո հավատամ, այն՝
ապագան է միայն: Ապագա՝ ... թերես ապագային մեջ
լույսի փոխվի ինչ որ այսօր խավար կը նկատեն, գեղե-
ցիկի փոխվի ինչ որ այսօր տգեղ կը համարեն»: Իր
գժրախատ ժողովրդի ճակատագրով մտահոգված հայ
երիտասարդը նամակն ավարտում է հետեւյալ խոսքերով.
«Դուք կը սիրեք խրախուսել երիտասարդներն. հայրենի-
քի համար տրոփող սիրտս մեծապես պիտի հրճվի, եթե
գրեք ինձ և մի կաթիլ հույս սփոեք հոգիիս մեջ, որ խիստ
պետք ունի Զեզ»¹:

Այս նամակը, որը գրված է ոռւս-թուրքական պատե-
րազմի նախօրյակին, հարազատորեն պատկերում է Հո-
գեվիճակը արևմտահայ մի շարք մտավորականների,
որոնք ներկայից դառնացած և ներկան բարեփոխելու
անկարող՝ ակնկալությամբ նայում էին գեղի մոտավոր
ապագան և գոտեպնդվելու համար կարիք էին զգում
խրախուսանքի:

Վիկտոր Հյուգոն պատասխանում է հուսադրիչ մի
նամակով.

Փարիզ, 1 մայիսի 1877 թ.

«Պարոն Արտակ Մոսիկյան,

Զեր նամակը ժամանակին ստացա: Ես հպարտանում

1 «Թերձեմանը էֆքեար», 1877, № 173: Զհաեղված է Մոսիկյանի
նամակի հայերեն թարգմանությունը միայն:

ևմ կարդալով իմ աշխատությունները խորապես հասկացող մի երիտասարդի նամակը:

Մի հուսահատվեք:

Այն, ինչ Դուք չերմորեն ցանկանում եք, միայն ապագան կարող է իրականացնել: Ապագան՝ մարդկության հույսերի այդ կենտրոնը՝ գաղտնիք է բոլորի համար: Այդ ապագան ձեզ է սպասում: Համբերող եղեք, և Դուք աղատ կլինեք: Աղատությունը հաճախ համբերության շնորհիվ է ձեռք բերվում:

Հաճեցեք ընդունել, Պարոն, իմ ողջունները

Վիկառ Հյուզո»¹:

Նույն տարվա դեկտեմբերի 14-ին Մոսիկյանը մեծանուն բանաստեղծին ուղարկում է մի երկրորդ նամակ, որի հետ ներփակում է սիրո մասին իր գրած լիրիկական խորհրդագությունները: Նամակի սկզբի մասում Մոսիկյանը Հյուզոյին գրում է. «Դուք, նարոլեռններ, գահեր տեսած եք, և նոցա դեմ փոխանակ սարսուելու, գիմադրած եք, մաքառած եք: Աքսորն Զեր կյանքի գարունն գրաված էք, այլ Դուք կընկճվեի՞ք միթե, քանի որ Ֆրանսան ունեիք և Ֆրանսան զԶեղ ուներ: Թե հայ աղքի արդի վիճակն զիս շփոթած շլիներ և իմ եռանդն տիրության մթին քողով շծածկեր, թե սիրտ ունենայի վերշապես աղատ Զեղ պես, ո՞հ, պիտի հայտնեի Զեղ թե ի՞նչ եք Դուք, և ի՞նչ է Զեր տաղանդը մեծափայլը²: Նամակի երկրորդ մասում Մոսիկյանը անդրագառում է իր գրած պոետական խոհերին և հայտնում, թե «Սեր» վերնագրով այդ փոքր երկը ձոնել է իր լավագույն ընկերուջը՝ Հրանտ Ասատուրին: Նա միաժամանակ նկատում

¹ «Թերձեմանը էֆքար», 1877, № 173: Զետեղված է նաև ֆրանսերին բնագիրը:

² Տե՛ս նույն տեղում, 1878, № 193: Այս տողերը բերել ենք հեղինակի թարգմանությամբ:

է, որ իր կողմից հանդպնություն է այդպիսի մի երկ ներկայացնել հանճարեղ վարպետին:

Վիկտոր Հյուգոն շատ է հավանում այդ երկը: Նա գրում է.

Փարիզ, 17 փետրվարի 1878 թ.

«Պարոն Արտակ Մոսիկյան,

Ժամանակին ստացա Զեր պերճախոս գրությունը, ուղղված Զեր եղբայրներից մեկին:

Դուք հայ եք, ևս սիրում եւ հարգում եմ Զեր ազգը, դուք այդ լավ գիտեք: Հայ ազգը պետք է երջանիկ և միաժամանակ հպարտ լինի, որ Զեր պես ազնիվ գաղափարներով տողորված մարդ ունի իր մեջ:

Դուք իմ կարծիքն եք հարցնում Զեր գրած վսկեմ էջերի մասին:

Ընդառաջում եւ տալիս եմ այն: Դուք ունեք մեծ խելք և գեղեցիկ հոգի: Ես հիանում եմ ձեր տաղանդով և ճարտարությամբ, որոնք փայլուն ապագա են խոստանում:

Զեր հասակում՝ ամեն ինչ արե և աստղ է ձեզ համար: Շարունակեցեք և հուսացեք:

Հաճեցեք ընդունել, Պարոն, իմ շնորհակալության և հիացմունքի հավաստիք:

Վիկտոր Հյուգո»¹

Ո՞վ է Արտակ Մոսիկյանը՝ հայ գրական շրջանակներին միանգամայն անծանոթ այդ դեմքը, որն այնքան հետաքրքիր նամակագրությունն է ունեցել Ֆրանսիայի խոշորագույն պոետի հետ և արժանացել նույնիսկ նրա հիացմունքին: Հենց այն հանգամանքը, որ Մոսիկյանը անծանոթ դեմք էր, ավելի դժվարացրեց նրա մասին տեղեկություն հավաքելը: Ի վերջո նրա հետքը դտնվեց Ատրպետի անտիպ հուշերում: Ատրպետը պատմում է,

¹ «Թերճամանը էֆեկտ», 1878, № 193:

թե Պոլիս կատարած այցելության ժամանակաշրջանում, 1878 թ. մարտի 12-ին գնում է թատրոն՝ տեսնելու «Սեր առանց համարման» պիեսի ներկայացումը, որին մասնակցելու էր մեծատաղանդ գերասան Պետրոս Ադամյանը: Միջնարարի ժամանակ նրան ծանոթացնում են հաճելի արտաքինով մի երիտասարդի: «Սա այն Արտակ Մոսիկյանն է,— ասում է Ատրպետը,— որ Վիկտոր Հյուզոյից նամակ է ստացել իր գրած «Սիրող սիրտ» բանաստեղծության մասին»: Ատրպետն ավելացնում է, թե Մոսիկյանը հիանալի տիրապետում է ֆրանսերեն լեզվին, դասավանդում է կաթոլիկ ֆրենքերի կողեզրում և միաժամանակ ֆրանսիական թերթերից թարգմանություններ անում «Թերձեմանը էֆքեար» հայտառ թուրքերեն լրագրի համար¹:

Այսքան տեղեկությունը արդեն բավականաշափ լույս է սփռում Մոսիկյանի անձնավորության վրա: Բայց մեզ համար մութ էր մնում, թե ինչո՞ւ այդ շնորհալիք և խոստումնալից երիտասարդը շշարունակեց գրել, ի՞նչը խանգարեց նրա գրական հետագա գործունեությանը, արդյո՞ք վաղաժամ մահը: Հետագայում պատահաբար իմացանք, որ Եղիպատոսում ապրող ութառունամյա հմուտ բանասեր Արշակ Ալպոյաճյանը իր պատանության տարիներին Պոլսում աշակերտել է Հրանտ Ասատուրին, որին, ինչպես քիչ առաջ տեսանք, Մոսիկյանը ձոնել էր «Սիրող սիրտ» կամ «Սեր» վերնագրով բանաստեղծական խոհերը: Մտածելով, որ Ալպոյաճյանը կարող է որևէ բան իմանալ Մոսիկյանի հետագա գործունեության մասին, նամակով վերջինիս դիմեցինք: Իր պատասխանում ծերունազարդ գիտնականը հայտնեց, թե ոչ միայն

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետի ֆոնդ, № 9: Ատրպետի հուշերի մասին մեզ ցուցմունք է տվել գրականագետ Գառնիկ Ստեփանյանը, որին շնորհակալություն ենք հայտնում:

իմանում է Մոսիկյանի մասին, այլև անձնապես ծանոթ է եղել նրա հետ։ Ալպոյաճյանի նամակից պարզվեց, որ օժտված երիտասարդի գրական դործունեությունը դադարել է ոչ թե վաղաժամ մահվան պատճառով, այլ սրովհետև կյանքի պայմանները նրան վաղաժամ նետել էին առետրական ասպարեզը։ «Արտակ Մոսիկյանը մոտեն կը ճանշնամ,— գրում է Ալպոյաճյանը։— Հաճին Շահին կոշումով վաճառատուն մը ուներ։ Ռոմանտիկ երիտասարդ մը, որ կյանքի պայքարին մեջ այլևս մոռցած էր գրականությունն ալ, Վիքթոր Հյուկոն ալ, որուն նամակը միայն որպես նշխար կը պահեր»։

Հյուգոյի զերմ հիացողներից մեկն է եղել նշանավոր կին գրող Սրբուհի Տյուսաբը։ Ռոմանտիկ վիպասանուհին, որը հմայված էր Հյուգոյի ստեղծագործություններով, ժամանակին նրան ուղարկել է մի արտառուշնամակ, խնդրելով նրա լուսանկարը։ «Թշվառների» հեղինակը սիրով ընդառաջել է, լուսանկարի վրա գրելով հետեւյալ երեք բառը. «Aimer, c'est agir» («Սիրելը՝ գործել է»)։ Հյուգոյի քարտուղարը, լուսանկարն ուղարկելիս առանձին գրությամբ Տյուսաբին հայտնել է, որ ստացված հարցուրավոր նամակների մեջ ամենից շատ նրա նամակն է դուր եկել վարպետին։ Հայ վիպասանուհին Հյուգոյի լուսանկարը շրջանակի մեջ զետեղելով՝ մինչև մահը սրբության պես պահել է այն¹։

Տարօրինակ զուգադիպությամբ Վիկտոր Հյուգոն մեռնելուց առաջ արտասանել է հենց ա'յն բառերը, որ նա գրել էր Սրբուհի Տյուսաբին։ Ֆրանսիական գրող Ռայմոն Էսքոլիեն իր «Վիկտոր Հյուգոյի փառավոր կյանքը» գըրքում պատմում է, թե մահվան անկողնում հանճարեղ պոետի արտասանած ամենավերջին խոսքը եղել է. «Aimer, c'est agir»²։

1 Հրանտ Ասառուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 166։

2 Raymond Escholier, La Vie Glorieuse de Victor Hugo, Paris, 1928, p. 403.
290

Վիկտոր Հյուգոն, ինչպես տեսանք, անձնապես ծանոթ է եղել բանաստեղծ Խորեն Նար-Պետին: Վերջինս 1879 թվականին մեծանուն հեղինակին գրել է մի նամակ և ստացել հետեւալ պատասխանը.

Փարիզ, 20 նոյեմբերի 1879 թ.

«Իմ աղնիվ գրշեղբայր,

Մենք երկու բանաստեղծ ենք, և ես կավելացնեմ՝ երկու քահանա. բայց Զեր բանաստեղծ լինելն ինձ բավական է, և մեր երկուսի ձեռքերը կարող են սեղմել միմյանց: Զեր նամակն ինձ հուզում է, Զեր եղբայրասիրությունն իմ մեջ նույն դգացմունքն է արթնացնում, և ես շնորհակալ եմ ձեզ:

Այն, ինչ Դուք հարցնում եք Հայաստանի մասին, Դուք ինձնից լավ գիտեք, բայց ես ուրախ եմ այդ մասին Հավաստիացնելու: Այն ազգերը, որոնք նայում են դեպի անցյալը, պիտի անհետանան, այն ազգերը, որոնց հայցքն ուղղված է դեպի ապագան, պիտք է ապրեն: Հայաստանը թող ձեզ հետեւի, և նա կմտնի առաջդիմության ճանապարհը:

Ես ճանաշում եմ Զեր մտքի վեհությունը: Զեր ճակատագրի մեծությունը ես շափում եմ ձեր հոգու մեծությամբ: Դուք ունեք հին ցեղերի արյունը և նոր ցեղերի հոգին:

Վիկտոր Հյուգո»¹:

Թե ինչ է գրել Նար-Պետը Հյուգոյին, այդ մեզ անհայտ է: Նրա նամակը գտնելու համար՝ մեր կատարած բոլոր փորձերը մինչև այժմ մնացել են ապարդյուն: Սա-

¹ Այս նամակը առաջին անգամ տպվել է «Փրանսիական „Le Temps“ լրագրում, որից թարգմանելու տպագրել է «Մշակու» (1879, № 211): Հետագայում Հյուգոյի նամակը արտատպվել է նաև «Արձագանքում» (1893, № 6, էջ 3) և «Բազմավիպում» (1913, № 2, էջ 58):

կայն Հյուգոյի պատասխանից կարելի է հետևցնել, որ Նար-Պետքը ուղեցել է նրա կարծիքն իմանալ Հայաստանի և Հայ ժողովրդի ապագայի մասին: Երվանդ Շահազիզը նույնպիսի հետևություն է անում և նույնիսկ նամակի բովանդակությունը կապում է պատմական կոնկրետ դեպքերի հետ: «Հանգուցյալ արքեպիսկոպոսը, ինչպես երեսում է, 1878 թվին յուր քաղաքական պատվիրակության՝ դժվար պաշտոնը կատարելուց հետո հարցրել է յուր ականավոր բարեկամի կարծիքը «Հայկական խընդրի» կամ Հայոց ազգի մասին և նա էլ պատասխանել է նորան»²:

Հայ գրական գործիչների և Վիկտոր Հյուգոյի միջև փոխանակված նամակագրությունը բացահայտում է մեկ կողմից Հայ մտավորականության հարգանքն ու հիացմունքը գեպի հանճարեղ գրողը, իսկ մյուս կողմից՝ վերջինիս համակրանքն ու հետաքրքրությունը Հայ ժողովրդի նկատմամբ:

Այս երկկողմանի կապվածությունը պատահական ձևով չի ստեղծվել:

Եթե Հայ մտավորականությունը հանձին Հյուգոյի սիրել է գեղարվեստական խոսքի մեծ վարպետին, բռնակալության թշնամուն և, ինչպես Զիլինկիրյանն է ասում, դժբախտ ժողովուրդների բարոյական և ֆիզիկական ազատագրության պաշտպանին, ապա Հյուգոն Հայ ժողովրդին սրտանց համակրել է նրա տաղանդի ու կենսունակության համար, հագարամյակների հնություն ունե-

1 Ակնարկում է Հայկական պատվիրակությունը, որը 1878 թ. գնացել էր Գերմանիա՝ Բեռլինի կոնգրեսում մեծ պետություններին ներկայացնելու «Հայկական խնդիրը». ինչպես Հայտնի է, այդ կոնգրեսում Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը վերածվեց 61-րդ հոդվածի: Հիշյալ պատվիրակության անդամներն էին՝ Մկրտիչ Խորիմյանը, Խորեն Նար-Պետքը, Մինաս Զերավը և Ստեփան Փափառյանը:

2 Ե. Շահազիզ, Խորեն արք. Գալֆայան և Նալբանդյանի Աղցմիքը, Թիֆլիս, 1904, էջ 73:

նրա մշակույթի և փառապանծ անցյալի համար, նրա տառապալից ներկայի և աղատության ձգողով հերոսական ոգու համար: Եղունկով Հայաստանի մասին, Հյուգոն, ինչպես տեսանք, Ռուսինյանին գրում է. «Իմ աշքերը հաճախ են դառնում զեպի արշալույսի այդ երկիրը», իսկ Զիլինկիրյանին նա հավաստիացնում է իր սերը զեպի մեր հնամենի լեզուն. «Նրա մեջ ես... նշմարում եմ դարերը, նրա մեջ ես տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի ճառագայթումը»:

Հայերի նկատմամբ Հյուգոյի տածած ջերմ զգացմունքների մասին մի՞նեւ անհերքելիորեն չեն վկայում Գ. Լուսինյանի այս խոսքերը. «Դուք կը սիրեք զՀայաստան: Դուք հաճախ խոսած եք ինձ, Հուզյալ սրտիվ, նորա վաղեմի փառացը, նորա տառապանացն և նորա ապագայի վրան»: Նշանակում է, հանճարեղ գրողը հաճախ էր հետաքրքրվում հայ ժողովրդի ճակատագրով: Իսկ ի՞նչ կարող էր նա ասած լինել Հայաստանի ապագայի մասին, եթե ոչ՝ նրա հետագա ազատագրության և անկախության վերաբերյալ Հուսալից, բարի ցանկություններով տողորուն խոսքեր: «Ապագան ձեզ է սպասում: Համբերող եղեք, դուք ազատ կլինեք», գրում է Հյուգոն երիտասարդ Մոսիկյանին և իր հաջորդ նամակում նորից կրկնում է. «Ես սիրում և հարգում եմ Ձեր ազգը, Դուք այդ լավ գիտեք»: Իսկ նար-Պեյին գրած նամակում, հայ ժողովրդի ապագան ակնարկելով, նա ասում է. «Այն ազգերը, որոնց հայացքն ուղղված է զեպի ապագան, պետք է ապրեն»: Եվ հայ ժողովուրդը, որի հայացքն ուղղված էր զեպի ապագան, իրոք ապրեց:

Հյուգոյի ծննդյան հարյուրամյակի առթիվ Փարիզի քաղաքակետարանում արված հանդիսավոր ընդունելության ժամանակ, Արշակ Զոպանյանը փարիզահայ գրողների անունից արտասանած իր ճառում շատ ճիշտ նշել է, թե հայ մտավորականության համար Վիկտոր Հյուգոն

խորհրդանշում է ֆրանսիան, որովհետև հանձին մեծ
գրողի հայերը տեսնում են ֆրանսիական ժողովրդի բո-
լոր վեհ և ազնիվ իդեալների մարմնավորումը։ Հենց
նույն առումով էլ կարելի է ասել, որ Վիկտոր Շյուպոյի
հետ հայ գրական գործիչների բարեկամական կապերը,
իրենց լայն իմաստով վերցրած, խորհրդանշում են հայ
և ֆրանսիական ժողովուրդների սերտ բարեկամու-
թյունը։

Շյուպոյի հետ հայ մտավորականների նամակագրու-
թյունը, թարգմանությունների միջոցով նրա լավագույն
երկերի հայացումը, հայ հեղինակների կողմից նրա
ստեղծագործական տրադիցիանների ընկալումը պերճա-
խոս կերպով վկայում են, որ հանճարեղ գրողը հանդի-
սանում է այն կարևոր օղակներից մեկը, որոնցով հայ
գրականությունը կապված է համաշխարհային գրակա-
նության հետ։

ԲԱԳԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջաբան	5
Վիկտոր Հյուզոն հայ գրական մտքի գնահատմամբ	7
Վիկտոր Հյուզոյի երկերի հայերեն թարգմանությունները	58
Վիկտոր Հյուզոյի աղղեցությունը հայ գրականության վրա	213
Հայ մտավորականության կապերը Վիկտոր Հյուզոյի հետ	258



ՀԱՅԿ ՏԻԳՐԱՆԻ ԳՈՍՊԱՐՅԱՆ
ГАЙК ТИГРАНОВИЧ ГАСПАРЯН

Արքայի Հայության հայ գրականության մեջ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ. Գրականության ինստիտուտի

ՎՅ 07150, ԽՀԽ 804, Հրատ. 2238, Պատվեր 28, Տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 26/III 1963 թ.:

Ստորագրված է տպագրության 9/VII 1963 թ.:

Տպագրական 18,5 մամուլ + 4 ներդիր, Հրատ. 11,2 մամուլ,
թուղթ՝ $84 \times 1081 / 32$:
Գինը կազմով՝ 65 կուլ.:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հրատարակչության
Եջմիածնի տպարան:

Nous révéler le rôle de Victor Hugo et la signification de son œuvre dans la vie littéraire et sociale arménienne: tel est le but du présent ouvrage.

Jugements et appréciations que la critique arménienne a pu donner de son génie durant plus d'un siècle (1850—1960) illustrent abondamment le livre. L'auteur s'attache à un examen minutieux des traductions arméniennes des œuvres du grand maître en même temps qu'il traite des questions de son influence sur certains écrivains arméniens éminents. Le dernier chapitre renferme des détails intéressants et nouveaux sur les relations amicales et la correspondance de Hugo avec les hommes de lettres arméniens.

„Victor Hugo et la littérature arménienne“ est le premier grand ouvrage du genre consacré aux liens littéraires franco-arméniens.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031621

ԳՐԱՎԸ 65 ԿՈՂ.

A II
31621

